INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN OF NAS RA

EPISODES OF ARMENIAN HISTORY

Yerevan - 2023

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ
(V-VII ԴԱՐԵՐ)

ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 283

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Պատասխանատու խմբագիր՝ բ.գ.դ. Վ.Լ. Կատվալյան
Կազմողներ՝ Գ.Մ. Մխիթարյան, Հ.Մ. Թադևոսյան, Վ.Մ. Խաչատրյան,
Ն.Գ. Հովհաննիսյան, Տ.Ղ. Սիրունյան

Հ 283 Հայոց պատմության դրվագեր /Կազմ.՝ Գ.Մ. Մխիթարյան, Հ.Մ. Թադևոսյան, Վ.Մ. Խաչատրյան, Ն.Գ. Հովհաննիսյան, Տ.Ղ. Սիրունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023.-134 էջ:

Գիրքն ընդրկում է 5-րդ դարի հայ պատմիչների երկերում արձանագրված իրադարձություններ, որոնք վճռորոշ են եղել մեր ժողովրդի պատմության համար և այսօր էլ աշխարհաքաղաքական բարդ պայմաններում կարող են նպաստել հայրենասիրական ոգին բարձրացնելուն: Ընտրված նյութերը վերաբերում են հայ ժողովրդի պատմության տարբեր դրվագների, որոնք ժամանակի և տարածության մեջ մեր օրերում գրեթե նույն ընկալումն ունեն:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-9305-2-7
© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժինը գիտությունների ազգային ակադեմիայի և ինստիտուտի հիմնադրման 80-ամյակի առիթով կազմել է «**Հայոց պատմության դրվագներ (V-VII դարեր)**» ժողովածու: Գիրքն ընդրկում է 5-րդ դարի հայ պատմիչների երկերում արձանագրված իրադարձություններ, որոնք վճռորոշ են եղել մեր ժողովրդի պատմության համար և այսօր էլ աշխարհաքաղաքական բարդ պայմաններում կարող են նպաստել հայրենասիրական ոգին բարձրացնելուն: Ընտրված նյութերը վերաբերում են հայ ժողովրդի պատմության տարբեր դրվագների, որոնք ժամանակի և տարածության մեջ մեր օրերում գրեթե նույն ընկալումն ունեն:

Հայոց պատմագրության հետազոտության ոլորտն ու ընդգրկման սահմանները, թվում է, վաղուց են ճշտվել, և անդրադարձը պատմիչների երկերին ասես կրկնություն է: Բայց դա միայն արտաքուստ: Այսօր Հայաստանի Հանրապետության առջև ծառացել են շատ բարդ ու բազմաշերտ մարտահրավերներ. XXI դարում Հայաստանը վերստին հայտնվել է տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների կիզակետում: Արդի աշխարհաքաղաքական բուռն ընթացքները նույնքան մտահոգիչ են մեր ժողովրդի համար, ինչպես մեր հազարամյա պատմության ընթացքում: Դրանց դիմակայելու առաջին և անհրաժեշտ պայմանը այդ մարտահրավերները ճիշտ ընկալելն է և համարժեք արձագանքելը: Հայ պատմիչների երկերում արտացոլված են ինչպես հայոց արքաների դիվանագիտությունը՝ ճկուն, բայց ոչ պարտվողական, իրատես, բայց ոչ զիջող, այնպես էլ Հայաստանի ինքնիշխանությունը, հողային ամբողջականությունը և անվտանգությունը պահպանելու խնդիրները, որը մեր ժողովրդի համար ազգային սրբություն է: Պատմությունը կրկնվելու հատկություն ունի: Գուցե դա առնչվում է մեր ժողովրդի հավաքական հիշողությանը և ազգային հոգեբանությանը, իսկ դրանք համարժեք ընկալելու և արձագանքելու համար պատմական հիշողությունը պարբերաբար թարմացնել է պետք: Մարդկային մտածողությունը երբեք նույն հարթության վրա չի մնում. մշտապես ընդլայնվում է մեր ճանաչողությունը շրջապատող աշխարհի վերաբերյալ, և ըստ այդմ վերաիմաստավորվում են հայոց պատմության դեպքերը, իրադարձությունները, իսկ դրանք վերլուծելիս առաջանում են նոր տեսակետներ, նոր վարկածներ, պատճառահետևանքային նոր մեկնություններ:

V-VII դդ. հայ պատմիչների երկերից քաղված հատվածները գրքում ներկայացվում են գրաբար և աշխարհաբար զուգահեռ տարբերակներով, որպեսզի հասկանալի լինի ընթեցողներին: Պահպանվում են երկերի քննական բնագրերի տեքստերը՝ առանց միջամտության:

Ագաթանգեղոս, «Հայոց պատմություն». Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց (Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմանությունը Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևանի համալս. հրատ., Ե., 1983).- Երկը հայ պատմագրության ու եկեղեցական մատենագրության հնագույն մատյաններից է, որը հայտնի է նաև «Գիրք Ս. Գրիգորիսի» կամ «Պատմութիւն և վարք Ս. Գրիգորի» անուններով: Հայ հին գրական հուշարձանների մեջ այն բացառիկ է նրանով, որ, ներկայացնելով քրիստոնեություն ընդունելու մանրամասները, արդեն իսկ միջնադարում միջազգային ճանաչում է ստացել՝ թարգմանվելով տարբեր լեզուներով: Հայ Եկեղեցին այն համարել է կանոնական և օգտագործել իբրև նվիրական, սրբազան մատյան: Որպես պատմության աղբյուր՝ այս երկն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի պատմական աշխարհագրության, արքունիքի, պետական գործակալությունների, զինված

ուժերի, նախարարական կարգի, հայոց հեթանոսական կրոնի (հատկապես մի շարք կուռքերի ու նրանց տաճարների), երկրի ներքին կյանքին վերաբերող այլևայլ հարցերի մասին:

Փավստոս Բուզանդ, «Հայոց պատմություն». Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց (Քննական բնագիրը Ք.Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունը Ստ. Մալխասյանցի, խմբ.՝ Հ.Մ.Ավետիսյան, Երևանի համալս. հրատ., Ե., 1987).- Բուզանդի Պատմությունը Ագաթանգեղոսի Հայոց պատմության շարունակությունն է: Դեպքերն սկսվում են 330-ական թվականներից և ավարտվում 387թ.՝ ընդգրկելով մոտ 60 տարվա ժամանակահատված: Այն անփոխարինելի սկզբնաղբյուր է IV դարի պատմության, Հայաստանի ներքին և արտաքին հարաբերությունների, կյանքի տարբեր շերտերի նորովի բացահայտման և մեկնության տեսանկյունից:

Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն»: Թուղթ Վահան Մամիկոնյանին». Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան (Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունը Բ. Ուլուբաբյանի, Երևանի համալս. հարտ., Ե., 1982).- Փարպեցու Պատմությունը ընդգրկում է մեկ-դարյա շրջան. սկսվում է Հայաստանի առաջին բաժանումից (387թ.) և հասնում 480-ական թվականներ: Պատմիչը, կարևորելով իր առաքելությունը, լուրջ աշխատանք է կատարել՝ քննական վերաբերմունք ցուցաբերելով սկբնաղբյուրների, դեպքերի ու անձանց նկատմամբ, կիրառել է նաև ականատեսների վկայություններ:

Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն». Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց (Աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, թարգմանությունը և ծանոթագրությունը Ստ. Մալխասյանցի, Երևանի համալս. հարտ., Ե., 1981).- Պատմահայրը ստեղծել է հայ ազգի ամբողջական պատմությունը՝ ծնունդից մինչև իր ապրած ժամանակները: Խորենացու երկի գիտական արժանիքներից է այն, որ պատմահայրը օգտագործել է գրավոր և բանավոր բազում աղբյուրներ՝ Մար Աբաս Կատինայից, Եվսեբիոս Կեսարացուց, Բերոսոսից, Ափրիկանոսից, Բարդածան ու Ողյումպ քուրմերից մինչև առասպելներ ու Գողթան երգեր՝ բարեխղճորեն նշելով, քննելով ու գնահատելով դրանք:

Եղիշե, «Վարդանի և հայոց պատերազմի մասին». Եղիշէի Վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին (Թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Հայպետհրատ, Ե., 1989).- Պատմական իրադարձությունները ներառում են մոտ 40 տարվա պատմություն՝ Արշակունյաց թագավորության անկումից մինչև 460-ական թվականներ: Այն ականատեսի ձեռքով գրած հավաստի սկզբնաղբյուր է: V դարի բարդ ու խճճված իրադրության պայմաններում *ազգ, կրոն* և *հայրենիք* հասկացությունները երկում անբաժանելի, հզոր պատ-վար են՝ ընդդեմ զրադաշտականության և պարսկացման վտանգի: Մեծ պատերազմի անխուսա-փելիությունը Եղիշեն ներկայացնում է քաղաքական, կրոնական, ռազմական, նաև սոցիալական դրդապատճառների դիտակետից: Պատմության հիմնական առանցքը հայրենասիրությունն է ու ազգապահպանումը:

Կորյուն, Վարք Մաշտոցի. Կորիւնի Վարդապետի Պատմութիւն Վարուց Երանելւոյ Սուրբ Վարդապետին Մեսրովբայ (Գրաբարից աշխարհաբարի վերածեց Մ. Աբեղյանը, ԵՊՀ հրատ., Ե., 2005).- Կորյունի երկը միակ և հավաստի աղբյուրն է հայ գրերի գյուտի և դպրության սկզբնավորման վերաբերյալ: Կորյուն վարդապետը Մեսրոպ Մաշտոցի աշակերտակիցներից կրտսերագույնն է: Ուսուցչի մահից հետո նա ձեռնարկում է գրել հայոց գրի ծագման մասին և այն հորինողի կենսագրությունը: Ինչպես նշում է Մանուկ Աբեղյանը, «Նրա գրվածքը հայկական

տառերով հորինված առաջին ինքնուրույն պատմական երկն է, որ իրավամբ նվիրված է հենց այդ տառերի գյուտին և դրանց սկզբնահորը»:

Կորյունի «Վարք Մաշտոց»-ից քաղվող հատվածները վերաբերում են Մեսրոպ Մաշտոցի ծննդյանը, կրթությանը, արքունիքում ծառայությանը, հոգևոր սպասավորությանը, «հայերեն դպրության մասին» նրա մտահոգությանն ու հոգսերին, Աստծու օրհնությամբ և Սահակ կաթողիկոսի և Վռամշապուհ թագավորի աջակցությամբ հայերեն նշանագրերը ստեղծելուն, Սուրբ Գիրքը և այլ երկեր թարգմանելուն, Հայաստան աշխարհի տարբեր գավառներից և կողմերից ժամանող աշակերտներին կրթելուն, Մարաստանում, Վրաստանում, Աղվանքում դասատներ-դպրոցներ հիմնելուն, հայ գրի և գրականության սկզբնավորմանը:

Սեբեոս, «Պատմություն». Պատմութիւն Սեբէոսի (Քննական բնագիրը՝ Գ.Վ. Աբգարյանի, արևելահայերեն թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Գ.Կ. Խաչատրյանի և Վ.Ա. Եղիազարյանի, «Զանգակ -97» հրատ., Ե., 2005).- Սեբեոսը 7-րդ դարի հայ պատմիչ է: Նրա Պատմությունը, ըստ հետազոտողների, բացառիկ տեղեկություններ է պարունակում պետականությունը կորցրած հայերի, հարևան ժողովուրդների ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգևոր ոլորտների մասին:

Սեբեոսի «Պատմություն»-ից քաղվող հատվածները վերաբերում են Մամիկոնյան տոհմի ծագմանը, հայերի նկատմամբ հարևան երկրների վարած քաղաքականությանը (Մորիկ կայսեր (582-602 թթ.) նամակը պարսից արքային, որը կարևոր վավերաթուղթ է դիվանագիտական մտքի պատմության մեջ), Սմբատ Բագրատունու գազանամարտին, Զվարթնոց տաճարը կառուցելուն:

Գ. Մխիթարյան

INTRODUCTION

On the occasion of the 80th anniversary of the founding of the NAS RA and the Acharyan Language Institute, the Department of the History of the Armenian Language compiled a collection of "Episodes of Armenian History (V-VII centuries)". The book contains excerpts from the works of Armenian historians of the V-VII centuries, which were crucial for our nation's history and can contribute to the rise of the patriotic spirit even today in difficult geopolitical conditions. The selected materials refer to different episodes of the history of the Armenian people, which nowadays have almost the same perception of time and space.

The scope and boundaries of Armenian historiography research seem to have been determined long ago, and referring to the works of historians seems to be a repetition. But that's only outwardly. Today, the Republic of Armenia faces many complex and multifaceted challenges: In the XXI century, Armenia has again appeared as the focus of regional military and political processes. The turbulent current geopolitical processes are as worrying for our people as they have been throughout our thousand-year history. The first and necessary condition for facing them is to perceive these challenges correctly and respond adequately. The works of Armenian historians reflect both the diplomacy of the Armenian kings - flexible but not defeatist, realistic but not yielding, as well as the preservation of Armenia's sovereignty, territorial integrity, and security, which is a national sacredness for our people. History has a tendency to repeat itself. Maybe it is related to the collective memory and national psychology of our people, and in order to adequately perceive and respond to them, the historical memory needs to be regularly updated. Human thinking never stays on the same level: our knowledge of the world around us is constantly expanding, and according to that, the cases and events of Armenian history are reinterpreted, and when analyzing them, new points of view, new hypotheses, new interpretations of cause-and-effect relationships arise.

Excerpts taken from the works of Armenian historians of the V-VII centuries are presented in the book in Old Armenian or Grabar and secular parallel versions so that it is understandable to readers. The textual criticism of the works has been preserved without intervention.

Agathangelos, "History of Armenians" (Textual criticism by G. Ter-Mkrtchyan and S. Kanayants, secular translation by Aram Ter-Ghevondyan, Yerevan University Edition, Yerevan, 1983). The book is one of the oldest documents of Armenian historiography and church bibliography. As a source of history, this book provides valuable information on the historical geography of Armenia, the courts, government bodies, the armed forces, the ministerial order, the Armenian pagan religion (especially a number of idols and their temples), and other matters related to the inner life of Armenia.

Faustus of Byzantium, *"History of Armenians"* (Textual criticism by K. Patkanyan, translation, and annotation by St. Malkhasyants, editor: H. M. Avetisyan, Yerevan University Edition, Yerevan, 1987). Buzantium's History is a continuation of Agathangelos' Armenian History. It is an irreplaceable source for the new discovery and interpretation of the history of the IV century, the internal and external relations of Armenia, and different layers of life.

Ghazar Parpetsi, "History of Armenians and Letter to Vahan Mamikonian" (Textual criticism by G. Ter-Mkrtchyan and St. Malkhasyantsi, secular translation and annotation by B. Ulubabyan, Yerevan University Edition, Yerevan, 1982). The history spans a century: beginning with the first partition of Armenia (387) and reaching into the 480s. The historian who emphasized his mission did a serious job showing an investigative attitude toward sources, events, and persons and used eyewitness testimonies.

Movses Khorenatsi, "History of Armenians" (With the edition of M. Abeghian and S. Haroutionian, translation and annotation by St. Malkhasyants, Haypethrat, Yerevan, 1961). The historian created the complete history of the Armenian nation from its birth to the times he lived. One of the scientific merits of Khorenatsi's book is that the historian used many written and oral sources conscientiously marking and examining and evaluating them from Mar Abbas Katina, Eusebius of Caesarea, Berossos, Africanos, Bardatsan, and Oghyump hofgothies to myths and songs of Goghtan province.

Yeghishe, History of Vardan and the Armenian War (The translation and annotations by E. Ter-Minasyan, Haypethrat, Yerevan, 1989). The historical events cover about 40 years of history: from the fall of the Arsacid Dynasty to the 460s. It is a reliable source written by an eyewitness. In the conditions of the

complex and complicated situation of the V century, the concepts of *nation, religion,* and *motherland* are both inseparable, powerful bulwarks against the danger of Zoroastrianism and Persianization. Yeghishe presents the inevitability of the Great War from the point of view of political, religious, military, and also social motives. The main axis of History is *patriotism* and *national preservation*.

Koryun, "The Life of Mashtots" (Converted from Grabar into a secular one by M. Abeghyan, YSU Editon, Yerevan, 2005). Koryun is the youngest student of Mesrop Mashtots. After the death of the teacher, he undertakes to write about the origin of the Armenian script and the biography of its inventor. As Manuk Abeghyan notes, "His writing is the first independent historical book invented in Armenian letters, which is rightfully dedicated to the invention of those letters and their origin".

Sebeos, "History" (Textual criticism by G.V. Abgarian, Eastern Armenian translation, and annotations by G.K. Khachatryan and V.A. Yeghiazaryan, "Zangak-97" Edition, Yerevan, 2005). Sebeos is an Armenian historian of the VII century. His History according to researchers contains unique information about the Armenians who lost their statehood and the military-political, socio-economic, and spiritual spheres of neighboring peoples. The following excerpts from Sebeos' "History" refer to the origin of the Mamikonian Dynasty, the policies of neighboring countries towards Armenians, the Smbat Bagratuni beast fight, and the building of the Zvartnots Temple.

G. Mkhitaryan

ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի)

Երևանի համալսարանի հրատարակչություն, 1983

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի)

Երևանի համալսարանի հրատարակչություն, 1983

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

12. Արդ՝ հրաման հասեալ առ իս ոմն Ագաթանգեղոս, որ ի քաղաքէ ի մեծ Հռովմայ, եւ վարժեալ հայրենի արուեստիւ, Հռոմայերէն եւ Յունարէն ուսեալ դպրութիւն, եւ ոչ կարի անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց. եւ ի վերայ այսոցիկ հասեալ ի դուռն Արշակունւոյ, յամս քաջի եւ առաքինւոյն, ուժեղ եւ պատերազմողն Տրդատայ, որ քան զամենայն նախնիսն քաջ եղեալ՝ զանցոյց արութեամբ, որ ըմպշամարտ սկայազօր քաջութիւնս գործեաց ի մարտս պատերազմաց։ Ոչ զիւր ինչ քաջութիւն՝ սուտ հրամայեաց մեզ վիպասանել, եւ ոչ զքմազարդ բանից ինչ առասպելս աւելի քան զարժանն ընթանալ. այլ իրք որ եղեալք վասն յեղանակաց յեղափոխ ժամանակաց, մարտամբոխ պատերազմաց, սուրակոխ բազմահեղ արեանց կոտորածոյ, անհուն զօրաց շփոթելոց, գերութեան աշխարհաց, աւերածոյ գաւառաց, քանդելոյ քաղաքաց, մատնելոյ աւանաց, հարկանելոյ բազմութեան մարդկան վասն քաջութեան քինախնդիր վրիժուց։

13. Արդ՝ հասեալ առ իս հրաման ի մեծ արքայէն Տրդատայ՝ կարգել ինձ ի ձեռնարկութենէ նշանագիր ժամանակագրացն՝ պատմել նախ զհայրենեացն գործս քաջութեան քաջին Խոսրովու, եւ որ ինչ գործք գործեալք քաջութեան մարտից պատերազմացն, ընդ շրջշրջումն տէրութեանն փոխելոյ ընդ կոյսս հարկանելոյ, եւ ազգաց խռովելոյ. եւ կամ վասն մահուանն քաջին Խոսրովու...

եւ կամ վասն հօրամոյն քաջութեանն Տրդատայ, եւ որ ինչ գործ գործեաց յամս յաւուրս իւրոց ժամանակաց. եւ կամ վասն սիրելեաց վկայիցն Աստուծոյ, թէ ո՛րպէս եւ կամ զիա՛րդ եկեալ, իբրեւ լուսաւորք ծագեցին, փարատել զմէգ խաւարի ի Հայաստան աշխարհէս. կամ ո՛րպէս զանձինս իւրեանց փոխանակեցին ընդ Աստուծոյ ճշմարտութեանն. եւ կամ ո՛րպէս գթացեալ Աստուծոյ՝ այց արար Հայոց

ԱՌԱՋԱԲԱՆ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

12. Արդ՝ հրաման է հասել ինձ՝ Ագաթանգեղոսիս, որ մեծ Հռոմ քաղաքից եմ, կրթված հայրենի գիտությամբ, սովորել եմ լատիներենը (հռոմայերեն) ու հունարենը, ուսանել դպրությունը և ոչ խիստ անտեղյակ [մնացել] նշանագրերի արվեստին։ Սրա հետ մեկտեղ եկել եմ Արշակունու արքունիք, քաջ և առաքինի, ուժեղ և պատերազմող Տրդատի տարիներին, որը բոլոր նախնիներից կորովի լենելով՝ արիությամբ գերազանցել է նրանց, եղել է ըմբշամարտիկ և պատերազմների մեջ հսկային վայել քաջություններ է գործել։ Մեզ հարամայեց ոչ իր քաջությունները սուտ վիպասանել և ոչ էլ արժանիքներից ավելի քմազարդ առասպելները չափազանցել, այլ շարադրել եղած դեպքերը՝ [տալով նկարագրությունը] հարափոփոխ ժամանակների հանգամանքների, մարտամբոխ պատերազմների, սրակոխ կոտորածների բազմահեղ արյան, իրար բախվող անթիվ զորքերի, երկրների [ժողովուրդների] գերության, գավառների ավերածության, քաղաքների կործանման, ավանների ավերման, մարդկային բազմությունը կոտորելու՝ քինախնդիր վրիժառության քաջության համար։

13. Արդ՝ ինձ հրաման է հասել Տրդատ մեծ արքայից՝ կարգով գրի առնել ժամանակների դեպքերը, պատմելով նախ քաջ Խոսրովի հայրենական պատերազմների ժամանակ կատարած քաջությունները, տերության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, ամեն կողմ ուղղված հարձակումները, ազգերի խռովությունը, քաջ Խոսրովի մահը.... ազնվահայր Տրդատի քաջության մասին, իր թագավորության ժամանակ արած գործերը։

Եւ Աստծու սիրելի նահատակների մասին, թե ինչպես կամ ինչու եկան, ծագեցին իբրև լուսատուներ՝ փարատելու համար մեզը մեր Հայաստան աշխարհից, թե ինչպես իրենց անձերը նվիրաբերեցին Աստծու Ճշմարտու-

աշխարհիս, ի ձեռն առ միոջ եցոյց զսքանչելիս մեծամեծս, որ համբերութեամբ բազում եւ ազգի ազգի փորձութեանց եւ կապանաւոր վշտաց մենակռիւ մենամարտիկ երկպատական բռնութեան յԱշտարակ քաղաքի վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ, որոյ զվրկայ անուն ժառանգեալ.... Սա մտեալ ի դրրունս մահու՝ դարձեալ անտի կամօքն Աստուծոյ, վարդապետութեանն Քրիստոսի պատգամաւոր գտեալ, յետ Աստուծոյ սքանչելագործ պատուհասին մարդասիրութեան։ Իսկ բարեացապարտն Տրդատ յանկարծակամ՝ կենացն ասպնջական ցանկալի ամենեցուն լինէր, որ աշխարհածնունդ հայրենեացն որդի գտանէր շնորհօքն Աստուծոյ, եւ յաւիտենական կենացն մերձաւոր լինէր։

16. Ընթեցեալ զԹորգոմայ ազգիս, զՀայաստան աշխարհիս զաստուածապարգեւ աւետեացն աւետարանին քարոզելոյ բանին կենաց, թէ՛ ո՛րպէս կամ զիա՛րդ ընկալան, եւ ո՛րպիսի արամբ, կամ ո՛րոք ուստեք, որ զայս նորոգատուր զառաքելաբար շնորհս յանձին ցուցանելով՝ այնպիսի աստուածեղէն շնորհօք երեւեցաւ.... եւ կամ ո՛րպէս յայնմհետէ շինութիւն եւ խաղաղութիւն, լիութիւն եւ պտղաբերութիւն եւ բժշկութիւն աղօթիւք նորա շնորհեցաւ յԱստուծոյ։

թյանը, կամ ինչպես Աստված գթալով այցելեց մեր Հայոց աշխարհը, մեծամեծ հրաշքներ ցույց տվեց մի մարդու ձեռքով, որը համբերությամբ և հաղթությամբ տարավ բազում ու տեսակ-տեսակ փորձություններ եւ կաշկանդող վշտի մեջ Արտաշատ քաղաքում մենամարտիկ եղավ երկպատիկ բռնության դեմ, հանուն Քրիստոսի հաջողությամբ դիմացավ և նահատակի անուն ժառանգեց։ ...Մտավ մահվան դուռը, ապա Աստծու կամքով վերադարձավ, դառնալով Քրիստոսի վարդապետության պատգամավորը, Աստծու մարդասիրական հրաշագործ պատժից հետո։ Իսկ երախտավոր Տրդատը, կամովին դժվարին կյանք ընտրելով՝ ամենքին ցանկալի դարձավ, Աստծու շնորհներով իր բնաշխարհիկ հայրենիքի որդին եղավ եւ հավիտենական կյանքին մերձավոր դարձավ։

16. Ընթեռնելով Ավետարանի աստվածապարգև ավետիսները և կենաց խոսքը մեր Թորգոմյան ազգին և մեր Հայաստան աշխարհում քարոզելու [գրվածքը], թե ինչպես կամ ինչպիսի մարդու կողմից ընդունվեց այն և կամ ո՛վ էր նա, որ այս նորոգատուր առաքելական շնորհները իր վրա վերցնելով երեվան եկավ այսպիսի աստվածեղեն շնորհքով....

Թե ինչպես դրանից հետո նրա աղոթքներով շենություն ու խաղաղություն, լիություն, պտղաբերություն ու բժշկություն շնորհեց Աստված։

ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՔ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

18. Ա. Ընդ նուազել ժամանակաց թագաւորութեանն Պարթեւաց, ի բառնալ տէրութեանն յԱրտաւանայ որդւոյ Վաղարշու, ի սպանանել զնա Արտաշրի որդւոյ Սասանայ,-որ էր նախարար ոմն ի Ստահր գաւառէ, որ եկեալ միաբանեաց զզօրս Պարսից, որք լքին խոտեցին մերժեցին անարգեցին զտէրութիւնն Պարթեւաց, եւ հաճեցան հաւանութեամբ ընտրել զտէրութիւնն Արտաշրի որդւոյ Սասանայ,- արդ իբրեւ յետ մահուն հասանելոյ գուժիս այսորիկ առ Խոսրով թագաւորն Հայոց,- որ էր երկրորդ տէրութեանն Պարսից, զի որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն....

19. Արդ՝ ի միւս եւս ի գլուխ տարւոյն սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել եւ զօր բովանդակել, գումարել զզօրս Աղուանից եւ Վրաց, եւ բանալ զդրունս Ալանաց եւ զՃորայ պահակին, հանել զզօրս Հոնաց, ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչեւ ի դրունս Տիւբոնի: Ուխտ եղեալ միանգամայն՝ վրէժ խնդրել մեծաւ քինութեամբ զանկանելն իւրեանց ի տէրութենէն.սպառ սպուռ ջանայր զվրէժ խնդրել, մեծաւ քինու նախանձաբեկ լինելով....Վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր եւ քաջ առն եւ ձիոյ եւ բուռն կազմութեամբ Աղուանք, Լփինք եւ Ճիղպք, Կասպք եւ այլ եւս որ ի սմին կողմանց, զի զվրէժ արեանն Արտաւանայ խընդրեսցեն:

20. Զի թէպէտ եւ էր ինքն ի մեծի տրտմութեան վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին, զի հնազանդեցան եւ ի ծառայութիւն մտին համբարձելոյ թագաւորութեան Ստահրացւոյն, եւ ընդ նմին միամտեցան. զի թէպէտ եւ էր Խոսրովու եւ դեսպան արարեալ, զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեսցեն եւ նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա թագաւորու-

ԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐՔԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

18.Ա. Երբ Պարթևների թագավորությունն իր վախճանին հասավ, վերացվեց Վաղարշի որդու՝ Արտավանի տերությունը, և նա սպանվեց Սասանի որդի Արտաշիրի ձեռքով: Սա մի նախարար էր Ստահր գավառից, որ գալով միավորեց պարսից զորքերը, որոնք լքեցին, հեռացան, մերժեցին ու անարգեցին պարթևների տերությունը և հաճույքով նախընտրեցին Սասանի որդի Արտաշիրի իշխանությունը: Արդ, երբ այս մահվան գույժը հասավ Հայոց Խոսրով թագավորին, որը Պարսից տերության մեջ երկրորդն էր, քանզի նա, ով Հայոց թագավոր էր՝ Պարսից տերության մեջ երկրորդ [անձն] էր....

19. Արդ՝ մյուս տարեմուտին Հայոց թագավոր Խոսրովը սկսեց բանակ կազմել և զորք գումարել: Հավաքեց աղվանից ու վրաց զորքերը և բացեց Ալանաց ու Ճորա Պահակի դռները, դուրս բերեց հոների զորքերը, ասպատակ սփռեց Պարսից երկիրը և արշավեց Ասորեստանի կողմերը մինչև Տիզբոնի (Տիսբոն) դրռները: Ուխտ դրեց մեծ քինախնդրությամբ վրեժ լուծել իրենց տոհմը իշխանությունից զրկելու համար: Ջանում էր վրեժը լիովին լուծել, որովհետև մեծ քեն ուներ և ոխակալությունից վառվում էր: ....Շուտափույթ օգնության հասան աղվանները, լփինները, ճիղբերը և կասպերը ժիր ու քաջ այրուձիու մեծ բազմությամբ և ուժեղ պատրաստությամբ, ինչպես նաև ուրիշներ այն կողմերից, որպեսզի Արտավանի արյան վրեժը լուծեն:

20. Քանզի թեպետ ինքը մեծ տրտմության մեջ էր իր հարազատ տոհմի, ազգակիցների համար, որոնք Ստահրացու հզորացող թագավորությանն էին հնազանդվել ու նրա իշխանության տակ մտել՝ համակերպվելով նրան, եւ, թեեւ Խոսրովը դեսպան էր ուղարկել իր տոհմակիցներին, որ իրեն օգնության գան,

թեանն, անտի սմա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց, եւ յայնմ մարզէ եւ յիւրեանց ի բուն աշխարհէն եւ ի քաջ ազգաց եւ ի մարտիկ զօրացն զի ի թիկունս հասցեն. սակայն տոհմքն եւ ազգապետքն եւ նախարարքն եւ նահապետքն Պարթեւաց ոչ լինէին ունկնդիր. զի միամտեալ եւ հաւանեալ եւ նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշիրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին եւ եղբայրութեանն։

21. Սակայն առեալ Խոսրովու զբազմութիւն զօրաց իւրոց, եւ որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան նիզակակիցք գործոյն պատերազմի։ Իսկ իբրեւ ետես թագաւորն Պարսից զայն ամբոխ բազմութեան գնդի, զի մեծաւ ուժով դիմեալ եկեալ հասեալ էին ի վերայ նորա՝ ել եւ նա ընդ առաջ նոցա ի պատրաստութիւն պատերազմի։ Բայց սակայն ոչ կարաց ունել զդէմ նորա, փախստեայ լինէր առաջի նոցա. զհետ մտեալ կոտորէին զամենայն զօրսն Պարսից, եւ դաշտացն եւ ճանապարհացն ցիր դիաթաւալ կացուցանէին եւ չարախտավատ վատնէին եւ անհնարին եւ հարուածս ի վերայ հասուցանէին։ Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ եւ բազում աւարաւ եւ ցնծալից ուրախութեամբ ի կողմանս Հայոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք մեծաւ ուրախութեամբ եւ բարի անուամբ եւ բազում աւարաւ։

22. Ապա հրաման տայր ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել, հրովարտակ առնել, յեօթն բագինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտաման։ Սպիտակ ցուլք եւ սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք եւ սպիտակ ջորւովք, ոսկեղէնեւ արծաթեղէն զարդուք, ի վերջաւորս փողփողեալքս, նշանակապ պալարակապ մետաքսիւքն եւ ոսկովք պսակօք եւ արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք, ոսկով եւ արծաթով, ի հանդերձս պայծառ եւ ի զարդս գեղեցիկս, զիւրազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն

դեմ կանգնեն նրա թագավորությանը և քուշանների կողմերից ու իրենց բուն երկրից օգնության ձեռք մեկնեն քաջ ցեղերն ու զորքերը՝ թիկունք լինելու, այնուամենայնիվ պարթևական տոհմերը, ազգապետները, նախարարներն ու նահապետները չանսացին նրան, որովհետև համաձայնվել, համակերպվել և հնազանդվել էին Արտաշիրի տերությանը՝ փոխանակ նախընտրեն իրենց ազգատոհմի տերությունը և եղբայրակցությունը։

21.Սակայն Խոսրովը առավ իր զորքի բազմությունը և սրանց, որ այլևայլ տեղերից օգնության էին հասել պատերազմի գործում նիզակակից լինելու։ Իսկ երբ Պարսից թագավորը տեսավ հավաքված զորքի այդ բազմությունը, որ մեծ ուժով եկել հասել էր իր դեմ, ինքը ևս նրանց դեմ ելավ պատերազմի պատրաստությամբ։ Բայց չկարողացավ դիմադրել և փախավ նրանց առջևից, իսկ [նրանք] հետապնդելով՝ կոտորեցին Պարսից ամբողջ զորքը և դաշտերի ու ճանապարհների վրա դիաթավալ սփռելով ու դաժանաբար կոտորելով՝ նրանց հարվածներ հասցրեցին։ Հայոց թագավորը կոտորածից մեծ հաղթությամբ, բազում ավարով և ցնծալի ուրախությամբ վերադարձավ Հայոց կողմերը, Այրարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը՝ անհուն ուրախությամբ, բարի և մեծ համբավով։

22. Ապա հրաման տվեց բոլոր կողմերը պատվիրակներ ուղարկել, հրովարտակներ հղել՝ հրամայելով յոթ մեհյանների բագիններին ուխտի գնալ, պաշտամունք կատարել աստվածների կուռքերին։ Իր Արշակունի տոհմի հայրենական պաշտամունքի վայրերը մեծարեց՝ նվիրելով սպիտակ ցուլեր և նոխազներ, ճերմակ ձիեր ու ջորիներ, ոսկեղեն ու արծաթեղեն զարդեր՝ փողփողուն ծոպերով, պսակներով ու շարաններով զարդարուն մետաքսե զգեստներ, ոսկի պսակներ ու արծաթե զոհարաններ, թանկագին քարերով լի գեղեցիկ անոթներ, ոսկի ու արծաթ, պայծառագույն հանդերձներ և գեղեցիկ զարդեր։ Մեկ հինգերորդ բաժին հանեց բերված հա-

մեծարէր։ Նա եւ հինգերորդ եւս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, եւ մեծամեծ պարգեւս քրմացն շնորհէր։ Իսկ զօրացն որ զիւրեաւն էին՝ ետ պարգեւս եւ արձակեաց յիւրմէ։

23. Բ. Իսկ ի գալուստ ամին միւսոյ զօր բազում կուտէր յոյժ, գումարտակ առնէր, զնոյն զօր կոչէր, եւ եւս բազում քան զնոյն ասպատակ սփռեալ զկողմամբքն Ասորեստանի. մանաւանդ զի եւ զօրք Տաճկաց ի թիկունս եկեալ էին. աւար առեալ զերկիրն ամենայն՝ քաջութեամբ դառնային յիւրաքանչիւր տեղիս։ Եւ ամս մետասան ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ՝ աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից թագաւորութեամբն եւ ընդ իշխանութեամբն էր։

36. Անդ ոմն պրծեալ ապրեցուցանէր ի հինէ անտի որդւոցն Խոսրովու թագաւորին Հայոց՝ մանկիկ մի փոքրիկ, անուն Տրդատ. առեալ դայեկացն փախուցեալ ի դուռն կայսեր ի կողման Յունաց։ Եւ զերկիրն Հայոց այնուհետեւ եկեալ արքային Պարսից յիւր անուն զտեղիսն անուանէր....Վիհս փոսացուցեալ՝ սահմանս հաստատէին, եւ տեղւոյն անուն եղեալ Դրունս Փոսից, առ տեղեաւն որում Սոյզն կոչէին....

37. Արդ՝ երթեալ, սնեալ եւ ուսեալ Տրդատէս առ կոմսի ումեմն Լիկիանէս անուն կոչեցելոյ։ Իսկ որդի Պարթեւին որ ի կողմանս Յունաց գաղթեաց՝ սնանէր եւ ուսանէր ի Կեսարիայ Կապադովկացւոց քաղաքին. եւ մերձաւորեալ զնա սնոյց դայեկօք երկիւղիւն Քրիստոսի. եւ ուսեալ եւս զքրիստոսական դպրութեան հանգամանս, ընտանի եղեալ գրոց Աստուծոյ, եւ մերձեալ յերկիւղ Տեառն, որոյ ճանաչէր Գրիգորիս։ Իբրեւ տեղեկացաւ ի դայեկացն հայրենի գործոցն որ եղեալ էին՝ ել եւ գնաց առ Տրդատիոս ըստ հեշտ պաշտաման։ Եւ թաքուցանէր զանձն, եւ զայն ինչ ի վեր ոչ հանէր, թէ ո՛յր, կամ ուստի՛, կամ ո՛րպէս, կամ զիա՛րդ....

45. Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդառաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս. եւ

ռուստ ավարից և մեծ պարգևներ շնորհեց քուրմերին, իսկ իր հետ եղած զորքին ընծաներ տվեց ու արձակեց։

23. Բ. Իսկ երբ եկավ մյուս տարին, չափազանց շատ զորք կուտակեց, գնդեր կազմեց, նույն զորքը կանչեց, այն զորքից էլ ավելի, ասպատակ սփռեց Ասորեստանի կողմերը, մանավանդ որ տաճկաց (արաբների) զորքը օգնության էր եկել, և ավարելով ամբողջ երկիրը՝ յուրաքանչյուրը քաջությամբ դարձավ իր տեղը։ Այսպես տասնմեկ տարի շարունակաբար ավարի մատնելով ավերեցին այն բոլոր երկրները, որոնք Պարսից թագավորության իշխանության ներքո էին։

36. Այդ ժամանակ մի մարդ, ավազակից ազատելով, փրկում է Հայոց Խոսրով թագավորի որդիներից Տրդատ անունով մի մանկան, [որին] դայակները փախցրին կայսեր արքունիքը, Հունաց կողմերը։ Իսկ Պարսից արքան, գալով այնուհետև Հայաստան, իր անվամբ կոչեց այդ վայրերը....Փոսեր փորելով սահմաններ հաստատեց և տեղի անունը դրեց Փոսից դրունք այն վայրերում, որոնք կոչվում էին Սույզն....

37. Արդ, Տրդատը գնաց Լիկիանես անունով մի կոմսի մոտ դաստիարակություն և ուսում ստացավ, իսկ Պարթևի որդին, որը հունաց կողմերն էր տարվել, մեծացավ և ուսում ստացավ Կապադովկիայի Կեսարիա քաղաքում։ [Մի ոմն] տեր կանգնելով՝ դայակների միջոցով նրան դաստիարակեց Քրիստոսի երկյուղով, և նա ուսանելով քրիստոնեական հանգամանքները՝ ընտելացավ Աստվածաշնչին, ճանաչեց Տիրոջ երկյուղը. նրա Անունն էր Գրիգոր (Գրիգորիս)։ Երբ դայակներից տեղեկացավ իր հոր կատարած գործերը, ելավ ու գնաց Տրդատին կամավոր ծառայելու։ Թաքցրեց իր անձը և ոչինչ չէր հայտնում, թե ում համար, կամ որտեղից, կամ ինչպես էր [հայտնվել]....

45. Իսկ մյուս օրը առավոտյան հրամայեց (կայսրը) ծիրանի պատմուճանը Տրդատի վրա նետել, և զարդարեցին կայսերական

զարդարեցին զՏրդատիոս ի զարդ կայսերական, արկեալ զնովաւ զնշան թագաւորութեան. եւ ոչ ոք գիտէր վասն նորա. հրաման ել ամենացուն, թէ ինքն իսկ կայսր իցէ։ Եւ նորա առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ ի ձայն փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր մինչեւ յանդիման թշնամեացն։ Իբրեւ յանդիման եղեն միմեանցն կայսերակերպն եւ թագաւորն՝ մտրակ ի կուշտ արարեալ երիվարացն ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերակերպն զթագաւորն. ձերբակալ արարեալ՝ ածեալ յանդիման առաջի կայսերն կացուցանէր։

46. Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս, եւ մեծամեծ պարգեւս ետ նմա. թագ կապեաց ի գլուխ նորա եւ ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա, եւ կայսերակերպն զարդու շքեղացուցեալ մեծարեաց զնա. եւ գումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յօգնականութիւն նմա, եւ արձակեաց յիւրական աշխարհն Հայոց։

47. Եւ յետ մարտին յաղթութեան քաջութեանցն զոր արար՝ դարձեալ լինէր ի կողմանցն Յունաց Տրդատ արքայ Հայոց մեծաց։ Խաղաց գնաց թագաւորն ի կողմանս Հայոց, եւ եկն եգիտ անդ զօրս բազումս Պարսից, զի զաշխարհն յինքեանս գրաւեալ էին ի ծառայութիւն. զբազումս կոտորէր, եւ զբազումս փախստականս արարեալ ի կողմանս Պարսից արկանէր. եւ զհայրենեացն տէրութիւն յինքն նուաճեաց, եւ զօրացաւ ի վերայ սահմանաց նորա։

48. Ե. Յառաջին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց մեծաց, խաղացին եկին հասին յԵկեղեաց գաւառ. ի գեւղն Երիզայ, ի մեհեանն Անահտական, զի անդ զոհս մատուսցեն. եւ իբրեւ կատարեցին զգործն անարժանութեան՝ իջին բանակեցան առ ափն գետոյն զոր Գայլն կոչեն։

49. Իբրեւ եկն եմուտ ի խորան անդր եւ յընթրիս բազմեցաւ, եւ իբրեւ ընդ գինիս մտին՝ հրաման ետ թագաւորն Գրիգորի, զի պսակս եւ թաւ ոստս ծառոց նուէրս տարցի բագինին

զարդով, զցելով նրա վրա թագավորական նշանը. ոչ ոք չգիտեր նրա մասին։ Հրաման ելավ ամենքին, թե սա ինքն իսկ կայսրն է։ Եվ առնելով զորքերի համակ բազմությունը, փողի ձայնով արագ մոտեցավ, մինչև որ կանգնեց թշնամիներին դեմ հանդիման։ Երբ միմյանց դիմաց կանգնեցին կայսերակերպն ու (գոթերի) թագավորը, երիվարներին մտրակելով իրար հասան։ Այնտեղ կայսերակերպը հաղթեց թագավորին և բռնելով նրան՝ բերեց կանգնեցրեց կայսեր առջև։

46.Այն ժամանակ թագավորը հույժ բարձրացրեց Տրդատին և մեծամեծ պարգևներ տվեց նրան, թագ դրեց գլխին և ծիրանի պատմուճաններով զարդարելով՝ պատվեց նրան։ Կայսերական զարդով շքեղացնելով մեծարեց և օգնական բազում զորք հանձնելով՝ ուղարկեց նրան սեփական Հայոց աշխարհը։

47. Հաղթական մարտում քաջություններ գործելուց հետո Մեծ Հայքի Տրդատ արքան վերադարձավ Հունաց կողմերից։ Թագավորը շարժվեց եկավ Հայոց կողմերը և հասնելով գտավ այնտեղ Պարսից մեծաքանակ զորք, որ երկիրը գրավել էր, հպատակեցրել։ Շատերին կոտորեց և շատերին փախստական դարձնելով՝ Պարսից կողմերը քշեց, իսկ հայրենի տերությունը նվաճեց ու զորացավ նրա սահմանների վրա։

48.Ե. Մեծ Հայքի արքա Տրդատի առաջին տարում շարժվեցին եկան, հասան Եկեղեաց գավառը, Երիզա գյուղը, Անահիտի մեհյանը, որպեսզի այնտեղ զոհեր մատուցեն։ Երբ անարժան գործերը կատարեցին, իջան, տեղավորվեցին այն գետի ափին, որ Գայլ է կոչվում։

49. Թագաւորը եկավ մտավ վրանը, ընթրիքի բազմեց. երբ գինովցան, թագավորը հրաման տվեց Գրիգորին, որ պսակներ ու ծառերի թավ ճյուղեր նվիրաբերի Անահիտի արձանի բագինին։ Սակայն նա հանձն չառավ աստվածների երկրպագության պաշտամունքը կատարել։

51. Թագավորն սկսեց խոսել Գրիգորի հետ և

Անահտական պատկերին։ Այլ նա ոչ առնոյր պաշտօնատար լինել դիցն երկրպագութեան։
51. Խօսել սկսաւ թագաւորն ընդ Գրիգորի եւ ասէ. «Այսչափ ամք են, զի տեսի ես զքեզ, եւ յամենայն զօրութենէ քումմէ ծառայեցեր դու ինձ միամտութեամբ. եւ ես գոհ էի զվաստակոց քոց եւ ունէի ի մտի կեցուցանել զքեզ. ընդէ՞ր ոչ առնես զկամս իմ»։
54. Ասէ Գրիգորիս. «Ես քեզ միամտութեամբ վաստակեցի. ինձէն երբեք զիմ վաստակս ապախտ ոչ արարից. զի եւ գրեալ է յԱստուծոյ, եթէ «Ծառայեսցեն մարմնաւոր տերանց». զի այնմ տէր է հատուցանող բարեաց. զի ոչ ինչ ակն ի քէն ունէի եթէ հատուսցես ինձ, այլ յԱրարչէն, որոյ են ստացուածք իւր, երեւելի եւ աներեւոյթ անանուածք ամենայն»։
56. «Եւ որ ասեսդ, թէ փոխանակ բարձ տալոյ եւ յառաջ ձգելոյ ի բանտ եւ ի կապանս արկանեմ՝ երանի է ինձ, զի առից յանձն զօրինակ կապանաց Տեառն իմոյ. եւ ընդ նմին ուրախ եղէց եւ ցնծացայց յաւուր գալստեան նորա։ Եւ մերժելով ի քոց բազմականացդ՝ ահա արկանես ինձ բազմականս առ հօրն հաւատոյ Աբահամու, եւ ընդ արդարսն ամենայն, որ ուրախ լինելոց են յարքայութեանն Աստուծոյ»։
60. «Իսկ ինձ լիցի ամենայն հնազանդութեամբ եւ ամենայն միամտութեամբ եւ երկիւղիւ պաշտել զԱստուած արարիչ եւ զՈրդին հաստիչ եւ զՀոգին կազմիչ արարածոց, որ արար զամենայն, եւ եղծանել կարէ, եւ դարձեալ նորոգէ ողորմութեամբ իւրով։ Այլ մեր կեանքս չեն յուսահատութեամբ. զի պաշտեմք զկենդանին, որ կարող է կենդանութիւն տալ մեզ, յորժամ եւ կամի. զի թէպէտ եւ մեռանիմք՝ մենդանի եմք։ Զի որպէս որդին Աստուծոյ մեռաւ եւ եկեաց՝ եւ մեզ եցոյց օրինակ կենդանութեան յարութեամբ իւրով. զի որ մեռանիմք վասն նորա՝ լինելոց եմք կենդանիք, յորժամ յայտնեսցի թագաւորութիւն Արարչին առ արարածս իւր, յորժամ խնդրեսցէ զվրէժ ամբարշտութեան, անաչառ դատաստանաւն ստուգութեամբ պահանջեալ յամենեցունց առ

ասաց. «Այսքան տարի ես քեզ ճանաչել եմ, և դու քո ամբողջ էությամբ հավատարմորեն ծառայել ես ինձ, և ես գոհ էի քո աշխատանքից ու մտադիր էի ապրեցնել (վարձատրել) քեզ։ Ինչու՞ չես կատարում իմ կամքը»։
54. Գրիգորը ասաց. «Ես քեզ հավատարմությամբ ծառայեցի և երբեք իմ վաստակը ի դերև չեմ հանի, քանզի գրված է Աստծու կողմից. «Թող ծառայեն մարմնավոր տերերին», քանզի նա է բարիքներ հատուցող Տերը. ես ոչինչ չէի ականկալում քեզնից, որ ինձ հատուցես, այլ՝ Արարչից, որին իբրև սեփականություն պատկանում են բոլոր տեսանելի եւ աներևույթ արարածները»։
56. Ասում ես, թե փոխանակ բարձ տալու և առաջ տանելու, բանտ ու կապանք կտաս։ Երանի ինձ, այսպիսով իմ Տիրոջ կապանքների օրինակը ինձ վրա կունենամ և նրա հետ ուրախ կլինեմ ու կցնծամ նրա գալստյան օրը։ Մերժելով ինձ քո սեղանակակիցը դարձնել, ահա սեղանակից կդարձնես հավատքի հոր՝ Աբրահամին և բոլոր արդարներին, որոնք ուրախ են լինելու Աստծու արքայության մեջ։
60. «Իսկ ինձ ցանկալի է ամենայն հնազանդությամբ և գավատարմությամբ ու երկյուղով պաշտել արարիչ Աստծուն, հաստիչ Որդուն և արարածներին ստեղծող Հոգուն, որն ստեղծել է ամեն ինչ, կարող է եղծանել և դարձյալ նորոգել իր ողորմությամբ։ Եվ մենք չենք հուսահատվում, քանզի պաշտում ենք կենդանի Աստծուն, որը կարող է մեզ կենդանություն տալ, երբ որ կամենա, թեպետև մեռնենք, կենդանի ենք։ Որովհետև ինչպես Աստծու որդին մեռավ և ապրեց ու իր հարությամբ մեզ կենդանության օրինակ ցույց տվեց, որ եթե մեռնենք նրա համար, կենդանի ենք մնալու, երբ Արարչի թագավորությունը հայտնվի իր արարածներին, երբ ամբարշտության պատիժը տրվի, անաչառ դատաստանով ստուգությամբ բոլորից առհասարակ պահանջվի»։
83. Քանզի մարդիկ սիրեցին սնոտի աստվածների պատկերների անխոս կուռքերը, այդ

հասարակ»։

83. «Քանզի սիրեցին մարդիկ զանխօս կուռս» պատկերաց դիցն սնոտեաց՝ վասն այսորիկ եւ որդին Աստուծոյ մարմնովն պատկեր եղեալ մարդոյ, ի նմանութիւն մարդկան պատկերաց, ելեալ ի բարձրաւանդակ խաչն, իբրեւ ի վերայ բարձր դիտակի ելեալ՝ ցուցանէր զանբարբառ մեռելութիւնն առ արարածս. վասն որոյ տեսին զնա ի վերայ բարձուն տիեզերք, ցնծացան եւ երկիր պագին եւ հնազանդեցան։

90. «Եւ արդ՝ տու՛ր, Տէր զօրութիւն պատերազմել ի վերայ ճշմարտութեան անուանդ քոյ եւ մեռանել, եւ դարձեալ նորոգել փառօք միւսանգամ, յորժամ դարձեալ առաքեսցես առ մեզ զհատուցմանց զիւրաքանչիւր կշռիչ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս. զի կացցուք եւ մեք....եւ առցուք զպսակն յաղթութեան ընդ սիրելիս քո....»։

123. Իսկ թագաւորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն աւերէր զերկիրն Պարսից թագաւորութեանն եւ զաշխարհն Ասորեստանի, աւերէր եւ հարկանէր ի հարուածս անհնարինս։ Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ «Իբրեւ զսէգն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթուրս գետոց, եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց»։ Վասնն զի սէգ իսկ էր առ հանդերձս եւ այլ ուժով պնդութեան, հարստութեամբ, բուռն ոսկերօք եւ յաղթ մարմնով, քաջ եւ պատերազմող անհնարին, բարձր եւ լայն հասակաւ. որ զամենայն ժամանակս կենաց իւրոց պատերազմեալ եւ առնէր մարտիցն յաղթութիւն։ Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր, եւ զհոյակապ շքեղութիւն յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցանէր. հարկանէր ի հարուածս զթշնամիսն, եւ խնդրէր զքէնրս վրիժուց իւրոց հայրենեացն. առնոյր աւար բազում ի կողմանցն Ասորւոց, եւ թափէր կապուտ սաստիկ ան հնարին ի նոցանէն։ Արկանէր ի սուր զզօրս Պարսից, եւ թափէր կողոպուտ անհնարին. լինէր առաջնորդ առն

պատճառով էլ Աստուծոյ որդին իր մարմնով մարդու կերպարանք առավ՝ մարդկային պատկերի նմանությամբ և ելնելով բարձրադիր խաչի վրա, որպես բարձր դիտակետի, ցույց տվեց [մարդկային] արարածներին՝ անբարբառ մեռելությունը, ուստի տեսնելով նրան տիեզերքի բարձունքի վրա՝ ցնծացին ու հնազանդվեցին։

90. «Արդ՝ զորություն տուր, Տեր, պատերազմելու ու մեռնելու քո անվան ճշմարտության համար և մյուս անգամ փառքով վերածնվելու, երբ դարձյալ առաքես մեր յուրաքանչյուրի հատուցման կշռիչին՝ մեր տեր Հիսուս Քրիստոսին, որ մենք....քո սիրելիների հետ հաղթության պսակն առնենք....»։

123. Իսկ Տրդատ թագավորը իր թագավորության ամբողջ ժամանակ ավերում էր, քանդում Պարսից թագավորության երկիրն ու Ասորեստանը, ավերում էր և ուժեղ հարվածներ հասցնում։ Սրա համար էր, որ պատշաճեցին առակաց կարգի այն խոսքերը, թե «Ինչպես սեգ Տրդատը, որն իր համարձակությամբ ավերեց գետերի թմբերը և իր հանդգնությամբ ցամաքեցրեց ծովերի հորձանքը»։ Վասնզի իրոք սեգ էր հանդերձանքով և մեծ ուժով, զորությամբ, ամուր ոսկորներով և հաղթ մարմնով, քաջ էր և կատաղի պատերազմող, բարձր և լայն հասակով։ Իր կյանքի բոլոր տարիներին նա պատերազմել էր և մարտերում հաղթություն ձեռք բերել։ Քաջության փառքի մեծ անուն ստացավ և հոյակապ, փառավոր հաղթանակներ տարավ ամբողջ երկրում, թշնամիներին հարվածեց՝ ցանկալով իր հայրերի վրեժը լուծել։ Ասորիքի կողմից շատ ավար առավ և անխնա կողոպտեց նրանց։ Սրով կոտորեց պարսից զորքը և հսկայական կողոպուտ վերցրեց, առաջնորդեց հունաց այրուձին և նարանց ձեռքը տվեց թշնամիների բանակները, հոների զորքերը հանեց և գերեց պարսից գավառները։

124. Այն տասներեք տարիներում, որ Գրիգորը մնաց բանտի բերդում և Խոր վիրապում

եւ ձիոյ զօրացն Յունաց, եւ մատնէր նոցա զբանակս նոցա. հանէր զզօրս Հոնաց սաստիկ յոյժ, եւ գերէր զկողմանս Պարսից։

124. Եւ զայն ամս երեքտասան, որ եղեւ Գրիգորիոս ի բերդին բանդին եւ ի խոր վիրապին, կին ոմն այրի, որ էր ի բերդին յայնմիկ, հրաման առեալ յարհաւրաց՝ զի աւուրն նկանակ մի արարեալ պատրաստական ընկենուլ ի ներքս ի խոր վիրապն....

132. Իսկ զամենայն ամս ժամանակաց իւրոց թագաւորն Տրդատ զոռացեալ ընդ Պարսից տէրութեանն՝ խնդրէր զքէնս վրիժուց մարտիւք պատերազմաց։ Իսկ ի լնուլ ամացն, որ եղեւ Գրիգորիոս ի վիրապին, իբրեւ ամս երեքտասան, եւ էր մարտ սաստիկ խստութեան Տրդատայ ընդ Պարսից թագաւորին՝ զամենայն աւորուրս կենաց իւրոց։

149. Եւ յետ այսորիկ սուրբն Գայիանէ սանականաւն Հռիփսիմեաւ եւ պարկեշտաժողով ընկերօքն հանդերձ՝ դէմ եդեալ տարադէմ գնացեալ փախստեայ լինէին, զի զանձինս իւրեանց սրբութեամբ պահեսցեն ....ի դիւական խառնից մարդկան։

150. Յայնմ ժամանակի գային հասանէին յերկիրն Հայոց, յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, զոր եւ Նորաքաղաքն կոչեն, ի նիստս թագաւորացն Հայոց։ Այնուհետեւ եկեալ մտնէին ի հնձանայարկս այգեստանոյն, որ կան շնեալ ի հիւսիսոյ յարեւելից կուսէ....

158. Մինչդեռ յայն յոյզ քննութեան էին յաշխարհին սահմանացն Հայոց՝ սուրբ վկայքն այնքիկ եկեալ ղօղեալ էին յարքայական կայանին, ի նմին թագաւորականին ի Վաղարշապատ քաղաքի։ Եւ յետ սակաւ ինչ աւուրքն այնոցիկ վաղվաղակի ի մէջ եկեալ խուզիւք իրքն յայնտէին։

162. Իսկ իբրեւ իրքն հռչակեցան զնոցանէն՝ ապա աւուրս երկուս ասպարափակ արարեալ՝ տուեալ պահել զնոսա անդէն ուր մի գտինն լեգէոն հետեւակ զօրուն. ապա յետ երկուց աւուրցն համաբաւ հռչակեալ պարկեշտութեան զանազան գեղեցկութեանն Հռիփսի-

այրի կին, որ այդ բերդում էր, երազում հրաման ստացավ, որ օրական մի նկանակ պատրաստելով՝ Խոր վիրապից վայր գցեր։

132.Իր իշխանության բոլոր տարիներում Տրդատ թագավորը սպառնալով պարսից տերությանը՝ կամենում էր վրեժ լուծել պատերազմներով։ Իսկ այն տարիների ընթացքում, երբ Գրիգորը վիրապում էր՝ գրեթե տասներեք տարի, Տրդատը սաստիկ մարտ էր մղում պարսից թագավորի դեմ իր կյանքի բոլոր օրերում։

149. Սրանից հետո սուրբ Գայանեն Հռիփսիմե սանով ու մյուս պարկեշտ ընկերներով հանդերձ գնացին, հեռացան՝ փախուստ տալով, որպեսզի իրենց անձերը սրբությամբ պահպանեն .... դիվական մարդկանց խառնակությունից։

150. Այն ժամանակ նրանք եկան-հասան Հայոց երկիրը, Այրարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը, որը Նորաքաղաք է կոչվում, Հայոց թագավորների նստավայրը։ Այնուհետև եկան-մտան այգեստանների հնձանները, որոնք շինված էին հյուսիս-արևելյան կողմում։

158. Մինչդեռ Հայոց աշխարհի սահմաններում քննության իրարանցման մեջ էին, այն սուրբ վկաները եկան թաքնվեցին արքայական նստավայրի մոտ, նույն թագավորական Վաղարշապատ քաղաքում։ Այն օրերից քիչ անց շուտով որոնումներով մեջտեղ բերվելով հայտնի դարձան։

162. Երբ նրանց մասին իրողությունը հայտնի դարձավ, ապա երկու վահանափակ շրջապատեցին նրանց՝ հետևակ զորքի մի լեգեոնի հանձնարարելով պահել նրանց այնտեղ, ուր գտնվում էին։ Ապա երկու օր անց Հռիփսիմեի պարկեշտության ու չքնաղ գեղեցկության համբավը հռչակվելով բազմամբոխ հրապարակներում տարածվեց, և ամեն մարդ մյուսին իր զարմանքն էր հայտնում։

165. Մյուս օրը առավոտյան այգաբացին և նույնիսկ ավելի վաղ հրաման եկավ թագավորից, որ երանելի Հռիփսիմեին արքունիք

սիմեայ ի մէջ բազմամբոխ հրապարակացն լինէր. ամենայն այր առ այր եւ մարդ առ մարդ զարմացումն յաճախէր։

165. ....Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն, եւ եւս վաղագոյն, հրաման ելեալ ի թագաւորէ անտի, զի զերանելին Հռիփսիմէ տանել յարքունիս, եւ զսուրբն Գայիանէ անդէն պահել պարկեշտաժողով ընկերօքն հանդերձ։

180. ԺԷ. Արդ՝ մինչդեռ սուրբն Հռիփսիմէ զայս ամենայն աղօթս առ Աստուած մատուցանէր՝ եկն եմուտ թագաւորն Տրդատ ի ներքըս ի սենեակն՝ ուր էրն զնա արգելեալ։

181. Արդ՝ մտեալ թագաւորն՝ բուռն հարկանէր զնմանէն, կատարել զկամս ցանկութեանն։ ....եւ որ այնպէս հռչակեալ էր ամենայնիւ՝ արդ յաղջկանէ միոջէ պարտեալ վատթարանայր կամօք եւ զօրութեամբն Քրիստոսի։

206. Արդ՝ ելեալ դահճապետն պարծելով՝ չարամահ անել զնա, եւ ետ հանել զնոսա շղթայիւք ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ, ընդ կողմն պողոտային որ հանէր ի Մեծամօրի կամուրջն, ի տեղին յայն, ուր սովոր էին սպանանել զամենայն մահապարտս, ի ճախճախուտ տեղի մի, մօտ ի պարկէն փոսին որ շուրջ գայր զքաղաքաւն։ Եւ վարեցին չորս չորս ցիցս միում ի նոցանէն։

209. Արդ՝ որք միանգամ եկեալ էին նոսա անտուստ ի Հոռոմոց աշխարհէն, որ միանգամ միաբանք եկին յերկիր Հայաստան աշխարհիս՝ աւելի էին քան զեօթանասուն մարդ։ Իսկ որ սպանան ընդ սուրբ տիկնայսն, ընդ Գայիանեայ եւ ընդ Հռիփսիմեայ, նոքիմբք հանդերձ որ թուեցան ի թիւ վկայելոցն՝ ընդ ամենայն սպանեալսն երեսուն եւ եօթն մարդ։

210. Արդ՝ ի քսան եւ ի վեց ամսոյն հոռի կատարեցաւ սուրբն Հռիփսիմէ դասուն սրբով, երեսուն եւ երեք նահատակակից ընկերօքն հանդերձ եւ ի քսան եւ եօթն ամսոյն հոռի՝ սուրբն Գայիանէ երկու իւրովք ընկերօքն, որք ընդ նմա պատերազմեալք պսակեցան եւ ա-

տանեն, իսկ սուրբ Գայանեին այնտեղ պահեն՝ պարկեշտ ընկերներով հանդերձ։

180. ԺԷ. Արդ՝ մինչդեռ սուրբ Հռիփսիմեն այս ամեն աղոթքները Աստծուն էր մատուցում, եկավ Տրդատ թագավորը մտավ սենյակից ներս, ուր նրան արգելափակել էին։

181. Արդ՝ ներս մտավ թագավորը և փորձեց բռնի միջոցներով ստիպել նրան իր ցանկությունը կատարել։ ....Նա, որ այնպես ամեն ինչով հռչակված էր, այժմ մի աղջկանից պարտվեց, հաղթվեց Քրիստոսի կամքով ու զորությամբ։

206. Արդ՝ ելավ դահճապետը նրան տանջամահ անելու. շղթայակապ հանել տվեց քաղաքից, հարավային դռան մոտ, այն ճանապարհի կողմը, որը տանում էր դեպի Մեծամորի կամուրջը, ուր ըստ սովորության սպանում էին բոլոր մահապարտներին, մի ճախճախուտ վայրում քաղաքի շուրջը պտտվող խրամ փոսի մոտ։ Նրանցից ամեն մեկի համար ճորսական ցից տնկերցին։

209. Արդ՝ ամենը, որ նրանց հետ միաժամանակ եկել էին հռոմեացիների երկրից և բոլորը միասին հասել մեր Հայաստան աշխարհը, ավելի քան յոթանասուն հոգի էին։ Իսկ որոնք սպանվեցին սուրբ տիկնանց՝ Գայանեի և Հռիփսիմեի հետ, նրանց հետ մեկտեղ, որ հիշվեցին նահատակվածների թվում, ընդամենը երեսունյոթ մարդ էին։

210. Նահատակվեց սուրն Հռիփսիմեն սրբերի դասով մեկտեղ Հռոի ամսի քսանվեցին երեսուներեք նահատակակից ընկերներով։ Իսկ Հռոի ամսի քսանյոթին սուրբ Գայանեն իր երկու ընկերներով, որոնք նրա հետ մարտնչեցին, պսակներ ընդունեցին և առան հաղթության թագը։

211. Ի. Արդ՝ վեց օր խոր տխրության և անտանելի տրտմության մեջ էր թագավորը, Հռիփսիմեի գեղեցկության նկատմամբ ունեցած տենչալի սիրո պատճառով։ Այնուհետեւ, որսի ժամ որոշեց .... թակարդներ լարել. կամենում էր որս անել Փառական Շեմակաց դաշտում։

ռին զպսակն յաղթութեան։

211. Ի. Արդ՝ աւուրս վեց ի խոր տխրութեան եւ յանհնարին տրտմութեան կացեալ թագաւորն առ անձուկ սիրոյ գեղոյն Հռիփսիմեայ. ապա....թակարդ ձգեալ, կամեցաւ որս առնել, երթեալ ի դաշտն Փառական Շեմակաց։

212. Այն ինչ ի կառս ելեալ կամէր թագաւորն ըստ քաղաքն ելանել՝ անդէն վաղվաղակի պատուհաս ի Տեառնէ ի վերայ հասնէր. եւ հարեալ զթագաւորն այսոյն պղծութեան՝ ի կառացն ի վայր կործանէր։ ....նա ....ելեալ ըստ մարդկային բնութիւնս արտաքս՝ ի նմանութիւն վայրենի խոզաց, իբրեւ զնոսա ընդ նոսա ի մէջ նոցա երթեալ բնակէր....

213. Նա եւ ամենայն մարդիկն որ ի քաղաքին էին՝ նոյն օրինակ դիւաբախք մոլեգնէին. եւ անհնարին կործանումն ի վերայ աշխարհին հասանէր։ Եւ ամենայն ընտանիք թագաւորին, ծառայք եւ սպասաւորք առ հասարակ, հարուածովք հարեալք լինէին. եւ անհնարին սուգ վասն հարուածոցն լինէր։

214. Յայնմ ժամանակի տեսիլ երեւեալ յԱստուծոյ ի վերայ քեռ թագավորին, որոյ անուն էր Խոսրովիդուխտ։ Արդ՝ եկեալ խօսէր ընդ մարդկանն, պատմէր զտեսիլն եւ ասէր. «Տեսիլ երեւեցաւ ինձ յայսմ գիշերի. այր մի ի նմանութիւն լուսոյ եկեալ՝ պատմեաց ինձ, եթէ «Ոչ այլ ինչ գոյ բժշկութիւն հարուածոցդ, որ եկին հասին ի վերայ ձեր՝ եթէ ոչ յղեսջիք դուք ի քաղաքն յԱրտաշատ, ածել անտի զկապեալն Գրիգորիոս. նա եկեալ ուսուցէ ձեզ դեղ ցավոցդ բժշկութեան»։

221. ....Եւ մատուցեալ թագավորն եւ նախարարքն՝ բուռն հարեալ ունէին զոտից սրբոյն Գրիգորի եւ ասէին.«Խնդրեմք ի քէն, թող մեզ զյանցումն մեր, զոր մեք ընդ քեզ արարաք»։

222. Իսկ նա մատուցեալ կանգնեաց զնոսա ի գետնոյ անտի եւ ասէ.«Ես մարդ եմ իբրեւ զձեզ, եւ մարմին իմ իբրեւ զձերդ. բայց դուք ծաներու՛ք զձեր արարիչն, որոյ զերկիր արարեալ է, զարեգակն եւ զլուսին եւ զաստեղս, զծով եւ զցամաք. եւ նա կարող է զձեզ բժշկել»։

225. Եւ ի վաղիւ անդր թագաւորն եւ նախա-

212. Մինչդեռ կառքի վրա նստած թագավորը քաղաքից դուրս էր եկել, իսկույն նրա վրա տիրոջ պատուհասը հասավ, և պիղծ դևը խփելով թագավորին կառքից վայր տապալեց։ ....նա....մարդկային բնույթից դուրս գալով՝ վայրենի խոզերի կերպարանքով, իբրև նրանցից մեկը գնաց նրանց մեջ բնակվելու։

213. Նաև քաղաքի բոլոր մարդիկ նույնօրինակ դիվահար եղած մոլեգնում էին, ու սաստիկ կործանում հասավ երկրին։ Թագավորի բոլոր մերձավորները, ծառաներն ու սպասավորները առհասարակ հարվածներ կրեցին ու ահավոր սուգի մեջ էին պատուհասի պատճառով։

214. Այն ժամնակ Աստծուց տեսիլ երևաց թագավորի քրոջը, որի անունն էր Խոսրովիդուխտ։ Արդ՝ եկավ պատմեց մարդկանց իր տեսիլքը՝ ասելով. «Ինձ տեսիլք երևաց այս գիշեր. մի մարդ լույսի նմանությամբ եկավ պատմեց ինձ, թե ձեզ վրա հասած հարվածներից բժշկություն չի լինի, եթե [մարդ] չուղարկեք Արտաշատ քաղաքը՝ այնտեղից բերելու կապյալ Գրիգորին։ Նա գալով կսովորեցնի ձեզ ցավերից բուժվելու դեղը»։

221. ....Թագավորն ու նախարարները մոտենալով բռնել էին սուրբ Գրիգորի ոտքերից ու ասում էին.«Խնդրում ենք քեզանից՝ ներիր մեր հանցանքները, որ մենք քո նկատմամբ գործել ենք»։

222. Իսկ նա մոտենալով գետնից բարձրացրեց նրանց ու ասաց.«Ես մարդ եմ ձեզ նման և ձեզ նման մարմին ունեմ, իսկ դուք պետք է ճանաչեք ձեր Արարչին, որն ստեղծել է երկինքն եւ երկիրը, արեգակը, լուսինն ու աստղերը, ծովն ու ցամաքը և նա կարող է ձեզ բժշկել»։

225. Հետևյալ օրը թագավորը, նախարարներն ու մեծամեծ ավագանին, խառնիճաղանջ ամբոխի բազմությամբ, եկան և ծունկի իջնելով սուրբ Գրիգորի ու Աստծու նահատակների սուրբ ոսկորների առջև՝ խնդրում էին և ասում. «Ներիր մեր բոլոր չար հանցանքները, որ քո նկատմամբ գործել ենք, և

բարքն եւ մեծամեծ աւագանին խառնաղանձ ամբոխիւն բազմութեամբ եկեալ ի ծունր ի-ջեալ առաջի սրբոյն Գրիգորի եւ առաջի սուրբ վկայիցն Աստուծոյ՝ խնդրէին եւ ասէին. «Թո՛ղ մեզ զամենայն յանցումն չարեաց, զոր մեք ընդ քեզ արարաք. եւ խնդրեա՛ դու վասն մեր յԱստուծոյ քումմէ, զի մի՛ կորիցուք»։

մեզ համար խնդրիր քո Աստծուց, որ չկոր-չենք»։

ԴԱՐՁ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅԱՍՏԱՆ ԸՆԴ ՁԵՌՆ ԱՌՆ ՍՐԲՈՅ ՆԱՀԱՏԱԿԻ

758. Եվ ինքն սուրբն Գրիգորիոս զլար ճարտարութեան շինողացն ի ձեռն առեալ՝ զերանելեացն վկայարան հանգստարանացն զհիմունս յօրինէր։

759. Եւ կանգնեալ երիս վկայարանս, մի՝ ի հիւսիսոյ յարեւելից կողմանէ քաղաքին, որ վկայեաց սանականն Հռիփսիմէ երեսուն եւ երկու ընկերօք։ Եւ զմիւս շինեցին ի հարաւակողմ կուսէ անտի, ուր վկայեացն Գայիանէ նորուն սնուցիչն երկու ընկերօքն։ Եւ զմիւսն եւս մօտ ի հնձանն ի մէջ այգւոյն, ուր էին վանք նոցա։

763. ՃԵ. Իսկ թագաւորն Տրդատ յայնժամ դեռ եւս էր յամենայն կերպարանս խոզի, բայց միայն ի մարդկապէսն խօսելոյ. եւ կճղակք ձեռացն եւ ոտիցն իբրեւ զխոզի, եւ դէմք երեսացն կնճթացեալ, եւ ժանիք մեծամեծք իբրեւ զմեծամեծ վարազաց, եւ խոզանաստեւն թաւացեալ զամենայն մարմնովն։ Այլ կայր պատեալ զերեսսն գլխովն հանդերձ՝ արկեալ զիւրեաւ քուրձ, եւ կայր երեւոյթ տեսլեամբ ի մէջ ժողովրդոցն։ Արդ՝ մատուցեալ աղաչէր զսուրբն Գրիգորիոս, զի գոնեա ձեռացն եւ ոտիցն հնար լինիցի բժշկութեան, զի ի գործ շինուածոց սրբոցն արժանի արասցէ գէթ սակաւիկ ինչ մասնաւորել զնա։

773. ՃԷ. Արդ՝ իբրեւ ժողովեալք միահամուռ ի պաշտօնարան տեղւոյն յարկի տանն Աստուծոյ կային՝ խօսել սկսաւ երանելին Գրիգորիոս եւ ասէ. «Դի՛ք ծունր ամենեքեան, զի արասցէ Տէր բժշկութիւն հարուածոցդ»։ ....Եւ դէմք երեսացն դարձան յիւր իսկ կերպարանսն, եւ մարմինն փափկացեալ մատաղացեալ լինէր իբրեւ զառօրեայ մանկան ծնելոյ, եւ ողջանդամ մարմնովքն ամենեւին բժշկեցաւ։

794. Իսկ անդէն տեսիլ սքանչելի յԱստուծոյ երեւալ թագաւորին՝ տեսանէր զհրեշտակ Աստուծոյ, զի խօսէր ընդ նմա եւ ասէր, թէ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՍ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԴԱՐՁԸ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿԻ ՁԵՌՔՈՎ

758. Իսկ ինքը՝ սուրբ Գրիգորը, շինողների ճարտարության լարը ձեռքն առնելով երանելիների վկայարան հանգստարանների հիմքերն էր պատրաստում։

759. Կանգնեցրին երեք վկայարաններ, մեկը քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, ուր նահատակվեց սանական Հռիփսիմեն երեսուներկու ընկերներով, մյուսը շինեցին նրա հարավային կողմում, ուր նահատակվեց Գայանեն՝ նրա սնուցիչը, երկու ընկերներով, իսկ մի ուրիշը՝ հնձանի մոտ, այգու մեջ, ուր նրանց կացարանն էր։

763. ՃԵ. Իսկ Տրդատ թագավորը այնժամ դեռևս ամբողջովին խոզի կերպարանք ուներ, բացի միայն մարդաբար խոսելուց։ Ձեռքի ու ոտքի եղունգները խոզի նման էին, իսկ դեմքը՝ կնճիթի նման, մեծամեծ ժանիքներ ուներ վարազների պես և ամբողջ մարմնով խոզի թավ մազեր ուներ։ Սակայն ծածկել էր երեսն ու գլուխը՝ իր վրա քուրձ գցելով և այսպիսի կերպարանքով երևում է ժողովրդի մեջ։ Արդ՝ մոտենալով աղաչում է սուրբ Գրիգորին, որ գոնե ձեռքերն ու ոտքերը բուժելու հնար գրտնի, որպեսզի սրբերի շինվածքի գործին գեթ սակավիկ մասնակցություն ունենալու արժանի լինի։

773. ՃԷ. Արդ, երբ միահամուռ հավաքված էին Աստծու տան հարկի աղոթավայրում, երանելի Գրիգորը սկսեց խոսել և ասաց. «Ծունկը դրեք ամենքդ, որպեսզի Տերը ձեզ բժշկի հարվածներից»։ ....Դեմքն իր իսկական կերպարանքն ստացավ, և ամբողջ մարմնով լրիվ բժշկվեց։

794. Ապա Աստծուց սքանչելի տեսիլք երևաց թագավորին։ Տեսավ Աստծու հրեշտակին, որը խոսեց նրա հետ ու ասաց, թե «Պետք է որ դուք առանց հապաղելու Գրիգորին քահանայապետության պաշտոնը տաք, որպեսզի մկրտությամբ լուսավորի ձեզ»։

«Պարտ է ձեզ զԳրիգորդ վիճակեցուցանել առանց յապաղելոյ ի քահանայապետութիւն, զի լուսաւորցէ զձեզ մկրտութեամբ»։

805. Եւ եղեալ ժողով բազմութեան եպիսկոպոսաց ի քաղաքն Կեսարացւոց, զի ձեռնադրեսցեն զսուրբն Գրիգորիոս եւ աւանդեալ ի նա զպատիվ խոնարհութեան քահանայութեանն Քրիստոսի, եւ զբարձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորութեանն Աստուծոյ, զպատիւն եւ զփառսն մեծ։ Սրբով Աւետարանաւն եդին ի վերայ նորա ձեռս ժողովք եպիսկոպոսացն....

805. Բազմաթիվ եպիսկոպոսների ժողով եղավ Կեսարիա քաղաքում, որպեսզի ձեռնադրեն սուրբ Գրիգորին եւ ավանդեն Քրիստոսի քահանայության խոնարհ աստիճանն ու մեծ փառքը։ Սուրբ Ավետարանով նրան ձեռնադրեց եպիսկոպոսների ժողովը....

ՓԱՒՍՏՈՍԻ ԲԻԶԱՆԴԱՑԻՈՑ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
(բնագիրը Ք. Պատկանյանի)

Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(թարգմանությունը և ծանոթագրությունները
Ստ. Մալխասյանցի)

Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987

ԵՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ
Գ
ՈՐ ԻՆՉ ՎԱՍՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԽՈՍՐՈՎՈՒ՝ ՈՐԴԻՈՅ ՏՐԴԱՏԱՅ ԵՒ ՎՐԹԱՆԱՅ ՄԵԾԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ՝ ՈՐԴԻՈՅ ԳՐԻԳՈՐԻ

Ապա յետ այսորիկ թագաւորեաց Խոսրով Կոտակ, թոռն Խոսրովու, որդի քաջի եւ առաքինւոյն Տրդատայ արքայի: Յաւուրս սորա եկաց եւ եղեւ քահանայապետ յաթոռն հաւրն, փոխանակ հաւրն իւրոյ եւ եղբաւրն իւրոյ, երէց որդին Գրիգորի Վրթանէս: Խաղաղութիւն եւ շինութիւն, մարդաշատութիւն եւ առողջութիւն, պտղաբերութիւն եւ ստացուածաշատութիւն եւ շահեկանութիւն, եւ մեծն աստուածասէր պաշտաւն ի հաճոյականարն բարութիւն յամս յաւուրս սոցա աճել բազմացաւ: Լուսաւորէր եւ առաջնորդէր նոցա սուրբըն Վրթանէս իբրեւ զհայր իբրեւ զեղբայր իւր, իրաւունք եւ արդարութիւն ծաղկեալ էին ի դարուն յայնմ:

Զայնու ժամանակաւ երթեալ հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարաւնու, ուր նշանաւքն եղելաւք կործանեցան բագինք մեհենիցն յայնժամ, վաղ եւս առ մեծաւն քահանայապետաւն Գրիգորիւ: Սա երթեալ կատարէր անդ, ըստ հանապազ սովորութեանն, զտեառնն զիսաչական զփրկութեանն զպատարագն գոհութեան, զհաղորդութիւն չարչարանաց յիշատակի, զկենդանարարն եւ զազատիչն զմարմին եւ զարիւն աստուածորդոյն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորաւքն եւ մեծամեծաւքն, նախարարաւքն եւ աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, եւ ապա յանուն աստուածութեանն սրբեցան, եւ եղեն տուն աղաւթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք:

ԵՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ
Գ
ՏՐԴԱՏԻ ՈՐԴԻ ԽՈՍՐՈՎԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴԻ ՄԵԾՆ ՎՐԹԱՆԵՍԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սրանից հետո թագավորեց Խոսրով Կոտակը, (Մեծն) Խոսրովի թոռը, քաջ և առաքինի Տրդատ թագավորի որդին: Սրա ժամանակ քահանայապետ եղավ և իր հոր ու եղբոր աթոռը նստեց Վրթանեսը, Գրիգորի երեց որդին: Սրանց տարիներում աճեցին ու բազմացան խաղաղություն և շենություն, մարդաշատություն և առողջություն, պտղաբերություն, առատություն և գործի աջողություն և աստվածային մեծ պաշտամունքը և աստվածահաճո բարի վարք: Սուրբ Վրթանեսը իր հոր և եղբոր նման նրանց լուսավորում էր ու առաջնորդում: Այն դարում ծաղկած էին իրավունքն ու արդարությունը:

Այս ժամանակները (մի անգամ) Վրթանես եպիսկոպոսապետը գնացել էր Հայոց մեծ և առաջին մայր եկեղեցին, որ գտնվում էր Տարոն գավառում, որտեղ դեռ վաղ ժամանակ, մեծ քահանայապետ Գրիգորի օրերում կատարված նշաններով կործանվել էին մեհյանների բագինները: Այնտեղ գնալով՝ նա իր մշտական սովորությամբ կատարում էր փրկչի խաչելության փրկական գոհացողական պատարագը, (Քրիստոսի) չարչարանքներին հաղորդության հիշատակը, (այսինքն) աստվածորդի տեր Հիսուս Քրիստոսի կենդանարար և ազատիչ մարմինն ու արյունը: Որովհետև հենց այսպես սովոր էին Հայոց եպիսկոպոսապետները՝ թագավորի, մեծամեծների, նախարարների և ժողովրդի խուռն բազմության հետ միասին պատվել այն տեղերը, որոնք առաջ կուռքերի պատկերների տեղեր էին և հետո աստծու անունով սրբվեցին ու դարձան աղոթքի տներ և ուխտատեղիներ բոլորի համար:

Է

ՅԱՂԱԳՍ ՄԵԾԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀԻՆԻՆ ԵԿԵԼՈՅ ՅԱՐՇԱՒԱՆԱՅ ԱՐՔԱՅԻՆ ՄԱՋՔԹԱՅ ՅԱՇԽԱՐՀ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ, ԵՒ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ՍԱՏԱԿԵՑԱՒ ՆԱ ԵՒ ՁԱՒՐՔՆ ԻՒՐ

Ապա եկն եհաս Վաչէ որդի Արտաւազդայ ի Մամիկոնէն տոհմէն, զաւրավար ամենայն Հայոց մեծաց: Զի երթեալ էր նա ի ժամանակին յայնմիկ զերկայն ճանապարհս ի կողմանս Յունաց: Ապա ժողովեաց նա զամենայն քաջս քաջս նախարարացն, եւ գունդ կազմէր բազում յոյժ. եւ հասանէր անկանէր ի վերայ բանակին, յառաւաւտուն ժամուն այգենալոյն պաշտամանն. զի բանակեալ էին նոքա ի լերինն՝ որ կոչի Ցլու գլուխ. եւ առ հասարակ ընդ սուր հանին զամենեսեան, եւ ոչ մի ոչ ապրեցուցանէր, եւ դարձուցանէր զբազմութիւն գերեացն: Եւ յետ այսորիկ առնոյր զաւարսն, խաղայր գնայր երթայր իջանէր ի դաշտն Այրարատեան գաւառին. երթայր գտանէր զՍանէսան թագաւորն Մազքթաց բուն գնդաւն, անթիւ անհամար զաւրոքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքի: Առեալ զգունդն Վաչէ, եւ յանկարծակի յարձակեցաւ ի վերայ քաղաքին, եւ մատնեաց զնոսա տէր ի ձեռս նորա:

Եւ իբրեւ տեսին զնա յարձակեալ ի վերայ իւրեանց, փախեան ելին ի քաղաքէ անտի յառապարն ի կողմն Յաւշական բերդին. եւ զանապատն եւ զքարուտ տեղիսն ապաւէն իւրեանց համարեցան. եւ լինէր սաստիկ պատերազմ յոյժ յոյժ: Եւ նիզակակիցք զաւրավարին Հայոց, որ էին Բագրատ Բագրատունի, Մեհունդակ եւ Գարեգին ըՌըշտունիք, եւ Վահան նահապետն Ամատունեաց տոհմին, եւ Վարազ կամինական, հասանէին հարկանէին սատակէին զաւրսն Ալանացն եւ Մազքթացն եւ Հոնացն եւ զայլոց ազգացն, եւ լնուին զդաշտն առապարացն առ հասարակ դիակամք մեռելոց. մինչ զի իբրեւ զգետ յարուցեալ երթայր արիւնն անհնարին, եւ ոչ լինէր

Է

ՄԱՍՔՈՒԹՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԻՆԱԿԱՆ ԱՍՊԱՏԱԿԸ ԴԵՊԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԸ Ի՛ՆՉՊԵՍ ՆԱ ԶՈՐՔՈՎ ՄԻԱՍԻՆ ԿՈՏՈՐՎԵՑ

Այս ժամանակ եկավ հասավ Մեծ Հայքի զորավար Վաչեն, Արտավազդի որդին, Մամիկոնյան տոհմից, որ այդ ժամանակ երկար ճանապարհորդություն էր կատարել Հունաց կողմերը: Նա ժողովեց նախարարներից քաջերին, խիստ բազմամարդ գունդ կազմեց և հարձակվեց (Սանեսանի) բանակի վրա լուսադեմին (եկեղեցական) պաշտոն կատարելու ժամանակ: Նրանք բանակ էին դրել Ցլու գլուխ կոչված լեռան վրա: (Վաչեն) նրանց բոլորին սրի անցկացրեց, ոչ մեկին կենդանի չթողեց և գերիների ողջ բազմությունը ետ դարձրեց: Հետո ժողովեց ավարը և գնաց իջավ Այրարատյան գավառի դաշտը: Այնտեղ նա Վաղարշապատ քաղաքում գտավ Մասքութերի Սանեսան թագավորին բուն գնդի հետ, որ անհամար բազմություն էր կազմում: (Վաչեն) հանկարծակի հարձակվեց քաղաքի վրա, և տերը նրանց նրա ձեռքը մատնեց:

Երբ թշնամիները տեսան նրա հարձակումն իրենց վրա՝ քաղաքից դուրս եկան, փախան դեպի առապարը, Օշական բերդի կողմը, ապավինելով այն անապատին ու քարքարոտ տեղերին: Սաստիկ մեծ պատերազմ եղավ: Եվ Հայոց զորավարի նիզակակիցները, որ էին Բագրատ Բագրատունին, Մեհունդակ և Գարեգին Ռշտունիները և Ամատունյաց տոհմի նախարար Վահանը և Վարազ Կամինականը, հասնում զարնում ջարդում էին Ալանների, Մասքութերի, Հոների և մյուս ազգերի զորքերը և ամբողջ առապարի դաշտը լցնում էին մեռածների դիակներով, այնպես որ արյունը գետի նման առատ հոսում էր, և թիվ չկար սպանված զորքերին: Սակավաթիվ մնացորդներին էլ առաջ խառնելով հալածում էին մինչև Բաղասճիների աշխարհը: Սանեսան մեծ թագավորի

թիւ զաւրացն մեռելոց: Եւ զմնացեալսն սակաւս առաջի իւրեանց հալածականս տանէին մինչեւ յաշխարհն Բաղասճաց, եւ զգլուխն Սանէսանայ մեծի թագաւորին եկին բերին առաջի արքային Հայոց: Սակայն իբրեւ ետես, լալ սկսաւ. ասէ. Եղբայր իմ էր ազգաւ Արշակունի: Ապա եկեալ արքայն ի տեղի ճակատուն, եւ ընդ նմա մեծ եպիսկոպոսապետն Հայոց. եւ տեսին զկոտորածն զաւրացն հարելոց, զի նեխէր երկիրն ի հոտոյ մեռելոցն: Ապա ետուն հրաման՝ Գուգազ հանել յաշխարհէ, եւ անդէն ծածկել քարակարկառ վիմաւք, զի մի՛ ի շարաւոյ հոտոյն մեռելոտի ոսկերացն երկիրն պղծեսցի: Եւ դադարեաց երկիրն ի խաղաղութեան ամս հարուստ մի. եւ այսպէս վրէժ սրբոյն Գրիգորիսի խնդրեցաւ ի թագաւորէն Սանէսանայ եւ ի բանակէ նորա. զի ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի:

Ը

Եւ ետ հրաման թագաւորն զաւրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, եւ բերել զվայրենի կաղին մայրեաց, եւ տընկել զայն յԱյրարատեան գաւառին. եւ առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչեւ ի դաշտն Մեծամաւրի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետըն խոնարհ մինչն յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղնին: Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի: Եւ միւս ի մայրեացն յեղէգնաբերանին ի նմանէ ի հարաւակոյս լցին զդաշտն կաղնատուն տնկով. եւ կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ: Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, եւ զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին. եւ ոչ կցեցին ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին: Եւ աճեաց բարձրացաւ. եւ ապա զամենայն էրէս եւ զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, եւ լնուլ զքաղաքորմսն, զի լիցին նոցա տեղիք որսոց զբաւսանաց ուրախութեան թագաւորութեան նորա: Եւ զաւրավարն Վաչէ կատարէր վաղվաղակի զասացեալսն արքայի:

գլուխն էլ բերում էին Հայոց թագավորին: Իսկ նա երբ տեսավ՝ սկսեց լալ ու ասաց. «Իմ եղբայրն էր, Արշակունի ցեղից»: Այնուհետև թագավորը Հայոց մեծ եպիսկոպոսապետի հետ եկավ ճակատամարտի տեղը: Տեսան սպանված զորքերի կոտորածը. մեռածների հոտից երկիրը լցվել էր գարշահոտությամբ: Հրաման տվին՝ աշխարհից գուդազ հանել, դիակները թաղել, վրան քարերով ծածկելով, մի գուցե երկիրը ապականվի մեռելների գարշահոտ շարավից: Երկիրը խաղաղացավ բավական տարիներ: Այսպես սուրբ Գրիգորիսի վրեժը առնվեց Սանեսան թագավորից և նրա բանակից, որովհետև նրանցից ոչ մեկը չմնաց:

Ը

Եվ հրաման տվեց թագավորն իր զորավարին՝ աշխարհից բազմաթիվ մշակներ հավաքել, անտառներից վայրի կաղին հանել ու բերել տնկել Այրարատյան գավառում, սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչև Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում: Եվ այսպես մերի տնկեցին գետի ընթացքով դեպի ներքև, մինչև Տիկնունի ապարանքը: Նա այս մերին կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ մերի էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եղեգնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Նույն տեղում շինեցին նաև արքունական ապարանքներ: Երկու մերիներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուդարձի ճանապարհի համար: (Մերին) աճեց ու բարձրացավ: Հետո թագավորը հրամայեց ամեն տեսակ երեներ ու գազաններ ժողովել ու լցնել պարսպապատված տեղերը, որպեսզի նրա թագավորության որսի՝ զբոսանքի և ուրախության տեղեր դառնան: Վաչեն անմիջապես կատարեց թագավորի ասածները:

Ժ

Զայնու ժամակաւ խաղաց գնաց մեծ եպիսկոպոսն մծբնացւոց, այր սքանչելի ծերունի, վաստակասէր ի գործս ճշմարտութեան, որում անուն Յակոբ, փոխանակ ազգաւն պարսիկ կոչէր, այր ընտրեալ յաստուծոյ, յիւրմէ քաղաքէ անտի գալ հասանել ի լերինս Հայոց, ի լեառնն Սարարադայ ի սահմանս Այրարատեան տէրութեան ի գաւառն Կորդուաց. այր լի շնորհաւքն Քրիստոսի, որպէս զաւրութիւնք նշանաց եւ արուեստից լինէին ի ձեռաց նորա: Սա եկեալ ցանկացեալ փափաքեալ մեծաւ տենչանաւք աղաչէր զաստուած՝ տեսանել զփրկական տապանն նոյեան շինուածոյն, զի յայս լերին հանգեաւ նա ի ջրհեղեղէն. քանզի զամենայն ինչ որ հայցէր, առնոյր ի տեառնէ: Ապա մինչդեռ ելանէր ընդ դժուարին ընդ անջրդի ընդ ափափայսն անապատին Սարարադեան լերինն, աշխատեցան եւ ծարաւեցան նա եւ որք ընդ նմայն էին: Ապա դնէր ծունր մեծն Յակոբ ի վերայ երկրին, եւ կայր յաղաւթս առ տէր, եւ ի տեղւոջն՝ ուր եդեալ էր զգլուխ իւր՝ բղխեաց աղբիւր, եւ արբին նա եւ որ ընդ նմայն էին. որ մինչեւ ցայսաւր ասեն այնմիկ աղբիւր Յակոբայ: Եւ ինքն ի նմին աշխատեալ դեգերէր՝ զինդրելին տեսանել առանց յապաղութեան, առնէր աղաւթս առ տէր:

Ժ

Այն ժամանակները Մծբինի մեծ եպիսկոպոսը, մի սքանչելի ծերունի, ճշմարտության գործերով զբաղված, որի անունն էր Հակոբ, Զգոն կոչված, պարսիկ Անակի որդին, աստծու ընտրած մարդը, վեր կացավ իր քաղաքից, որպեսզի գա հասնի Հայոց լեռները, Սարարադ լեռը, որ գտնվում էր Այրարատյան տերության սահմաններում, Կորդվաց գավառում: Նա լի էր աստվածային շնորհքներով, այնպես որ նրա ձեռքով հրաշքներ էին կատարվում: Նա եկավ մեծ փափագով ու ցանկությամբ և աղաչում էր աստծուն, որ կարողանա տեսնել Նոյի փրկական տապանը, որ ջրհեղեղից հետո այս լեռան վրա էր հանգչել. որովհետև ինչ որ նա աստծուց խնդրում էր՝ ստանում էր: Արդ՝ երբ նա բարձրանում էր Սարարադյան լեռան անջրդի անապատ քարքարոտ տեղերով՝ ինքը և իր հետ եղողները հոգնեցան ու ծարավեցան: Այդ ժամանակ մեծն Հակոբ ծունկ չոգեց գետնի վրա և տիրոջը աղոթեց: Եվ այն տեղից, որտեղ դրել էր գլուխը՝ մի աղբյուր բխեց. և ինքն ու իր հետ եղողները խմեցին: Մինչև այսօր էլ այդ աղբյուրին ասում են Հակոբի աղբյուր: Եվ ինքը նույն չարչարալից գործը շարունակում էր, որպեսզի շուտով ցանկացածը տեսնե, և տիրոջը աղոթում էր:

ՉՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ
Բ
ՅԱՂԱԳՄ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՅ ՅԱՒՐԻՆԵԼՈՅ ԱՇԽԱՐՀԻՆ, ՆՈՒԱՃՈՒԹԵԱՆ ՅԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՏԵՂԻՄ ՎԱՐՈՒՅ ԿԱՐԳԱՅ, ՆՈՐՈԳԵԼՈՅ ԱՇԽԱՐՀԻՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ

Յայնմ ժամանակի խնդիր ելանէր արքայն Արշակ տոհմին զաւրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից. մանաւանդ զի իւր դայեակս եւ սնուցիչք էին։ Ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին, եւ դարձուցանէր զնոսա յընդանութիւնն, զի պառակտեալք եւ քակտեալք էին յընդանութենէն եւ յամենայն գործոց Հայոց ի ժամանակս խուլութեանն Տիրանայ։ Եւ կացոյց արքայն զՎարդան զերէց եղբայրն ի պետութեանն ազգին իւրեանց, եւ զՎասակ զմիջին եղբայրն զիւր դայեակն ի սպարապետութիւնն զաւրավարութեան յիրս պատերազմացն. սոյնպէս եւ զկրտսերն ի պետս զաւրացն կացուցանէր։ Սոյնպէս եւ զամենայն ազգսն զաւրացն մեծամեծացն նահապետացն, որպէս առաջին թագաւորքն նուաճեալք յիւրաքանչիւր չափու։ Եւ հնազանդէր զմեծամեծսն, զիւրաքանչիւր զաւրս բաժանեալ յամենայն կողմանց, սահմանացն Հայոց սահմանապահս կացուցանէր։

Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս եւ զառաջինսն. մեծամեծքն յիւրաքանչիւր գահու, եւ գործակալքն յիւրաքանչիւր չափու։ Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին։ Նոյնպէս ստրատելատութեան սպարապետութեանն զաւրավարութեանն մարտի կռուելոյ, գործոյ ըռազմիկ ճակատամարտող նիզակին, իրափառն աղանազգիք աղանաղրաւշք արծուէնշանք վարժնականիշք աներկիւղք քաջա-

ՉՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ
Բ
ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՇԵՆԱՆԱԼՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՎԵԼԸ. ԱՄԵՆ ՏԵՂ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏՎԵԼԸ. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՆՈՐՈԳՎԵԼԸ

Այն ժամանակ Արշակ թագավորը դուրս էր գալիս փնտրելու քաջ Մամիկոնյան զորավարների տոհմը, մանավանդ որ նրանք իր դայակներն ու սնուցանողներն էին եղել։ Գընում նրանց գտնում էր նրանց Տայքի ամուր վայրերում. իրենց աշխարհում. նրանց սիրտը առնում ու հաշտեցնում էր, որովհետև նրանք Տիրանի խելագար գործերի ժամանակից ի վեր պառակտվել, անջատվել էին Հայոց միաբանությունից և բոլոր գործերից։ Թագավորը Վարդանին, ավագ եղբորը, նշանակեց նրանց ցեղի նահապետ, միջին եղբորը, Վասակին, իր դայակին՝ նշանակեց սպարապետ և զորավար պատերազմական գործերում, նույնպես և կրտսերին նշանակեց զորապետ։ Նույնպես և մյուս մեծամեծ նահապետների զորքերն ըստ իրենց աստիճանների հաստատեց՝ ինչպես որ նախկին թագավորների ժամանակ եղել էր։ Մեծամեծներին էլ հնազանդության էր բերում, բոլորի զորքերը կողմերի վրա բաշխելով՝ Հայաստանի սահմանների վրա սահմանապահ էր նշանակում։

Եվ Հայաստան աշխարհի թագավորությունը նորոգվեց ու պայծառացավ ինչպես առաջ. մեծամեծներն իրենց գահերում, գործակալներն իրենց աստիճաններում։ Եվ առաջին գործակալ-հազարապետ նշանակեց շինականներին շենացնող Գնունյաց ցեղը, որպեսզի իբրև բոլոր երկրի հազարապետներ՝ հոգատարությամբ խնամեն աշխարհաշեն՝ աշխարհը կերակրող գյուղացիությանը։ Նույնպես և սպարապետության՝ զորավարության գործում, ճակատ առ ճակատ նիզակներով կռիվ մղելու համար, նշանակեց փառավոր ու ազնվազգի, աղավնակիր դրո-

սիրտք նահատակք քաջանունք, բարենշանս բարեհամբաւք բարեգործք յաջողակք ի գործ պատերազմաց ի բուն ի նախնեացն կարգաց ի Մամիկոնեան ազգին, ի վերայ իշխանութեանն բովանդակ՝ ի վերայ ամենայն զաւրավարութեանն բազմութեանն Հայոց մեծաց, հանապազ յամենայն ժամ յաղթող ազգին պարգեւեալ յերկնից բարիանուն իրաքաջ ի մեծի նահապետութեան պատերազմի։ Եւ այլ յայսմ ազգաց եւ ի խոնարհ որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին. թո՛ղ զնահապետս մեծամեծս եւ զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին, ինն հարեւր բարձ՝ որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. թող զոտնկայս գործակալութեանն սպասու։

շակներով, արծվի՝ Վարուժանի նշաններով, աներկյուղ ու քաջասիրտ նախամարտիկ, քաջանուն, բարենշան, բարեհամբավ ու բարեգործ, պատերազմական գործերում աջողակ Մամիկոնյանների ցեղից, բուն նախնյաց կարգերի համաձայն, որին երկինքը միշտ և հանապազ պարգևում էր հաղթության և քաջության բարի անուն պատերազմական գործերում, - և տվեց նրանց զորավարության իշխանություն Մեծ Հայքի բոլոր զորքերի վրա։ Այս ցեղերից զատ՝ խոնարհ աստիճանի գործակալներ, որոնք թագավորի ներկայությամբ բարձերի վրա բազմում էին, պատիվները գլխներին, - չհաշվելով մեծամեծ նահապետներին ու տանուտերներին, լոկ միայն գործակալներ՝ ինը հարյուր բարձ էին կազմում, որոնք թագավորական սեղանի ուրախության մասնակից էին լինում՝ բացի ոտնկա սպասավորության պաշտոնյաներից։

Ի

ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻԱՐԴ ՊԱՏԵՐԱԶՄ ՍԱՍՏԿԱՑԵԱԼ ԷՐ Ի ՄԷՋ ՅՈՒՆԱՑՆ ԵՒ ՊԱՐՍԻՑ, ԵՒ ԹԷ ԶԻ՛ԱՐԴ ԱՐՇԱԿ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ ԶԱՒՐԱՎԻԳՆ ԼԻՆԷՐ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ, ԵՒ ՀԱՆԷՐ ԸՆԴ ՍՈՒՐ ԶԶԱՒՐՄՆ ՅՈՒՆԱՑ, ԿԱՄ ԶԻ՛ԱՐԴ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԵԱՄԲ ՍԻՒՆՈՅՆ ԱՆԴՈՒԿԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԼԻՆԷՐ ԱՐՔԱՅՆ ՊԱՐՍԻՑ

Խաղաց գնաց թագաւորն Արշակ բազմակոյտ նախարարաւքն, չուեաց ընդ Աղձնիս ընդ իւր իշխանութիւնն. չոգաւ թափեցաւ յերկիրն արուացաստանի դէմ յանդիման մծբընացւոց քաղաքին, որ էրն տեղի ճակատուն պատերազմին: Ապա երթեալ տեսանէին զի ժամադիր արարեալ միմեանց վասն իրաց պատերազմին կողմանցն երկոցունց: Իսկ զաւրքն Յունաց հասեալք, մածեալք բանակեալք էին իբրեւ զաւազ առ ափն ծովու բազմութեամբք: Իսկ զաւրքն Պարսիկ չեւ էին հասեալ ի ժամադիր տեղի պատերազմին: Իսկ զաւրքն արքային Հայոց կանուխ քան զՊարսսրն ի տեղի ճակատուն հասանէին, եւ զտեղի առեալ կային: Ապա տապել սկսան զաւրքն Հայոց ընդ իւրեանց նիստ խափանածոյն. եւ ոչ առնուին յանձն մնալ կամ անսալ զաւրացն Պարսից, այլ կամեցան յարձակել դիմել հասանել ի վերայ թագաւորին Յունաց ինքեանք առանց Պարսից զաւրացն անձամբք վճարել զգործ պատերազմին: Եւ այր ամենայն զաւրացն Հայոց ինքնակամք իւրաքանչիւր արձակ արձակ խաղային. եւս առաւել զաւրավարն նոցին Վասակ քան զամենայն զաւրսն ելեւել առնէր, կապակոտոր լինէր, չմնայր հաւանութեան մինչեւ զաւրքն Պարսից եկեսցեն, այլ զի միայն ինքեամբք վճարեսցեն զգործ պատերազմին:

Ապա միահամուռ զաւրքն Հայոց անկանէին առաջի եւ խնդրէին յիւրեանց թագաւորէն Արշակայ, զի մի՝ պահեսցէ զնոսա մինչեւ եկեսցէ արքայն Պարսից Շապուհ, այլ վասն որոյ իրիք եկեալ իցեն, վաղագոյն նոցա զպատերազմն առ յանդիման արարեալ հա-

Ի

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍԱՍՏԿԱՑԵԼ ԷՐ ՀՈՒՆԱՑ ԵՎ ՊԱՐՍԻՑ ՄԵՋ ԵՎ Ի՛ՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԸ ՕԳՆՈՒՄ ԷՐ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԵՎ ՍՐԻ ԷՐ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ՀՈՒՆԱՑ ԶՈՐՔԵՐԸ ԵՎ Ի՛ՆՉՊԵՍ ԱՆԴՈՒԿ ՍՅՈՒՆԻԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՇԱԿԸ ՓԱԽՈՒՍՏ ԷՐ ՏԱԼԻՍ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻՑ

Արշակ թագավորը բազմաթիվ նախարարների հետ վեր կացավ գնաց, անցավ իր իշխանության միջով՝ Աղձնիքով, և ներս խուժեց Արվացաստանի աշխարհը, Մծբին քաղաքի դիմաց, որտեղ պիտի լիներ պատերազմը: Եկավ այնտեղ, տեսավ, որ երկու կողմերն այդ տեղն էին նշել պատերազմելու համար, և Հունաց զորքերը հասել, խմբվել, բանակել էին այնտեղ բազմությամբ՝ ինչպես ավազը ծովի ափին, իսկ Պարսից զորքերը դեռ չէին հասել պատերազմի համար նշանակված տեղը: Իսկ Հայոց թագավորի զորքերը ճակատամարտի տեղն էին հասել պարսիկներից առաջ և կանգ առել, սպասում էին: Հայոց զորքերն սկսեցին նեղվել իրենց պարապ անգործ նստելուց, չէին համաձայնում սպասել Պարսից զորքերի գալուն, այլ կամենում էին հենց իրենք, առանց Պարսից զորքերի՝ մենակ հարձակվել Հունաց թագավորի վրա, անձամբ պատերազմի գործը գլուխ բերել: Հայոց զորքերից ամեն մեկը ինքնակամ ու համարձակ ցույցեր էին անում, և բոլոր զորքերից ավելի նրանց Վասակ զորավարը վռազում էր, սանձերը կտրում, չէր կամենում սպասել Պարսից զորքի գալստյան, այլ որ միայն իրենք պատերազմը վարեն ու վերջացնեն:

Ապա ամբողջ զորքերն ընկնում էին Արշակ թագավորի առաջ և խնդրում էին, որ իրենց չպահեն մինչև Պարսից Շապուհ թագավորի գալուստը, այլ թույլ տա կատարել այն՝ ինչ բանի համար եկել են – իրավունք տա հարձակվել (հույների վրա) հենց հիմա: Նրանք մաշվում էին՝ օտար աշխարհում

մարձակեսցէ յարձակել քան զանսալն յաւտար աշխարհին. առաւել մղձկէին, զի լաւ հաշուէին զմեռանելն առաւել քան զյամելն յաւտար աշխարհին: Ապա թոյլ տայր նոցա թագաւորն Արշակ, եւ յանդիմանէր նոցա զգործ պատերազմին: Ապա կարգէր կազմէր պատրաստէր զամենայն զզաւրսն Հայոց Վասակ զաւրավարն սպարապետն Հայոց մեծաց: Վարէր զինէր ժամակալ լինէր Վասակ. հանդերձ ամենայն պատերազմող զաւրաւքն այրարատեան գնդաւն ելանէր անկանէր ի վերայ բանակին: Առ հասարակ ընդ սուր հանեալ կոտորէին, այնպէս զի ոչ ապրեցուցանէին ի նոցանէ եւ ոչ զմի: Եւ առնուին զկապուտ զաւար յունական զաւրուցն, զի ոչ գոյր չափ կամ թիւ որչափ լցան գանձաւք. եւ անհամար կարասեաւ մեծաւ աւարացն յրդփացան:

Եւ յետ այսորիկ զտեղի ունէր արքայն Հայոց հանդերձ իւրովք զաւրաւքն, մինչեւ գայր հասանէր Շապուհ արքայն Պարսից ամենայն անթիւ եւ անչափ զաւրաւքն Պարսից: Իբրեւ եկն ետես զքաջութիւն գործոյն Հայաստան զաւրացն, զի ճակատ մղեալ, զպատերազմ յարդարեալ, զյաղթութիւն կազմեալ եւ զգործ վճարեալ, կայր զարմացեալ մեծապէս. եւ պատուէր զԱրշակ արքայ Հայոց մեծապէս, եւ զամենայն մեծամեծս Հայոց. սոյնպէս եւ զսպարապետն Հայոց զՎասակ:

Իսկ թագաւորն Պարսից Շապուհ մեծաւ ստիպելով ստիպէր զթագաւորն Հայոց զԱրշակ, զի առցէ գնասցէ գնա ընդ ինքեան յԱսորեստան, զի անդ մեծափառ պատուով եւ փեսայութեամբ մեծարեսցէ գնա: Իսկ Արշակ եւ ամենայն զաւրք իւր տաղտապէին երթալ զհեռի ճանապարհն. զի ամենայն ոք յանձնիւր տուն յիւրաքանչիւր տեղի զաւրէն բարուց Հայաստան մարդկան անձկացեալ էին:

Եւ եղեւ իբրեւ ի վերայ հասանէր իրացն Անդովկ նահապետն Սիւնեաց զաւառին, եթէ Շապուհ թագաւորն Պարսից կամի տալ զդուստր իւր կնութեան Արշակայ թագաւորին Հայոց, մեծապէս երկեաւ, եւ բախեցաւ

պարապ նստելուց. լավ էին համարում մեռնել, քան օտար աշխարհում ժամանակ քաշ տալ: Այն ժամանակ Արշակ թագավորը թույլ տվեց և պատերազմի գործը նրանց առաջադրեց: Ապա Վասակը, Մեծ Հայքի զորավարն ու սպարապետը, կազմում պատրաստում էր բոլոր Հայոց զորքը: Նա սպառազինվեց, և սահմանված ժամանակին բոլոր իր պատերազմական զորքով՝ այրարատյան բանակով հարձակվեց (հունաց) բանակի վրա: Բոլորին առհասարակ սրի անց կացրին, կոտորեցին, մի մարդ նրանցից կենդանի չթողին: Եվ հունական զորքից այնքան ավար առան, որ չափ ու թիվ չկար. բոլորը լցվեցին ու լիացան գանձերով և անչափ իրերով:

Սրանից հետո Հայոց թագավորն իր զորքով այնտեղ մնաց սպասեց՝ մինչև որ եկավ հասավ Պարսից Շապուհ թագավորը անթիվ - անհամար զորքով: Երբ նա եկավ ու տեսավ հայկական զորքի քաջարի գործը, որ ճակատ էին կազմել, պատերազմը վարել, հաղթություն տարել և ամեն ինչ վերջացրել՝ շատ և շատ զարմացավ. Հայոց Արշակ թագավորին մեծապես պատվեց, ինչպես և բոլոր Հայոց մեծամեծներին և Հայոց Վասակ սպարապետին:

Եվ Պարսից Շապուհ թագավորն սկսեց ստիպել ու թախանձել Հայոց Արշակ թագավորին, ուզում էր նրան իր հետ տանել Ասորեստան, որպեսզի այնտեղ մեծ փառքով նրան իրեն փեսայացնե: Իսկ Արշակ թագավորը և բոլոր իր զորքը ձանձրալի էին համարում այդքան երկայն ճանապարհ գնալը, որովհետև ամեն մարդ, հայ մարդու բնական սովորությամբ, կարոտել էր իր տանն ու տեղին: Իսկ երբ Անդոկը, Սյունյաց գավառի նահապետը, իմացավ, թե Պարսից Շապուհ թագավորն ուզում է իր աղջիկը կնության տալ Հայոց Արշակ թագավորին՝ շատ վախեցավ և միտքը կասկածի մեջ ընկավ: Նա հասկացավ, որ եթե Արշակը կին առնե Պարսից թագավորի դուստրը՝ ապա իր դուստրը անարգություն կկրե. որովհետև այդ ժամանակ Փա-

նորա կասկած մտացն իւրոց։ Զի եդ ի մտի իւրում՝ թէ յորժամ առցէ Արշակ կին իւր զդուստր թագաւորին Պարսից, յայտ է այնուհետեւ՝ թէ անարգի դուստր նորա։ Վասն զի Փառանձեմ դուստր Անդովկայ, որ էր կին լեալ Գնելոյ, ի ժամանակի անդ էր կին Արշակայ թագաւորին Հայոց. կասկածէր նա՝ թէ գուցէ յորժամ այլ առցէ, զնորայն անարգեսցէ։

Ապա զմի ոմն յաւագաց թագաւորին Պարսից ի ներքին ի բուն խորհրդականացն ի բանի իւրում առնէր Անդովկն զհնարաւորութեամբն, զնենգաւորութեանն դաւաճանութեամբ, մեքենայութեամբն, զի բանս արկցէ ընդ թագաւորին Պարսից ընդ Շապուհ եւ ընդ Արշակ։ Եւ տայր նմա Անդովկ ոսկի բազում եւ անհամար, եւ դնէր բանս ի բերան, զի իբրեւ կերպարանս գուշակի արասցէ ասել ցարքայ Արշակ, թէ ապրեցո զանձն քո, զի ճշգրիտ խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից ունել զքեզ եւ սպանանել։ Եւ յորժամ դու զայս ասասցես, ասէ, եւ զմեզ հրամայեսջիր կոչել ի խորհուրդն. եւ զքո բանս աւագանին հաստատեն։

Եւ իբրեւ լուաւ Շապուհ արքայն Պարսից, քանզի այր իմաստուն էր, գիտացեալ ի կարծիս իմաստութեան իւրոյ զիրսն՝ որ ինչ եղեւն, անդէն ասաց՝ թէ այն փախուստ թագաւորին Հայոց յիմոց աստի եղեալ է. զի ի մէնջ ի մերմէ ի դրանէ աստի էին, ասէ, որք փախուցին զայրն զայն զԱրշակ։ Ապա իւրոց աւագացն ի մեծամեծացն դեսպան ձիով զբազումս յղէր զհետ թագաւորին Հայոց, հանդերձ երդմամբ ի սէր միաբանութեան եւ յանդիմանութեան. զի դարձցին եւ զչարախաւսութեան զբանս ի մէջ ածեալ կշտամբեսցին։ Եւ ոչ կամեցաւ արքայն Հայոց ունկնդիր լինել բանիցն պատգամաւորացն թագաւորին Պարսից Շապհոյ, եւ ոչ դարձաւ այլ անդրէն յերկիրն Պարսից։ Ապա յայն աւրէ հետէ եւ անդր յուզեցաւ պատերազմ գրգռութեան մարտից ճակատուց ի մէջ թագաւորին Հայոց Արշակայ եւ ի մէջ թագաւորին Պարսից Շապհոյ ամս աւելի քան զերեսուն։

ռանձեմը, Անդոկի դուստրը, որ Գնելի կինն էր եղել՝ Հայոց Արշակ թագավորի կինն էր, ուստի (Անդոկը) կասկածում էր, որ եթե թագավորը ուրիշ կին առնե՝ իր աղջկանը կանարգե։

Այնուհետև Անդոկը իր խորհրդին դավակից էր դարձնում Պարսից թագավորի ավագներից մեկին, որ մի հնարքով, որևէ միջոցով նենգությամբ տարաձայնություն ձգե Պարսից Շապուհ թագավորի և Արշակի մեջ։ Անդոկը նրան անչափ ու անհամար ոսկի էր տալիս և նրան խրատ էր տալիս, որ քսու ձևանալով Արշակ թագավորին ասե, թե «Գլխիդ հնարը տես. Պարսից թագավորը հաստատ միտքը դրել է քեզ բռնել ու սպանել»։ «Երբ դու այս ասես՝ ասում էր Անդոկը, ապա առաջարկիր (թագավորին), որ մեզ խորհրդի կանչե, և բոլոր ավագները քո խոսքը կհաստատեն»։

Երբ Պարսից Շապուհ թագավորը այս լսեց՝ որովհետև խելոք մարդ էր՝ իր խելքով բանի եղելությունը հասկացավ և իսկույն ասաց. «Հայոց թագավորի այդ փախուստը իմ մարդկանցից է եղել. մեզանից, մեր դռան մարդկանցից են եղել այն մարդուն՝ Արշակին փախցնողները»։ Ապա իր ավագ մեծամեծներից շատերին ձիով դեսպան էր ուղարկում Հայոց թագավորի հետևից՝ սիրո և միաբանության երդումով, որպեսզի հետ դառնա, միասին քննեն չարախոսություններն ու պատժեն։ Բայց Հայոց թագավորը չկամեցավ լսել Պարսից Շապուհ թագավորի ուղարկած պատգամը և է՛լ չդարձավ Պարսից աշխարհը։ Ապա այդ օրից սկսած պատերազմ՝ կռիվներ ու ճակատամարտեր ծագեցին Հայոց Արշակ թագավորի և Պարսից Շապուհ թագավորի միջև, որոնք տևեցին ավելի քան երեսուն տարի։

ԻԱ
ՅԱՂԱԳՄ ԹԷ ԶԻԱ՛ՐԴ ԵՂԵԻ ՊԱՏԵՐԱԶՄ ԸՆԴ ՇԱՊՈՒՀ ԹԱԳԱՒՈՐՆ ՊԱՐՍԻՑ ԵՒ ԸՆԴ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐՆ ՀԱՅՈՑ ԶԱՌԱՋԻՆՆ, ԿԱՄ ԶԻԱ՛ՐԴ ՅԱՂԹԷՐ ԱՐՇԱԿ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ

Ապա ամս ութ, յետ գնալոյն փախչելոյն արքային Հայոց Արշակայ ի թագաւորէն Պարսից Շապհոյ, լուռ լինէր թագաւորն Պարսից թշնամութենէ. եւ խաւսէր համակ ողոքով, եւ աղաչէր զԱրշակ արքայ Հայոց՝ սիրով հաշտ եւ միաբան կալ ընդ նմա յուխտի խաղաղութեան։ Վասն զի ի մեծ վտանգ շտապի էր թագաւորն Պարսից ստէպ ստէպ յանդադար պատերազմացն ի թագաւորաց անտի Յունաց։ Իսկ Արշակ արքայ Հայոց ոչ ինչ կամէր անսալ նմա, եւ ոչ հուպ ինչ լինել ի նա. եւ յղեալ դեսպանս, եւ ոչ ինչ տալ պատարագս ընձայից, եւ ոչ հուպ ինչ կամ մաւտ լինել ի նա բնաւին. եւ զանունն անգամ նոցա ոչ կամէր լսել։ Իսկ թագաւորն Պարսից ստէպ ստէպ յղէր պատարագս առ նա, առաքէր դեսպանս։ Եւ ինքն հապճեպ կռուէր ընդ թագաւորսն Յունաց։

Այլ իբրեւ եղեւ խաղաղութիւն ի մէջ թագաւորացն Յունաց եւ ի մէջ թագաւորին Պարսից Շապհոյ, ուխտից նամակ գրեալ եւ կընքեալ տայր թագաւորն Յունաց թագաւորին Պարսից։ Եւ գրեալ էր յուխտից նամակին այսպէս. Ետու քեզ, ասէ, զՆՃբին քաղաք՝ որ է յարուեստանի, եւ զՄիջագետս Ասորոց, եւ մէջաշխարհին Հայոց. ձեռնթափ եմ, ասէ, թէ կարասցես յաղթել նոցա եւ արկանել ի ծառայութիւն, ես ի թիկունս ոչ եկից նոցա։ Արդ ի նեղ ուրեմն անգեալ թագաւորն Յունաց, եւ ի նեղին վշտի՝ զայս ձեւ աւրինակի բանիցն կնքէր մուրհակ, եւ տայր թագաւորին Պարսից, եւ ապա ճողոպրէր ի նմանէ։

Այլ իբրեւ եղեւ խաղաղութիւն ի մէջ թագաւորին Յունաց եւ ի մէջ թագաւորին Պարսից, այնուհետեւ կազմէր զզաւրս իւր թագաւորն Պարսից Շապուհ, եւ խաղաց ի վերայ

ԻԱ
ԹԵ Ի՛ՆՉՊԵՍ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՀ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԵՋ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԵՑ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԸ

Հայոց Արշակ թագավորի Պարսից Շապուհ թագավորից փախչելուց գնալուց հետո Պարսից թագավորը ութ տարի լուռ էր մնում, թշնամություն չէր անում, այլ շարունակ քաղցրությամբ խոսում և աղաչում էր Հայոց Արշակ թագավորին՝ սիրով ու հաշտ ապրել իր հետ խաղաղության դաշինքով։ Որովհետև Պարսից թագավորն այս ժամանակ մեծ վտանգի ու տագնապի մեջ էր՝ Հունաց թագավորների կողմից տեղի ունեցած անարդար պատերազմների պատճառով։ Իսկ Հայոց Արշակ թագավորը ամենևին չկամեցավ նրան լսել, ո՛չ նրա մոտ գնալ, ո՛չ պատգամավորներ ուղարկել, ոչ մի նվեր կամ ընծա ուղարկել. բոլորովին չկամեցավ նրան մոտենալ, անունն անգամ չէր ուզում լսել։ Իսկ Պարսից թագավորը նրան հաճախակի նվերներ ու դեսպաններ էր ուղարկում և ինքը եռանդով կռվում էր Հունաց թագավորների հետ։

Այնուհետև խաղաղություն հաստատվեց Հունաց թագավորների և Պարսից Շապուհ թագավորի մեջ։ Հունաց թագավորը դաշնագրի թուղթ գրեց ու կնքեց, տվեց Պարսից թագավորին, որի մեջ գրված էր այսպես. «Քեզ եմ տալիս Մծբինը, որ Արվաստանում է գտնվում, և Ասորոց Միջագետքը, Հայաստանի ներքին նահանգներից էլ ձեռք եմ քաշում. եթե կարող ես՝ նրանց հաղթի՛ր և քո իշխանության տակ նվաճիր, ես նրանց օգնության չեմ գա»։ Այսպես ուրեմն Հունաց թագավորը նեղն էր ընկնում և ճարահատյալ այսպիսի դաշնագիր էր կնքում և ուղարկում Պարսից թագավորին և այս կերպով խալսում էր նրանից։

Արդ՝ երբ խաղաղություն հաստատվեց Հունաց թագավորի և Պարսից թագավորի

Արշակայ արքային Հայոց մարտի պատերազմաւ։ Իսկ սահմանապահքն թագաւորին Հայոց, որ նստէին ի Գանձակ Ատրպատականի, վաղ ազդ առնէին նմա զիրսն մինչեւ հասեալ էր նա ի սահմանս Ատրպատականի։ Ապա իբրեւ զայն զգայր թագաւորն Հայոց Արշակ, հրաման տայր Վասակայ իւրում սպարապետին՝ կազմել զամենայն զզաւրս իւր, եւ հասանել ի դիմի հարկանել թագաւորին Պարսից Շապհոյ։ Ապա արագ ժողովէր ի մի վայր, հանդէս առնէր Վասակ սպարապետն ամենայն զաւրաց Հայոց. եւ գտան հեծելազաւր սպառազէնք կուռ վառեալք նիզակաւորք համակ վաթսուն բեւր, միասիրտք միաբան միամիտք։ Եւ հանդերձ նոքաւք յառաջ խաղայր սպարապետն Հայոց Վասակ հասանէր, բախեալ ի դիմի հարկանէր թագաւորին Պարսից։ Առ հասարակ զաւրսն զամենայն հարկանէին ի սուր սուսերի իւրեանց. եւ միաձի ճողոպրեալ արքայն Պարսից Շապուհ փախչէր։ Սոքա հասանէին, զերէին, այրացաւեր առնէին առ հասարակ զերկիրն Պարսից, եւ ինքեանք կային ունէին զճակատուն տեղի, այս ինքն զսահմանս Պարսից պահէին։

մեջ՝ այնուհետև Պարսից Շապուհ թագավորը կազմակերպեց իր զորքերը և պատերազմով եկավ Հայոց Արշակ թագավորի վրա։ Հայոց թագավորների սահմանապահները, որ նստած էին Ատրպատականի Գանձակում՝ վաղօրոք այս բանը իմաց էին տալիս Արշակ թագավորին, դեռ (Շապուհը) Ատրպատական չհասած։ Հայոց Արշակ թագավորն այս իմանալուն պես հրաման էր տալիս իր Վասակ սպարապետին՝ իր բոլոր զորքերը կազմակերպել և հասնել, Պարսից Շապուհ թագավորին դիմադրել։ Վասակը շուտով մի տեղ էր ժողովում զորքը, Հայոց բոլոր զորքին զորահանդես էր կատարում. դուրս եկավ վաթսուն բյուր հեծյալ, լավ զինված նիզակավոր զինվոր, միասիրտ, միաբան, հավատարիմ մարդիկ։ Նրանց հետ Հայոց Վասակ սպարապետը առաջ շարժվեց, հասավ ու ընդհարվեց Պարսից թագավորի հետ։ (Նրա) բոլոր զորքերն առհասարակ կոտորում էին իրենց սրերով, և միայն Պարսից Շապուհ թագավորը մի ձիով փախչում էր։ Իսկ սրանք հասնում, գերում էին, ավերում ու այրում էին առհասարակ Պարսից աշխարհը, և պահպանում էին ճակատամարտի տեղը, այսինքն Պարսկաստանի սահմանները։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Ա

Եւ եկն եմուտ թագաւորն Պապ յերկիրն Հայոց, եւ թագաւորեաց ի վերայ նորա. եւ թափեաց յինքն զամուր ամուր բերդիցն, զոր կալեալ էր պարսկացն. եւ բերդն Դարաւնից, որ է յերկրին Կոգայ, ուր կային գանձք արշակունեացն սաստիկ յոյժ։ Քանզի դիպեցան մտերիմք բերդակալքն. զի թէպէտ ի ժամանակէն՝ իբրեւ տարան զթագաւորն Հայոց զԱրշակ ի Պարսս՝ յայնմ հետէ ժամանակէ մարտեան ընդ բերդին ընդ այնմիկ պարսիկք, եւ ոչ կարացին առնուլ, մինչեւ եկն Պապ թագաւորն յերկիրն Հայոց. զի պահեցաւ գանձն եւ եհաս ամբողջ ի Պապ թագաւորն մինչեւ եկն։ Եւ զաւրսն Յունաց յԵռանդ եւ ի Բախիշն ընդ ամենայն երկիրն Հայոց բաշխէին ընդ ամենայն գաւառսն. բայց միայն Մերուժանն չարագործ փախչէր միաձի։

Բ

ՅԱՂԱԳՍ ԶԱՒՐԱՎԱՐԻՆ ՄՈՒՇԵՂԱՅ ՀԱՅՈՑ, ԹԷ ՈՐՊԷՍ ԱՆԿԱՒ Ի ՎԵՐԱՅ ԲԱՆԱԿԻՆ ՇԱՊՀՈՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ, ԵՒ ԵՀԱՐ ԶՆԱ Ի ՀԱՐՈՒԱԾՍ ԱՆՀՆԱՐԻՆՍ, ՄԻՆՉ ԶԻ ՄԻԱՁԻ ՇԱՊՈՒՀ ՃՈՂՈՊՐԷՐ

Ապա Մուշեղ որդի Վասակայ, ստրատելատն Հայոց մեծաց, ընդրեաց իր արս ընտիրս միամիտս ազատս ազգայինս քառասուն հազար, միաբանս միակամս, եւ կազմեաց զնոսա ձիով եւ թոշակաւ եւ զինու. եւ առեալ զնոսա ընդ իւր, երթալ նստել ի սահմանս Ատրպատճացն, եւ պահել զաշխարհն Հայոց։ Ապա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ զաւրովք իւրովք, եկն եհաս յերկիրն Ատրպայականի. եւ Մերուժանն առաջնորդ գնդին բանակի նորա, եւ բուն բանակն ուրեմն թագաւորին ի Թաւրէշն բնակեալ էին։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ

Ա

Եվ Հայոց Պապ թագավորը եկավ մտավ Հայոց աշխարհը և թագավորեց նրա վրա. նա առավ բոլոր այն ամուր բերդերը, որ գրավել էին պարսիկները, տիրացավ և Դարոնք բերդին Կոգի երկրում, որտեղ պահվում էին Արշակունիների գանձերը շատ մեծ քանակությամբ, որովհետև բերդապահները հավատարիմ մարդիկ էին։ Որովհետև թեպետ այն ժամանակից ի վեր, երբ Հայոց Արշակ թագավորին Պարսկաստան տարան, շարունակ պարսիկները կռվում էին այդ բերդի հետ, սակայն չկարողացան առնել, մինչև որ Պապ թագավորն եկավ Հայոց աշխարհը և գանձն ամբողջապես հասավ Պապ թագավորին։ Իսկ Հունաց զորքերը (տեղավորվում էին) Եռանդում և Բախիշում և բաշխում էին Հայոց աշխարհի բոլոր գավառներում. բայց միայն չարագործ Մերուժանը փախչում էր մի ձիով։

Բ

ՀԱՅՈՑ ՄՈՒՇԵՂ ԶՈՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՐՁԱԿՎԵՑ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՀ ԹԱԳԱՎՈՐԻ ՎՐԱ ԵՒ ՍՈՍԿԱԼԻ ՁԱՐԴ ՏՎԵՑ ՆՐԱՆ, ԱՅՆՊԵՍ ՈՐ ՇԱՊՈՒՀԸ ՄԻ ՁԻՈՎ ՃՈՂՈՊՐՈՒՄ ԷՐ

Ապա Մուշեղը, Վասակի որդին, Մեծ Հայքի սպարապետը, ընտրեց քառասուն հազար ընտիր և հավատարիմ մարդիկ ազնվականներից, միաբան և միակամ, պատրաստեց նրանց համար ձի, զենք և ուտեստ, և իր հետ առնելով գնաց Ատրպատականի սահմանում նստեց՝ Հայոց աշխարհը պահպանելու համար։ Նույն ժամանակ Պարսից Շապուհ թագավորն էլ իր զորքով ամենայն պատրաստությամբ եկավ Ատրպատական աշխարհը. և նրա բանակի մի գնդի առաջնորդն էր Մերուժանը, իսկ թագավորի բուն գունդը մնում էր Թավրեշում։

Եւ հասանէր սպարապետն զաւրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ բանակին քառասուն հազարաւ, եւ անդէն ձեռն ի գործ արարեալ կոտորէր։ Ապա միաձի մազապուր թագաւորն Պարսից Շապուհ ճողոպրեալ փախչէր. եւ զամենայն կարեւան բանակին առ հասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանդերձ զաւրաւքն Հայոց։ Զի բազումս կատորէին, եւ զբազումս յաւագանոյն Պարսից ձերբակալս առնէին, եւ առնուին զգանձս թագաւորին Պարսից յաւարի. եւ ըմբռնէին զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբքն։ Եւ զամենայն մաշկաւարզան ի բուռն արկանէր Մուշեղ սպարապետն, եւ զամենայն աւագանին՝ արս իբրեւ վեց հարիւր՝ հրամայէր մաւրթել զաւրավարն Հայոց Մուշեղ, եւ լնուլ խոտով. եւ տայր բերել առ Պապ արքայն Հայոց։ Առնէր զայս ի վրէժս հաւրն իւրոյ Վասակայ։

Բայց զկանայսն Շապհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զաւրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժանաւարս տայր նոցա կազմել ամենեցուն, եւ հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նոցա Շապհոյ արքայի։ Եւ ի պարսկացն ընդ նոսա արձակէր, զի երթիցեն առ Շապուհ թագաւորն Պարսից ողջս եւ անարատս։ Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւնն Մուշեղի եւ ընդ քաջութիւնն եւ ընդ ազատութիւնն, զի ոչ ապար ինչ նմա յաղագս կանանցն թշնամանս։ Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի, ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր գինի ի մատունսն ըմպել, յորժամ ուրախութեանն իւրոյ խրախութիւնս առնէր զաւրացն իւրոց, ասէր. Ճերմակաձին գինի արբցէ։ Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ճերմակաւն. եւ ի ժամ ուրախութեանն իւրոյ դնէր զտաշտն առաջի իւր, եւ յիշէր հանապազ զնոյն բանս ասելով՝ թէ ճերմակաձին գինի արբցէ։

Այլ Մուշեղ եւ ամենայն զաւրքն Հայոց անչափ առին զաւար ի բանակէն Պարսից, եւ

Եվ Հայոց զորավար ու սպարապետ Մուշեղը իր քառասուն հազարով գալիս հարձակվում էր (Շապուհի) բանակի վրա և կոտորում էր բոլորին։ Պարսից Շապուհ թագավորը մի ձիով փախչելով ճողոպրում էր, իսկ բանակի ամբողջ բազմությունը սրի էր անցկացնում Մուշեղը Հայոց զորքի հետ։ Շատերին կոտորում էին, Պարսից ավագներին շատերին ձերբակալում էին, ավար էին առնում Պարսից թագավորի գանձերը, բռնում էին նաև տիկնանց տիկնոջ՝ մյուս կանանց հետ միասին։ Մուշեղը ձեռք էր բերում նաև մաշկավարզանը, իսկ մոտ վեց հարյուր ավագների Հայոց Մուշեղ զորավարը հրամայում էր մորթել, մորթերը հանել ու խոտով լցնել, և ուղարկում էր Հայոց Պապ թագավորին։ Այսպես նա անում էր իր հոր Վասակի վրեժն առնելու համար։

Բայց Պարսից Շապուհ թագավորի կանանց որևէ անարգանք հասցնել թույլ չէր տալիս Հայոց Մուշեղ զորավարը, այլ հրամայում էր բոլորի համար ժանվարներ պատրաստել և նրանց բոլորին ազատ արձակեց իրենց ամուսնու՝ Շապուհ թագավորի ետևից։ Պարսիկներից էլ մարդիկ արձակեց, որ ողջ և անարատ գնան Պարսից Շապուհ թագավորի մոտ։ Պարսից թագավորը զարմացավ Մուշեղի բարերարության, քաջության և ազնվության վրա որ իրեն ոչ մի անարգանք չհասցրեց կանանց վերաբերմամբ։ Այդ ժամանակները Մուշեղը մի ճերմակ ձի ուներ. իսկ Պարսից Շապուհ թագավորը երբ գինու (գավաթը) ձեռքն էր առնում, երբ ուրախության ժամանակ իր զորքին հյուրասիրում էր՝ ասում էր. «Ճերմակաձին թող գինի խմե»։ Եվ մի գավաթի վրա նկարել տվեց Մուշեղի պատկերը՝ ճերմակ ձին հեծած, և ուրախությունների ժամանակ այդ գավաթը դնում էր իր առաջ և շարունակ նույն բանն էր կրկնում - «Ճերմակաձին թող գինի խմե»։

Իսկ Մուշեղը և Հայոց բոլոր զորքը Պարսից բանակի ավարն առան և լիացան գանձերով և ստացվածքներով. ավարից մեծ բաժին

անչափ լցան գանձաւք եւ ստացուածովք. եւ բազում աւարամասն Պապայ պահէին թագաւորին իւրեանց. եւ զաւրացն Հայոց՝ որ անդէն առ թագաւորին Պապայ էին մնացեալ՝ հանին աւարամասն եւ զաւրավարացն Յունաց՝ որ էին առ թագաւորին Հայոց. սոյնպէս եւ ամենայն զաւրացն տային բաշխիլ ի մեծամեծ աւարացն ածելոցն։ Այլ իբրեւ դարձան զաւրքն Հայոց յաշխարհն իւրեանց, բազումք ի զաւրացն Հայոց ամբաստանէին առ թագաւորին Պապայ զՄուշեղէ զսպարապետէն, թէ ընդէ՞ր արձակեաց զկանայս թագաւորին Պարսից զթշնամւոյն մերոյ եւ թագաւորին Հայոց Պապայ. վասն այսր իրաց ոչ ինչ սակաւ լինէր թշնամութեամբ ընդ Մուշեղի մինչեւ ի բազում ժամանակս։

պահում էին իրենց Պապ թագավորի համար, նույնպես և Հայոց այն զորքերի համար, որ մնացել էին Պապ թագավորի մոտ։ Ավարից մաս հանեցին նաև Հունաց զորավարների համար, որոնք Պապ թագավորի մոտ էին, այնպես էլ բոլոր զորքերին բաժին էին հանում բերած ավարներից։ Բայց երբ Հայոց զորքերը իրենց աշխարհը դարձան՝ Հայոց զորքերից շատերը Պապ թագավորի առաջ ամբաստանում էին Մուշեղ սպարապետին, թե ինչո՞ւ նա ազատ արձակեց Պարսից թագավորի կանանցը, որ մեր թշնամին է և Հայոց Պապ թագավորի թշնամին։ Այս բանի պատճառով (Պապը) երկար ժամանակ ոչ քիչ թշնամությամբ էր վարվում Մուշեղի հետ։

Դ
ՅԱՂԱԳՍ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ՈՐ ԵՂԵՒ Ի ԲԱԳԱՒԱՆ ՅԱՒԱՆԻՆ ԲԱԳՐԵՒԱՆԴ ԳԱՒԱՌԻՆ ԸՆԴ ՊԱՊ ԹԱԳԱՒՈՐՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԸՆԴ ԶԱՒՐՄՆ ՊԱՐՍԻՑ

Եւ Մուշեղ սպարապետն Հայոց հարկանէր զզաւրսն Պարսից ի հարուածս անհնարինս. սպաս արարեալ եւ դիպէր գնդին Աղուանից, եւ առ հասարակ զամենայն զզաւրսն սատակէր։ Եւ հասանէր Ուռնայրի արքային Աղուանից ի փախստեանն, եւ նիզակաբնաւն ի կառափն մատուցեալ ծեծէր բազում, ասելով՝ թէ այդմ շնորհս կալ, զի այր թագաւոր ես եւ թագ ունիս. ես ոչ սպանից զայր թագաւոր, թէ կարի նեղ հասցէ ինձ։ Եւ ութ հեծելով թոյլ ետ նմա փախչել երթալ գնալ յաշխարհն Աղուանից։

Այլ յորժամ դարձան ամենայն զաւրքն Հայոց, ոչ գոյր չափ գլխանոյն ախոյենիցն՝ զոր բերեալ էր առաջի թագաւորին Հայոց Պապայ զաւրավարն Հայոց Մուշեղ։ Սոյնպէս ըստ իւրաքանչիւր չափու ամենայն նախարարքն եւ մեծամեծքն եւ բովանդակ ամենայն զաւրքն. եւ եղեւ մեծ յաղթութիւն յերկրին Հայոց, եւ ի մէջ զաւրացն Յունաց։ Նոյնպէս լցան բազում

Դ
ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԲԱԳՐԱՎԱՆԴ ԳԱՎԱՌԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԱՎԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Իսկ Մուշեղ Հայոց սպարապետը չարաչար կոտորում էր Պարսից զորքերը և աչք պահելով հանդիպում էր Աղվանից գնդին և բոլոր զորքերը ջարդում էր. հասնում էր Աղվանից Ուռնայր թագավորին՝ մինչև նա փախչում էր։ Մոտենալով՝ իր նիզակի կոթով երկար ծեծում էր նրա գագաթը՝ ասելով «Շնորհակալ եղիր, որ թագավոր մարդ ես, գլխիդ թագ ես կրում. ես թագավոր մարդու չեմ սպանի՝ մինչև անգամ եթե շատ նեղն էլ ընկնեմ»։ Եվ թույլ տվեց նրան ութ ձիավորի հետ փախչել գնալ Աղվանից աշխարհը։

Իսկ երբ Հայոց բոլոր զորքերը ետ դարձան՝ թիվ չկար ախոյանների այն գլուխներին, որ Հայոց Մուշեղ քաջ զորավարը բերել էր Հայոց Պապ թագավորի առաջ։ Այնպես էլ բոլոր նախարարներն ու մեծամեծները և ամբողջ զորքը, ամեն մեկն իր չափին։ Եվ մեծ հաղթություն եղավ Հայոց աշխարհի և Հունաց զորքի համար։ Նրանք լիացան մեծ ավարով - գան-

աւարաւ զանձուցն զինու եւ զարդու, ոսկւով եւ արծաթով եւ բազում կարասեաւ, ձիովք եւ ջորեաւք եւ ուղտաւք, զոր ինչ թափեցին. զի ոչ գոյր թիւ կամ չափ, այ կարի բազում էր յոյժ։

ԼԴ
ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱՒՈՐԵԼՈՅՆ ՎԱՐԱԶԴԱՏԱՅ ԵՐԿՐԻՆ ՀԱՅՈՑ ՅԵՏ ՊԱՊԱՅ

Եւ եղեւ յետ մահուան Պապայ թագաւորին Հայոց, թագաւորեցոյց թագաւորն Յունաց զՎարազդատ ոմն ի նմին տոհմէն Արշակունի ի վերայ աշխարհին Հայոց։ Եկն բազում շքով եմուտ յերկիրն Հայոց, եւ թագաւորեաց յերկրին Հայոց։ Եւ էր նա մանուկ յաւուրց, լի արութեամբ, կորովի ձեռաւք, քաջ սրտիւ, եւ ի մտաց թեթեւ, մանգաբարոյ տղայահանճար մանկամիտ։ Բայց սակայն իբրեւ տեսին զնա, ժողովեցան առ նա ամենայն ազգք Հայոց մեծամեծք նախարարք. եւ կամեցեալ խնդացին զթագաւորելն նորա ի վերայ իւրեանց։

Եւ սպարապետն Հայոց Մուշեղ առաջնորդէր Հայոց. եւ զգուշանայր զսահմանաւքն Հայոց, որպէս սովոր էր կարգել զաշխարհն մեծապէս, եւ խրատ բարեաց թագաւորին մանկանն Վարազդատայ մատուցանէր։ Եւ հոգայր հանապազ վասն թագաւորութեան աշխարհին Հայոց. եւ զիարդ կամ որպէս շէն լինել մարթասցէ. եւ հանապազ երկս արկանէր բարեխորհուրդն, զի հաստատուն կալ կարասցէ թագաւորութիւնն։ Խորհէր եւս ընդ իշխանսն Յունաց, եւ նոքաւք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց. ի մի մի զաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զաւրանիստս հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց. մինչեւ ի Գանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր. եւ զամենայն ազատսն Հայոց կայսերական թաւշակաւքն զինուորել. սոյնպէս եւ զաւրաց երկրին Հայոց, զի այսպէս ամենայն զգուշութիւն լիցի առ ի թշնամեաց իւրեանց ի զաւրացն Պար-

ձերով, զենքերով, զարդերով ոսկով ու արծաթով, շատ կարասիներով, ձիերով, ջորիներով և ուղտերով, որ խլեցին (պարսիկներից)։ Ավարը շատ-շատ էր. նրան թիվ ու չափ չկար։

ԼԴ
ՊԱՊԻՑ ՀԵՏՈ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ

Հայոց Պապ թագավորի մահից հետո Հունաց թագավորը Հայոց աշխարհի վրա թագավորեցրեց մի ոմն Վարազդատի, որ նույն Արշակունի տոհմից էր։ Նա մեծ շքեղությամբ եկավ Հայոց աշխարհը և թագավորեց Հայոց աշխարհում։ Նա տարիքով մանուկ էր, արիասիրտ, հզոր ձեռքերով, քաջ սրտով, բայց թեթևամիտ, երեխայի նման խելքը պակաս, մանկամիտ։ Բայց երբ նրան տեսան՝ Հայոց մեծամեծների ու նախարարների բոլոր տոհմերը նրա մոտ ժողովվեցին, ուրախանալով որ նա իրենց վրա թագավորեց։

Իսկ Հայոց Մուշեղ սպարապետը առաջնորդում էր հայերին և զգուշությամբ պահպանում էր Հայաստանի սահմանները, ինչպես սովոր էր աշխարհը բարեկարգ պահել, և բարի խրատներ էր տալիս մանուկ Վարազդատ թագավորին։ Եվ միշտ հոգս էր քաշում Հայոց աշխարհի թագավորության համար, թե ինչպես շեն պահե, և միշտ բարեմտությամբ աշխատում էր, որ թագավորությունը հաստատ մնա. նա խորհրդակցում էր Հունաց իշխանների հետ և նրանց միջոցով կայսեր հետ, թե հարկավոր է Հայոց աշխարհում քաղաքներ շինել ամեն մի գավառում, որում մի-մի քաղաք, որում երկ-երկու, ամուր պարիսպներով պատած, որպեսզի զորանիստ տեղեր դառնան բոլոր Հայոց աշխարհում, մինչև Գանձակ սահմանագլուխը, որ սահման էր Պարսկաստանի և Հայաստանի մեջ։ (Նույնպես խորհուրդ էին անում) Հայոց բոլոր ազնվականներին զինավորել կայսերական ծախսով, այնպես էլ Հայոց աշխարհի զորքերը, որպեսզի այս կերպով ամեն զգուշութ-

սից։ Եւ թագաւորն Յունաց յանձին ունէր մեծաւ խնդութեամբ առնել զայս. զի այսու ամենայնիւ աշխարհն հաստատուն լիցի եւ անշարժ ի նմանէն, զի մի՛ կարասցէ թագաւորն Պարսից յիւր վտարել զաշխարհն Հայոց։

ԽԲ
ՅԱՂԱԳՍ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՄՍ ԵՒԹՆ

Եւ յետ այսորիկ ամս եւթն, եւ այլ ոչ եւս յաւելին զաւրքն Պարսից ժտել ինչ մտանել ի սահմանս Հայոց. եւ եղեւ խաղաղութիւն երկրին։ Եւ ժողովեցան առ զաւրավարն Մանուէլ ամենայն ցրուեալք երկրին. եկին անկան այր յայր, եւ էին բանակեալ յանհոգս. եւ զաւրավարն Հայոց Մանուէլ առաջնորդէր նոցա։ Եկին ապա եւ մնացորդք ի տանէն Միւնեաց պատանեակ երեք մնացեալք ի կոտորածէն Պարսից առ զաւրավարն Հայոց Մանուէլ. եւ անուանք նոցա միումն Բաբիկ, եւ միւսումն Սամ, միւսումն Վաղինակ։ Եւ ընկալաւ զնոսա զաւրավարն Հայոց Մանուէլ. եւ եղեւ նոցա աւգնական, եւ դարձ արար նոցա յերկիրն իւրեանց. եւ կացոյց տէր զԲաբիկ ի վերայ երկրին, եւ զերկուսն եւս ըստ իւրաքանչիւր չափու. եւ էր Բաբիկ նիզակակից զամենայն աւուրս կենաց նորա։ Նոյնպէս յամենայն գաւառս կացուցանէր սպարապետն Հայոց Մանուէլ նահապետս եւ տեարս գաւառաց գաւառաց. եւ առաջնորդէր ամենեցուն խաղաղութեամբ։ Եւ ամենայն երկիրն Հայոց ի խաղաղութեան ընդ հովանեաւն Մանուէլի զամենայն աւուրս կենաց նորա, ամենայն մարդիկ երկրին Հայոց վայելէին յաւուրս իւրեանց. ուտէին եւ ըմպէին եւ ուրախ լինէին զայն ամս եւթն տէրութեանն Մանուէլի, մինչեւ ի բաժանումն երկրին Հայոց եւ ի քակտումն թագաւորութեանն։

յուն ձեռք առնեն իրենց թշնամիների՝ պարսից զորքի դեմ։ Եվ Հունաց թագավորը մեծ ուրախությամբ հանձն էր առնում այս բաները կատարել, որպեսզի այս բոլոր միջոցներով աշխարհը հաստատ ու անշարժ կապվի իր հետ, և պարսից թագավորը չկարողանա Հայոց աշխարհը իրեն գրավել։

ԽԲ
ՅՈԹԸ ՏԱՐԻ ՏԵՎՈՂ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սրանից հետո յոթը տարի պարսիկներն այլևս չշարունակեցին Հայաստանի սահմանները մտնել, և երկիրը խաղաղացավ։ Մանուել զորավարի մոտ ժողովվեցին երկրում ցրվածները, եկան մեկտեղացան, և անհոգ ապրում էին, և Հայոց Մանուել զորավարը նրանց առաջնորդում էր։ Հետո եկան Մանուել զորավարի մոտ նաև Սյունյաց տոհմից մնացածները – երեք պատանի, որոնք պարսկական կոտորածից ազատվել էին, որոնցից մեկի անունն էր Բաբիկ, մյուսինը Սամ, երրորդինը Վաղինակ։ Հայոց Մանուել զորավարը նրանց ընդունեց, նրանց օգնական դարձավ, նրանց իրենց երկիրն ուղարկեց, Բաբիկին նշանակեց այդ երկրի տեր, մյուս երկուսին էլ՝ յուրաքանչյուրին իր չափով, և Բաբիկը նրա նիզակակիցը դարձավ բոլոր նրա կյանքի ընթացքում։ Նույնպես բոլոր գավառներում Հայոց Մանուել սպարապետը նշանակում էր նահապետներ և գավառների տերեր, և խաղաղությամբ կառավարում էր բոլորին։ Եվ ամբողջ Հայոց աշխարհը ապրում էր խաղաղության մեջ Մանուելի հովանու տակ՝ որքան ժամանակ կենդանի էր նա։ Բոլոր մարդիկ իրենց արևի ձենն էին ածում, ուտում, խմում, ուրախանում էին Մանուելի տերության այն յոթը տարիներում, մինչև Հայոց աշխարհի բաժանումը և թագավորության քակտումը։

ՂԱԶԱՐԱՅ ՓԱՐՊԵՑԻՈՅ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(քննական բնագիրը
Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի)

Երևանի համալսարանի հրատարակչություն, 1982

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Աշխարհաբար թարգմանությունը և
ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի)

Երևանի համալսարանի հրատարակչություն, 1982

Դ. Որում արթնամիտ խորհրդականութեամբ ուշադրեալ այսմ ամենայնի մտաւոր եւ քաջ այրն Վահան տէրն Մամիկոնէից, զաւրավարն Հայոց եւ մարզպանն, որ բազում եւ անհամար ուղղութեանց աշխարհիս Հայոց ի ժամանակս իշխանութեան իւրոյ եղեւ աբարող, անձամբ եւ զայլս յորդորելով զբազումս: Սա որպէս եւ այլ ամենայն բարւոյ իրաւք հոգացեալ զՀայաստան աշխարհի իրս՝ առաւել եւս զայս ի դէպ եւ պատշաճ համարեցաւ. ի մնացեալ տեղւոյ պատմութեան Երկրորդ գրոցն աճեցուցանել յառաջ եւ գրել յայնմհետէ զեղեալս յաշխարհիս Հայոց: Բազում զգուշութեամբ գրել եւ կարգել մի ըստ միոջէ զամենայն զհոգեւորացն զառաքինութիւնս եւ զարանց քաջաց զլաւութիւնն: Որպէս զի զհոգեւորացն զբարի վարսն լուեալ բազմութեան ժողովրդոցն՝ նմանողք լինել ցանկասցին մարդիկ ճգնութեանց նոցա, եւ քաջքն լսելով զայլոց զգործսն յառաջագոյն քաջացելոցն՝ յաւելեալ յանձանց քաջութիւն՝ անուանի յիշատակ թողցեն զկնի իւրեանց՝ անձանց եւ ազգի: Իսկ ծոյլքն և վատքն հայելով յանձինս եւ լսելով զայլոց զպարսաւանս՝ ի բարի նախանձն կրթեալք ջանասցին լաւանալ:

Ը. Եւ արդ՝ զայսպիսի զրղձակերտ գաւառ, զչնաշխարհիկ եւ զամենալի ըստ տուչութեան ամենախնամ արարչին Աստուծոյ, զԱյրարատեան գաւառ, որ է գլուխ աշխարհիս Հայոց, զգաւառն համբաւատենչ, զգաւառն ամենալի, որ բերէ յինքեան զաւրինակ լիութեան, ըստ բանի Գրոյն, զերկրին Եգիպտացւոց եւ զդրախտին Աստուծոյ, եւ զբնիկ սեպհական կալուածի ազգին Արշակունեաց զքաղաքն Վաղարշապատ, զբնակութիւն ոստանի Արշակունի թագաւորացն, զբարձրաբերձ շինուածս անթիւ ապարանացն, զանյագ զամենալի դաշտացն զբերկրումն, զհրեշտակացո՛յց հիմնարկութիւնն սրբոյ տանն Աստուծոյ, մեծի եկեղեցւոյն կաթողիկէի, եւ զայնց վկայարանաց ճգնազգեցիկ երանելի կուսանացն. որոց զտեալք անարժան՝ ազգն

Դ. Արթնամիտ խորհրդականությամբ լեցուն, քաջ ու ամենագետ այր Մամիկոնեից տեր Վահանը, Հայոց զորավարն ու մարզպանը, որ անձամբ եղավ Հայոց աշխարհի բազում և անհամար գործերի ուղղություն տվողն իր իշխանության օրերում, ուրիշներին ևս նույնն էր հորդորում: Ինչպես որ Հայաստան աշխարհի հոգսն էր քաշում մյուս բոլոր արժանավոր գործողություններով, առավել ևս հարմար ու պատշաճ համարեց այս՝ Երկրորդ գրքի պատմության մնացած տեղից շարունակել և շարադրել նրանից հետո Հայոց աշխարհում կատարվածը. մեծավ զգուշությամբ գրել ու մեկ առ մեկ դասավորել բոլոր հոգևորականների առաքինությունները և քաջ տղամարդկանց սխրանքները: Որպեսզի ժողովրդական բազմությունները, հոգևորականների բարի վարքերը լսելով, ցանկանան նմանվող լինել նրանց ճգնություններին, և խիզախներն էլ, լսելով առաջներում գործված քաջությունների մասին, բազմապատկեն իրենց անձնական սխրանքները, իրենցից հետո թողնեն անվանի հիշատակ՝ իրենց անձերի ու ազգի համար, իսկ ծույլերն ու վատերը, անձամբ տեսնելով այս ամենը և լսելով այլոց պարսավանքները, բարի նախանձից կրթվելով՝ ջանան լավանալ:

Ը. Եվ ահա այսպիսի ըղձալի գավառը, չնաշխարհիկ, ամենախնամ արարիչ Աստծո տվչությամբ ամեն ինչով լցված գավառն Այրարատյան, որ գլուխն է Հայոց աշխարհի, գավառը բարեհամբավ, գավառն ամենալի, որ ինքնին օրինակ է առատաբաշխության, ինչպես սուրբ գրքի երկիրը Եգիպտացոց ու դրախտն Աստծո, - և Արշակունյաց տոհմի բնիկ սեփական կալվածքը, Արշակունի թագավորների բնակավայր ոստանը Վաղարշապատ, անթիվ ապարանքների բարձրաբերձ շինությունները, անհագորեն առատ բերկրանքը դաշտերի, հրեշտակի ցույց տված տեղում հիմնարկված սուրբ տունն Աստծո՝ մեծ եկեղեցին կաթողիկե և ճգնավոր երանելի կույսերի այն վկայարանները, անարժան

Արշակունեաց յաղագս անարժան գործոց իւրեանց, ըստ բանի սրբոյ առն Աստուծոյ Ներսէսի՝ գտան եղեալք ընկեցիկք յերեսաց Աստուծոյ. մատնեցան ի բաժանումն թագաւորին Պարսից եւ Յունաց, որոց վիճակեալ երկոցունց զմեծ զաշխարհս Հայոց՝ բաժանեալ ծառայեցուցին:

ԺԳ. *«Այլ վասն իմ որ ասէքդ, եթէ միաբանեա՛ ընդ մեզ՝ ինձ քաւ լիցի մատնիչ լինել ճշմարիտ հաւատոյն մերոյ եւ անհաւատից զիմ հաւտի զմոլորեալ ոչխարն մատնել յայպանումն: Զի թէպէտ եւ մեղաւոր է, այլ դրոշմեալ է սուրբ աւազանին ծննդեամբ, հմուտ է փրկութեան խնդրոյն, լուեալ է զլուր քարոզութեան Աւետարանին կենաց: Արդ՝ եթէ էր տանել առ բժիշկ առողջ զվիրաւոր եկեղեցւոյս իմոյ զոչխար՝ փութայի եւ ոչ յապաղէի. այլ յամենախտալից ատեան մատուցանել զիմ հիւանդացեալ հոգւոյ որդի ես ոչ երբէք առնում յանձնս: Զի եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի տանել զայսպիսի յանդիմանութիւն՝ թերեւս համարձակէի, յուսով գիւտի կորուսելոյն. այլ կշտամբել զհաւատացեալս յաղագս մեղաց առաջի անհաւատիցն՝ ոչ հաւանիմ, որ հանապազ ուսուցիչ լեալ եմ բողոքոյն Պաւղաւսի, որ ասէ. «Իշխէ՞ ոք ի ձէնջ, եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերի իւրում՝ դատել առաջի անաւրինաց, եւ ոչ առաջի սրբոց. եթէ ո՞չ գիտէք, եթէ սուրբք զաշխարհս դատին. եւ եթէ ձեւաւք դատի աշխարհ՝ ապա ոչ էք արժանի անարգ ատենից: Ո՞չ գիտէք, եթէ զհրեշտակս դատիմք, թող թէ զերկրաւորս. զերկրաւոր ատեանս եթէ յանձն առնուք, զանարգս՝ եկեղեցւոյ դատաւոր նստուցանեմք. առ ամաւթոյ ձերոյ ասեմ: Եւ այնպէս, ասէ, ո՞չ ոք գոյ իմաստուն ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել ի մէջ եղբաւր իւրոյ. այլ եղբայր ընդ եղբաւր դատի, եւ զայն ի մէջ անհաւատից»: Եւ արդ՝ որ ուսուցի զբազումս, զանձն իմ ընդէ՞ր ոչ ուսուցից: Այլ ինձ լաւ լիցի մեռանել, քան եթէ զոք ի հաւատացելոց վասն անարժան գործոյ մատնել անաւրինաց: Զի թէպէտ եւ իցէ պոռնիկ, այլ զկնիք հաւտին*

գտնվեց Արշակունյաց տոհմը՝ իր անփառունակ գործերի պատճառով և Աստծո սուրբ այր Ներսեսի խոսքի համաձայն՝ մերժվեց, ընկավ Աստծո աչքից, երկիրը բաժանման մատնվեց Պարսից ու Հունաց թագավորների միջև, որոնք Հայոց մեծ աշխարհը երկատելով՝ առան իրենց ծառայության ներքո:

ԺԳ. «Իսկ այն առթիվ, որ ասում եք՝ միաբանեմ ձեզ հետ, քա՛վ լիցի, որ ես մատնիչ լինեմ մեր ճշմարիտ հավատին և իմ հոտի մոլորյալ ոչխարը հանձնեմ անհավատներին՝ ծանակելու: Որովհետև, թեպետ և մեղավոր է, սակայն սուրբ ավազանի վրա դրոշմված է ծնունդով, տեղյակ է փրկության խնդրին, լսել է կենաց Ավետարանի քարոզության խոսքը: Արդ, եթե իմ եկեղեցու վիրավոր ոչխարը տանելու լիներ առողջ բժշկի մոտ, կշտապեի և չէի հապաղի: Իսկ ամենաախտալից ատյանին մաղթել իմ հիվանդացած հոգևոր որդո՛ւն՝ երբեք հանձն չեմ առնի: Եթե հավատացյալ թագավորի մոտ պետք լիներ տանել այսպիսի հանդիմանության համար, թերևս համարձակվեի՝ կորցրածը գտնելու հույսով: Բայց մեղքերի համար հավատացյալներին կշտամբել անհավատների առաջ՝ չեմ համաձայնի, քանի որ ես միշտ քարոզել եմ Պողոսի այն բողոքը, որ ասում է. «Թե ձեզնից մեկը գործ ունենա իր ընկերոջ հետ, կհամարձակվի՞ դատվել անօրենների առաջ և ոչ թե սրբերի առաջ: Չգիտե՞ք, որ սրբերն են աշխարհը դատում: Եվ եթե ձեզնով դատվի այս աշխարհը, ապա արժանի չեք անարգ ատյաններին: Չգիտե՞ք, որ հրեշտակներին ենք դատում, ո՛ւր մնաց թե երկրավորներին: Եթե երկրավոր ատյաններն ընդունենք, ապա անարգներին կարգած կլինենք եկեղեցու դատավորներ: Ձեր ամոթի համար եմ ասում: Եվ այսպես, -ասում է, - ձեր մեջ չկա՞ մի իմաստուն մարդ, որ կարողանա իր եղբոր արդար դատաստանը տեսնել, որ եղբայրը դատվում է եղբոր հետ, և այն էլ անհավատների մեջ»: Եվ արդ, ես, որ շատերին եմ դաստիարակել, ինչո՞ւ ինձ չդաստիարակեմ: Բայց լավ է՝ ես

Քրիստոսի կրէ յանձին իւրում. գիճացեալ է մարմնով, այլ ոչ անհաւատ եւ հեթանոս. զեղխ, այլ ոչ կրակապաշտ. տկարացեալ է ի կանայս, այլ ոչ ծառայէ տարերց. միով ախտանայ ցաւով, այլ ոչ վարակեալ ամենայն ախտիւք իբրեւ զամբարիշտ: Եւ զիա՞րդ զսակաւամեղն՝ ամենայնիւ ամբարշտելոցն մատնել խորհիցիմք ի սատակումն: Քա՛ւ ձեզ, որդիք, մի՛ խորհիք զխորհուրդդ զայդ, եւ զբնիկ զձեր զտեարդ, որպէս եւ ոմանք ի ձեր նախնեացն, կորուսանել մի՛ ջանայք»:

Զայս եւ առաւել եւս քան զսոյն բանս եւ խրատ բազում արտասուաւք եւ աղերսանաւք խաւսեցեալ անձանձրոյթ սրբոյ կաթողիկոսին ընդ աւագանին Հայոց՝ ոչ ինչ կարաց զնոսա յառաջին միաբանութենէն եւ ի խորհդոյն, զոր հաստատեալ էին ի միտս իւրեանց, ի բաց դարձուցանել: Քանզի եկեալ հասեալ էր ի վերայ նոցա նզովք սրբոյ առն Աստուծոյ Ներսէսի՝ անկանել նոցա ընդ լծով չար ծառայութեան հեթանոսաց, եւ ոչ դադարէր մինչեւ ի գլուխ զգործն հանէր:

ԻԶ. *Եւ լուեալ զայս ամենայն բանս, պատուոյ եւ խոստմանց եւ մահու սպառնալեաց, ի թագաւորէն Պարսից Յազկերտէ երեցունց աշխարհաց ազատանոյն՝ լռեցին առ վայր մի այլքն. բայց յառաջ կացեալ աներկիւղ եւ քաջասիրտ մտաւք Վարդանայ Մամիկոնէից տեառն եւ Հայոց սպարապետի՝ պատասխանի ետ թագաւորին Յազկերտի առաջի ամենայն բազմութեանն եւ ասէ, եթէ «Բազումք են յայս երից աշխարհաց յազատորերոյ, որք են աւագ քան զիս եւ զահու եւ աւուրքք, եւ շատ են, որ ի խոնարհ են: Զվաստակ եւ զհպատակութիւն, զոր ծառայից պարտ է առ իւրեանց տեարսն եւ առ թագաւորսն առնել՝ զայն նախ դու, որ ամենեցուն տէրդ ես, եւ ապա ամենայն Արիք, զիմ եւ զիւրաքանչիւր ի նոցանէ մինչեւ ցայժմ՝ քաջ գիտէք, եւ ոչ ինչ պիտոյ է ինձ եւ կամ ումեք ի սոցանէ զիւր զվաստակ եւ զսպաս ծանուցանել ձեզ: Յայսմ հետէ եւ յառաջ ի մտի այսպէս եդեալ իմում անձինս, զի եթէ եւ գոյ հնար առնել զմի անձն իմ*

մեռնեմ, քան թե անարժան գործի համար հավատացյալներին մատնեմ անօրենների ձեռքը:

Քանի որ, չնայած և պոռնիկ լինի, իր անձի վրա Քրիստոսի հոտի կնիքն է կրում: Անառակացել է մարմնով, բայց անհավատ ու հեթանոս չէ: Շվայտ կյանք է վարում, բայց կրակապաշտ չէ: Տկարացել է կանանց հանդեպ, բայց չի ծառայում տարերքին: Մեկ ախտով հիվանդացել է, բայց վարակված չէ ամեն տեսակ ախտով, ինչպես ամբարիշտը: Եվ ինչպե՞ս սակավ մեղք ունեցողին մատնենք ամենաամբարիշտներին, որ տանեն-սպանեն: Քավ լիցի, որդիք, մի՛ ունեցեք այդպիսի դիտավորություն և, ձեր նախնիներից ոմանց պես, մի՛ ջանացեք կորցնել բնիկ ձեր տերերին»:

Այս և սրանից էլ ավելի խոսք ու խրատ՝ անձանձիր, արտասուքով ու աղերսանքներով խոսեց սուրբ կաթողիկոսը Հայոց ավագանու առաջ: Սակայն չկարողացավ նրանց հեռացնել նախկին միաբանությունից ու խորհրդից, որ դրել էին իրենց մտքներում: Որովհետև եկել, նրանց վրա էր հասել սուրբ Ներսեսի անեծքը, թե նրանք ընկնելու են հեթանոսների չար ծառայության լծի տակ…. Եվ քանի գործը գլուխ չէր բերել, չէր հանգըստանում սուրբ կաթողիկոս Սահակը:

ԻԶ. Երեք աշխարհների ազատները լսեցին պատվի, խոստումների ու մահվան սպառնալիքի բոլոր այս խոսքերը Պարսից թագավոր Հազկերտից և մի պահ լռեցին: Բայց աներկյուղ և քաջասիրտ հառաջ գալով՝ Մամիկոնեից տեր և Հայոց սպարապետ Վարդանն ամբողջ բազմության առաջ պատասխան տվեց Հազկերտ թագավորին ու ասաց. թե «Շատ են այս երեք աշխարհների այն ազատները, որ ավագ են ինձանից և՛ գահով, և՛ տարիքով, իսկ շատերն էլ կրտսեր են: Այն վաստակն ու հպատակությունը, որ ծառաներն են պարտավոր ցույց տալ իրենց տերերին ու թագավորին նախ՝ դո՛ւ, որ տերն ես ամենեցուն, ապա և ամենայն արիները, քաջ գիտեք, թե ես և սրանցից յուրաքանչյու-

բազում անձինս, զոյժ եւ զյաւժարութիւն կամաց առաւել եւս քան զնոյնս, զկեանս եւ զկարասի, որ զամ մի յիմում տանս կայ, ձեր առնելով, եւ ի վերայ Արեաց տեառն եւ ի վերայ Արեաց աշխարհի եղեալ է ի մտի մաշել: Բայց զաւրէնս, զոր ուսայ յԱստուծոյ ի մանկութենէ իմմէ, թողուլ եւ ընդ երկիւղի մարդոյ փոխանակել՝ չէ հնար: Զի եթէ ի մարդոյ ընկալեալ էր զարդար վարդապետութիւնն, զոր հաստատեալ է ի միտս իմ, գիտէի թէ ճշմարիտ են, եւ ուրանայի՝ ողորմելի զանձն համարէի. թող թէ աւրէնս, զոր ընկալայ եւ ուսայ ի բերանոյ Աստուծոյ՝ վաճառել ընդ երկիւղի մարդոյ եւ սնոտի փառաց. քա՛ւ լիցի: Իմ պատասխանիք այդ են, յորում ցանկամ մեռանել, քան թէ կալ ուրացութեամբ առանց Աստուծոյ: Իսկ այլքս, որ կան առաջի ձեր ամենեքեան, որ են ի քրիստոնէական կարգէ՝ բաւական է իւրաքանչիւր ոք ընդ անձին իւրոյ տալ պատասխանի»:

ԼԵ. *Եւ հասեալ յԱղուանս երանելւոյ զաւրավարին Հայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից՝ ազգ եղեւ զաւրագլխացն Պարսից եկք Հայոց. որոց լուեալ՝ փութացան անցանել ընդ գետն մեծ, զոր Կուր գետն կոչեն, եւ ընդ առաջ եկին նոցա մինչեւ ի գեաւղն որ կոչի Խաղխաղ, յերկրին Աղուանից: Եւ տեսեալ սրբոյ սպարապետին Հայոց Վարդանայ զանթիւ բազմութիւն գնդին Պարսից, եւ յինքեանս հայեցեալ, թէ յոյժ սակաւք են՝ սկսաւ խաւսել ընդ զաւրն Հայոց եւ յիշեցուցանել զբան սուրբ Հոգւոյն, զոր մայրն մարգարէին Սամուէլի ցնծութեամբ քաջալերեալ ի Քրիստոս՝ երգելով ասէր, թէ «Մի՛ պարծեսցի հզաւրն ի զաւրութեան իւրում, եւ մի՛ պարծեսցի մեծն ի մեծութեան իւրում. այլ որ պարծելոցն իցէ՝ յԱստուած պարծեսցի»: Քանզի ոչ ինչ է ի նուազս եւ ի բազումս յաղթութիւն եւ պարտումն, այլ յԱստուծոյ ակնարկութեանն հրամանի: Եւ զայս ասացեալ երանելւոյ զաւրապետին Հայոց տեառնն Մամիկոնէից Վարդանայ, հայեցեալ եւ ի կամս ընկերակցաց իւրոց եւ ամենայն գնդին որ ընդ նոսա, թէ ո՛ր-*

րըն ինչպես ենք կատարել, և կարիք չկա, որ ես կամ սրանցից որևէ մեկը ձեզ բացատրի իր վաստակն ու ծառայությունը: Ես իմ մտքում այսպես եմ դրել, որ այսուհետև, եթե հնարավորություն լինի իմ մեկ անձը շատ անձեր դարձնելու, դրանից էլ առավել ուժով ու հնազանդությամբ, կյանքով և տանս եղած ամբողջ ունեցվածքով ծառայել Արյաց տիրոջը, հանուն Արյաց աշխարհի: Բայց այն օրենքները, որ սովորել եմ իմ մանկությունից, անհնար է թողնել՝ նրանց դավելով մարդկային երկյուղից: Քանզի եթե նույնիսկ մարդուց ընդունած լինեի այդ արդար վարդապետությունը, որ հաստատված է իմ մտքում և, գիտենալով, որ ճշմարիտ է, ուրանայի, ապա ողորմելի մարդ կհամարվեի: Ո՛ւր է, թե այն օրենքները, որ Աստծո բերանից եմ ընդունել ու սովորել, վաճառեմ մարդկային երկյուղից, հանուն սնոտի փառքերի: Քա՛վ լիցի: Դրա՛նք են իմ պատասխանները, որոնցով կուզենամ մեռնել, քան ապրել ուրացությամբ, առանց Աստծո: Իսկ բոլոր ուրիշները, որ կան ձեր առաջ և քրիստոնեական հավատ ունեն, իրենք կարող են պատասխան տալ իրենց անձերի համար»:

ԼԵ. Հայոց զորավար երանելի Վարդանը՝ տերը Մամիկոնեից, հասավ Աղվանք, և Պարսից զորագլուխներին հայտնվեց հայերի գալու մասին: Պարսիկները լսեցին և փութացան անցնել Կուր կոչված մեծ գետը և նրանց ընդառաջ եկան մինչև Աղվանք երկրի Խաղխաղ կոչված գյուղը: Եվ Հայոց սուրբ սպարապետ Վարդանը, տեսնելով Պարսից գնդի անթիվ բազմությունը և իրենց նայելով, որ հույժ սակավ էին, սկսեց խոսել Հայոց զորքի հետ և հիշեցնելով սուրբ Հոգու խոսքը, որ Սամվել մարգարեի մայրը, Քրիստոսից քաջալերված ու ցնծությամբ երգելով, ասում էր. «Թող հզորն իր զորությամբ չպարծենա և մեծն էլ չպարծենա իր մեծությամբ, այլ թե պարծենալու է, Աստծո՛վ թող պարծենա»: Քանի որ ոչինչ են նվազով կամ շատոնցով հաղթելն ու պարտվելը, կարևորն Աստծո

պէս ջերմեռանդն սիրով զաւրացեալք էին եւ քաջալերեալք՝ խրախալից մտաւք փառաւորէր զՓրկիչն ամենեցուն զտէր Յիսուս Քրիստոս:

Եւ հասեալք ի ժամ մարտին՝ հայեցեալ տեսանէին ըստ աւրինի կարգման նկատելոյ զգունդսն Պարսից: Կարգէր եւ զիւր գունդն երանելի զաւրավարն Հայոց Վարդան, ըստ բաւականին այրուձիոյն իւրոյ, ընդդէմ նոցա. յերիս առաջս բաժանեալ՝ տայր ի ձեռս իւրաքանչիւր զաւրագլխի. որում աջոյ կողմանն կացուցանէր զաւրագլուխ զիշխանն Արշարունեաց զԱրշաւիր Կամսարականն, որ էր եւ փեսայ զաւրավարին Հայոց սրբոյն Վարդանայ տեառնն Մամիկոնէից, ունելով զդուստր նորա ի կնութեան. եւ նիզակակից տայր նմա զՄուշ զաւագ սեպուհ՝ յազգէն Դիմաքսենից. եւ զահեակ կողմն տայր ի ձեռն Խորենայ Խորխոռունւոյ, եւ զաւրավիգն ընդ նմա կացուցանէր զՀմայեակ Դիմաքսեանն. եւ ինքն սուրբ զաւրավարն Հայոց Վարդան պատրաստէր զինքն միջոյ տեղւոյն յարձակման: Եւ այսպէս յաւրինեալ զճակատն եւ յԱստուծոյ խնամսն ապաւինեալք՝ յարձակեցան ի վերայ թշնամեացն:

Յորս նախագոյն յառաջեալ ի տեղի մարտին՝ Կամսարականն Արշաւիր եւ Մուշ սեպուհն Դիմաքսենից, որք յանգիտութենէ տեղեացն՝ դիպեցան թանձրախոր սաստիկ մաւրից. Կամսարականն Արշաւիր եւ Մուշ ի յառաւելապէս դիմեցմանէն երիվարացն՝ անկեալք ի տիղմն հանդերձ երիվարաւքն խրէին. անդ կատարեալ պսակէր երանելի սեպուհն Դիմքասենից Մուշի ի Նիխորականայ: Իսկ Կամսարականն Արշաւիր իջեալ յերիվարէն՝ ի հետիոտս սպանանէր զՎուրկն, զեղբայր Լփնաց թագաւորին, եւ իւր ի բաց ձգեալ զերիվարն ի սաստիկ խոր տղմոյն, ուր եւ մոյկ մի զերծեալ յոտանէն թաղեալ մնայր անդէն ի մաւրին. եւ ինքն Կամսարականն միամոյկ, տղմաթաթաւ, հանդերձ ամենայն զինուն, հանեալ զերիվարն ի ցամաք՝ անվեհեր քաջաբար նման թռչնոյ յերիվարն հեծա-

հրամանն է: Եվ այս ասելով՝ Հայոց երանելի զորապետ ու Մամիկոնեից տեր Վարդանը նայեց իր ընկերակիցների ու իր հետ գտնվող ամբողջ գնդի կամքին, տեսավ, թե ինչպիսի ջերմեռանդ սիրով զորացած էին ու քաջալերված, և խրախալից սրտով փառք տվեց ամենքի փրկիչ Հիսուս Քրիստոսին:

Հասնելով մարտի ժամին՝ նայեցին և տեսան պարսից գնդերը դասավորված ըստ պատերազմական կարգի: Հայոց երանելի զորավար Վարդանը ևս իր գունդը դասավորեց նրանց դեմ: Մեծաթիվ այրուձին բաժանելով երեք մասի, յուրաքանչյուրը տվեց մի զորագլխի ձեռը. աջ կողմում զորագլուխ կարգեց Արշարունյաց իշխան Արշավիր Կամսարականին, որ և փեսան էր Հայոց զորավար սուրբ Վարդանի՝ Մամիկոնեից տիրոջ, ամուսնացած լինելով նրա դստեր հետ: Եվ (Վարդանը) նրան նիզակակից տվեց ավագ սեպուհ Մուշին՝ Դիմաքսյան տոհմից: Իսկ ձախ կողմը տվեց Խորեն Խոռխոռունու ձեռքը՝ նրան զորավիգ դարձնելով Հմայակ Դիմաքսյանին: Հայոց սուրբ զորավար Վարդանն ինքն էլ պատրաստվեց կենտրոնի վրա հարձակվելու: Եվ այսպես ճակատ կազմած և ապավինած Աստծո խնամքին, հարձակվեցին թշնամիների վրա:

Բոլորից առաջ մարտի վայրը գնացին Արշավիր Կամսարականն ու Դիմաքսենից սեպուհ Մուշը, որոնք տեղի անծանոթությունից հանդիպեցին սաստիկ թանձրախոր ճահճուտի: Արշավիր կամսարականն ու Մուշը երիվարների առավելագույն ընթացքի պատճառով տիղմի մեջ ընկան երիվարներով ու խրվեցին: Այնտեղ նահատակությամբ պսակվեց երանելի սեպուհ Մուշ Դիմաքսյանը Նիխորականից: Իսկ Արշավիր Կամսարականը, իջնելով երիվարից, հետիոտն սպանեց Լբփնաց թագավորի եղբայր Վուրկին և իր ձին դուրս քաշելով սաստիկ խոր տիղմից, ուր և ոտնամանի մեկը ոտքից դուրս գալով՝ թաղվեց-մնաց այնտեղ, ճահճուտում, և ինքը՝ Կամսարականը մեկ ոտնամանով, տղմաթա-

նէր, եւ զարհուրեցուցեալ զթեւ իւրոյ կողման թշնամեացն՝ փախստական առնէր: Եւ հայեցեալ տեսանէր զերանելի սպարապետն Հայոց զտէրն Մամիկոնէից Վարդան՝ հանդերձ ընկերակցաւքն իւրովք եւ ամենայն Հայոց գնդաւն, զի արարեալ փախստականս եւ նոցա՝ ածէին առաջի իւրեանց զբազմութիւն զաւրացն Պարսից. յորոց զկէսն գետավէժս արարեալ հեղձամղձուկս առնէին. եւ զայլսն ի նոցանէ դաշտացն եւ անտառախիտ մայրեացն ցրուեալս վատնէին:

Իսկ ոմանք յաւագորերոյ Պարսիցն ելեալք ի նաւս՝ յայնկոյս գետոյն մեծի փախստեայք լինել ճեպէին: Որ եւ զԿամսարականն Արշաւիր զիշխանն Արշարունեաց ստիպով փութացուցանէր երանելի զաւրավարն Հայոց Վարդան՝ զկնի փախստէից նաւացն նետաձիգ լինել, ի հաստատաձգութիւն եւ յանվրէպ դիպողութիւն առնն վստահեալ: Իսկ Կամսարականն Արշաւիր, որպէս եւ միշտ կամակատար էր բանի սրբոյ զաւրավարին, վաղվաղակի հաւանեալ առ ի նմանէ հրամանին՝ զկնի նաւավարացն եւ փախստէիցն նետաձիգ լինէր: Եւ խոցեալ զնաւավարսն եւ զայլս բազումս ի նաւսն՝ կարէվէրս առնէր. որոնց ընդ տապալել վիրաւորացն կործանէին նաւքն. եւ բազումք ի նաւավարացն եւ ի զըլխաւորացն Պարսից գետասոյզ եղեալ կորընչէին: Եւ այսպէս շնորհեալ նոցա զյաղթութիւն վերին աւգնութեանն՝ դառնային ի բանակս իւրեանց, գոհանալով եւ աւրհնելով զԱստուած:

Եւ դադարեալք անդէն ի տեղւոջն զաւրն զայն՝ ի վաղիւն չուեալք անցանէին ընդ գետն մեծ, անուանեալն Կուր գետ, եւ հասանէին ի պահակ որմոյն, որ է ընդ մէջ իշխանութեանն Աղուանից եւ Հոնաց. եւ գտեալ անդ զպահապանս պահակին եւ այլ զաւրականս պարսիկս բազումս, յորոց սուր ի վերայ եղեալ կոտորէին. եւ զպահակն յանձն առնէին թագաւորազնի միում Աղուանի, որում անուն էր Վահան, եւ զնոյն արձակէին դեսպան ի Հոնս եւ առ այլ ամրականս տեղեացն, զորս հաւա-

թախ, բոլոր իր զենքերով, երիվարը ցամաք հանելով՝ անվեհեր ու քաջաբար, թռչնի պես թռավ երիվարի վրա և սարսափեցնելով իր թևի թշնամիներին՝ փախուստի մատնեց: Եվ նայելով Հայոց երանելի սպարապետ ու Մամիկոնեից տեր Վարդանը՝ իր ընկերակիցների ու ամենայն հայոց գնդի հետ միասին, տեսավ, թե ինչպես նրանց փախուստի մատնելով՝ իրենց առաջը քշեցին պարսից զորքի բազմությունը, որի կեսն իրենց սրերով կոտորեցին՝ գետնի վրա դիաթավալ անելով, կեսն էլ գետավեժ անելով խեղդոտեցին: Նրանցից մնացած մյուսներին էլ դաշտերում ու թանձրախիտ անտառներում ոնչացրին:

Իսկ պարսից ավագներից ոմանք, նավեր նստած, շտապում էին փախչել մեծ գետի այն կողմը: Հայոց երանելի զորավար Վարդանն Արշարունյաց իշխան Արշավիր Կամսարականին ստիպեց շտապով նետեր արձակել նավով փախչողների ետնից, որովհետև վըստահ էր նրա դիպուկ ու անվրեպ նետաձգության վրա: Իսկ Արշավիր Կամսարականը, ինչպես որ միշտ էր սուրբ զորավարի խոսքն ու կամքը հլու կատարող, շտապ իրագործելով նրա հրամանը, նավավարների ու փախըստականների ետնից նետեր արձակելով և խոցոտելով նավավարներին ու շատ ուրիշների, որոնք նավերի մեջ էին, սաստիկ վերքեր հասցրեց նրանց: Վիրավորների տապալվելուց նավերն էլ կործանվում էին, և նավավարներից ու պարսիկ գլխավորներից շատ-շատերը գետասույզ լինելով կորան: Եվ այսպես վերին օգնությունը նրանց հաղթանակ շնորհեց, ու նրանք իրենց բանակը դարձան՝ գոհացած և օրհնելով Աստծուն:

Եվ զորքն այն օրը մնաց տեղում, իսկ առավոտյան չվելով անցավ Կուր կոչվող մեծ գետը և հասավ այն պարսպապահակին, որ գտնվում է Աղվանից ու Հոնաց իշխանությունների միջև: Այնտեղ գտնելով պարսպի պահապանին ու պարսիկ ուրիշ շատ զորականների, սրի քաշելով կոտորեցին ու պահակությունը հանձնեցին աղվան մի թագա-

նեցուսցէ միաբանել նոցա գնդաւ, որոց կամաւ եւ յաւժարութեամբ զաւգնելն յանձն առեալ՝ հաստատէին երդմամբ:

ԽԵ. *Եւ թագաւորին եւ ամենայն աւագանւոյն յաւժարութեամբ յանձն առեալ՝ հրամայեաց: Եւ նոցա յառաջ մատուցեալ զԿամսարականն Արշաւիր՝ ասացին լսել ի նմանէ բովանդակապէս զամենայն. եւ Կամսարականն Արշաւիր, զաւրացեալ ի սուրբ Հոգւոյն, յառաջ մատուցեալ, աներկիւղաբար սկսաւ խաւսել առաջի թագաւորին եւ ամենայն աւագանւոյն եւ ասէ.*

«Ի սկզբան իսկ զիրացդ զայդոցիկ զպատճառս. յորժամ ի ձեր թագաւորացդ ի միտս ծնեալ՝ յայտնեցաւ մեզ բանն, եւ զիրացդ բուռն հարէք, որում մեզ ծառայել հրամայէիք, եւ աւրէնս իմն հարկաւորէիք ունել մեզ, զոր ոչ մեք եւ ոչ նախնիք նախնեաց մերոց գիտէին եւ կամ ծառայեալ էր. եւ բազում անգամ բողոքեցաք, թէ անհնար է մեզ յանձն առնուլ եւ ծառայել աւրինաց, որոց նախնիքն մեր ոչ ծառայեցին, որ եւ մտաց մերոց ծանր թուի եւ արհամարհանք. եւ այսպիսի ի մէնջ բողոքելոյ՝ ձերոյին իսկ վկայէ անսուտ հրապարակդ: Եւ իբրեւ ոչ կամեցաք լսել, ըստ բռնաւոր կամացդ ձերոց՝ եւ հարկաւորութեամբ յանձն ետուք առնուլ զպաշտաւնն. զոր շրթամբք առ երկիւղի մեծարեցաք սուտ, կամեցեալ զողանալ վայր մի խաբէութեամբ զերկիւղ ձեր, եւ սրտիւք զարշելի համարեցաք զգործն եւ ատէաք, եդեալ ի մտի զերծանել հնարիւք եւ երթալ յաշխարհն մեր եւ թողուլ զաշխարհն մեր եւ գնալ կնաւ եւ որդւովք, եւ երթալ կորնչել յաւտար երկիր: Զոր նախ քան զամենեսեան ըստ ամենեցուն խորհրդոցն երեւելին ըստ աշխարհին իշխանաց, ծառայն ձեր Վարդան արար, զոր գիտեն եւ վկայեն բանից իմոց արք պարսիկք յաւագ տոհմաց, որ այժմ ողջ են եւ աստ են առ ձեզ: Առեալ լոկ զիւր կին եւ զընտանիս իւր՝ դէմ եդեալ գնաց փախստեայ ի ձերոյ երկիւղէ յերկիրն Յունաց»:

ԿԲ. *Եւ զմնացեալ դեռեւս ի տղայութեան*

վորազնի, որի անունն էր Վահան: Հենց նրան էլ դեսպան ուղարկեցին Հոնաց երկրում և ուրիշ ամուր տեղերում բնակվողների մոտ՝ որպեսզի նրանց համոզի զորքով միաբանել իրենց հետ: Նրանք էլ հոժարակամ համաձայնեցին օգնել, որը և երդումով հաստատեցին:

ԽԵ. Եվ թագավորը, ամենայն ավագների հետ միասին, հոժարությամբ համաձայնելով՝ հրամայեց: Առաջ բերելով Արշավիր Կամսարականին, նրանք ասացին, թե կարող են նրանից լսել ամեն ինչի մասին: Եվ Արշավիր Կամսարականը, սուրբ հոգով զորացած, առաջ գալով, սկսեց աներկյուղ խոսել թագավորի ու ամենայն մեծամեծերի առաջ և ասաց.

«Հենց սկզբից այդ գործի պատճառն այն էր, որ ձեր՝ թագավորներիդ մեջ միտք ծնվեց մեզ հայտնելու, թե երբ մենք գտնվում ենք ձեր ծառայության ներքո, ապա պարտավոր ենք նաև ունենալու այնպիսի օրենքներ, որոնք ո՛չ մենք, ո՛չ մեր նախնիները չունեինք և չէինք ընդունել: Մենք բազում անգամներ բողոքեցինք, թե մեզ համար անհնար է հանձն առել ու պաշտել այն հավատը, որին մեր նախնիները չծառայեցին և որ մեզ համար էլ մի ծանր արհամարհանք է: Մեր այսօրինակ բողոքները ձեր այդ անսուտ ատյանն էլ կվկայի: Եվ երբ որ չկամեցաք լսել, ձեր բռնի կամքով ու հարկադրանքով հանձն առնել տվիք մի պաշտամունք, որը երկյուղից դրդված, միայն շուրթերով, սուտ տեղը մեծարեցինք, կամենալով մի կարճ ժամանակ խլել՝ ձեր սարսափից հեռանալու: Իսկ սրտով զարշելի էինք համարում և ատում էինք այդ գործը, մտքներումս դնելով՝ փրկվել մի կերպ, գնալ մեր աշխարհը, այնտեղից էլ թողնել մեր աշխարհը և կանանցով ու որդիներով հեռանալ, կորչել որևէ օտար երկրում: Դա բոլորից առաջ մեր աշխարհի իշխանների մեջ ամենից երևելին՝ ձեր ծառա Վարդանն արեց: Այդ գիտեն և կարող են իմ խոսքերը հաստատել պարսից մարդիկ՝ ավագ տոհմերից, որ այժմ

հասակի զորդիս նահատակելոցն ընդ սրբոյն Վարդանայ, որք ի նոյն տոհմէ Մամիկոնէիցն էին եւ կամ որք ի տոհմէ Կամսարականացն եւ կամ յայլ ազգաց, կանայք նահատակելոցն արանց եւ կապելոց ի դրանն, թէպէտ եւ ի նեղութեան էին, սակայն ուսուցեալ եւ բազում հոգողութեամբ ուսուցանել տուեալ եւ խրատեալ՝ ոչ իբրեւ զանփոյթս եւ զանպիտան կանայս, այլ իբրեւ զքաջայրս՝ զառաջիկայ զաւգտաբեր շքեղաբար հրահանգս մանկանցն հոգացեալ լնուին: Եւ մանաւանդ կին նահատակին Հմայեկայ Մամիկոնէի եղբաւր սրբոյն Վարդանայ, որ եղեւ կին անուանի եւ առաւելեալ ամենայն լաւ եւ մտաւոր մասամբք յամենայն կանայս ի Հայաստան աշխարհիս. որ սնոյց եւ խրատեաց զորդիսն իւր յաշխարհին Վրաց, ի տան Աշուշայի Վրաց բդեշխի, զորս բդեշխն Վրաց Աշուշայ խընդրեաց պարգեւս ի յարքայէն Պարսից Յազկերտէ, ըստ առաջագրելոցն կարգի, եւ ածեալ ետ ցմայրն իւրեանց, որում անուն էր Զուիկ. վասն զի զքոյրն Զըւկայ ունէր ի կնութեան բդեշխն Վրաց Աշուշայ, որում անուն էր Անուշվռամ: Եւ սնուցեալ անդ մանկունքն եւ ուսեալ՝ յառաջադէմք էին յամենայնի եւ հռչակաւորք. որք մինչ դեռեւս ի տիս մանկութեան էին՝ ամենայն տեսանող մտաց երեւէին աջողակք եւ զարմանալիք. որում անուն էր առաջնոյն Վահան, եւ երկրորդին Վասակ, եւ երրորդին Արտաշէս: Բայց էր նոցա միւս եւս եղբայր կրսեր, անուն Վարդ, որ էր մնացեալ տղայ ի դայեակս իւր ի Տայս:

ԿԳ. *Զսոսա տեսանելով, որք ի ժամանակին իւրաքանչիւր ի տունս որպէս զաղտագողի հարանաւք իբրեւ զանպիտանս գտանէին, ի Պարսկաց զտանուտէրութիւնն գնեալ ուրացութեամբ ըստ անարժանութեանն, եւ ոչ տիրացեալք աստուածպաշտութեամբ իբրեւ զարժանաւորս, որք անմիտք եւ վնասակարք, անպիտանք եւ ոչ պիտանիք, վատք եւ ոչ քաջք. յորոց ոմանք ի լեռնախոյզ աւազակաց ի մէջ անցեալ ուրացութեամբ վերտէին, եւ ոմանք կատակութեամբ աստուածս գնէին, եւ*

ողջ են և այստեղ, ձեզ մոտ են գտնվում: Առնելով միայն իր կնոջն ու իր ընտանիքը՝ Վարդանը ձեր երկյուղից փախած գնում էր Հունաց երկիրը»:

ԿԲ. Սուրբ Վարդանի հետ նահատակվածների որդիները, որոնցից ոմանք նույն Մամիկոնյան տոհմից էին, ոմանք՝ Կամսարականներից կամ ուրիշ տոհմերից, դեռևս փոքրահասակ էին, կարոտ խնամքի ու դաստիարակության: Եվ նահատակվածների ու արքունիքում կալանավորվածների կանայք, թեպետ նեղության մեջ էին, բայց իրենց պահեցին ոչ իբրև անհոգ ու անպիտան արարածներ, այլ իբրև քաջարիներ՝ դաստիարակեցին և մեծ հոգատարությամբ ուսուցանել տվին, խրատեցին այդ որդիներին, լրիվ ու շքեղորեն հոգացին նրանց առաջիկա օգտակար կյանքի ապահովությունը: Մանավանդ սուրբ Վարդանի եղբայր ու նահատակ Հմայակ Մամիկոնյանի կինը, որն իր մտավոր արժանիքներով ամբողջ Հայաստան աշխարհի կանանց մեջ եղավ առավել բարձրն ու արժանին, իր որդիներին դաստիարակեց ու խրատեց Վրաց աշխարհում, Վրաց բդեշխ Աշուշայի տանը, որովհետև, ինչպես առաջուց էինք գրել, Հմայակի այդ որդիներին Վրաց Աշուշա բդեշխը խնդրել էր Պարսից արքա Հազկերտից և բերել-հանձնել էր իրենց մորը, որի անունն էր Զվիկ, քանզի Զվիկի քույրն էլ, որի անունն էր Անուշվռամ, կնության էր տրված վրաց Աշուշա բդեշխին: Եվ այնտեղ այդ մանուկները, դաստիարակվելով ու կրթվելով, առաջադեմ եղան ամեն ինչի մեջ և հռչակվեցին այնպես, որ երբ դեռևս մանկական հասակում էին, տեսնողներին հիանալի էին թվում իրենց եռանդով: Նրանցից առաջինի անունը Վահան էր, երկրորդինը՝ Վասակ, երրորդինը՝ Արտաշես: Բայց նրանք ունեին նաև մի այլ, կրտսեր եղբայր, անունը՝ Վարդ, որ մանուկ էր դեռ և Տայքում իր դայակների մոտ էր գտնվում:

ԿԳ. Այս Մամիկոնյան արժանավոր զավակներին տեսնում էին նրանք, որոնք ամեն

զաստուածս եւ զանմիտ վաճառականսն ի միասին թշնամանէին. անմարդք ի ստոյգ մարդկանէ, եւ անարժանք եւ անծանաթք յազգէ տոհմկաց: Եւ էր այնուհետեւ տեսանել յաշխարհիս Հայոց զլաւութիւն հեռացեալ, զիմաստութիւն կորուսեալ, զքաջութիւն հեռացեալ եւ մեռեալ, զքրիստոնէութիւն թաքուցեալ. եւ որ երբեմն քաջանուն զաւրքն Հայոց ի մէջ այլ զաւրացն ամենայնի երեւէին, եւ զաւրագլուխք անուանիք եւ յաղթողք՝ ապա ծաղր էին ամենեցուն եւ կատականք. մինչեւ ինքն իսկ թագաւորն Պերոզ յայտնապէս նախատելով երբեմն առաջի ամենայն ատենին ասէր, թէ «Այր անպիտան եւ գունդ յետին, որ գամ մի յիմ իշխանութիւնն է՝ Ասորւոց է. բայց քան զԱսորի՝ Հայն է այր յետին եւ անպիտան»: Եւ էր լուրն այն արժանի լալոյ եւ ողբալոյ:

Եւ այնպիսի անպիտան իշխանք ժամանակին իբրեւ տեսանէին աւր ըստ աւրէ զա՛ճումն յառաջադիմութեան յորդիս ազգի նահատակելոց Մամիկոնէից, զոր ոչ ի տուչութենէ մարդոյ վստահեալ ունէին յանձինս, այլ աւգնութեամբ վերին խնամակալութեան, ի բարեխաւսութենէ սուրբ արեան նախնեացն իւրեանց, զոր ի վերայ սուրբ եկեղեցւոյս Հայոց հեղին յաւժարութեամբ, կային աներկիւղապէս ի մէջ անուանեալ իշխանացն Հայոց, որպէս ի մէջ թշնամեաց: Թէպէտ եւ արհամարհեալք էին առ նախանձու, սակայն լաւագոյնք էին եւ երեւէին յամենայնի, եւ ականաւորք ի խորհրդի, մտաւորք եւ իմաստնագիւտք. ի նետաձգութեանն գեղեցկաձիգք եւ դիպեցուցողք, յորս՝ թեթեւաշարժք եւ նախասպանք, յերկոցունց ձեռաց աջողակք, եւ յամենայն կողմանս ուղղակիք եւ շնորհալիցք. զորոց ձանձրացուցանէին բազմաձառայքն զանծառայիցն զդուրսն, խնդրելով հանապազ զմիս այլ եւ այլ որսոց, եւ կամ այլ պատուական եւ մեծագին գիւտից խնդրովք ըստ իւրաքանչիւր աշխարհաց:

Նոքաւք շքեղանային ընթրիք ամենայն տանուտերանց Հայոց. նոքաւք զարդարէին

ժամանակ էլ իրենց տներում էին գտնվում, անպիտան՝ իբրև գաղտնի տանջահարվածներ, որ պարսիկներից տանուտերության իրավունքը գնում էին ուրացությամբ, անարժան կերպով և ոչ թե արժանավորների պես աստվածապաշտությամբ նրան տիրելով: Դրանք անմիտ ու վնասակար, անօգուտ ու անպետք, վախկոտ ու անարի մարդիկ էին, որոնցից ոմանք լեռնախույզ ավազակների շարքն էին մտել ու զինվել ուրացությամբ, ոմանք էլ ծաղրանքով աստվածներ էին գնում և, անմիտ վաճառականների հետ միացած, անարգում էին աստվածներին: Նրանք ճշմարիտ մարդկանցից ելած անմարդկայիններն էին, տոհմիկներից՝ անարժաններն ու անանշմարելիները: Եվ այնուհետև Հայոց աշխարհում լավությունը լքված էր երևում, իմաստությունը՝ կորսված, քաջությունը՝ հեռացած ու մեռած, քրիստոնեությունը՝ թաքցված, երբեմնի Հայոց քաջանուն զորքը, որ ուրիշ զորքերի մեջ երևելի էր, զորագլուխները՝ անվանի ու հաղթող, ապա այժմ ծաղր էր ամենքի աչքում և ծիծաղելի: Մինչև անգամ ինքը՝ Պերոզ թագավորը, որ հայտնապես նախատելով հաճախ էր ամբողջ ատյանի առաջ ասում, թե «Անպիտան մարդ և ետին զորք, որ կան իմ իշխանության ներքո, ասորականն են, բայց ասորուց էլ ետին ու անպիտան մարդը հայն է»: Եվ այս լսելը ցավ է՝ լալու և ողբալու արժանի:

Եվ ժամանակի այսպիսի անպիտան իշխանները տեսնում էին Մամիկոնյան տոհմից նահատակվածների զավակների հառաջադիմության օրըստօրե աճելը, որ իրենց մեջ ունեին ոչ թե իբրև մարդուց տրված մի բան, այլ նրանց էր շնորհվել վերին խնամակալության օգնությամբ և Հայոց սուրբ եկեղեցու վրա հոժարակամ հեղված նախնյաց սրբազան արյան բարեխոսությամբ: Եվ այդ զավակներն աներկյուղ ապրում էին Հայոց իշխան կոչվածների մեջ՝ որպես թշնամիների շրջապատում: Թեպետ և արհամարհված էին նախանձի պատճառով, սակայն լավագույնն էին և

յամենայն տունս աւտարք եւ ընտանիք: Նմանեցուցեալ ինքեանց ի յառաջանալ փութային եւ զորդիս երանելւոյ Կամսարականին Արշաւրայ տեառնն Արշարունեաց, որք եւ ազգախառն իւրեանց էին ծնունդք դստեր մարտիրոսին Վարդանայ. խրատել եւ հրահանգել ըստ իւրեանց իմաստութեան եւ արուեստի ջանային:

Եւ զայսպիսի ինչ բարւոյ մասունս առնել առատ եւ հոգալ՝ առաւել եւս կամաւոր յաւժարութեամբ յորդորագոյն էր աւագ որդին սրբոյն Հմայեկայ, որում անուն էր Վահան: Քանզի էր այր մտացի, առողջախորհուրդ եւ բարեսէր. յոր գործ եւ ձեռն արկանէր գործել՝ Տէր յաջողէր ի ձեռս նորա, եւ զաւրանայր. նա եւ գործակալք Պարսիկք որ գային ի դրանէ, թէպէտ ոչ կամաւ, այլ ըստ Աստուծոյ սադրելոյ սիրէին զնա եւ պատուէին: Որք եւ առաջի թագաւորին Պարսից գովէին զլաւութիւն առնն եւ անմոռաց յիշէին. մինչեւ ինքն իսկ թագաւորն Պերոզ գլխովին ծանեաւ զնա եւ առ լաւս ունէր, եւ յանդիման ամենեցուն գովէր եւ արժանի պատուոյ հաշուէր: Բայց արժանի ըստ նորա իմաստիցն եւ քաջութեանն թէպէտ եւ ածէր զմտաւ պատուել զնա, այլ յիշելով զհարցն եւ զնախնեացն նորա զիրս եւ զգործս, եւ ո՛րպէս հանապազ ընդդիմութեամբ եւ պատերազմաւ աշխատ կալեալ էր զնոսա՝ յապաղեալ կասէր, եւ լուեալ թագուցանէր զարժան պատիւ տալ նոցա. մանաւանդ իբրեւ հապստէպ լսէր զնախանձորդացն զբանսարկութիւն, որք առ վտանգի ժամանակի տանուտեարք Հայոց անուանեալ էին, զորս կարի առաւելապէս երկեցուցանէր աճումն յառաջադիմութեան Մամիկոնէին Վահանայ. կասկածէր երկիւղիւ առ ի յառաջիկայսն՝ զանարժան գոռոզացելոցն բեկանել զսիրտս:

ԿԵ. *Եւ լուեալ զայս թագաւորին Պերոզի եւ այլ աւագանւոյն զայնպիսի իմաստութեան զխաւսս ի Վահանայ՝ ամենեքեան իրաւացուցին զխաւսսն Վահանայ քան զխաւսսն Վրուայ: Եւ ելանէր Վահան արդարացեալ յա-*

երևելի ամեն ինչում, աչքի ընկնող էին բանիմացության մեջ, խելացի և իմաստնագույն: Նետաձգության մեջ նրանք գեղեցկաձիգ էին ու դիպուկ, նաև՝ թեթևաշարժ և առաջինը հարվածող, երկու ձեռքով էլ վարժ ու աջողակ, ամեն տեսակետից ուղղամիտ ու շնորհալի: Շատ ծառաներ ունեցող պալատները նրանց՝ այդ քիչ ծառա ունեցողներն էին ձանձրացնում ամեն օր պահանջելով տեսակ-տեսակ որսերի միս կամ յուրաքանչյուրի աշխարհում եղած պատվական ու մեծագին իրեր: Նրանց տվածներով էին շքեղանում Հայոց բոլոր տանուտերների ընթրիքները: Ամեն տան մեջ նրանցով էին զարդարվում օտարներն ու տանեցիները: Իսկ նրանք, իրենց օրինակին դարձնելով, ջանում էին փութով առաջադիմության տանել նաև Արշարունյաց տեր երանելի Արշավիր Կամսարականի որդիներին, որոնք ազգախառնված էին իրենց հետ՝ իբրև նահատակ Վարդանի դստեր ծնունդներ: Ջանում էին խրատել ու դաստիարակել իրենց իմաստությամբ ու արվեստով:

Այսօրինակ բարեմասնություններ առատորեն ու առավելապես հոժարակամ ցուցաբերում էր սուրբ Հմայակի ավագ որդին, որի անունն էր Վահան: Քանզի խելոք մարդ էր, ողջախոհ ու բարեսեր, ինչ գործի որ ձեռնարկում էր, Աստված հաջողություն էր տալիս նրա ձեռքին և զորացնում: Պարսիկ գործակալները, որ գալիս էին արքունիքից, թեպետ և ակամա, այսինքն՝ Աստծո հրահրումի շնորհիվ, սիրում և պատվում էին նրան: Նրանք Պարսից թագավորի առաջ էլ էին գովում այդ մարդու քաջությունը և երբեք չէին մոռանում, մինչև որ ինքն իսկ Պերոզ թագավորը ճանաչեց նրան գլխովին և քաջերի շարքն էր դասում, ամենքի առաջ գովում էր և պատվո արժանի համարում: Սակայն որքան էլ մտածում էր նրա իմաստության ու քաջության համապատասխան պարգևներ տալ, մեկ էլ հիշում էր նրա հայրերի ու նախահայրերի գործերը, թե ինչպես նրանք անընդմեջ

տենէն, եւ որդի Ասորւոյն Վրիւ ելանէր ամաչեցեալ եւ արհամարհեալ: Եւ հրաժարեալ Վահանայ ի դրանէ՝ մեծարանաւք եւ բազում շքեղութեամբ եկեալ հասանէր յաշխարհս Հայոց:

Եւ քանզի ոչ էր խաղաղութիւն մտաց նորա զամենայն աւր վասն վատ անուան ուրացութեանն, զոր նման նահատակեալ հարցն իւրոց պատճառանաւք եւ ոչ ճշմարտութեամբ կրէր յինքեան, եւս առաւել ի զալն պայծառութեամբ ի դրանէ՝ տարակուսէր յանձն իւր, թէ մի՛ գուցէ պատրեալ ի փառս աշխարհիս՝ յամեալ մոռանայցէ զերկիւղ հանդերձելոյ աշխարհին, եւ վնասիցի: Եւ այսպէս ցանկ մաշելով ի միտս իւր՝ ծանուցանէր առ ջերմ սիրողաց զիւրն հոգալ, եւ հնարս հայցէր եւ անդադար խնդրէր ի Փրկչէն Քրիստոսէ՝ շնորհել նմա ժամ բարի, ասելով ընդ միտս իւր, թէ «Միշտ ընդ քեզ, տէր Աստուած, ամենայն ինչ հնարաւոր է, եւ տկարանայ քեզ եւ ոչ ինչ. դու, տէր, ապաւէն իմ լեր. նորհեա՛ ինձ ժամանակ դարձի խոստովանութեան, եւ ուստ՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ»:

ԿԶ. *Եւ մինչդեռ Վահան յայսպիսի յուզմունս մտաց կայր տարակուսեալ՝ լինէր յանկարծակի խռովութիւն յուզմանց յաշխարհին Վրաց. Վախթանգ սպանանէր զբդեշխն զանաւրէնն Վազգէն յամի քսաներորդի հինգերորդի Պերոզի արքայի: Զոր լուեալ Հայոց աշխարհիս մարդկան, յորոց բազումք այն ամ յԱղուանս էին, յապստամբ ամրականացն կռուի, որոց բովանդակին զաւրագլուխ էր Զարմիհր Հազարաւուխտ, եւ Հայոց աշխարհիս Ատրվշնասպ Յոզմանդեան էր մարզպան. իսկ քրիստոնեայ մարդիկն Հայոց, որ այն ամ անդ ի կռուին էին՝ հարեալք մաշէին առաւել եւս յարհամարհանաց եւ ի նախանձուէ ի յետին իշխանացն Հայոց, որք ուրացութեամբն գոռոզացեալ ամբարհաւաճէին ի ժամանակին, քան թէ ի բռնութենէ պարսիկ զաւրագլխացն գործոց: Որք ի ժամանակին իբրեւ լուան զապստամբութիւնն Վրաց ար-*

նալից տարակուսանքի մեջ էր, Վրաց աշխարհում հանկարծակի խռովալից հուզումընդդիմությամբ ու պատերազմով նեղում էին իրենց, և պարգևատրությունը հետաձգում էր ու ծածկում էր նրան արժանի պատիվ տալու որոշումը, մանավանդ, երբ հաճախ էլ լսում էր այն նախանձորդների բանսարկությունը, որոնք տագնապի ժամանակ Հայոց նախարարներ էին կոչվել, և որոնց առավել ևս վախեցնում էր Մամիկոնյան Վահանի հառաջադիմության աճը: Արքայից արքան կասկածում էր երկյուղելով, թե դրանով հետագայում կարող էր այն անարժան գոռոզացածների սրտերը կոտրել:

ԿԵ. Թագավոր Պերոզն ու մնացած մեծամեծները լսելով Վահանի այս իմաստուն խոսքերը, բոլորը միասին իրավացի համարեցին նրա՛ ասածները և ո՛չ թե Վրիվինը: Եվ Վահանն ատյանից դուրս եկավ արդարացված: Իսկ ասորու որդի Վրիվը ելավ ամոթահար ու արհամարհված: Եվ հրաժեշտ տալով արքունիքին, Վահանը մեծարանքներով ու մեծ շքեղությամբ եկավ հասավ Հայոց աշխարհը:

Բայց որովհետև ոչ մի օր նրա մտքերը խաղաղ չէին ուրացության վատ անվան համար, որ, իր նահատակված հայրերի պես, իր վրա կրում էր առերևույթ և ոչ ճշմարտությամբ, առավել ևս արքունիքից պարգևներս գալուց հետո, կասկածում էր իր անձի վրա, մտածելով, թե միգուցե աշխարհիս փառքերով խաբված, շարունակի ու մոռանա հանդերձյալ աշխարհի երկյուղը և վնասվի: Եվ այսպես անվերջ մաշվելով մտքերի մեջ, իրեն ջերմորեն սիրողներին խնդրեց հոգալ իր մասին, հնարներ էր փնտրում և Փրկիչ Քրիստոսից անդադար խնդրում էր շնորհել իրեն մի բարի ժամ և մտքում ասում էր. «Միշտ քեզ հետ, տե՛ր Աստված, ամեն ինչ հնարավոր է, և քեզ հետ ոչ ոք ու ոչինչ չի տկարանում: Դու, տե՛ր, ապավեն եղիր ինձ, խոստովանության դարձի ժամանակ շնորհիր և սովորեցրու ինձ քո կամքն ունենալ, որովհետև դու ես իմ

քային՝ ցնծային ուրախալից սրտիւ: Վասն զի գայր առ նոսա համբաւ, թէ Վրաց արքայ ասէ, թէ «Ես միում ումեք զկռիւ չտամ տեսանել, այլ այնչափ հանեմ Հոնս, որում ոչ կարիցեն հարկանել ի դիմի զաւրքն Պարսից»: Զաւրացեալք յայնպիսի համբաւոց քրիստոսասէրքըն՝ եւ անձանց ակն ունէին աւգտի եւ բարի այցելութիւն գտանել ի Բարձրելոյն. բայց երկնչէին, թէ մի՛ գուցէ առեալ զգունդն Հայոց զաւրագլխացն Պարսից՝ ընդ նոյն ի դուռն գումարիցեն:

Այլ Քրիստոս յայնպիսի կարծեացն զերծուցեալ զնոսա՝ գային ի Հայս. եւ եկեալք ի գաւառն Շիրակայ, ի դաշտն, ուր բանակէր մարզպանն Հայոց Ատրվշնասպ Յոզմանդեան, եւ առ նմին հազարապետն Հայոց Վեհվեհնամ. աստ խորհուրդ ի մէջ առեալ արանց ոմանց նախարարացն Հայոց, որք զտրտմելն եւ զտարակուսելն ի բազում ժամանակաց գիտէին զՄամիկոնէին Վահանայ յաղագս մոգութեանն անուան, եւ ասէին, թէ «Կարի պատեհ էր եւ մեզ եւ նմա ժամս այս փրկութեան. նմա՝ ապրել է խղճէ մտացն իւրոց, եւ մեզ՝ զերծանել ի հանապազորդեայ կասկածանացս եւ յարաժամ հարանացս, որոց ծառայեմքս ի հարկէ հեղձամղձուկս նախանձու: Եւ արքայդ Վրաց Վախթանգ այրացի է. ո՛ գիտէ, եւ բազումողորմն Աստուած հայեսցի ի վրտանգս մեր եւ աւգնեսցէ մեզ, եւ հանդերձ Վրաւք թերեւս կարող լինիցք առ սակաւ մի աշխատ առնել զՊարսիկս»: Եւ խորհեալ այսպէս սակաւ ոմանց ի Հայ նախարարացն՝ լսելի լինէր խորհուրդն եւ յայլս ոմանս. եւ որպէս յԱստուծոյ առաջնորդութենէ՝ միաբանէին կամաւ եւ յաւժարութեամբ ամենեքեան որք լսէին զխորհեալսն:

Յայտնէին այնուհետեւ համարձակեալք ի գիշերի միում զբանս մտածութեանն իւրեանց Մամիկոնէին Վահանայ. որոյ իբրեւ լուեալ՝ ասէր ցամենեսեան. «Գիտեն ոմանք, թէպէտ եւ ոչ ամենեքեան որք էք ի խորհրդիս յայս, թէ ո՛րպէս վտանգեալ տագնապիմ յամենայն ժամու յաղագս սուտ անուանս, զոր ատելու-

Աստվածը»:

ԿԶ. Եվ մինչդեռ Վահանն այսպիսի հուզումնալից տարակուսանքի մեջ էր, Վրաց աշխարհում հանկարծակի խռովալից հուզումներ եղան: Վախթանգն անօրեն բդեշխ Վազգենին սպանեց Պերոզ արքայի քսանհինգերորդ տարում: Այդ լսեցին Հայոց աշխարհի մարդիկ, որոնցից շատերն այն տարի Աղվանքում էին գտնվում, կռվում էին ապստամբ բերդաբնակների հետ, և բոլոր նրանց զորագլուխն էր Զարմիհր Հազարավուխտը: Եվ Հայոց աշխարհում էլ Ատրվշնասպ Յոզմանդյանն էր մարզպան: Իսկ քրիստոնյա հայ մարդիկ, որ այն տարի այնտեղ կռվի մեջ էին, ավելի շատ վիրավորվում ու մաշվում էին ուրացությամբ այն ժամանակ անբարեհաճ դարձած Հայոց ետին իշխանների արհամարհանքներից ու նախանձությունից, քան թե պարսիկ զորագլուխների բռնի գործողություններից: Եվ նրանք այն ժամանակ, երբ իմացան Վրաց արքայի ապստամբության մասին, ուրախալից սրտով երջանկացան: Որովհետև նրանց լուր էր հասել, թե Վրաց արքան ասում է. «Ես ոչ ոքի թույլ չեմ տա, որ կռիվ տեսնի, այլ այնքան հոնաց զորքեր կհանեմ, որ Պարսից զորքերը չկարողանան դիմադրել»: Այս լուրով զորացած քրիստոսասերներն ակնկալում էին իրենց անձերի օգուտը և Բարձրյալի բարի այցելությանն էին սպասում: Սակայն վախենում էին, թե միգուցե պարսից զորագլուխները հայոց զորքերը հավաքեն և արքունիք տանեն:

Բայց Քրիստոսը նրանց այդպիսի տարակարծություններից ազատեց, և նրանք եկան Հայաստան: Հասնելով Շիրակ գավառի այն դաշտը, ուր բանակել էր Հայաստանի մարզպան Ատրվշնասպ Յոզմանդյանը, և նրա մոտ Հայաստանի հազարապետ Վեհվեհնամն էր գտնվում, - այստեղ Հայոց նախարարներից մի քանիսն իրենց մեջ խորհուրդ արին: Նրանք գիտեին, որ վաղուց ի վեր Վահան Մամիկոնյանը տրտմության ու տարակուսանքների մեջ է կեղծ մոգության պատճա-

թեամբ կրեմ յանձին իմում. զի մերձեալ յերեկոյն՝ կասկածեմ ցառաւաւտն, եւ հասեալ յառաւաւտն՝ երկնչիմ ցերեկոյն, հայելով ի փութանակի եւ յանյայտ կենցաղոյս վախճան, որ երագահաս է եւ յանկարծակի, թէ գուցէ այսպիսի անուամբ գնալ յաշխարհէս. ապա կամէի եւ ընտրելագոյն էր ինձ, թէ բնաւ եւ ծնեալ իսկ չէր զիս մաւր իմոյ յայս աշխարհս. եւ գտանել հնարս՝ զերծանել ինձ ի խղճէս որ նեղէն զիս՝ աղաչեմ զԱստուած անդադար: Բայց միաբանել խորհրդոյդ զոր դուքդ խորհիք, եւ ասել ձեզ, թէ լաւ է իմաստդ եւ արարէք՝ ոչ կարեմ ասել եւ չիշխեմ. վասն զի զԱրեաց ոյժն եւ ստամբակութիւնն քաջ գիտեմ, եւ զՀոռոմոց զթուլութիւնն եւ զխաբէութիւնն. եւ զձեր ծանուցեալ է փորձիւ իմ, թէ ո՛րպէս հարանց մերոց ուխտեցին երդմամբ, եւ ստեցին: Եւ վասն Վրաց արքայի եւ Հոնացդ զորս ասէք՝ Վիրք առանձին թեթեւ ինչ աշխարհ են եւ այրուձիով սակաւաւորք. բայց վասն Հոնաց ո՞ զիտաց, հաւանի՞ն զալ թէ ոչ, որք չենն ի միջի եւ չերեւին: Բայց քան զամենայն՝ եւս առաւել յանձանց երկերուք, վասն զի մարդի՛կ սուտք էք եւ անվստահք: Բայց եթէ զիս հարցէք, եւ զբանն իմ առնէք եւ հաւանիք՝ թողէ՛ք ի բաց զբաներդ եւ զԱստուած աղաչեցէք միայն՝ գտանել հնարս իրացդ, որում դիւրին է առնել զոր ինչ եւ կամի. այլ յընդունայն եւ յանպիտան խորհուրդս ձեր զիս մի՛ աշխատ առնէք»:

Եւ լուեալ զայս ամենայն բանս նախարարացն Հայոց ի Մամիկոնենէն Վահանայ՝ ետուն պատասխանի միաբանութեամբ եւ ասեն, թէ «Զամենայն զոր ասացերդ՝ լի ասացեր, որպէս վայել է քում իմաստութեանդ. ճշմարիտ ասացեր եւ արդար. բայց զյոյս՝ մեր ոչ ի Հոռոմս եդեալ է եւ ոչ ի Հոնս, բայց նախ յորդորմութիւն Աստուծոյ, բարեխաւսութեամբ սրբոյն Գրիգորի, եւ ի մահ նախնեացն, որ նահատակութեամբ իւրեանց հաճոյ եղեն Փրկչին Քրիստոսի, եւ ապա ի մահ անձանց մերոց. քանզի լաւ համարիմք մի ժամ մեռանել, քան թէ զամենայն աւր զեկեղեցւոյ եւ ռով, և ասացին. «Մեր և նրա փրկության համար շատ պատեհ է այս ժամը: Նա կապրի իր խղճմտանքով, և մենք էլ կազատվենք անվերջանալի կասկածներից ու հարաժամ տանջանքներից, որոնց ծառայում ենք հոգեմաշ վրեժխնդրությամբ: Վրաց այդ արքան քաջ է: Ո՞վ գիտե, գուցե և բազումողորմ Աստվածը մեզ տեսնի վտանգի մեջ և օգնության հասնի: Եվ մենք էլ, Վրաց հետ միասին, թերևս կարողանանք մի քիչ նեղը գցել պարսիկներին»: Այսպես խորհեցին հայ նախարարներից մի քանիսը, որ քիչ էին, և նրանց խորհուրդը լսելի եղավ նաև ուրիշներին: Եվ որպես թե Աստծո առաջնորդությամբ բոլորը, որ լսել էին այս խորհուրդը, միաբանեցին կամքով ու հոժարությամբ:

Այնուհետև համարձակները մի գիշերում իրենց մտածածը հայտնեցին Վահան Մամիկոնյանին, որը լսելուց հետո ամենքին ասաց. «Այդ խորհուրդի մեջ գտնվողներիցդ ոչ բոլորը, բայց ոմանք գիտեք, թե ինչպես եմ ամեն ժամ տագնապած տանջվում այս սուտ անվանս համար, որ ատելությամբ եմ կրում անձիս վրա: Քանզի երբ մոտենում է երեկոն, կասկածում եմ մինչև առավոտ և առավոտին հասնելով՝ վախենում եմ ցերեկից՝ նայելով վաղանցուկ այս աշխարհի անորոշ վախճանին, որ արագընթաց է ու հանկարծահաս: Մտածում եմ, թե գուցե այսպիսի անվամբ էլ գնամ աշխարհից: Ապա և մտածում էի, - և դա ընտրելագույնն էր ինձ համար, - թե լա՞վ չէր՝ մայրս ինձ բնավ էլ աշխարհ բերած չլիներ: Եվ անդադար աղաչում եմ Աստծուն՝ մի հնար գտնել ազատելու ինձ այս մտատանջությունից, որ հալածում է ինձ: Բայց միաբանել այն խորհուրդին, որ դուք եք մտածել, և ձեզ ասել, թե լավ է ձեր խորհուրդը, իրականացրեք այն, ես չեմ կարող ասել և չեմ համարձակվում, որովհետև քաջ գիտեմ Արյաց ուժն ու հանդգնությունը և հոռոմների թուլությունն ու խաբեությունը: Ես փորձով ձեզ ծանոթացրել եմ, թե ինչպես մեր հայրերի հետ ուխտ կապեցին երդմամբ և ստեցին: Իսկ Վր-

զքրիստոնէութեան զարհամարհանս տեսանել եւ զքակտումն»:

Եւ լուեալ զանուն մահուան Մամիկոնէին Վահանայ եւ քաջի եղբաւր նորա Վասակայ՝ քաջալերեալք զաւրացան, եւ լցեալք սուրբ հոգւոյն շնորհիւ յորդորեցան: Սկսաւ խաւսել Մամիկոնեանն Վահան եւ ասէ. «Դուք գիտէք, զի Վարդ իմ եղբայր ի դրանն է. եւ գիտեմ, թէ լուեալ է զխորհուրդս մեր Պարսկաց՝ կապեն զնա եւ վշտացուցանեն. բայց ի մահ յաւժար եմ քան թէ այսպէս կեալ ուրացութեամբ. եւ յա՛յդ բան հաւանիմ ձեզ, որ ոք կարէք առնել: Եւ ամենագիտին հայեցեալ ի դարձս իմ, եւ ծանուցեալ, թէ արդարեւ յամենայն սրտէ է իմ դարձիս կամք՝ արասցէ յիս նշան բարի եւ դարձուսցէ առ իս զանձկալի եղբայրն իմ զՎարդ ողջ, եւ տացէ տեսանել զնա աչաց իմոց եւ ուրախանալ. եւ ապա կատարեսցէ ի վերայ իմ զհաճոյսն իւր, որ ինչ թուիցի յաչս նորա»:

Եւ զայս ասացեալ՝ յառնեն ամենեքեան միաբանութեամբ, քրիստոնեայքն եւ ուրացեալքն, եւ յաղաւթս կացեալ խնդրեն զԱւետարանն սուրբ: Եւ մատուցեալ յառաջ սրբոյ քահանային, որում անուն էր Աթիկ, որ էր ընդ նոսա ի բանակին, այր բանիբուն բանիւ եւ խորհրդապահ սրտիւ, յերեւելի գեղջէն, որ կոչի Բճնի, եւ բերեալ սուրբ Աւետարան՝ ողջունէին ամենեքեան, եւ եդեալ իւրաքանչիւր ուրուք զձեռս ի վերայ՝ ասէին. թէ «Որ ոք խոստովանեսցի զհաւատս զայս, զոր Փրկիչն ամենեցուն եւ տէր Յիսուս Քրիստոս վարդապետեալ գրեաց ի սմա՝ եւ Որդի մարդոյ խոստովանեալ տարցի զնա առաջի Հաւր իւրոյ, ժառանգեցուցանել նմա զերկնից բարութիւնսն: Եւ որ ոք խոտորեալ ուրասցի ի հաւատոյս յայսմանէ եւ նենգեալ ստեսցէ Աւետարանիս երդման՝ եւ Որդի մարդոյ ուրացեալ հանէ զնա ի խաւարն արտաքին, ուր լալ աչացն է եւ կրճել ատամանցն»: Եւ այսպէս երդուեալք ի գիշերին եւ հաստատեալք ի հաւատն Քրիստոսի եւ հրաժարեալք ի միմեանց՝ յիւրաքանչիւր վանս գնացին հանգ-

րաց արքայի ու Հոնաց զորքերի մասին որ ասում եք, Վիրքն առանձին վերցրած թույլ երկիր է՝ սակավամարդ այրուձիով: Բայց հոները, ո՞վ իմանա, կհամաձայնե՞ն գալ թե՞ ոչ.նրանք մեջտեղ չկան ու չեն էլ երևում: Սակայն ամենից ավելի ձեզնի՛ց վախեցեք, որովհետև սուտ մարդիկ եք և անվստահելի: Բայց եթե ինձ հարցնեք և իմ խոսքը հավանեք ու կատարեք, ձեզնից հեռու կվանեք այդ մտքերը և կաղաչեք միայն Աստծուն, որ այս վիճակի հնարը գտնի: Նա է դյուրին կատարում՝ ինչ որ կամենա: Իսկ ձեր դատարկ ու անպիտան խորհուրդներով ինձ նեղություն մի՛ տվեք»:

Եվ Մամիկոնյան Վահանից այս բոլոր խոսքերը լսելով՝ Հայոց նախարարները միաբանությամբ պատասխան տվին, ասացին, թե «Այդ ամենը, որ ասացիր, ինչպես որ վայել է քո իմաստությանը, ասացիր ճշմարիտ ու արդար: Բայց մենք մեր հույսը ո՛չ հոռոմների վրա ենք դրել, ո՛չ հոների, այլ նախ Աստծո ողորմության վրա, որ պիտի լինի սուրբ Գրիգորի բարեխոսությամբ, այն նախնիների մահվան վրա, որ իրենց նահատակությամբ հաճո եղան Փրկիչ Քրիստոսին, և ապա մեր սեփական մահվան վրա, քանզի լավ ենք համարում մի ժամում մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու և քրիստոնեության ծաղրվելն ու ավերվելը տեսնել»:

Մահվան անունը լսելուն պես Վահան Մամիկոնյանն ու նրա խիզախ եղբայր Վասակը քաջալերվեցին, զորացան և, սուրբ Հոգու շնորհներով լցված, համաձայնեցին: Սկսեց խոսել Վահան Մամիկոնյանը և ասաց. «Դուք գիտեք, որ իմ եղբայր Վարդն արքունիքում է, և համոզված եմ, որ պարսիկները հենց որ լսեն մեր խորհուրդը, կկալանավորեն նրան ու կտանջահարեն: Բայց ես համաձայն եմ մահվան, քան թե այսպես ուրացությամբ ապրելուն: Համաձայն եմ ձեր այդ խոսքին, ինչպես ուզում եք՝ արեք: Եվ Ամենագետը, տեսնելով իմ դարձը և իմանալով, որ արդարև ամբողջ սրտով ու կամ-

չել:

ՀԱ. *Եւ Պապայ տարեալ զպատգամն սպարապետին Հայոց Վահանայ Մամիկոնէի առ իւրաքանչիւր աւագս կողմանցն, թէպէտ եւ կամէին ըստ հրամանի զաւրավարին առնել, այլ ստիպով հասեալ գունդն Պարսից յիւրաքանչիւր թեւ կողմանցն՝ ոչ տային պարապել, այլ դղրդեալ զկողմն աջոյ, ուր Բաշղն Վահեւունի էր՝ փախուցանէին: Եւ տէր Սահակ ասպետ յարձակեալ նիզակաւ ի վերայ փուշտիպանաց սաղարի՝ վրիպեցին ի միմեանց զնիզակսն երկոքեան, եւ մաւտեալ առ միմեանս երիվարացն՝ բուռն հարեալ զմիմեանց հերաց եւ կռուէին: Եւ տեսեալ զաւրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի, թէ աղմկեցան զաւրքն Հայոց եւ տկարացան առաջի թշնամեաց, ձայն արարեալ առ Վրէն Վանանդացի՝ «Յառաջեա՛, ասէ, ի վերայ թըշնամեացն եւ ձեռն ի գործ արա պատերազմել»: Եւ նորա զարհուրեալ՝ ասաց, եթէ «Ոչ եմ կարող. յիս ինչ ապաստան յայսմ ժամու դու մի՛ լինիր»: Եւ զաւրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի զաւրացեալ սրտիւ, եւ նըշանաւ խաչին կնքեալ զինքն՝ հանդերձ Կամսարականաւքն երկոքումբք յարձակէին ի վերայ հասելոց սոցա թշնամեացն. եւ ոչ ինչ բնաւ տուեալ կալ առաջի, այլ շարժեալ սաստկապէս զկողմն իւրեանց՝ ի փախուստ դարձուցանէին. եւ առեալ զթեւն զայն՝ արկանէին զմիւս եւս թեւովն զմիջոցի կողմանն. եւ արկեալ առաջի զկողմանցն երկոցունց զգունդսն՝ անթիւ բազմութիւն արանց քաջաց ի փոքր լանջակողմանն դիաթաւալ յերկիր կործանէին եւ սաստիկ արեանց հանէին ճապաղիս: Բայց միայն Վինն Խոռեան երկուք եւս այլ զաւրաւոր նիզակակցաւք զաւրու դարձեալ ընդդէմ խիզախէր. ուր անդէն առ նմին քաջ զաւրավարն Հայոց Վահան Մամիկոնեան սատակէր հզաւրեղապէս. եւ զԱտրվշնասպն Տապեան տէրն Շիրակայ Ներսեհն Կամսարական, եւ այլքն ամենեքեան իւրաքանչիւր զբազում արս քաջս ընկեցեալ յերկիր կործանէին: Եւ հայեցեալ յայն՝*

քով է դարձս, ինձ բարություն կանի և ողջ ու առողջ ինձ մոտ կվերադարձնի կարոտալի եղբորն իմ՝ Վարդին, որպեսզի իմ աչքով տեսնեմ և ուրախանամ, ապա ինձ վրա կկատարի իր
կամեցածը. ինչ իր աչքին հաճելի կթվա»:

Եվ այս խոսքից հետո բոլորը՝ քրիստոնյաները և ուրացածները, միաբանությամբ վեր կացան ու աղոթելով խնդրեցին սուրբ Ավետարանը: Եվ առաջ մատուցելով Աթիկ անունով սուրբ քահանային, - որ երևելի Բջնի գյուղից էր, խելոք մտքով ու խորհրդապահ սրտով և նրանց հետ գտնվում էր բանակում, - ողջունեցին բոլորին, ապա յուրաքանչյուրն իր ձեռքը դրեց Ավետարանի վրա, և միահամուռ ասացին. «Ով որ ընդունի այս հավատը, որ ամենքի Փրկիչ ու տեր Հիսուս Քրիստոսը քարոզելով գրեց այս Գրքում, թող մարդու Որդին էլ խոստովանելով նրան տանի իր հոր առաջ՝ նրան երկնքի բարությունների ժառանգորդը դարձնելու համար: Եվ ով որ մոլորվելով ուրանա այն հավատը ու նենգելով դավաճանի Ավետարանի երդմանը, մարդու Որդին էլ ուրանալով թող նրան հանի արտաքին խավարը, ուր միայն աչքերի լացն է ու ատամների կրճտոցը»: Եվ այսպես գիշերը երդվելով ու հաստատվելով Քրիստոսի հավատի մեջ, հրաժեշտ տվին միմյանց, և յուրաքանչյուրն իր կացարանը գնաց քնելու:

ՀԱ. Պապը Հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանի պատգամը տարավ բոլոր թևերի ավագներին: Թեպետ և ցանկանում էր գործել ըստ սպարապետի հրամանի, սակայն շուտով պարսից զորքերը շարժվեցին բոլոր թևերով և չթողեցին հանգիստ մնալ, այլ աջ թևում, ուր Բաշղ Վահևունին էր, ստիպեցին փախչել: Եվ տեր Սահակ ասպետը նիզակով հարձակվեց փուշտիպանաց սաղարի վրա: Երկուսի նիզակներն էլ վրիպեցին, և երիվարների վրա մոտենալով միմյանց, նրանք իրար մազերից բռնած էին կռվում: Հայց զորավար Վահան Մամիկոնյանը, տեսնելով, որ Հայոց զորքերը շփոթվելով տկարացան թշնամու ա-

գունդն Բարշղի եւ այլ փախստէիցն Հայոց, եւ տեսեալ, թէ բեկաւ ոյժ զաւրու գնդին Պարսից, եւ երթան փախստական առաջի գնդին զաւրավարին Հայոց Վահանայ՝ոգի առեալ զաւրանային. եւ դարձեալք անդրէն եւ զկնի հալածչացն եղեալք՝ զբազումս սպանանէին, եւ զբազումս արկեալ առաջի՝ հալածականս առնէին: Եւ լինէր առաւելագոյն թիւ կոտորելոցն ի գնդէն Պարսից, քան թէ զերծելոցն փախըստէիցն. վասն զի շատ եւս լինէր համար մեռելոցն ի տեղիս տեղիս վիրաւորացն, քան թէ կոտորելոցն ի գնդէն Պարսից անդէն ի տեղւոջն պատերազմի:

Եւ դարձեալ գունդն Հայոց բարի անուամբ եւ բազում փառաւք, լաւ աւարաւ եւ սաստիկ ընչիւք առ պատուական կաթողիկոսն Հայոց Յոհան ի բանակն, փառաւորելով եւ աւրհնելով զտուիչն այնպիսի յաղթութեան զՔրիստոս. որոյ ընդ առաջ ելեալ յաղթող գնդին՝ ցնծալից սրտիւ աւրհնէր զնոսա աւրհնութեամբ բազմաւ, եւ զուարճացեալ ոգւով զաւրութեան սուրբն, եւ ասէր ցամենեսեան. «Ուրախ եմ յոյժ, եւ բանիւ վճարել զխնդութիւնս սրտի ոչ կարեմ: Բայց եւս առաւել զուարճացեալ բերկրիմ, տեսանելով զԱստուած հաշտ ընդ ձեզ. քանզի յաղթութիւնս խնդացուցանէ զիս, այլ եւս առաւել բերկրիմ՝ զՔրիստոս տեսանելով գործակից ձեզ, որ ետ ձեզ՝ յաղթել, եւ ամաչեցոյց զհակառակորդս արդարութեան: Եւ Աստուած որ զաւրացոյցն զձեզ այժըմ՝ նա զաւրացուսցէ զձեզ հանապազ, եւ եղեալ ընդ ձեզ՝ մի՛ թողցէ զձեզ մինչեւ ի սպառ»:

ՀԵ. *Եւ սպարապետին Հայոց Վահանայ Մամիկոնէի պատասխանի արարեալ ասէր ցՄիհրան, եթէ «Արեաց տէր որ լինի՝ արդար աչաւք պիտի նայել յամենայն մարդ իբրեւ զթագաւոր, եւ արդարապէս տեսանել եւ արդարապէս լսել, ըստ արժանի թագաւորի: Բայց այր թագաւոր, որ ուղիղ աչաւք չհայի ի ծառայս եւ ուղիղ լսողութեամբ չլսէ ուրու՛ք զբանս, այլ համակ ըստ իշխանութեան վարի, եւ ոչ ըստ արժանի իրաւանց քննութեան, այլ*

ռաջ, ձայն տվեց Վրեն Վանանդացուն. «Հառաջացի՛ր, -ասաց,- թշնամիների վրա և պատերա՛զմ ձեռնարկիր»: Նա զարհուրած պատասխանեց, ասաց. «Չե՛մ կարող. այս ժամին դու հույսդ ինձ վրա մի՛ դիր»: Եվ Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը զորացավ սրրտով, երեսը խաչակնքեց ու երկու Կամսարականների հետ միասին հարձակվեց իրենց հասած թշնամիների վրա: Իսկ նրանք, առանց դիմադրելու, այլ իրենց թևը միանգամից սաստիկ տեղահան անելով՝ փախուստի մատնվեցին: Եվ այն թևն առնելով՝ մյուսն էլ քաշեցին կենտրոնի վրա: Հայոց զորավար Վահան Մամիկոնյանի քաջերը երկու թևերի թշնամական զորքն առաջներն արած տարան դեպի փոքր լանջակողմը և քաջ զինվորների անթիվ բազմություն դիաթավալ անելով, ջախջախեցին ու սաստիկ արյունահեղություն արին: Եվ միայն Խոռյան Վինը, ուրիշ երկու նիզակակիցների հետ միասին, շուռ էր եկել, խիզախորեն դիմադրում էր: Այնտեղ էլ Հայոց քաջ զորավար Վահան Մամիկոնյանն իր հզորությամբ սպանեց նրան: Եվ Շիրակի տեր Ներսես Կամսարականն էլ՝ Ատրվշնասպ Տապյանին, իսկ մյուսներից էլ յուրաքանչյուրը շատ քաջերի գետնատարած տապալելով՝ կոտորեցին: Եվ Բարշղի ու հայ մյուս փախստականների գունդը, տեսնելով, որ պարսից զորքերը թուլացած փախչում են Հայոց զորավար Վահանի գնդի առաջ, ոգեպնդված զորացան և այնտեղից վերադառնալով, հալածողների ետևից ընկան, շատերին կոտորեցին ու շատերին էլ առաջներն արած հալածեցին: Պարսից զորքերից սպանվածների թիվն ավելի մեծ էր, քան փախչելով փրրկվածներինը, քանի որ մեռածների թվի մեջ էին ոչ միայն պատերազմի վայրում ընկածները, այլև շատերը, որոնք վիրավորված էին և մեռան այս ու այնտեղ:

Եվ Հայոց զորքը բարի անվամբ ու մեծ փառքով, լավ ավարով ու ահռելի հարստությամբ վերադարձավ բանակատեղ, Հայոց պատվական կաթողիկոս Հոհանի մոտ՝

առաւել եւս որ կարի դժնդակագոյն է եւ աշխարհի կորստեան պատճառ, եւ հանապազ զայն առնէ, եւ կամի տեսանել այլոյ աչաւք եւ լսել այլոյ ականջաւք՝ ծանր է ծառայութիւնն այն եւ դառն, եւ վտանգ՝ որում ոչ ոք կարէ կալ առաջի: Վասն զի տէր, որ յիւր ի ծառայից զլաւ եւ զվատթար չգիտէ ընտրել, եւ ըստ արժանի իւրաքանչիւր ումեք մատակարարել զպիտոյն ոչ կամի՝ այնպիսին լաւ ծառայի տէր դժուարաւ կարէ լինել:

Արդ՝ Հայոց աշխարհս ո՛րպիսի մեծ եւ պիտոյ աշխարհ է. եւ արդ ցո՛յց ինձ այր մի յայսպիսի աշխարհի, որ թէ առաւելաւ թագաւորութեամբ արժանաւորապէս հասեալ է ի տանուտէրութիւն, այլ որեար աւազակ եւ անպիտան, հացկատակք եւ վատտոհմիկք, որ գան զայնպիսի մեծ թագաւորութիւն խաբեն, եւ ընդ կրակի փառս գնեն եւ տէրութիւն. եւ ի ձէնջ ըստ կողմն ելեալ սակաւ մի՝ միզեն ի կրակն, եւ յանթեղ զաղբ իւրեանց արկանեն, եւ զվաճառականն եւ զվաճառն ի միասին թշնամանեն: Եւ այլ լաւութիւն եւ քաջութիւն եւ միտք եւ գիտութիւն, որով աշխարհ շինի եւ միջի լինի՝ այն չխնդրի եւ արհամարհեալ է. այլ անպիտան եւ վատտոհմակ մարդկան պատրողութիւնն ի մէջ անցեալ յարգի, եւ դուք առ ճանաչողս ունիք զձեզ: Լուեալ է քո, որ Միհրանդ ես, եւ ամենայն Պարսից՝ զբանըս զայս յԱրեաց տեառնէն ի Պերոզէ առաջի ամենեցունց յատենի, թէ «Այր վատ եւ գունդ անպիտան Ասորի է. բայց քան զԱսորի այր՝ Հայ մարդ շատ վատթար է եւ անպիտան»: Եւ ո՞չ արդեաւք լաւ էր մահ քան զայն լուր յայնպիսի թագաւորէ: Եւ արդ՝ իմ երկուս կռիւս արարեալ է ընդ Արի մարդկան, եւ երրորդն այս է որ ընդ քեզ արարաք. եւ ընդ որս զերկուս կռիւսն արարաք՝ ընդ այնպիսի երեւելի եւ քաջ մարդկան կռուեցաք, զոր ինքն Արեաց տէրն եւ ամենայն Արիք ճանաչէին, թէ ո՛րպիսի որեար էին: Եւ աւտար մարդոյ մեզ չէր աւգնեալ, Հոնի կամ Հոռոմի եւ կամ այլ ազգի ուստեք մարդոյ. բայց միայն այս Հայոց, զոր դուք գիտէք, սոցա վճարեալ է զայնպիսի մեծ

փառք տալով ու օրհնելով այդպիսի հաղթանակը պարգևող Քրիստոսին: Եվ Հոհան կաթողիկոսն էլ, ընդառաջ գալով հաղթանակած զորքին, ցնծալից սրտով օրհնեց նրանց, ապա, զվարճացած սուրբ զորության Հոգով, բոլորին ասաց. «Ուրախ եմ հույժ և խոսքով չեմ կարող արտահայտել սրտիս խնդությունը: Բայց սրտով առավել զվարճացած երջանկանում եմ՝ տեսնելով, որ ձեր գործակիցն է Քրիստոսը, որը հաղթանակ պարգևեց ձեզ և ամոթահար արեց արդարության հակառակորդներին: Եվ Աստված, որ զորացրել էր ձեզ այժմ, կզորացնի նաև միշտ և ձեզ հետ լինելով՝ ձեզ չի լքի երբեք»:

ՀԵ. Հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանը պատասխան տալով Միհրանին՝ ասաց. «Ով որ Արյաց տեր է, իբրև թագավոր արդար աչքով պիտի նայի ամեն մի մարդու և արդարապես պիտի տեսնի ու արդարապես լսի, ինչպես վայել է թագավորին: Բայց երբ թագավոր մարդն ուղիղ աչքով չի նայում իր ծառաներին և ուղիղ լսողությամբ չի լսում մարդու խոսքերը, այլ ամեն ինչ վարում է քմահաճությամբ և ոչ թե իրավունքների արդար քննությամբ և, որ ավելի վատն է ու աշխարհի կորստյան պատճառ է դառնում, երբ այդ թագավորը կամենում է ուրիշի աչքերով տեսնել և ուրիշի ականջներով լսել, այն ժամանակ ծանր է դառնում այդպիսի ծառայությունը, դառն ու վտանգավոր, և ոչ ոք այն չի տանի: Որովհետև այն տերը, որ չկարողանա իր ծառաների մեջ լավը վատից ջոկել և չկամենա յուրաքանչյուրի պետքերը հոգալ ըստ արժանվույն, այդպիսին դժվար թե կարողանա լավ ծառայի տեր լինել: Արդ, մեր Հայոց աշխարհը որքան մեծ է ու պետքական, բայց դու ինձ այս աշխարհում ցույց տուր մի մարդու, որ առավելապես թագավորի ձեռքով ըստ արժանվույն հասած լինի տանուտերության: Հակառակը, ավազակ, անպիտան, հացկատակ ու վատատոհմիկ ազատներն են, որ գալիս, խաբում են այդպիսի մեծ թագավորությանը և կրակի հետ մեկտեղ գնում

գործ, զոր դուք ամենայն Արիք լուայք եւ տեսէք. եւ ոչ բազում այրուձիոյ, այլ հարիւր արամբ եւ կամ եւս նուազիւ զհազար եւ զերկուս հազարս այր փախուցեալ է սոքաւք: Եւ յայսմ կռուի մի՛ զայս զմտաւ ածեալ պարծիք, թէ աւելի ինչ քաջութեամբ յաղթեցէք մեզ. այլ ի մեր երկպառակութենէ եւ ի նենգելոյ եղեւ մեզ վնաս: Զի թէ էր այս հայ գունդ, յորոյ վերայ ահ եւ երկիւղ էր, որպէս Արեաց տեառն յիւր ծառայի վերայ, եւ յիմում ձեռին այնպէս էին, որպէս ընդ իմ նախնեացն ձեռամբ, եւ համարձակապէս իշխէի զվատացեալսն ի կռուի տամբ եւ կենաւք հարցանել եւ զլխով պատիժ առնել, եւ քաջացելոցն կարէի բարի առնել եւ պատիւ տալ՝ ցուցանէի Արեաց տեառն եւ ձեզ ամենեցուն, թէ ո՞ր կարի գունդ յԱրիս անուանի էր եւ լաւ, բայց եթէ լաւագոյնք եւս եւ քաջք չերեւէին՝ այլ ի խոնարհ սակաւ մի եւ նուազ չտայի երեւել: Բայց արդ՝ զոր ձեր ի վատ տոհմէ եւ յանպիտան ի մարդկանէ աշխարհիս Հայոց իշխան կարգեալ էք՝ դոքա ըստ իւրեանց յետնութեան կորուսին յաշխարհէս Հայոց զքաջութիւն եւ զանուն բարի եւ զլաւութիւն: Զի գնդի, որոյ զաւրագլուխն վատ է՝ գնդին լաւ լինել չէ հնար, եւ աշխարհի, որոյ իշխանքն յետին են՝ աշխարհին այնմ անհնար է յառաջադէմ եւ անուանի լինել:

նաև փառք ու իշխանություն: Իսկ ձեր կողմից մի քիչ հեռանալով՝ միզում են կրակի վրա, իրենց աղբը նետում են կրակի մեջ, և վաճառականին ու վաճառքը միասին անարգում: Եվ այլևս լավությունն ու քաջությունը, միտքն ու գիտությունը, որոնցով աշխարհը շինվում է ու ծաղկում, չեն փնտրվում, այլ արհամարհված են: Անպիտան ու վատատոհմիկ մարդկանց կեղծավորությունն է տեղ անցնում ու հարգվում, և դուք էլ ձեզ ճանաչո՛ղ եք համարում: Դու, որ Միհրանն ես, լսել ես, և բոլոր պարսիկներն են լսել Արյաց տիրոջ այն խոսքերը, արտասանված ամենքի առջև, ատյանում, թե «Վատ մարդն ու զորականը ասորին է, բայց ասորի մարդուց ավելի հայ մարդն է վատթար ու անպիտան»: Արդյոք ավելի լա՞վ չէր մեռնել, քան այսպիսի խոսք լսել մի թագավորից: Արդ, ես երկու անգամ կռվել էի պարսիկ մարդկանց հետ, երրորդն էլ այս է, որ քո դեմ կռվեցի: Եվ այն մարդիկ, որոնց հետ երկու կռիվն արել էի, այնպիսի երևելի ու քաջ մարդիկ էին, որոնց ճանաչում են՝ ինքը Արյաց տերը և բոլոր արիները: Գիտեն նաև, թե ինչպիսի՛ ազատներ էին: Եվ մեզ չէր օգնում ո՛չ մի օտար մարդ. ո՛չ հոն, ո՛չ հոռոմ կամ այլազգի որևէ զորական: Միայն այս հայերն էին, որոնց դուք գիտեք, և սրանք կատարեցին այնպիսի մեծ գործ, որ դուք՝ բոլոր արիներդ, լսեցիք ու տեսաք: Մեծաքանակ այրուձի չունեինք, հարյու՛ր մարդ, թերևս մի քիչ պակաս, հազար կամ երկու հազար մարդու փախուստի մատնեցին: Եվ այս մի կռվի համար էլ չմտածեք պարծենալ, թե մեզ հաղթեցիք ձեր առավել քաջությամբ: Միայն մեր երկպառակությունից ու դավաճանությունից էր, որ վնասվեցինք: Որովհետև եթե այս զորքի վրա լիներ այն ահն ու երկյուղը, որ Արյաց տերն ունի իր ծառաների վրա, և սրանք այսպես իմ ձեռքի տակ լինեին, ինչպես իմ նախնիների ձեռքում էին գտնըվում, և ես համարձակորեն կարողանայի կռվում վատացածներին տնով-տեղով պատասխանատու դարձնել ու պատժել գլխա-

տելով, իսկ քաջությամբ աչքի ընկածներին՝ վարձատրել ու պատիվ տալ, այն ժամանակ Արյաց տիրոջն ու ձեզ բոլորիդ ցույց կտայի, թե ինչպե՛ս Արյաց ամենաքաջ ու ամենաանվանի զնդից անգամ եթե առավել լավ ու առավել քաջ էլ չերևան, ապա թույլ չեմ տա, որ նրանից նույնիսկ մի քիչ պակաս կամ նվազ երևան: Բայց արդ, այն իշխանները, որոնց դուք եք Հայաստան աշխարհում կարգել ետին տոհմերից ու անպիտան մարդկանցից, դրա՛նք էին, որ իրենց ստորությամբ Հայոց աշխարհից վերացրին քաջությունը, բարի անունն ու լավությունը: Քանզի այն զունդը, որի զորագլուխը վատ է, անհնար է, թե լավ լինի ինքը՝ զունդը: Այդպես էլ անհնար է, որ հառաջադեմ ու անվանի լինի մի աշխարհ, որի իշխաններն են հետադեմ:

ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և
Ս. Հարությունյանի)

Երևանի համալսարանի հրատարակչություն, 1981

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ.
Մալխասյանի)

Երևանի համալսարանի հրատարակչություն, 1981

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ
ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ

Գ
ՅԱՂԱԳՍ ԱՆԻՄԱՍՏԱՍԷՐ ԲԱՐՈՒՑ ԱՌԱՋՆՈՅՆ ՄԵՐՈՅ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ԻՇԽԱՆԱՑ

Կամիմ զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն ոչ առանց յիշատակի բամբասանաց թողուլ ....: Զի թէ արդար եւ արժանի գովութեան այնք ի թագաւորաց իցեն, որք գրով եւ պատմութեամբ զիւրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս, եւ զգործս իմաստութեան եւ զքաջութիւն իւրաքանչիւր արձանացուցին ի վէպս եւ ի պատմութիւնս՝ ըստ նոցանէ եւ պարապեալքն այսպիսում ճգնութեան դիւանագիրք մատենից՝ ներբողականաց ի մէնջ արժանի եղեն ասից. ի ձեռն որոց եւ մեք յընթեռնուլն զառ ի նոցանէ շարածս բանից՝ ըստ աշխարհաւրէն կարգաց իմաստնանալ ասիմք, եւ քաղաքականս ուսանել կարգս, յորժամ զայսպիսի ընթերցասիրիցեմք իմաստութեան ճառս եւ զրուցատրութիւնս, որք են Քաղդէացւոց եւ Ասորեստանեայց, Եգիպտացւոց եւ Հելլենացւոց. .... ապա ուրեմն ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց եւ այլոց առաջնոցն առ ի յիմաստն տխմարութիւն, եւ անկատարութիւն ոգւոյն բանականի: Զի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զաւրութեամբ տկար, եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի, զոր եւ ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել:

....Բայց ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն, որ ի սկզբանցն մերոց ազգաց մինչեւ ցայժմուսս միայն գտար զայսպիուոյ մեծէ իրէ բուռն հարկանել, եւ մեզ խոյզ խնդրոյ առաջի արկանել–երկար եւ շահաւոր գործով զազգիս մերոյ կարգել զպատ-

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԻ ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գ
ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԱՆԻՄԱՍՏԱՍԵՐ ԲԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Կամենում եմ նաև առանց մեղադրական հիշատակության չթողնել մեր հին նախնիքերի անիմաստասեր բարքերը....: Որովհետև եթե հիրավի գովության արժանի են թագավորներից նրանք, որոնք իրենց ժամանակները գրով և պատմությամբ հաստատեցին և յուրաքանչյուր իր իմաստության գործերն ու քաջությունն արձանագրեց պատմագրությունների և պատմությունների մեջ. նրանցից հետո մեր կողմից գովասանական խոսքերի արժանացան նաև այն մատենագիրները, որոնք այս ծանր աշխատանքով պարապեցին: Սրա շնորհիվ մենք էլ նրանց շարադրած գրքվածքները կարդալիս աշխարհական կարգերի գիտություն ենք ձեռք բերում և քաղաքական կարգեր ենք սովորում, երբ ուսումնասիրում ենք այսպիսի գիտական ճառեր և պատմական գրվածքներ, ինչպես ունեն քաղդեացիները և ասորեստանցիները, եգիպտացիներ և հելլենացիները. ....ապա ուրեմն մեզ ամենիս հայտնի է մեր թագավորների և մյուս նախնիքների տխմարությունը դեպի գիտությունը և բանական հոգու անկատարությունը: Որովհետև թեպետ մենք փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել, որ նրանցից ոչ ոք հոգ չտարավ գրի առնելու:

.... Բայց ես շատ եմ զարմանում քո մտքի բեղմնավորության վրա, որ մեր ցեղերի հներից սկսած մինչև այժմյանները միայն դու գտնվեցիր այսպիսի մեծ գործի ձեռնարկող և մեզ առաջարկեցիր հետազոտություն կատա-

մութիւնն ճշդիւ՝ զթագաւորացն եւ զնախարարականաց ազգաց եւ տոհմից, թէ ո՛վ յումմէ, եւ զի՛նչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց, եւ ով ոք ի ցեղիցս որոշելոց ընտանի եւ մերազնեայ, եւ ո՛յք ոմանք եկք ընտանեցեալք եւ մերազնացեալք. եւ զգործս եւ զժամանակս իւրաքանչիւր գրով դրոշմել, ի ժամանակէ անկարգ ամբարտակին շինուածոյ մինչեւ ցայժմ:

Թ

....Սկիզբն մատենին

Որոյ սկիզբ լեալ ասէ զՋրուանն եւ զՏիտանն եւ զՅապետոսթէ, յորումն եւ զիւրաքանչիւր ոք ի ծննդոց երից նախարարականաց այսոցիկ արանց, զարս անուանիս, կարգաւ շարադասեալ յիւրաքանչիւր տեղիս մինչ եւ ցբազում ամս:

....Յորում է սկիզբն բանիցն այսպիսի.

«Ահեղք եւ եր եւ ելիք առաջինքն ի դից, եւ աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի եւ բազմութեան: Եւ ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն անհեղեղք, յաղթնդամք մարմնով եւ վիթխարիք. որք յղացեալ ամբարտաւանութեամբ՝ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն, եւ նոյն լինէին ի գործ անկեալք. յոր հողմ ահագին իմն եւ աստուածային շնչեցեալ ի դիցն ցասմանէ՝ ցրէ զամբարտակն, եւ մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ շփոթի ի մէջ արկանէին: Յորոց մի էր Յապետոսթեանն Հայկ, անուանի եւ քաջ նախարար, կորովաձիգ եւ հաստաղեղն»:

Ժ

ՅԱՂԱԳՍ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆՆ ՀԱՅԿԱՅ

Այս, ասէ, Հայկ գեղապատշաճ և անձնեալ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ: Սա ի մէջ սկայիցն քաջ և երեւելի լեալ, եւ ընդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռել՝ երկար և շահավոր գործով ճշտությամբ հորինել մեր ազգի պատմությունը, թագավորների և նախարարական տոհմերի մասին, թե ո՛վ ումի՛ց է ծագել, ի՛նչ է գործել նրանցից յուրաքանչյուրը, և ո՛րն այս բաժանված ցեղերից բնիկ մեր ազգից է և որո՛նք եկվորներ են և հայացած բնիկ են դարձել, ամեն մեկի գործերն ու ժամանակները գրով դրոշմել, անկարգ աշտարակի շինությունից սկըսած մինչև ներկա ժամանակս:

Թ

....Մատյանի սկիզբը

Սրա սկզբում, ասում է, եղել են Զրուանը, Տիտանը և Հապետոսթեն, և այս երեք նախարարական մարդկանց սերունդներից բոլոր նշանավոր մարդիկ, յուրաքանչյուրին իր տեղում դասավորված է երկար տարիների ընթացքում:

....Դրա մեջ պատմության սկիզբը այսպես է:

«Աստվածներից առաջիններն ահեղ էին և երևելի ու աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի և բազմամարդության սկիզբը: Սրանցից առաջ եկան հսկաների սերունդը, անհեթեթ, հաղթանդամ, վցիթխարի մարդիկ, որոնք ամբարտավանությամբ հղանալով ծնան աշտարակաշինության անօրեն խորհուրդը, որը և ձեռնարկեցին իրագործելու: Աստվածների ցասումից ինչ-որ ահագին և աստվածային հողմ փչելով կործանում է աշտարակը և մարդկանց յուրաքանչյուրին տալիս է անհասկանալի լեզուներ, որով նրանց մեջ աղմուկ և շփոթություն է ընկնում: Սրանցից մեկն էր Հաբեթոսյան Հայկը, հաստ աղեղով ու հզոր նետաձիգ, անվանի և քաջ նախարար»:

Ժ

ՀԱՅԿԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկ-

ոըն՝ միապետել ի վերայ ամենայն սկայիցն եւ դիւցազանց: Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խաւլաց եւ ուժաւորաց: Քանզի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր, սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանային տիրել ի վերայ միմեանց. ուր պատահմունք ի դէպ ելանէին Բելայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր: Որում ոչ կամեցեալ հնազնադ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք եւ դստերաւք եւ որդւոց որդւովք, արամբք զաւրաւորաւք, թուով իբրեւ երեքհարիւր, եւ այլովք ընդոծնաւք եւ եկաւք յարեցելովք ի նա եւ բոլոր աղխիւ: Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց եւ տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս:

«Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արեւմուտս հիւսիսոյ. գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, եւ անուանէ զանուն լեռնադաշտին հարք, այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ: Շինէ եւ գիւղ մի, եւ անուանէ յիւր անուան Հայկաշէն»:

նավետ, գեղազանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով:

Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների ու դյուցազունների վրա տիրապետելու: Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնատիրության դեմ, երբ մարդկային ցեղը սփռվում, տարածվում էր ամբողջ երկրի լայնության վրա՝ բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժեղների մեջ: Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ կատաղած՝ սուրն ընկերի կողն էր կոխում, ձգտում էր մյուսներին տիրելու, երբ Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և ամբողջ երկիրը գրավել: Հայկը, չկամենալով սրան հնազանդվել, Բաբելոնում իր Արամանյակ որդուն ունենալուց հետո չվեց, գնաց Արարադի երկիրը, որ գտնվում էր հյուսիսային կողմերում իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, զորավոր մարդկանցով՝ թվով մոտ երեք հարյուր հոգի և ուրիշ ընդոծիններով, նրան հարած եկվորներով և բոլոր տուն ու տեղով: Գընում, բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից: Հայկը նրանց իրեն հնազանդեցնելով, այնտեղ կալվածական բնակելի տուն է շինում և տալիս է ժառանգություն Կադմոսին՝ Արամանյակի որդուն...

Իսկ ինքը, ասում է (Մար Աբասը). մնացած մարդկանցով և տուն ու տեղով շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք և գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք, այսինքն՝ թե այստեղ բնակվողները հայեր են՝ Թորգոմի տան սերնդից: Շինում է և մի գյուղ, որն իր անունով կոչում է Հայկաշեն:

ԺԱ
ՅԱՂԱԳՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՒ ՄԱՀՈՒԱՆՆ ԲԵԼԱՅ

.... ասէ, թէ ի հաստատել Տիտանեանն բելայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ արամբք հաւատարմօք, գալ նմա ի հնազանդութիւն եւ կեալ խաղաղութեամբ: «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց. այլ ջեռոջցեալ մեղկետ զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ, եւ հնազանդեալ ինձ՝ կեաց հանդարտութեան, ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան»: Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն բելայ՝ խստութեամբ պատասխանեաց: Դառնայ առաքեալն անդրէն Բաբելովն:

Ապա զաւրաժողով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամբոխիւ հետեւակ զաւրաց. գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադեմեայ: Փախստական լինի Կադմոս առ Հայկ, քաջընթացիկս առաջի իւր առաքէ. «Գիտեա՛, ասէ, ո՛վ մեծդ դիւցազանց, զի դիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջաւք եւ երկնադիզաւք հասակաւք սկայիւք մրցողաւք: Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ՝ փախեայ, եւ գամ աւասիկ տագնապաւ: Արդ՝ աճապարեա՛ խորհել զոր ինչ գործելոց ես»: Իսկ Բէլն, յանդուգն եւ անճոռնի զօրութեամբ ամբոխին, որպէս յորձան ինձ սաստիկ ընդ զառ ի վայր հեղեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնայութեանն Հայկայ, ի սիրտ եւ ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց: Աստ ուշիմ եւ խոհեմ սկայն, քաջագանգուրն եւ խայտակնն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր եւ զթոռունս, արս քաջս եւ աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, եւ զայլսն եւ ս որ ընդ իւրով ձեռամբ. հասանէ ձկունս: Եւ կոչեցեալ զզօրս իւր՝ ասէ ցնոսա. «Յելանելն մեր հանդէպ ամբոխին Բելայ՝ դիպել ջանասցուք տեղւոյն, ուր անցեալ կայցէ ի մէջ խռան քաջացն Բէլ: Զի կամ մեռցուք, եւ աղխ մեր ի

ԺԱ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԲԵԼԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

.... Ասում է, թե իբր երբ Տիտանյան Բելը իր թագավորությունն ամենքի վրա հաստատեց, ապա իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկեց հյուսիսային կողմը Հայկի մոտ, որ նա գա հնազանդության և խաղաղությամբ ապրի: «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ասում է, սակայն տաքացրու և մեղմացրու քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով, խաղաղ ապրիր, որտեղ որ կհաճես իմ երկրում բնակվելու»: Հայկը Բելի պատգամավորներին ետ է դարձնում, խրստությամբ պատասխանելով: Ուղարկվածը վերադառնում է Բաբելոն:

Ապա Տիտանյան Բելը զորք է ժողովում նրա դեմ և հետևակ զորքի մեծ բազմությամբ գալիս, հասնում է հյուսիս՝ Արարադ երկիրը, Կադմոսի տան մոտ: Կադմոսը փախուստ է տալիս Հայկի մոտ, իրենից առաջ արագավազ սուրհանդակներ ուղարկելով:

«Գիտցած եղիր, ասում է, ո՛վ մեծդ դյուցազունների մեջ, որ Բելը դիմում գալիս է քո վրա անմահ քաջերով և երկնադեզ հասակով կռվող հսկաների հետ: Եվ ես իմանալով, որ նա մոտեցել է իմ տանը՝ փախա և ահա տագնապահար գալիս եմ քեզ մոտ: Ուրեմն շտապիր մտածել, ինչ որ անելու ես»:

Իսկ Բելը հանդուգն ու հսկա ամբոխի զորությամբ, ինչպես մի մեծ հորձանք, զառիվայրից ներքև հեղեղվելով, շտապում է հասնել Հայկի բնակության սահմանները՝ վստահ լինելով զորավոր մարդկանց քաջության և ուժի վրա: Այս ժամանակ ուշիմ ու խոհեմ հսկան՝ գեղագանգուրն ու խակտակնը շտապով հավաքում է իր որդիներին ու թոռներին, թվով շատ նվազ, քաջ և աղեղնավոր մարդկանց, և ուրիշ մարդկանց, որ իրեն էին ենթարկվում, գնում հասնում է մի ծովակի ափ, որն ունի աղի ջուր և մանր ձկներ: Եվ իր զորքերը կանչելով՝ ասում է նրանց. «Երբ մենք

ծառայութիւն Բելայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն, եւ մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք»:

Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզս՝ հասանեն ի միջոց ինչ դաշտաձեւ՝ լերանց բարձրագունից: Եւ յաջմէ ջուրց հոսանաց ի բարձրաւանդակում կուռ կալով ի տեղւոջ, ի վեր զերեսս ամբարձեալ՝ երեւեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ, ցան եւ ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով. իսկ Բէլ հեզ եւ հանդարտ ամբոխիւ մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ոստոյ միոյ, իբրեւ ի դիտանոցի: Ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին, յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրիւք եւ վառելովք ոմամբք. եւ երկար միջոց ճանապարհի ընդ նա եւ ընդ ամբոխն: Եւ ինքն գլխանոց ագուցեալ երկաթի, նշանաւորաւք վերջիւք, եւ տախտակս պղընձիս թիկանց եւ լանջաց, եւ պահպանակս բարձից եւ բազկաց. գաւտեւորեալ զմէջսն, եւ յահեկէ զսուրն երկսայրի. եւ նիզակ անարի ի ձեռին իւրում աջոյ, եւ յահեկումն վահան, եւ ընտիրք յաջմէ եւ ի ձախմէ: Եւ տեսեալ Հայկին զՏիտանեանն կուռ վառեալ, եւ զարս ընտիրս ընդ նմա աջինս եւ ահեկինս՝ կարգէ զԱրամանեակն երկու եղբարքք ընդ աջմէ, եւ զԿադմոս եւ զայլս երկուս յորդւոց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յաղեղն եւ ի սուսեր. եւ ինքն առաջի, եւ զայլս հրոսակին զկնի իւր կարգեաց. երեքանկիւնի իմն կարգեաց ձեւով, հանդարտ յառաջ մատուցեալ:

Եւ հասեալ երկոցուցն կողմանց սկայիցն ի միմեանս՝ ահագին դղրդմունս ի վերայ երկրի առնէին շահատակելով, եւ ահս պակուցանողս տարագուք յարձակմանցն սկայազունքքն զմիմեամբք արկանէին: Անդ ոչ սակաւք յերկոցունց կողմանց արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ յերկիր կործանէին, եւ մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի: Զայսպիսի անակնունելի դիպուած տարակուսանաց տեսեալ արքայն Տի-

դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, պետք է աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խուռն բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք, և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի, և մենք հաղթություն տանենք»:

Եվ ամբողջ ասպարեզներ դեպի առաջ անցնելով՝ հասնում են շատ բարձր լեռների միջև մի դաշտաձև տեղ: Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գլուխները վեր բարձրացնելով, տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան սուրում է երկրի երեսի վրա, իսկ, ինքը, Բելը մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի վրա՝ իբրև դիտանոցում: Հայկը ճանաչեց սպառազինված ջոկատի խումբը, որտեղ Բելը մի քանի ընտիր և սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, և երկար տարածություն կար նրա ու ամբոխի միջև: Նա կրում էր երկաթե գլխանոց, նշաններ կրող վերջերով, թիկունքի և լանջերի վրա պղնձե տախտակներ, սրունքների և թևերի վրա պահպանակներ, մեջքը կապել էր գոտի, որի ձախ կողմից կախված էր երկսայրի սուրը. աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում վահան, նրա աջ և ձախ կողմում գտնվում էին ընտիր զորականներ: Հայկը, տեսնելով լավ սպառազինված Տիտանյանին և նրա աջ ու ձախ կողմի ընտիր մարդկանց՝ կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայրներով աջ կողմը, Կադմոսին իր ուրիշ երկու որդիներով ձախ կողմը, որովհետև սրանք աղեղ և սուր գործածելու մեջ հաջողակ մարդիկ էին, իսկ ինքը կանգնում է առջևից, իսկ մյուս բազմությունը կանգնեցնում է իր ետևում, դասավորում է մոտավորապես եռանկյունի ձևով և հանդարտ առաջ է շարժվեց:

Եվ երկու կողմի հսկաները միմյանց հաս-

տանեան զարհուրեցաւ, եւ ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջոտնեալ ելանէր. քանզի խորհէր ի միջոցի ամբոխին ամրանալ, մինչեւ հասցէ բովանդակ զաւրն, զի միւսանգամ ճակատ - յաւրինեսցէ: Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մաւտ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեքթեւեանն կրծից տախտակին, եւ շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարսի սլաքն. եւ այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, եւ փչէ զոգին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան՝ փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց:

....Բայց զտեղի ճակատուն շինէ դաստակերտ, եւ անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ եւ զաւառն այժմ անուանի Հայոց ձոր: Իսկ զբլուրն, ուր քաջամարտկաւքն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս. որ այժմ ասին Գերեզմանակք: Բայց զդիակն Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, եւ թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ, ի տեսիլ կանանց եւ որդւոց իւրոց: Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք:

նելով՝ երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին գրոհելով, և իրար վրա ահ ու սարսափ գցեցին իրենց հարձակումների ձևերով: Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ, սրի բերանի հանդիպելով, թավալվում, ընկնում էին գետին, և ճակատամարտը երկու կողմից էլ անպարտելի մնաց: Այս անսպասելի սարսափելի դիպվածը տեսնելով Տիտանյան արքան զարհուրեց և ետ քաշվելով, սկսեց ետ–ետ բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր. որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև ամբողջ զորքը հասնի, որպեսզի նորից ճակատ կազմի: Աղեղնավոր Հայկը, այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մետ է հասնում արքային, մինչև վերջը քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը շեշտակի թափ անցելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում. այս կերպով գոռոզացած Տիտանյանը կործանվում, ընկնում է գետին և շունչը փչում: Իսկ ամբոխն այս մեծ քաջագործությունը տեսնելով փախչում է, ամեն մեկը իր երեսը դարձած կողմը:

....Բայց ճակատամարտի տեղը հաղթական պատերազմի պատվին շինում է դաստակերտ և անունը դնում է Հայք: Այս պատճառով գավառն էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ձոր: Իսկ այն բլուրը, որտեղ ընկավ Բելը քաջ զորականների հետ, Հայկը կոչեց Գերեզմանք, որ այժմ ասվում է Գերեզմանակ: Բայց Բելի դիակը ասում է (Մար Աբասը) դեղերով զմռսելով՝ Հայկը հրամայում է տանել Հայք և թաղել մի բարձրավանդակ տեղում ի տես իր կանանց և որդիների: Իսկ մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք:

ԺԲ
ՅԱՂԱԳՍ ՈՐ Ի ՀԱՅԿԱՅ ԱԶԳՔ ԵՒ ԾՆՈՒՆԴՔ, ԵՒ ԹԷ ԶԻ՛ՆՉ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՈՔ Ի ՆՈՅԱՆԷ ԳՈՐԾԵԱՅ

....Զկնի այսորիկ դառնալ ասէ Հայկին ի նոյն տեղի բնակութեան, եւ Կադմեայ թոռին իւրում բազում ինչս յանկածէ պատերազմին պարգեւէ, եւ յիւրոց ընդոծնացն արս անուանիս: Հրամայէ զնոյն տեղի բնակութեան ունել նմա զառաջնոյ իւրոյ տանն, եւ ինքն երթեալ դադարէ յանուանեալ դաշտին Հարք: Սա կեցեալ ամս՝ ծնանի զԱրամանեակ ի Բաբելոնի: ....Յետ որոյ կեցեալ եւ այլ եւս ամս ոչ սակաւս՝ մեռանի, յանձն առնելով զբովանդակ ազնն Արամանեկայ որդւոյ իւրում: Իսկ նորա թողուլ զերկուս յեղբարց իւրոց, զԽոռ եւ զՄանաւազ, ամենայն աղխիւն իւրեաց ի կոչեցեալն Հարք, եւ զորդի Մանաւազայ զԲազ. յորոց Մանաւազ ժառանգէ զՀայք, իսկ որդի նորա Բազ՝ յարեւմտից հիւսիսոյ զեզր ծովուն աղւոյ, եւ զգաւառն եւ զծովն անուանէ իւրով անուամբ: Եւ ի սոցանէ ասեն լեալ զնահապետութիւնս Մանաւազեան եւ զԲզնունեաց, եւ Որդունին անուանեալ, որք աստ ուրեմն յետ սրբոյն Տրդատայ բարձեալ ասին միմեանց պատերազմաւ: Իսկ Խոռն ի կողմանս հիւսիսոյ բազմանայ, կարգէ զշէնս իւր. եւ ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց, արք քաջք եւ անուանիք, որպէս եւ որք առ մեաւք են այժմ երեւելիք:

Իսկ Արամանեկայ առեալ զամենայն բազմութիւնն՝ խաղայ յարեւելս հիւսիսոյ, եւ երթեալ իջանէ ի խորին դաշտավայր մի, ի բարձրագագաթանց պարսպեալ լերանց: .... Յայսմ խորութեան դաշտի բնակեալ Արամանեկայ՝ շինէ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, եւ զոտն լերինն ի նոյն կողմանէ, զլեառնն անուանէ յանկագոյն յիւր անուն Արագած, եւ զկալուածսն՝ ոտն Արագածոյ:

.... Այս Արամանեակ կեցեալ ամս՝ ծնաւ զԱրամայիս ....: Իսկ որդի նորա Արամայիս

ԺԲ
ՀԱՅԿԻՑ ՍԵՐՎԱԾ ՑԵՂԵՐԻ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ՆՐԱՆՑԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉԻՒՐՆ Ի՛ՆՉ ԳՈՐԾԵՑ

....Սրանից հետո, ասում է նա, Հայկը դառնում է իր բնակության տեղը, իր Կադմոս թոռին պարգևում է շատ ինչք պատերազմի ավարից և անվանի մարդիկ իր ընդոծիններից: Նրան հրամայում է իր առաջին տանը բնակություն հաստատել, իսկ ինքը գնում դադարում է Հարք կոչված դաշտում: Սա տարիներ ապրելով, Արամանյակին սերեց Բաբելոնում,.... դրանից հետո դարձյալ ոչ քիչ տարիներ ապրելով՝ մեռավ, ամբողջ տոհմը հանձնելով իր Արամանյակ որդուն:

Սա իր եղբայրներից երկուսին՝ Խոռին և Մանավազին իրենց ամբողջ աղխով, ինչպես Մանավազի որդի Բազին, թողնում է Հարք կոչված տեղում: Սրանցից Մանավազը ժառանգում է Հարքը, իսկ նրա որդին՝ Բազը ժառանգում է աղի ծովի հյուսիս-արևմտյան ափը և գավառն ու ծովը կոչում է իր անունով: Ասում են, որ սրանցից են առաջ եկել Մանավազյան և Բզնունյաց նահապետությունները, նաև Որդունի կոչվածը, որոնք սուրբ Տրդատից հետո, մեկը մյուսին ոչնչացրին պատերազմով: Իսկ Խոռը բազմանում է հյուսիսային կողմերում, շեներ է հիմնում, և ասում են, որ նրանից սկսած մինչև այժմ շարունակվում է Խոռխոռունիների ցեղի մեծ նախարարությունը. քաջ և անվանի մարդիկ, որոնք այժմ էլ մեր ժամանակ երևելի են:

Իսկ Արամանյակը ամբողջ բազմությունն առնելով չվում է դեպի հյուսիս-արևելք և գընում իջնում է բարձրագագաթ լեռներով շրջապատված մի խոր դաշտավայր: ....Արամանյակն այս խոր դաշտում բնակվելով՝ շենացնում է մի մասը դաշտի հյուսիսային կողմում և լեռան ստորոտը նույն կողմում. լեռն իր անվան նմանողությամբ կոչում է Արագած, իսկ կալվածը՝ ոտն Արագածո (Արագածոտն):

շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերբ գետոյն, եւ անուանէ զնա յիւր անուն Արմաւիր. եւ զանուն գետոյն յանուն թոռին իւրոյ Երաստայ՝ Երասխ: Եւ զորդի իւր զՇարայ, զյոլովածին եւ զշատակեր, առաքէ ամենայն աղխիւ իւրով ի դաշտ մի մաւտաւոր, արգաւանդ եւ բերրի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած. յորոյ անուն եւ զգաւառն ասեն անուանեալ Շիրակ: .... Այս Արամայիս կեցեալ ամս՝ ծնանի զորդի իւր զԱմասիա. ի վերայ որոյ կեցեալ եւ այլեւս ամս մեռաւ:

Ամասիա բնակեալ յԱրմաւիր՝ յետ ամաց ծնանի զԳեղամ, եւ յետ Գեղամայ զՓառոխ արի եւ զՑոլակ, ... յորս բնակեալ՝ յիւրեանց անուն զտեղիս կոչեցին, ի Փառոխայ՝ Փառախոտ, եւ ի Ցոլակայ՝ Ցոլակերտ: Բայց զլեառնն՝ Ամասիա անուանէ իւրով անուամբ Մասիս. եւ ինքն դարձեալ յԱրմաւիր՝ եկաց ամս սակաւս, եւ մեռաւ:

Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաւիր. եւ թողեալ զՀարմայ յԱրմաւիր հանդերձ որդւովք բնակել, եւ ինքն գնաց զմիւս լերամբն արեւելեան հիւսիսոյ, յեզր ծովակի միոյ: Շինէ զեզր ծովակին, եւ թողու անդ բնակիչս. եւ յիւր անուն եւ սա զլեառնն անուանէ Գեղ, եւ զշէնսն՝ Գեղարքունի, որով կոչի եւ ծովն: Աստ ծնաւ զորդի իւր զՍիսակ, զայր սէգ եւ անձնեայ, բարեգեղ, կորովաբան եւ գեղեցկադեղն: Սմա զմեծ մասն ընչից իւրոց տուեալ եւ ծառայս անձինս բազումս՝ սահմանս հատանէ նմա ժառանգութեան ի ծովէն ընդ արեւելս մինչեւ զդաշտ մի, ուր գետն Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խորխոմս ձիգս եւ նեղս, ահագին դնդնչմամբ իջանէ ի դաշտն: Աստ բնակեալ Սիսակ՝ լնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. եւ զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք. այլ Պարսք յըստակագոյնս եւս Սիսական կոչեն:

... Բայց ինքն Գեղամ դառնայ անդրէն ի դաշտ անդր, եւ առ ոտամբ նորին լերինն ի

Արամանյակը տարիներ ապրելուց հետո սերեց Արամայիսին ....: Նրա որդին՝ Արամայիսն իր բնակության համար տուն է շինում գետի ափին մի բլուրի վրա և իր անունով այն կոչում է Արմավիր, իսկ գետի անունը իր թոռան՝ Երաստի անունով դնում է Երասխ: Իսկ իր որդուն՝ բազմազավակ և շատակեր Շարային ամբողջ աղխով ուղարկում է մի մերձակա արգավանդ ու բերրի դաշտ, հյուսիսային լեռան՝ Արագածի թիկունքում, որտեղ շատ ջրեր են հոսում. նրա անունով, ասում են, գավառը կոչվեց Շիրակ: ....Այս Արամայիսը տարիներ ապրելով սերեց իր որդի Ամասիային, որից հետո էլի տարիներ ապրելով մեռավ:

Ամասիան Արմավիրում բնակվելով՝ տարիներ անցնելուց հետո սերում է Գեղամին և Գեղամից հետո արի Փառոխին և Ցոլակին, ... որոնք այնտեղ բնակվելով իրենց անունով կոչեցին այդ տեղերը, Փառոխից՝ Փառախոտ և Ցոլակից՝ Ցոլակերտ: Իսկ լեռը Ամասյան իր անունով կոչեց Մասիս և հետո նորից Արմավիր դառնալով կարճ տարիներ ապրեց ու մեռավ:

Իսկ Գեղամը տարիներ անցնելուց հետո Արմավիրում սերեց Հարմային. նա Հարմային թողեց Արմավիրում բնակվելու իր որդիների հետ, իսկ ինքը գնաց հյուսիս-արևելքում եղած մյուս լեռան հետևի կողմը՝ մի ծովակի ափ: Նա շենցնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ և իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շեները՝ Գեղարքունի, որով կոչվում է նաև ծովը: Այստեղ նա սերեց իր Սիսակ որդուն, որ մի սեգ ու թիկնավետ, վայելչակազմ, ճարտասան և գեղեցիկ աղեղնավոր էր: Նրան տվեց իր ստացվածքի մեծ մասը և բազմաթիվ ծառաներ. և նրան ժառանգական սահման կտրեց ծովից դեպի արևելք մինչև այն դաշտը, ուր Երասխը սեպացած լեռները ճեղքելով, երկար ու նեղ ձորերով անցնելով, ահագին շառաչյունով թափվում է դաշտը: Սիսակն այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է

ձորակի միում ամրոջ շինէ ձեռակերտ մի, եւ կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառընկայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի: Ի սորա ծննդոց աստ ուրեմն առ Արտաշիսիւ թոռամբ Վաղարշակայ ոմն Վարաժ անուն պատանի լեալ, աջող յորս եղջերուաց եւ այծեմանց եւ վարազուց, դիպաձգութեամբ նետից կորովի. զսա ի վերայ որսոց արքունականաց կարգէ, եւ շէնս պարգեւէ նմա առ եղերբ գետոյն, որ անուանեալ կոչի Հրազդան: Եւ ի սմանէ ասեն լինել զտունն Վարաժնունի:

....Այս Հայկ որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Գամերայ, որդւոյ Յաբեթի, նախնի Հայաստանեայց. եւ այս ազգք նորա եւ ծնունդ եւ աշխարհ բնակութեան նոցա. եւ յայսմ հետէ սկսան, ասէ, բազմանալ եւ լնուլ զերկիրն:

Իսկ Հարմայ կեցեալ ամս՝ ծնաւ զԱրամ: Արամայ բազում գործք քաջութեան պատմին մարտից նահատակութեան, եւ ընդարձակել զսահմանս Հայոց յամենայն կողմանց. յորոյ անուն եւ զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք եւ Ասորիք՝ Արմէնիկք:

շինություններով և երկիրը կոչում է Սյունիք. բայց պարսիկներն ավելի ճիշտ կոչում են Սիսական։

... Իսկ ինքը՝ Գեղամը, նորից դառնում է հիշյալ դաշտը, և նույն լեռան ստորոտում, մի ամուր ձորակում շինում է մի դաստակերտ և անունը դնում է Գեղամի, որ հետո նրա թոռան՝ Գառնիկի անունով կոչվեց Գառնի։ Վերջերը, Վաղարշակի թոռան՝ Արտաշեսի ժամանակ, սրա սերունդներից մի պատանի է եղել Վարաժ անունով, եղջերուների, այծյամների և վարազների որսերում հաջողակ, ուժեղ և ճիշտ նետաձիգ։ Սրան (Արտաշեսը) նշանակում է արքունական որսերի վրա և շեներ է պարգևում Հրազդան կոչված գետի ափերին։ Սրանից, ասում են, առաջ է եկել Վարաժնունյաց տունը։

…. Այս Հայկը՝ Թորգոմի որդին, Թիրասի որդին, Գամերի որդին, Հաբեթի որդին,- հայաստանցիների նախնին է. և այս են նրա ցեղերն ու սերունդները և նրանց բնակության երկիրը։

Այնուհետև, ասում է (Մար Աբասը), նրանք սկսեցին բազմանալ և երկիրը լցնել։ Հարման տարիներ ապրելով սերեց Արամին։

Արամի մասին պատմում են, թե շատ քաջագործություններ է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր երկիրը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ։

ԺԴ
ՅԱՂԱԳՍ ԸՆԴ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՍ ԿՌՈՒՈՅՆ ԵՒ ՅԱՂԹՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՊԱՅԱՊԱՅՆ ՔԱԱՂԵԱՅՆ, ԵՒ ԿԵՍԱՐՈՒ, ԵՒ ԱՌԱՋԻՆ ԵՒ ԱՅԼՈՅ ԱՆՈՒԱՆԵԱԼ ՀԱՅՈՅ

.... Նոյն այս Արամ, յետ վճարելոյ ճակատուն որ ընդ արեւելեայս՝ խաղայ նոյն զաւրութեամբ զկողմամբք Ասորեստանի .... զմեծ մասն դաշտացն Ասորեստանի կալաւ ի ծառայութեան հարկի Արամ բազում ժամանակըս:

.... Աստ յարեւմուտս շարժեալ ի վերայ առաջնոյն չորիւք բիւրովք հետ եւ ակազաւրու եւ երկու հազար հեծելովք՝ հասանէ ի կողմանս Կապադովկացւոց, ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա: ..... յարեւմուտս՝ պատահէ նմա Պայապիս Քաաղեայն Տիտանեան պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտուն եւ զՈվկիանու: Որում ի դիմի հարեալ վանէ, փախստական արկանելով ի կղզի ինչ ասիական ծովուն: Եւ իւր թողեալ զոմն Մշակ անուն յազգէ իւրմէ եւ բիւր մի ի զաւրացն ի վերայ աշխարհին՝ եւ ինքն դառնայ ի Հայս:

Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխաւսս եւ զլեզուս հայկական. վասն մինչեւ ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկղիմայն զայն Պոռտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք: Եւ զդաստակերտըն, զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ, փոքրագունիւք պարըսպեալ որմովք, անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել. Մինչեւ յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարի: Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչեւ ցբուն իւր սահմանսն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ եւ Երրորդ անուանեցան Հայք, այլ եւ Չորրորդ:

ԺԴ
ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՀԵՏ ԿՌՎԻ ԵՒ ՅԱՂԹՈՒԹՅԱՆ, ԵՎ ՊԱՅԱՊԻՍ ՔԱԱՂՅԱՅԻ, ՆԱԵՒ ԿԵՍԱՐԻԱՅԻ, ԵՒ ԱՌԱՋԻՆ ԵՒ ՄՅՈՒՍ ՀԱՅՔԵՐԻ ՄԱՍԻՆ

.... Նույն այս Արամը արևելցիների հետ ճակատամարտը վերջացնելուց հետո նույն զորությամբ շարժվում է Ասորեստանի կողմերը .... Ասորեստանի դաշտերի մեծ մասը Արամը գրավեց և հպատակության մեջ պահեց երկար ժամանակ:

.... Սա դեպի արևմուտք շարժվում է առաջինի (Հայքի) վրա չորս բյուր հետևակ և երկու հազար հեծյալ զորքերով, հասնում է Կապադովկիայի կողմերը, մի տեղ, որ այժմ Կեսարիա է կոչվում:

.... Այստեղ նրան պատերազմով հանդիպում է Տիտանյան Պայապիս Քաաղյան, որ բռնացել գրավել էր տարածությունը երկու մեծամեծ ծովերի միջև, այսինքն Պոնտոսի և Ովկիանոսի: (Արամը) նրան ընդհարվելով վանում և փախցնում է ասիական ծովի մի կղզի. այնտեղ երկրի վրա հսկելու համար նա թողնում է Մշակ անունով մեկին իր ցեղից և մի բյուր զորք, ինքը վերադառնում է Հայաստան:

Բայց այս երկրի բնակիչներին հրաման է տալիս սովորել և խոսել հայերեն, այս պատճառով հույները մինչև այսօր այդ երկրամասը կոչում են Պոռտին Արմենիան, որ թարգմանվում է առաջին Հայք: Իսկ այն դաստակերտը, որ Արամի կուսակալ Մշակը շինեց իր անունով և փոքր պարսպով պատեց, այդ երկրի հին մարդիկ կոչում էին Մաժաք, կարծես չկարողանալով ճիշտ արտասանել. հետո նա ուրիշներից ավելի ընդարձակ շինվելով կոչվեց Կեսարիա: Միևնույն կարգով՝ այդ տեղերից մինչև իր բուն սահմանները շատ անբնակ տեղեր բնակիչներով լցրեց, որոնք կոչվեցին Երկրորդ և Երրորդ Հայք, նաև Չորրորդ (Հայք):

.... Բայց Արամ յետ ամաց կենաց իւրոց ծնաւ զԱրայն. յետ որոյ եւ այլս բազումս կեցեալ ամս՝ մեռաւ:

ԺԵ
ՅԱՂԱԳՍ ԱՐԱՅԻ, ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՆՈՐԱ ՊԱՏԵՐԱԶՄԱՒ Ի ՇԱՄԻՐԱՄԱՅ

Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինոսի խնամակալեաց իւրոց հայրենեացն, նոյնպիսում շնորհի արժանաւորեալ ի Նինոսէ՝ որպէս եւ հայրն իւր Արամ: Բայց վաւաշն այն եւ բորբորիտոնն Շամիրամ ի բազում ամաց լուեալ զգեղեցկութենէ նորա՝ ցանկայր հասանել. այլ ոչ ինչ յայտնապէս զայսպիսիս իշխէր գործել: Իսկ յետ վախճանելոյն, կամ փախստական լինելոյն Նինոսի ի Կրետէ .... առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ընծայիւք եւ պատարագաւք, բազում աղաչանաւք եւ խոստմամբ պարգեւաց, գալ առ նա ի Նինուէ, կա՛մ առնուլ կնութեան եւ թագաւորել ի վերայ ամենայնի՝ որոց տիրէր եւ Նինոս, եւ կամ կատարել զկամս ցանկութեան նորա եւ դառնալ մեծաւ պատարագաւք եւ խաղաղութեամբ ի տեղի իւր:

Եւ ի բազում անգամ երթեւեկութեան հրեշտակագնացութեանն լինել, եւ յոչ հաւանել Արային, ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ .... Գայ հասանէ տագնապաւ ի դաշտն Արայի, որ եւ յանուն նորա անուանեալ Այրարատ: Եւ լինել ճակատուն՝ պատուէր տայ զաւրապետաց իւրոց, թէ դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն: Իսկ ի լինել մարտին՝ հարկանի զաւրն Արայի, մեռանի եւ Արայ ի պատերազմին ի մանկացն Շամիրամայ:

…. Այս Արամը տարիներ ապրելով սերեց Արային, որից հետո էլի շատ տարիներ ապրելով, մեռավ:

ԺԵ
ԱՐԱՅԻ ԵՎ ՆՐԱ ՄԱՀՈՒԱՆ ՄԱՍԻՆ ՇԱՄԻՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Արան Նինոսի վախճանվելուց հետո քիչ տարիներ առաջ խնամակալ դարձավ իր հայրենքին Նինոսից նույնպիսի շնորհի արժանանալով՝ ինչպիսի շնորհի արժանացավ և իր հայր Արամը:

Բայց այն վավաշոտ Շամիրամը շատ տարիներ ի վեր նրա գեղեցկության մասին լսած լինելով, ցանկանում էր նրան տեսնել, բայց հայտնի կերպով չէր համարձակվում որևէ բան անել: Իսկ Նինոսի վախճանվելուց կամ Կրետե փախչելուց հետո .... Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում ընծաներով ու նվերներով և շատ աղաչանքներով ու պարգևների խոստումով խնդրում է գալ Նինվե իր մոտ՝ կամ իրեն կին առնել ու թագավորել այն ամենի վրա, որոնց թագավորում էր Նինոսը, և կամ նրա ցանկության կամքը կատարել ու մեծամեծ նվերերով խաղաղությամբ իր տեղը դառնալ:

Երբ պատգամավորները շատ անգամ երթևեկություն կատարեցին և Արան չհամաձայնեց, Շամիրամը սաստիկ չարանալով .... Փութով գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով կոչվեց Այրարատ: Ճակատամարտը պատրաստելիս նա իր զորապետերին պատվեր է տալիս, եթե դեպքը բերի, պետք է ջանալ կենդանի պահել Արային: Կռվի ժամանակ Արայի զորքը ջարդվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կտրիճներից:

ԻԴ
ՏԻԳՐԱՆԻ, ԹԷ Ո՛ՐՊԻՍԻ ԱՄԵՆԱՅՆԻՎ

.... սա ամենեցունց թագավորացն մերոց հարստագոյն և խոհոմագոյն, և արանց այնոցիկ և ամենեցուն քաջ: Որ եւ Կիւրոսի աջակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, եւ զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր: Եւ զսահմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեան, եւ ամենեցունց որ առ իւրովքն էին ժամանակաւք՝ նախանձելի, զկնեացս ըղձալի ինքն եւ ժամանակ իւր:

....Արանց կացեալ գլուխ եւ արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց, եւ զընդ լծով կացեալսս՝ լծադիրս եւ հարկապահանջս կացոյց բազմաց. մթերս ոսկւոյ եւ արծաթոյ եւ քարանց պատուականաց եւ զգեստուց եւ պէս պէս գունից եւ անկուածոց՝ արանց միանգամայն եւ կանանց՝ հասարակաց բազմացոյց. որովք տգեղագոյնքն իբրեւ զգեղաւորս երեւէին սքանչելիք, եւ գեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ դիւցազնացեալք: Հետեւակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, եւ պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, եւ շերտաւորքն ի սուսեր եւ ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանաւք եւ զգեստուք երկաթեաւք պարածածկեալք: Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, եւ որ ի նոցայն պահպանակաց եւ զինուց փայլմունք եւ շողիւնք՝ զթշնամիսն արտահալածել: Խաղաղութեան եւ շինութեան բերող, իւղով եւ մեղու զամենայն հասակ պարարեալ:

Զայս եւ որ այլ այսպիսի բազումք, երեր մերոյ աշխարհիս խարտեաշս այս եւ աղեբեկ ծայրիւ հերաց Երուանդեանս Տիգրան, երեսաւք գունեան եւ մեղուակն, անձնեայն եւ թիկնաւէտն, առոգաբարձն եւ գեղեցկոտն, պարկեշտն ի կերակուրս եւ յըմպելիս, եւ ի խրախճանութիւնս աւրինաւոր. զորմէ ասէին ի հինսն մեր, որք փանդռամբն երգէին, լինել

ԻԴ
ՏԻԳՐԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ Ի՛ՆՉՊԵՍ ԷՐ ԱՄԵՆ ԲԱՆՈՎ

....սա մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով իրեն հնազանդեցրեց, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներիս ցանկալի թե՛ ինքը և թե իր ժամանակը:

....Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ. ոսկու և արծաթի, և՛ պատվական քարերի, և՛ զգեստների, և՛զանազան գույների, և՛ գործվածքների՝ հարստություններ տղամարդկանց և կանանց համար՝ առհասարակ բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն այն ժամանակի համեռմատ աստվածանում էին: Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողները հաջող աղեղնավորներ, լախտերով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով, մերկերը պատվեցին վահաններով ու երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլն ու շողքն բավական էին թշնամիներին հալածելու և վանելու: Նա խաղաղություն և շենություն գցեց, բոլորին լիացրեց յուղով ու մեղրով:

Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր երկրին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը, գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ

սմա եւ ի ցանկութիւնս մարմնոյ չափաւոր, մեծիմաստ եւ պերճաբան, եւ յամենայն որ ինչ մարդկութեան՝ պիտանի: .... Արդարադատ եւ հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի՝ զամենայն ուրուք զկենցաղ՝ մտացն լծակաւ կշռէր: Ո՛չ ընդ լաւագոյնսն խանդայր, եւ ոչ զնուաստսն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարէր զինամոցն իւրոց ի վերայ տարածանել զգեստս:

ԻԹ
ԵԹԷ Ո՛ՐՊԷՍ ՅԱՅՏՆԵՑԱՒ ՆԵՆԳՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԳՐԳՌԵՑԱՒ ՄԱՐՏՆ ՅՈՐՈՒՄ ԵՒ ՄԱՀՆ ԱԺԴԱՀԱԿԱՅ

....Բայց գովեմ զքաջ նահատակն իմ եւ զնիզակաւորն եւ զամենեւին բոլոր անդամովք համեմատն եւ ի գեղեցկութիւն հասակի աւարտեալ. քանզի առոյգ, ամենայնի, ըստ իրեարս պատշաճեալ, եւ ուժով ոչ զոք ունելով իւր զոյգ: .... քանզի ի լինել մարտին նիզակաւ աւրինակ իմն որպէս զջուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն՝ շամփրէ զԱժդահակ յընդարձակ տէգ նիզակին, եւ յամփոփել միւսանգամ զձեռնն՝ արտաքս զկէս մասն թոքոցն հանդերձ զինուն ի զուրս բերէ: Բայց մարտն էր սքանչելի. զի քաջք դիպեալ քաջաց՝ ոչ վաղվաղակի թիկունս ի միմեանց դարձուցանէին. վասն որոյ յերկարեալ քարշէր գործ պատերազմին մինչ եւ ի ժամս ձիգս: Իսկ վախճան գործոյն առնէր մահն Աժդահակայ. եւ այսպիսի դիպուածս ի բարեբախտութիւն յաւելեալ՝ փառս յաճախէր Տիգրանայ:

պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր (հատկություններով), որ պիտանի են մարդուն:.... Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով (ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով), չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը:

ԻԹ
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԵՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆԻ ԴԱՐՁԱՎ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՍՍԿՎԵՑ, ԵՎ ԱԺԴԱՀԱԿԻ ՄԱՀՆ ԱՅԴ ԿՌՎՈՒՄ

…. Բայց գովում եմ իմ քաջամարտիկ նիզակավորին, որ բոլոր անդամներով համաչափ էր, մեկը մյուսին ամեն կերպ պատշաճեցրած, կատարյալ գեղեցիկ հասակով, առույգ և ուժի կողմից իրեն հավասարը չունեցող: ….կռվի ժամանակ Աժդահակի երկաթե ամուր զրահը ինչպես ջուր ճեղքելով՝ Աժդահակին շամփրում է իր նիզակի ընսշդարձակ տեգին, և ձեռքը հետ քաշելիս՝ նրա թոքերի կեսն էլ զենքի հետ դուրս է բերում: Բայց կռիվն սքանչելի էր, որովհետև քաջեր քաջերի հանդիպելով՝ ոչ մեկը մյուսին շուտով թիկունք չէր դարձնում, ուստի պատերազմը երկարում էր բավական ժամեր, մինչև գործին վերջ էր դնում Աժդահակի մահը: Այս բարեբախտ դիպվածը նոր փառք էր ավելացնում Տիգրանին:

ԼԱ
ԹԷ Ո՛ՅՔ ՈՄԱՆՔ ՍՈՐԱ ԶԱՐՄՔ, ԵՒ Ո՛ՅՔ Ի ՍՄԱՆԷ ՈՐՈՇԵԱԼ ՑԵՂՔ

....Այսպէս եւ բազումք անուանեալք Տիգրան, մի է եւ միայնակ սա ի հայկազանցս, որ զԱժդահակ սպան, եւ զտուն նորա ի գերութիւն վարեաց եւ զԱնոյշ մայրն վիշապաց. աւժանդակ՝ կամաւք եւ յաւժարութեամբ զԿիւրոս ունելով՝ զիշխանութիւնն Մարաց եւ Պարսից յինքն յափշտակեաց:

Սորա որդի Բաբ, Տիրան, Վահագն, զորմէ ասեն առասպելք աշխարհիս. «Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր եւ ծովն ծիրանի. երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղեգնիկ. ընդ եղեգան փող ծուխ ելանէր, ընդ եղեգան փող բոց ելանէր. եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ. նա հուր հեր ունէր, ապա թէ բոց ունէր մաւրուս, եւ աչկունքն էին արեգակունք»:

.... Եւ սորա են զարմք Վահունիք. ի սորա կրտսեր որդւոյն Առաւանայ Առաւենեանք: Սորա Առաւան, սորա Ներսեհ, սորա Զարեհ. ի սորա զարմից եւ որ Զարեհաւանիցն կարգան ազգք: Իսկ սորա առաջին Արմոգ, սորա Բագամ, սորա Վահան, սորա Վահէ: Սա ընդվզեալ՝ մեռանի յԱղեքսանդրէ Մակեդոնացւոյ:

ԼԱ
ԹԵ Ո՞ՐՈՆՔ ԵՆ ՍՐԱ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ ԵՎ Ի՞ՆՉ ՑԵՂԵՐ ԶԱՏՎԵՑԻՆ ՍՐԱՆԻՑ

…. Այսպես նաև շատերը կան Տիգրան անունով, սայց սա մեկ և միակն է Հայկազունիներից, որ Աժդահակին սպանեց, և գերեվարեց նրա տուն ու տեղը և Անույշին, վիշապների մորը, և Կյուրոսին, նրա բարի կամքով և հոժարությամբ, օժանդակ ունենալով՝ Մարաց և Պարսից իշխանությունը հափշտակեց:

Սրա որդիներն են Բաբ, Տիրան և Վահագն, որի մասին մեր երկրի առասպելներն ասում են. «Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը, երկնում էր ծովը ծիրանի. Երկունքը բռնել էր ծովում նաև կարմրիկ եղեգնիկին: Եղեգնի փողով ծուխ էր ելնում, եղեգնի փողով բոց էր ելնում. և բոցից դուրս էր վազում մի խարտյաշ պատանեկիկ: Նա հուր մազեր ուներ, բոց մորուք ուներ, և աչիկներն էին արեգակներ»:

…. Սրա սերունդներն են Վահունիները: Սրա կրտսեր որդուց՝ Առավանից ծագել են Առավենյանները: Սրա որդին էր Առավանը, սրանը՝ Ներսեհը, սրանը՝ Զարեհը. սրա սերունդից են Զարեհավանյան կոչված ցեղերը: (Զարեհի) առաջին որդին էր Արմոգը, սրանը՝ Բագամը, սրանը՝ Վահանը, սրանը՝ Վահեն: Սա Աղեքսանդր մակեդոնացու դեմ ապստամբելով՝ մեռնում է նրա ձեռքով:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ
ԲԱՆ ՄԻՋԱԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՅՆ ՆԱԽՆԵԱՅ

Ա

Գրեմ քեզ այժմ եւ որ ինչ առանձին մերոյ աշխարհիս գործք, ...սկսեալ ի թագաւորութենէն Աղեքսանդրի, մինչեւ ցթագաւորութիւն սրբոյ եւ քաջի առնն մեծին Տրդատայ, կարգաւ, որ ինչ եղեալ աստ գործ քաջութեան եւ արութեան, իմաստից եւ կարգաց միոյ միոյ ուրուք ի նոցանէ, որք յարքայէն Պարսից յԱրշակայ եւ ի Վաղարշակայ եղբաւրէ նորա, զոր մերոյ ազգիս թագաւորեցոյց. եւ որ ինչ որք յետ նորա եղեն թագաւորք Աշխարհիս մերոյ ի նորին սերմանէ, որդի ի հաւրէ առնելով զտէրութիւնն՝ անուանեցան Արշակունիք յԱրշակայ. աւելորդքն յազգ եւ ի բազմութիւն աճեցեալք, եւ միակն ըստ կարգի հետեւանայ ի թագաւորութիւն:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ
ՄԻՋԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՆԱԽՆԻՔՆԵՐԻ

Ա

Այժմ քեզ գրում եմ այն առանձին գործերը, ինչ-որ մեր երկրում են կատարվել, սկսելով .... Աղեքսանդրի թագավորությունից մինչև քաջ ու սուրբ մարդու՝ Տրդատի՝ թագավորությունը, ինչ որ այստեղ քաջության և արիության, իմաստության և բարեկարգության գործեր են կատարվել ամեն մի (թագավորի) ձեռքով, (սկսած) Պարսից Արշակ թագավորից և նրա Վաղարշակ եղբորից, որին թագավորեցրեց մեր երկրի վրա, և մեր երկրի մյուս թագավորներից, որ նրանցից հետո եղան նրա զարմից, որոնք տերությունը որդին հորից առնելով կոչվեցին Արշակունիներ՝ Արշակի անունից, որոնցից մեկն ըստ կարգի հաջորդում էր թագավորությանը, իսկ մյուսները, ավելորդները, աճում և բազմանում էին իբրև ցեղ:

Գ
ԹԱԳԱՒՈՐԵՑՈՒՑԱՆԵԼ ԶՎԱՂԱՐՇԱԿ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՅ:

Ի ժամանակին յայնմիկ թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ աշխարհիս Հայոց, զհիւսիսի եւ զարեւմուտս տալով նմա սահմանս: Սա, ... այր քաջ եւ խոհեմ՝ ընդարձակ տիրեաց ի վերայ սահմանաց իւրոց, եւ կարգս կենցաղականս, որչափ մարթէր, սահմանեաց աշխարհիս. եւ նախարարութիւնս եւ նոցին նախարարութեանցն նահապետութիւնս հաստատեաց զարս պիտանիս, որք ի զաւակաց նախնւոյն մերոյ Հայկայ եւ յայլոց:

Գ
ՎԱՂԱՐՇԱԿԻՆ ՀԱՅԱՍԱՆԻ ՎՐԱ:ԹԱԳԱՒՈՐԵՑՆԵԼԸ

Այն ժամանակ Հայաստանի վրա թագավորեցնում է իր Վաղարշակ եղբորը, նրան սահման տալով հյուսիսն ու արևմուտքը: Սա, ... քաջ և խոհեմ մարդ լինելով, անկախորեն տիրեց իր սահմաններում և կենցաղավարության կարգեր հաստատեց մեր երկրում, որքան կարելի էր. սահմանեց նախարարություններ և այս նախարարությունների համար նահապետներ պիտանի մարդկանցից, որոնք ծագում էին մեր նախնի Հայկի սերունդից և ուրիշներից:

Է

ՅՈՐԻՆՈՒԱԾ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ. ԵՒ ԹԷ ՈՒՍՏԻ ԶՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՍՆ ԿԱՐԳԵԱՑ, ԹՈՐՊԷՍ ԵՒ ԶԻԱՐԴ ԿԵՆՑԱՂԱՎԱՐԵԼ ՀՐԱՄԱՅԵԱՑ

....Արդ՝ նախ եւ առաջին աւրինադրէ թագաւորն զինքն եւ զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյ իւրմէ եւ ի թագէ: Եւ զկոչեցեալն Բագարատ, որ ի Հրէիցն, ... տանուտիրական պատիւն ազգին պարգեւելով. եւ իշխել նմա թագ ի գլուխ գնել թագաւորին, եւ կոչել թագադիր, այլ եւ ասպետ ....:

.... Եւ զգեցուցանողս իւր զՀեռէս ի զաւակէ Քանանացւոց. եւ անուն կոչէ ազգին Գնթունիս, ոչ գիտեմ է՛ր աղագաւ: Եւ թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ, արս ընտիրս եւ քաջս, նիզակաւորս եւ սուսերաւորս. եւ գլուխ նահապետութեան նոցա զՄաղխազ ոմն այր բարի եւ սրրտեայ: Բայց անուն ազգին զնախնականն պահէ: Իսկ զԴատ ի զաւակէ Գառնկայ, որ ի Գեղամայ, ի վերայ որսոց արքունականաց կարգէ: ....Եւ զԳաբաղ ոմն անուն ի վերայ կուտից, եւ զԱբէլ սպասարար եւ գահարար. եւ շէնս պարգեւէ նոցա, յորոց անուն կոչին. սապէս եւ նախարարութիւնքն՝ Աբեղեանք եւ Գաբեղեանք:

Եւ զԱրծրունիսդ գիտեմ՝ ոչ Արծրունիս այլ արծուի ունիս, որք արծուիս առաջի նորա կրէին: .... Գիտեմ եւ զԳնունիսդ գինի ունիս, որ զարժանի թագաւորին պատրաստէր զըմպելիսն. որ սքանչելի իմն դիպեալ եղեւ ըստ գործոյն եւ անունն. քանզի պատրաստէր զըմպելիսն արքայի յընտիր եւ ի համեղ գինեաց, ունէր եւ կոչումն անուանն Գին. ընդ որ կարի զուարճացեալ, ասեն Վաղարշակ՝ կարգէ ի թիւ նախարարութեան ազգաց: Եւ են այս երկու տունքս ի զաւակէ Սենեքերիմայ, Արծրունիք եւ Գնունիք:

Ասեմ եւ զՍպանդունիսդ ի վերայ զենարանաց, եւ զՀավունիսդ՝ բազէակիրս եւ բազէակալս, յաղագս ի մայրիս բնակելոյ: .... եւ

Է

ԹԱԳԱՒՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԹԵ Ո՛ՐՏԵՂԻՑ ՀԻՄՆԵՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ Ի՛ՆՉՊԵՍ ՀՐԱՄԱՅԵՑ ԿԵՆՑԱՂԱՎԱՐԵԼ

Արդ՝ նախ և առաջ թագավորը կարգավորում է ինքն իրեն և իր տունը, սկսելով իր գլխից ու թագից: Եւ Բագարատ կոչվածին, որ հրեաներից էր ծագում, ... պարգևում է նրան՝ ցեղի .... տանուտիրական պատիվը, իրավունք տալով թագ դնել թագավորի գլուխը և կոչվել թագադիր, այլևս ասպետ ....:

.... Իրեն զգեստներ հագցնող նշանակում է Զեռեսին, քանանացիների սերնդից և նրա ցեղի անունը դնում է Գնթունի, չգիտեմ ինչ պատճառով: Իսկ իրեն զինված թիկնապահներ է նշանակում Հայկազն Խոռի սերնդից, ընտիր և քաջ նիզակավոր և սուսերավոր մարդկանց, և նրանց նախարարության գլուխ է նշանակում Մաղխազ անունով մի բարի և սրտոտ մարդու. բայց ցեղի անունը պահում է սկզբնականը: Իսկ Դատին, որ Գառնիկի զավակներից էր, Գեղամից սերված, նշանակում է արքունական որսերի վրա: .... Գաբաղ անունով մեկին նշանակում է ձիերի երամակների վրա, իսկ Աբելին (սեղանատան) սպասների և գահերի վրա. նրանց պարգևում է գյուղեր, որոնք նրանց անուններն են կրում, ինչպես նաև նախարարությունները կոչվեցին Աբեղյան և Գաբեղյան:

Իսկ Արծրունիներն իմ գիտցածովս ոչ թե Արծրունի են, այլ արծիվունի, որոնք նրա (թագավորի) առջև արծիվներ էին կրում: .... Գնունիներն էլ իմ գիտցածով գինիունի են, որ թագավորին արժանի ըմպելիքներ էին պատրաստում. և զարմանալի կերպով զուգադիպեցին նրա գործն ու անունը, որովհետև թագավորին ըմպելիքներ էր պատրաստում ընտիր և համեղ գինիներից և անունն էլ Գին էր, որի վրա Վաղարշակը շատ զվարճանալով, ասում են, դասում է նախարարական ցեղերի թվում: Եվ այս երկու տունը, Արծրունիներն

զՀիւնականդ՝ ամարանոցաց պահակս եւ ձիւնակիրս, եւ յառաջադիմութենէ ազատացեալս, որպէս ընտանիք թագաւորաց։

Ը
ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԼԻՆԵԼ Ի ԶԱՒՐԱԿԷ ԱԺԴԱՀԱԿԱՅ ՄԱՐԱՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Բայց յետ կարգելոյ զտուն թագաւորին՝ երկրորդ թագաւորութեանն լինէր ի զաւակէ Աժդահակայ, Մարաց եղելոյ թագաւորի, որ այժմ Մուրացեանդ կոչեն։ Քանզի ոչ ասեն նահապետաց ազգին՝ Մուրացեան տէր, այլ Մարացւոցն տէր։ Եւ թողու ի վերայ նորա զամենայն շէնս որք ի գերութենէն Մարաց։

.... զգունդն որ ի Միսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն որ ասի Հնարակերտ. եւ աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղունաք. զի աղու ձայնէին զնա։ Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի եւ քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթեւէն Վաղարշակայ։ Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց եւ Գարդմանացւոց եւ Ծաւդէացւոց եւ Գարգարացւոց իշխանութիւնն։

.... Իսկ զայր խոժոռագեղ եւ բարձր եւ կոպտարանձն եւ տափակաքիթ, խորակն եւ դժնահայեաց, ի զաւակէ Պասքամայ, ի հայկայ թոռնէ, Տուրք անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահադիմութեանն ձայնէին Անգեղեայ, վիթխարի հասակաւ եւ ուժով, հաստատէ կուսակալ արեւմտից. եւ յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն։

.... Բայց զկնի դորա հաստատէ զմեծ նախարարութիւնն Ծոփաց ի Չորրորդն կոչեցեալ Հայս։ Այլ եւ զնախարութիւնն Ապահունեաց եւ զՄանաւազեանն եւ զԲզնունականն ի նոյն զաւակացն Հայկայ. ի բնակչացն գտեալ զպերճագոյնսն՝ տեարս կարգէ, յանուն շինից եւ գաւառաց կոչելով։

ու Գնունիները, Սենեքերիմի սերունդներից են։

Ասեմ նույնպես, որ Սպանդունիներին նշանակում է սպանդանոցների վրա, իսկ Հավունիներին՝ բազեակիրներ և բազե բռնողներ, որովհետև ապրում էին անտառներում։ .... Չյունականներին էլ նշանակում է ամառանոցների պահապաններ և ձյունակիրներ, որոնք առաջադիմելով ազնվականություն ստացան, իբրև թագավորներին ընտանի մարդիկ։

Ը
ՄԱՐԱՑ ԱԺԴԱՀԱԿ ԹԱԳԱՒՈՐԻ ՍԵՐՆԴԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՇԱՆԱԿԵԼԸ

Թագավորի տունը կարգավորելուց հետո՝ թագավորության երկրորդ նշանակում էր Աժդահակի՝ մարաց թագավորի սերնդից, որ այժմ կոչվում են Մուրացյան, որովհետև այդ ցեղի նահապետներին չեն ասում Մուրացյան տեր, այլ Մարացիների տեր։ Նրան թողնում է բոլոր գյուղերը, որտեղ (ապրում էին) գերի բերված մարացիները։

.... Սիսակից սերված գունդը, որ ժառանգեց Աղվանից դաշտը և այս դաշտի լեռնակողմը, Երասխ գետից մինչև Հնարակերտ կոչված ամրոցը, աշխարհն էլ Աղվանք կոչվեց նրա քաղցր բնավորության պատճառով, որովհետև նրան աղու էին ասում։ Այս (Սիսակի) սերնդից էր և այս անվանի և քաջ Առանը, որ Պարթև Վաղարշակի կողմից բյուրավոր կուսակալ նշանակվեց։ Ասում են, որ սրա զավակներից են սերվել Ուտեացիների ազգը և Գարդմանցիների, Ծավդեացիների ու Գարգարացիների իշխանությունները։

.... Իսկ Տորքին, որ սերված էր Հայկի թոռն Պարսամից, մի տգեղ, բարձր, կոպիտ կազմվածքով, տափակ քթով, փոս ընկած աչքերով, դժնյա հայացքով մարդու, որին սաստիկ տգեղության պատճառով կոչում էին Անգեղյա, որ վիթխարի հասակ և ուժ ուներ, արև-

.... Այլ մոռացաք եւ զդժնեայ Սլաք անուանեալ այր, զոր ոչ կարեմ հաւաստեաւ ասել, ի Հայկա՞յ եթէ յառաջադունից քան զնա եղելոց յաշխարհիս, ... բայց էր այր քաջ: Զսա կարգէ սակաւ արամբք պահել զլեառնն եւ որսալ զքօշսն, որք անուանեցան Սլկունիք: Այսպէս եւ ի նոյն իրս եւ զՄիանդակն անդառնալի. եւ ի սմանէ Մանդակունիք:

.... Բայց յորդւոցն Վահագնի գտեալ արս, որք ինքնակամ խնդրեցին զմեհենից պաշտամունսն՝ պատուէ մեծապէս, ի ձեռն տալով նոցա զքրմութիւնն. եւ կարգէ ընդ առաջին նախարարութիւնսն, եւ անուն կոչէ Վահունիս: Սապէս եւ զԱռաւենեանսն եւ Զարեհաւանեանսն գտեալ ի զարմից առաջնոց թագաւորացն՝ կարգէ ի նոյնանուանս աւանս:

Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ հաստատէ բդեաշխ մեծ եւ կուսակալ յարեւմտից հարաւոյ, յեզերս սահմանացն Ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ, զաւառս պարգեւելով զԱրձն եւ որ շուրջ զնովաւ, եւ զլեառնն Տաւրոս, որ եւ Սիմ, եւ զԿղեսուրն ամենայն:

մուտքի կուսակալ է նշանակում, իսկ ցեղի անունը կոչում է Անգեղ տուն՝ երեսի տգեղության պատճառով:

.... Սրանից հետո (Վաղարշակը) հաստատում է Ծոփաց նախարարությունը Չորրորդ կոչված Հայքում: Նույնպես նա հաստատում է Ապահունյաց նախարարությունը, ինչպես նաև Բզնունականը Հայկի նույն սերունդներից, և բնակիչներից առաջավորներին գտնելով՝ տերեր է նշանակում՝ գյուղերի և գավառների անուններով նրանց կոչելով:

.... Բայց մոռացանք Սլաք կոչված դժնյա մարդուն, որի մասին հաստատ չեմ կարող ասել, արդյոք Հայկի՞ց էր ծագել թե նրանից առաջ մեր երկրում ապրողներից .... բայց նա քաջ մարդ էր: Սրան քիչ մարդկանցով նշանակում էլ եռը պահպանելու և քոշեր որսալու. սրանք կոչվեցին Սլկունիներ: Այսպես և նույնպիսի գործերի վրա նշանակու�է անդառնալի Միանդակին, որից սերվեցին Մանդակունիները:

.... Եվ Վահագնի զավակներից գտնելով մարդիկ, որոնք ինքնակամ խնդրեցին մեհյանների սպասավորությունը, նրանց շատ պատվում է, նրանց է հանձնում քրմությունը, դասում է առաջին նախարարությունների շարքում և կոչում է Վահունիներ: Նույնպես գտնելով, որ Առավենյանները և Զարեհավանյանները առաջին թագավորների սերունդներից են, նշանակում է նույնանուն ավաններում:

Իսկ Շարաշանին, որ Սանասարնից էր, մեծ բդեշխ և կուսակալ է նշանակում արևմտյան-հարավում, Ասորեստանի սահմանների մոտ, Տիգրիս գետի ափին, նրան գավառներ պարգևելով Արձնը և նրա շրջակայքը, Տավրոս լեռը, որ է Սիմը, և ամբողջ Կղեսուրը:

ԼԶ
ՅԱՂԱԳՄ ՆՈՐՈԳՄԱՆ ՄԾԲԻՆ ՔԱՂԱՔԻ, ԵՒ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՍԱՆԱՏՐԿՈՅ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՆՈՐԻՆ

Բայց թէ ընդէ՛ր Սանատրուկ կոչեցաւ՝ ասելի է: Քանզի յաւուրս ձմերայնոյ ճանապարհորդեալ ի Հայս քոյր Աբգարու Աւգէ՝ պատահէ բքոյ ի լերնիս Կորդուաց. զամենեսեան մրրիկն, մինչ ոչ գիտել ընկեր զընկեր՝ ընդ ո՛ր վարեցաւ: Իսկ դայեկին նորա Սանոտայ, քեռ Բիւրատայ Բագրատունւոյն, կնոջ Խոսրենայ Արծրունւոյ, առեալ զմանուկն, քանզի տղայ էր, եդ ի մէջ ստեանց իւրոց, մնալով ի ներքոյ ձեանն զերիս տիւս եւ զերիս գիշերս: .... Բայց որչափ մեք եղաք վերահասու՝ այսպէս է. շուն սպիտակ ընդ խնդրակսն լեալ, պատահեաց մանկանն եւ դայեկին: Արդ՝ կոչեցաւ Սանատրուկ, ի դայեկէն զանուանակոչութիւնն առեալ, որպէս թէ տուրք Սանոտայ:

ԼԶ
ՄԾԲԻՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐՈԳՄԱՆ, ՍԱՆԱՏՐՈՒԿԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Բայց թե ինչու՞ նա Սանատրուկ կոչվեց, պետք է ասել. Աբգարի քույր Ավգեն ձմեռ ժամանակ դեպի Հայաստան ճանապարհորդելիս բքարգել է լինում Կորդվաց լեռներում. մրրիկը բոլորին ցրեց այնպես, որ ոչ մեկը չգիտեր, թե ընկերն ու՛ր քշվեց: Իսկ նրա դայակ Սանոտը, Բյուրատ Բագրատունու քույրը, Խոսրեն Արծրունու կինը, երեխային, որ դեռ շատ փոքր էր, ստինքների մեջ առնելով՝ երեք օր ու երեք գիշեր մնաց ձյան տակ: .... Բայց որքան մենք վերահասու եղանք, բանն այսպես է եղել. որոնող մարդկանց հետ եղել է մի սպիակ շուն, որ պատահել է երեխային և դայակին: Այդ պատճառով էլ նա կոչվեց Սանատրուկ, անունը դայակից ստանալով, իբրև թե Սանոտի տված:

Խ
ԹԷ ՈՐՊԷ՛Ս ՇԻՆԵԱՑ ԶԲԱԳԱՐԱՆ ՔԱՂԱՔ ԿՌՈՅ

Բայց Երուանդայ շինեալ զքաղաքն իւր եւ փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւրայ, ուրոյն կռոցն, զոր ոչ օգուտ իւր համարեալ յիւրն փոխել ի քաղաքն, զի մի՛ ի գալ եւ ի զոհել անդ աշխարհի՝ ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն. այլ հեռագոյն ի նմանէ իբր քառասուն ասպարիսաւ զհիւսիսով՝ նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, եւ անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա գրագնաց յօրինեալ է զկազմութիւն. եւ փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմաւիր: Եւ մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր:

Խ
ԹԵ Ի՛ՆՉՊԷՍ ՇԻՆԵՑ ԿՈՒՌՔԵՐԻ ՔԱՂԱՔ ԲԱԳԱՐԱՆԸ

Բայց Երվանդն իր քաղաքը շինելով՝ Արմավիրից այնտեղ փոխադրեց ամեն ինչ բացի կուռքերից, որովհետև իրեն համար օգտակար չհամարեց նրանց էլ իր քաղաքը փոխադրել, որ մի գուցե երբ ժողովուրդը զոհաբերության համար այնտեղ գա, քաղաքն զգուշությամբ չպահվի: Ուստի նրանից հյուսիս, մոտ քառասուն ասպարեզ հեռու, Ախուրյան գետի վրա, շինեց մի փոքր քաղաք նման իր քաղաքին և կոչեց Բագարան, այսինքն թե բագիններն այնտեղ են տեղավորված. և այնտեղ տեղափոխեց Արմավիրում եղած բոլոր կուռքերը: Շինեց նաև մեհյաններ և իր Երվազ եղբորը քրմապետ նշանակեց:

ԽԱ
ՎԱՄՆ ՏՆԿԵԼՈՅ ՁԱՆՏԱՌՆ, ՈՐ ԿՈՉԻ ԾՆՆԴՈՅ

Տնկէ եւ մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն, եւ որմովք ամրացուցանէ, արգելլով ի ներքս այծեմունս երագունս, եւ զեղանց եւ զեղջերուաց ազգ, եւ ցիռս եւ վարազս. որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր թագաւորն յաւուրս որսոց: Եւ անուանէ զանտառն՝ Ծննդոց:

ԽԲ
ՎԱՄՆ ՁԵՌԱԿԵՐՏԻՆ, ՈՐ ԿՈՉԻ ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐՏ

Քաղցր է ինձ ասել եւ յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յաւրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ եւ չքնաղ յաւրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ եւ պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիր: Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց եւ հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝ իբր զարտեւանանց խիտ եւ գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձեւ՝ արդարեւ գեղաւոր կուսից յանից դարաւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնաւտից պարզութեան գեղեցկութիւն: Իսկ գետն բերանացեալ դարաւանդաւք ափանցն՝ զերկթերթիսն նշանակէ շրթունս: Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. եւ արդարեւ բերրի եւ թագաւորական դաստակերտն:

Զայս ամենայն զգործեցեալսն Երուանդայ պարգեւէ մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց, որպէս մտերմաց եւ արեան կցորդաց ազգին Արշակունեաց:

ԽԱ
ԾՆՆԴՈՅ ԿՈՉՎԱԾ ԱՆՏԱՌԸ ՏՆԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տնկում է նաև մի մեծ անտառ գետի հյուսիսային կողմում, պարիսպներով ամրացնում է և ներսում արգելափակում է արագավազ այծյամներ, եղնիկների և եղջերուների ցեղեր, ցիռեր, վարազներ, որոնք աճելով ու բազմանալով անտառը լցրին, և նրանցով թագավորն ուրախանում էր որսի օրերին: Անտառը նա կոչում է Ծննդոց անտառ:

ԽԲ
ԵՐՎԱՆԴԱԿԵՐՏ ԿՈՉՎԱԾ ՁԵՌԱԿԵՐՏԻ ՄԱՍԻՆ

Ինձ քաղցր է պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նույն Երվանդը շինեց գեղեցիկ և չքնաղ հորինվածքով: Որովհետև մեծ հովիտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիբը, իսկ բնակության շուրջը կազմում է ծաղկոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջը աչքի մյուս բոլորակը: Իսկ այգիների բազմությունը նմանվում էր խիտ արտևանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարաձև դիրքը իսկապես համեմատվում էր գեղեցիկ կույսերի հոնքերին: Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը (հիշեցնում էին) ծնոտների գեղեցիկ ողորկությունը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պատկերացնում էր մի բերան, իր երկու շրթունքներով: Եվ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայացքն ուղղել է թագավորանիստ բարձրավանդակի վրա: Արդարև բերրի և թագավորական դաստակերտ:

Երվանդի այս բոլոր շինածները Տրդատ Մեծը պարգևում է Կամսարականների ցեղի մարդկանց, իբրև իր մտերիմներին և Արշակունյաց ցեղի արյունակիցներին:

ԽԹ

ՅԱՂԱԳՍ ՇԻՆՈՒԱԾՈՅ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ

.... Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ եւ Մեծամաւր, եւ հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանել Արտաշատ: Զեռնտու լինի նմա եւ Երասխ փայտիւք մայրեաց. վասն որոյ անաշխատ եւ երագ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան, եւ փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արմեդիեայ եւ զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն: Եւ յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէիցն, որ փոխեալ էին անդր յԱրմաւրայ, եւ նստուցանէ զնոսա յԱրտաշատ: Նա եւ զամենայն վայելչութիւն քաղաքին Երուանդայ, զոր տարեալ էր յԱրմաւրայ եւ զոր անդրէն արարեալ նորա՝ փոխէ յԱրտաշատ. եւ առաւել եւս յինքենէ յաւրինէ իբրեւ զքաղաք արքայանիստ:

ԾԶ

ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԲԱԶՄԱՄԱՐԴԱՑՈՅՑ ԱՐՏԱՇԷՍ ԶԱՇԽԱՐՀՍ, ԵՒ ՍԱՀՄԱՆՍ ՀԱՍՏԱՏԵԱՑ

Յետ ամենայն առաքինութեանց եւ գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս գիւղից եւ ազարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, եւ բնակեցուցանելով ի լերինս եւ ի հովիտս եւ ի դաշտս: Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, եւ պնակաձեւ փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. եւ չորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ:

.... Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային եւ ոչ դաշտային, յաղագս շինութեան երկրիս:

ԽԹ

ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

.... Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Արաքսը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրին հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ: Արաքսն էլ օգնում է նրան անտառի փայտով: Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը: բայց Ապողոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս՝ ճանապարհին մոտ: Երվանդի քաղաքից դուրս է բերում հրեա գերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում նստեցնում է Արտաշատում: Նաև Երվանդի քաղաքի ամբողջ վայելչությունները, ինչ որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ որ հենց ինքն էր շինել՝ բերում է Արտաշատ, և ավելի շատ բան էլ իր կողմից շինելով՝ (այդ քաղաքը) սարքավորում է իբրև արքայանիստ քաղաք:

ԾԶ

ԹԷ Ի՛ՆՉՊԷՍ ԱՐՏԱՇԵՍԸ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ԲԱԶՄԱՄԱՐԴԱՑՐԵՑ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԱՑ

Բոլոր առաքինություններից և ճշմարիտ գործերից հետո Արտաշեսը հրամայում է գյուղերի և ագարակների սահմանները որոշել, որովհետև նա մեր երկիրը բազմամարդացրեց շատ ազգեր (ուրիշ երկրներից) բերելով, որոնց բնակեցրեց լեռներում, հովիտներում և դաշտերում: Սահմանների համար նա նշաններ սահմանեց. հրամայեց տաշել քառակուսի ձևով քարեր, մեջերը պնակի նման փոսցնել և թաղել հողի մեջ, իսկ նրանց վրա կանգնեցնել քառակուսի կոթողներ՝ գետնից քիչ բարձր:

....Բայց ասում են, թե Արտաշեսի ժամանակ մեր Հայաստանում անմշակ հող չմնաց, ոչ լեռնային և ոչ դաշտային, այնքան շենացել էր երկիրը:

ԾԷ
ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆՆ ԱՄԱՏՈՒՆԵԱՅ

Յաւուրս սորա ասեն եկեալ զազգն Ամատունեաց ի կողմանցն արեւելից Արեաց աշխարհին: Բայց են սոքա բնութեամբ հրեայ, ի Մանուեայ ումեմնէ. որոյ որդի էր մեծահասակ եւ ուժեղ, Սամսոն անուն Կոչեցեալ, որպէս սովորութիւն է Հրէից՝ ըստ յուսոյ զնախնեաց կոչել զանուանս: ....Բայց թէ յի՛նչ պատճառաց գալուստ նոցա այսր՝ ոչ գիտեմ, այլ պատուին յԱրտաշիսէ գեղիւք եւ դաստակերտաւք, եւ անուանին Ամատունիք, որպէս թէ Եկք: Եւ կէսք ի Պարսից՝ Մանուեանս զնոսա կոչեն յանուն նախնւոյն:

ԾԷ
ԱՄԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ասում են, թե սրա ժամանակ է եկել Ամատունիների ցեղը արյաց երկրի արևելյան կողմերից: Բայց սրանք բնիկ հրեաներ են, մի ոմն Մանուից, որ մի ուժեղ և մեծահասակ որդի ուներ Սամսոն անունով, ինչպես հրեաների մեջ սովորութիուն կա՝ նախնիների անունը դնել ըստ հույսի: .... Իսկ թե ի՞նչ պատճառով նրանք մեր երկիրն եկան՝ չգիտեմ, միայն թե Արտաշեսից պատիվներ են գտնում գյուղերով ու դաստակերտներով և կոչվում են Ամատունիներ, այսինքն եկվորներ: Իսկ պարսիկների մեծ մասը նրանց Մանույան են կոչում, նրանց նախնիի անունով:

ԿԳ
ՅԱՂԱԳՍ ՏՐԴԱՏԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ ԵՒ ԱՆՈՒԱՆՑ ԱԶԳԻ ՆՈՐԱ ԱՌԱՋՆՈՅ

.... Բայց գիտեա՛, զի ի թողուլ ազգին Բագրատունեաց զաւրէնս հարցն՝ նախ խժական ժառանգեցին յորջորջումն–Բիւրատ եւ Տրդատ եւ այլ այսպիսի կոչմունս, զրկեալ ի նախնական անուանցն, որպէս կոչէին յառաջ քան զուրանալն–Բագադիա, Տուբիա, Մենեքիա, Ասուդ, Սափատիա, Վազարիա, Ենանոս: Եւ ինձ թուի, թէ որ այժմդ կոչին Բագրատունիք Բագարատ՝ Բագադիա է դա, եւ Ասուդ՝ Աշոտ. դոյնպէս եւ Վազարիա՝ Վարազ, որպէս Շամբատ՝ Սմբատ:

ԿԳ
ՏՐԴԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ, ԵՎ ՆՐԱ ՑԵՂԻ ՀԻՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

.... Բայց գիտցիր, որ Բագրատունյաց ցեղի մարդիկ իրենց հայրենի կրոնը թողնելիս սկզբում օտարոտի անուններ սկսեցին կրել, ինչպես Բյուրատ, Տրդատ և այլ այսպիսի անուններ, զրկվելով իրենց նախնական անուններից, որ կրում էին ուրանալուց առաջ, ինչպես Բագադիա, Տուբիա, Սենեքիա, Ասուդ, Սափատիա, Վազարիա, Ենանոս: Եւ ինձ թըվում է, թե Բագրատունիների այժմ գործածած անուններից Բագրատը Բագադիա է, Ասուդը, Աշոտ, նույնպես և Վազարիան (դարձել է) Վարազ, Շամբատը՝ Սմբատ:

ԶԱ
ԵԹԷ ՈՒՍՏԻ՛ ԵՒ ԶԻԱ՛ՐԴ ԱԶԳ ՄԱՄԻԿՈՆԷԻՑ

Վախճանեալ Արտաշրի որդւոյ Սասանայ՝ թողու զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Շապհոյ: Ի սորա աւուրս ասեն եկեալ ի Հայս նախնի ազգին Մամիկոնէից յարեւելից հիւսիսականէն, ի քաջատոհմիկ եւ ի գըլխաւոր աշխարհէ եւ ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին ասեմ իսկ զՃենացն. որ ունին զրոյցս այսպիսիս:

Յամս կատարման կենացն Արտաշրի, Արբոկ ոմն Ճեն-բակուր, որպէս ասի ի նոցա լեզու պատիւ թագաւորութեան. սորա երկու դայեկորդիք, Բղդոխ եւ Մամգոն անուն կոչեցեալ, մեծ նախարարք: Եւ չարախաւսեալ Բղդոխայն զՄամգոնայն՝ հրամայեաց թագաւորն Ճենաց Արբոկ սպանանել զՄամգոնն: Զոր իմացեալ Մամգոնայն՝ .... փախուցեալ աղխիւ իւրով անկանի առ Արտաշրի թագաւորն Պարսից: Եւ Արբոկ հրեշտակս առաքէ խնդրել զնա. եւ ի չլսելն Արտաշրի՝ պատերազմ ի վերայ նորա յարիւնէ թագաւորն Ճենաց: Եւ իսկոյն մեռեալ Արտաշրի՝ թագաւորէ Շապուհ:

Արդ՝ թէպէտ եւ ոչ տայ Շապուհ զՄամգոնն ի ձեռս տեառն իւրոյ, այլեւ ոչ յԱրեաց երկրին թողու. բայց ամենայն աղխիւն իւրով առաքէ զնա իբրեւ զվտարանդի առ գործակալս իւր որ ի Հայս: .... Եւ զի քան զամենայն բնակեալս ի վերայ երեսաց երկրի խաղաղասէր ասեն զոլ զազգն Ճենաց՝ յանձն առնու առնել զհաշտութիւն ....:

.... Իսկ Մամգոնայ յոչ կամաց եկեալ յաշխարհս մեր՝ հանդիպեցաւ զալստեանն Տրդատայ. եւ .... ամենայն աղխիւն իւրով ընդ առաջ գնաց նմա մեծաւ պատարագաւ. եւ Տրդատ ընկալաւ զնա, բայց ընդ իւր ի պատերազմ ոչ էառ յերկիրն Պարսից. այլ ետ տեղի աղխի նորա եւ ռոճիկ ի կերակուր, փոփոխելով տեղի ի տեղւոջէ ցբովանդակ ամս:

ԶԱ
ԹԵ Ո՛ՐՏԵՂԻՑ ԵՎ Ի՛ՆՉՊԵՍ Է ԾԱԳԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ՑԵՂԸ

Սասանի որդի Արտաշիրը վախճանվելով, պարսից թագավորությունը թողնում է իր Շապուհ որդուն: Ասում են, որ սրա ժամանակ է Հայաստան եկել Մամիկոնյանների ցեղի նախնին, արևելյան հյուսիսային քաջատոհմիկ և գլխավոր աշխարհից, Ճենաստանից, որ ես հյուսիսային ազգերի մեջ առաջինն եմ համարում: Նրանց մասին այսպիսի զրույց կա:

Արտաշիրի կյանքի վերջին տարիներում եղել է Արբոկ անունով մի Ճեն-բակուր-նըբանց լեզվով այսպես է կոչվում թագավորական տիտղոսը: Սա ունեցել է երկու դայակորդի, Բզդոխ և Մամգուն անունով, որոնք եղել են մեծ նախարարներ: Բզդոխը Մամգունի մասին չարախոսում է, և Ճենաց Արբոկ թագավորը հրամայում է Մամգունին սպանել: Մամգունն այս լսելով՝.... իր աղխով փախչում ապավինում է պարսից Արտաշիր թագավորին: Արբոկը պատգամավորներ է ուղարկում նրան պահանջելու, և որովհետև Արտաշիրը չի համաձայնում (տալ), Ճենաց թագավորը պատրաստվում է նրա դեմ պատերազմի: Արտաշիրը շատ շուտով մեռնում է, և թագավորում է Շապուհը:

Արդ՝ թեպետ Շապուհը Մամգունին չի հանձնում նրա տիրոջ ձեռքը, բայց և այնպես չի թողնում Պարսկաստանում, այլ բոլոր աղխովն իբրև աքսորական ուղարկում է Հայաստան իր գործակալների մոտ: .... Եվ որովհետև, ինչպես ասում են, աշխարհիս երեսին ապրող բոլոր ազգերից ամենախաղաղասերը Ճենաց ազգն է, (թագավորը) հաշտվում է:

.... Իսկ Մամգոնը ոչ իր կամքով Հայաստան գալով՝ պատահեց Տրդատի գալստյանը, և .... իր բոլոր աղխով ընդառաջ գնաց մեծ ընծաներով: Տրդատը նրան ընդունեց, բայց հետը պատերազմ չտարավ Պարսկաստան, այլ բնակության տեղ տվեց նրա աղխի համար և ապրուստի միջոց, բավական երկար տարիներ տեղից տեղ փոխելով:

ԶԲ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՏՐԴԱՏԱՅ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՀԱՒԱՏԱԼՆ

.... Իսկ քաջին Տրդատայ երագապէս եւ բազում ճակատս տուեալ, նախ ի Հայս եւ ապա ի Պարսս՝ իւրով անձամբ առնէր զյաղթութիւնն: Որ ի միում նուազի, առաւել քան զԵղիանանն զայն ի հնումն, կանգնաց զնիզակն յոգնական համաթիւ վիրաւորաց: Դարձեալ յերկրորդումն՝ կորովեացն Պարսից զփորձ առեալ զսաստկութեան սկային եւ կուռ վառուածոցն, բազում վիրաւք պատեալ զձին՝ սատակեցին նետաձգութեամբք. որոյ զարկուցեալ յերկիր ընկենոյր զարքայն: Իսկ նորա յարուցեալ եւ հետի յարձակեալ, փոխանակ իւր զբազումս ընկենոյր ի թըշնամեացն, եւ զմիոյ ուրումն զձին կալեալ, արիաբար աշտանակէր: Դարձեալ յերկրորդին միւսանգամ կամաւոր լեալ հետի՝ սուսերաւ զերամակս փղացն պուղէր: Եւ այսպիսի նահատակութեամբք յամեալ ի Պարսս եւ յԱսորեստան՝ անդր եւս քան զՏիզբոն յարձակի:

ԶԵ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՏՐԴԱՏԱՅ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՅԱՂՈՒԱՆՍ, ՅՈՐՈՒՄ ՄԻՋԱԿՏՈՒՐ ԱՐԱՐ ԶԹԱԳԱՒՈՐՆ ԲԱՍԼԱՅ

Իսկ թագաւորն Տրդատայ ամենայն Հայաստանաւք իջեալ ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի. եւ ի խառնել երկոցունց կողմանցն՝ յերկուս ճեղքէ զամբոխ թշնամեացն, սկայաբար շահատակելով: Ոչ կարեմ ասել զերագութիւն ձեռինն, ո՛րպէս անբաւք ի նմանէ յերկիր անկեալ թաւալագլոր խաղային, աւրինակ իմն ի գեղեցիկ ցանցորդէ լի ձկամբք յերկիր թաւթափեալ ցանցոյն, կայտռէին յերեսս երկրին: Զոր տեսեալ թագաւորին Բասլաց՝ մաւտ հասանէ յարքայն. Եւ Հանեալ յասպազինէն զներդեայ քեմխտապատ պարանն, եւ կորովութեամբ ձգեալ յետուստ

ԶԲ
ՏՐԴԱՏԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԱԳԱՎՈՐ ԵՂԱԾ ԺԱՄԱՆԱԿ, ՆԱԽՔԱՆ ՀԱՎԱՏԱԼԸ

....Իսկ քաջ Տրդատը արագ-արագ բազմաթիվ ճակատամարտեր տալով Հայաստանում և ապա Պարսկաստանում՝ ինքն անձամբ տանում էր հաղթությունը: Մի անգամ նա (ավելի մեծ քաջություն ցույց տվեց) քան հնումը Եղիանանը և իր նիզակը կանգնեցրեց նույնքան թվով վիրավորների օգնական: Մի երկրորդ անգամ՝ Պարսից կորովի զորականները փորձով գիտենալով հսկայի սաստիկ ուժը և կուռ զրահների ամրությունը, բազմաթիվ նետեր արձակելով ու ձին վիրավորելով սատկեցրին, որ գետին փռվելով թագավորին վեր է գցում: Իսկ նա ոտքի կանգնելով և հետիոտն հարձակվելով, թշնամիներից շատերին գետին է գլորում և մեկի ձին բռնելով արիաբար հեծավ: Մի երկրորդ անգամ նա կամավորապես ձիուց իջավ և հետիոտն հարձակվելով՝ սրով ցրեց փղերի երամակները: Այսպիսի քաջագործություններով բավական երկար մնաց Պարսկաստանում և Ասորեստանում, և Տիզբոնից էլ այն կողմն անցավ:

ԶԵ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՏՐԴԱՏԱՅ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՅԱՂՈՒԱՆՍ, ՅՈՐՈՒՄ ՄԻՋԱԿՏՈՒՐ ԱՐԱՐ ԶԹԱԳԱՒՈՐՆ ԲԱՍԼԱՅ

Իսկ Տրդատ թագավորը Հայաստանի բոլոր զորքերով Գագարացիների դաշտն իջնելով՝ հանդիպում է հյուսիսականներին և ճակատամարտ է տալիս: Երբ երկու կողմերն իրար են խառնվում, նա հսկայի նման հարձակվելով, թշնամիների բազմությունը երկուսի է ճեղքում: Չեմ կարող նկարագրել նրա ձեռքի արագությունը, թե ի՛նչպես անհամար մարդիկ նրանից զարկվում, թավալվում, գետին էին ընկնում, ինչպես հմուտ ձկնորսի ձկնե-

կողմանէ՝ ճահ դիպեցուցանէ յուս ձախակողմանն եւ յանութ աջակողմանն. զի էր վերացուցեալ զձեռնն ածել ումեք սուսերաւ. եւ ինքն վառեալ վերտ պահպանակաւք, ուր ոչ զծէին նետք: Եւ քանզի ոչ կարաց շարժեալ ձեռամբ զհսկայն՝ զլանջաւք առ երիվարին. եւ ոչ այնչափ ինչ շութափեաց մտրակել զերիվարն, քան թէ ահեակ ձեռամբն ի ներդեայն աճապարեալ սկային, և սաստկութեամբ ուժոյն զիւրեաւ ցանցեալ՝ ճահ դեպեցուցանէր զերկսայրին, և ընդ մէջ կտրէր զայրն եւ զոյգ ընդ պարանոցին զգլուխ երիվարին:

Իսկ զաւրացն ամենայնի տեսեալ զթագաւորն իւրեանց եւ զզաւրաւորն միջակտուր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ՝ ի փախուստ դառնային:

ՂԲ
ՅԱՂԱԳՍ ՎԱԽՃԱՆԻ ՏՐԴԱՏԱՅ ԹԱԳԱՒՈՐԻ, ԸՆԴ ՈՐՈՒՄ ԵՒ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՈՒԹԻՒՆ

.... Սա յետ հաւատոցն որ ի Քրիստոս, ամենայն առաքինութեամբք բացափայլեալ՝ եւս քան զեւս յաճախէր յաղագս Քրիստոսի գործ եւ բան. սաստելով եւ հաւանեցուցանելով զմեծամեծ նախարարսն, միանգամայն եւ զամենայն բազմութիւն ռամկին, լինել արդարեւ Քրիստոսի. որպէս զի վկայեսցեն հաւատոցն՝ ամենեցուն եւ գործքն:

րով լիքը ցանցից ձկները գետին են թափվում ու վխտում հողի երեսին: Բասիլների թագավորն այս տեսնելով՝ մոտ է գալիս (հայոց) թագավորին, հանում է ձիու վրայից ջլերից հյուսված կաշեպատ պարանը և հետևի կողմից ուժեղապես նետելով, հաջողությամբ գցում է նրա ձախ ուսից մինչև աջ կողմի անութը, որովհետև (այդ միջոցին Տրդատը) ձեռքը բարձրացած էր՝ սրով մեկին խփելու համար. նա կրում էր զրահ պինդ պահպանակներով, որի վրա նետերը նույնիսկ գիծ չէին թողնում: Բասիլների թագավորը չկարողանալով հսկային տեղից շարժել ձեռքով (քաշելով)՝ (պարանը) իր ձիու լանջին գցեց, բայց չկարողացավ այնքան շուտ մտրակել ձին, որքան որ շուտ հսկան աչապարելով ձախ ձեռքով բռնեց պարանը և սաստիկ ուժով ցնցելով դեպի ինքը քաշեց և երկսայրի սրի հաջող հարվածով կտրեց կես արավ մարդուն և նրա հետ ձիու պարանոցն ու գլուխը:

…. Իսկ բոլոր զորքերը տեսնելով, թե ի՛նչպես իրենց թագավորն ու զորավոր կռվողը միջակտուր եղավ այնպիսի ահավոր բազուկից, փախուստի դիմեցին:

ՂԲ
ՏՐԴԱՏ ԹԱԳԱՎՈՐԻ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐԻ ՀԵՏ ԵՎ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

.... Սա Քրիստոսին հավատալուց հետո ամեն տեսակ առաքինություններով փայլելով՝ ավելի ու ավելի ջանքեր էր անում խոսքով ու գործով Քրիստոսի հավատի համար. Սաստելով և համոզելով մեծամեծ նախարարներին, այլև ռամիկ մարդկանց ամբողջ բազմությունը, իրապես Քրիստոսի հավատացյալ լինելու, որպեսզի նրանց գործերը համապատասխանեն նրանց հավատին:

ՀԱՏԱԾ ԵՐՐՈՐԴ
ԱՒԱՐՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՐՈՅ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Ի
ՅԱՂԱԳՄ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ԵՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆՆ ՈՐ Ի ՆՄԱՆԷ:

Յերրորդ ամի թագաւորութեանն Արշակայ եկաց եպիսկոպոսապետ Հայոց մեծն Ներսեհ, որդի Աթանագինեայ, որդւոյ Յուսկան, որդւոյ սրբոյն Գրիգորի: Եւ ի Բիւզանդիոյ դարձեալ ի Կեսարիայ, եւ եկեալ ի Հայս՝ զամենայն կարգս ուղղութեան հարցն իւրոց նորոգեաց: .... Ժողով արարեալ եպիսկոպոսաց և համաւրէն աշխարհականաւք, կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց զողորմածութիւն, խլելով և զանգթութեանն արմատ: .... Քանզի բորոտք հալածեալ լինէին, իբր պիղծ համարեալ յաւրինաց. և զուրուկս փախստեայս առնէին, զի մի՛ ի նոցանէ յայլս փոխեսցի ախտն. որոց դադարք՝ անապատք և ամայիք, ծածկոյթ՝ վէմք և մացառք, ոչ յումեքէ գտանելով մխիթարութիւն թշուառութեանցն: Առ այսոքիւք և հաշմք անդամովք ոչ խնամեալ լինէին, և հիւրք անծանաւթք ոչ ընդունէին, և աւտարք ոչ ժողովէին:

Իսկ նորա հրամայեալ՝ ըստ գաւառաց շինել աղքատանոցս ի խորշս եւ ի զերծ տեղիս. զի փոխանակ հիւանդանոցացն Յունաց լինիցին ի մխիթարութիւն մարմնոց վշտացելոց: Եւ բաժանեաց ի նոսա զաւանս եւ զագարակս, պտղաբերել յարդեանց անդաստանաց եւ ի կթից արաւտականաց եւ ի գեղմանց. զի պաշտեսցեն զնոսա հարկաւ, բացէ ի բաց, նոքա մի՛ ելցեն ըստ բնակութիւնս իւրեանց: .... Սահմանէ եւ յամենայն գիւղս վանս շինել, զի լինիցին աւտարանոցք, եւ տեղի սննդեան որբոց եւ ծերոց, եւ անուանողաց տածումն: Շինէ եւ յանապատ եւ յանմարդ տեղիս եղբայրանոցս եւ մենաստանս եւ յատկանձնակաց խրճիթս, եւ հայր և տեսուչ կարգէ զՇաղիտայ եւ զ Եպիփան եւ զԵփրեմ, եւ զԳինդ որյազգէն

ՀԱՏՎԱԾ ԵՐՐՈՐԴ
ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ

Ի
ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍԻ ԵՎ ՆՐԱ ՍՈՒԾԱԾ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արշակի թագավորության երրորդ տարում հայոց եպիսկոպոսապետ եղավ Աթանագինեսի որդի Մեծն Ներսեսը. Աթանագինեսը Հուսիկի որդին էր, սա Վրթանեսի որդին, իսկ այս վերջինը էր սուրբ Գրիգորի որդին: Բյուզանդիայից Կեսարիա վերադառնալով՝ նա եկավ Հայաստան և իր հայրերի բոլոր ուղղության կարգերը նորոգեց: .... Նա եպիսկոպոսների և աշխարհականների ժողով գումարեց, կրոնական սահմաններով հաստատեց ողորմածությունը, արմատախիլ արեց անգթությունը: ... Որովհետև բորոտները հալածվում էին, իբրև օրենքով պիղծ ճանաչված մարդիկ, ուրուկներին էլ փախուստի էին ենթարկվում, որպեսզի ախտը նրանցից ուրիշների վրա չփոխադրվի. նրանց կացարանները անապատներն էին և ամայի տեղերը, նրանց ծածկույթը՝ քարերն ու մացառները, իրենց թշվառության մեջ նրանք ոչ ոքից մխիթարություն չէին գտնում: Բացի դրանցից, հաշմանդամները չէին խնամվում, անծանոթ հյուրերը չէին ընդունվում, օտարականները պաշտպանություն չէին գտնում:

Իսկ նա հրամայեց, որ ամեն գավառում շինեն աղքատանոցներ առանձնացած անբնակ տեղերում, որպեսզի հունաց հիվանդանոցների նման մխիթարություն լինեն մարմնով վշտացածներին: Այս (հիվանդանոցների) վրա բաշխեց ավանները և ագարակները, որպեսզի իրենց արտերի արդյունքներից, արածող անասունների կթից ու բրդից բաժին հանեն և պարտավորաբար նրանց պետքերը հոգան, հեռվանց հեռու, իսկ նրանք դուրս չգան իրենց բնակության (սահմանված) շենքերից: .... Նույնպես սահմանում է, որ բոլոր գյուղերում իջևաններ շինվեն օտարականների հա-

Սլկունեաց, եւ զայլ ոմանս։

Եւ զերկուսս զայսոսիկ յազգաց նախարարացն բառնայ. մի՝ զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ազահելոյ սեպհական ազատութեանն առնէին. եւ միւս՝ որ ի վերայ մեռելոց գործէին ոճիրս ըստ հեթանոսական սովորութեանն։ Եւ էր այնուհետեւ տեսանել զաշխարհս մեր ոչ որպէս զբարբարոսս այլանդակեալս, այլ իբրեւ զքաղաքացիս համեստացեալս։

ԽԷ
ՅԱՂԱԳՍ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՄԵՍՐՈՊԱՅ

Տեսեալ թէ ի վերջ հասեալ է թագաւորութիւնն Հայոց, եւ զխռովութիւնն նիւթ իւրոյ համբերութեանն գտեալ Մեսրոպայ, որ էր ի Հացեկաց Տարաւնոյ, սնեալ եւ ուսեալ առ մեծին Ներսիսի, եւ յետ ելից նորա յաշխարհէ՝ ի դրանն արքունի կարգեալ քարտուղար. սա սիրեաց զմիայնակեցութեան վասն. որպէս ասաց ոմն, թէ ի նաւահանգիստ փութայ նաւ խռովեալ, եւ անձն ժուժկալ խնդրէ զանապատ. նոյնպէս եւ նորա փախուցեալ յաշխարհական զբազմանց, եւ ընկեցեալ յետս զմարմնական պատիւն՝ զհետ ընթանայր երկնաւորին։ Եւ երթեալ ի գաւառն Գողթան բնակէ, զմիայնակեցութեան վարս ստացեալ։ Եւ որ ի նմա դաւղեալ աղանդն հեթանոսական, թագուցեալ յաւուրցն Տրդատայ մինչեւ ցայն ժամանակս, եւ ապա յայտնեցաւ ի վատթարել թագաւորութեանն Արշակունեաց, զայն եբարձ աւգնականութեամբ իշխանի գաւառին, որում անուն էր Շաբիթ։ Ուր նշանք աստուածայինք լինէին, որպէս առ սրբովն Գրիգորիւ. հալածական լեալ դեւք մարմնաւոր տեսեամբ անկանէին ի կողմանս Մարաց։ Եւ ոչ ինչ պակաս յայնցանէ արարեալ գտանի եւ ի Միւնեաց աշխարհին, օգնականութեամբ նորին իշխանին որ կոչէր Վաղինակ։

Եւ ի վարդապետել երանելւոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ըն-

մար, սնունդի տեղեր որբերի և ծերերի համար և խնամք չքավորների համար: Շինում է նաև անապատ և անմարդաբնակ տեղերում եղբայրանոցներ և մենաստաններ և մենակների (ճգնողների) համար խրճիթներ: Սրանց վրա հայր և վերահսկիչ է նշանակում Շաղիտային, Եպիփանին, Եփրեմին և գինդին Սըլկունյաց ցեղից և ուրիշ մի քանիսին:

Եւ նախարարական ցեղերերի միջից վերացնում է այս երկու բանը. - առաջին՝ խնամիությունը մերձավոր ազգականների միջև, որ գործադրում էին սեպուհական ազնվականության համար աչք տնկելով և երկրորդ՝ որ մեռածների վրա ոճիրներ էին գործում հեթանոսական սովորությամբ: Այնուհետև մեր երկրի մարդիկ արդեն բարբարոսների պես այլանդակված չէին, այլ քաղաքացիների նման համեստացած:

ԽԷ
ԵՐԱՆԵԼԻ ՄԵՍՐՈՊԻ ՄԱՍԻՆ

Տեսնելով, որ հայոց թագվորության վերջը հասել է, Մեսրոպը (երկրի) խռովություններն իր համբերության նյութ դարձրեց: Նա Տարոնի Հացեկաց գյուղից էր, սնվել ու սովորել էր մեծն Ներսեսի մոտ և նրա վախճանվելուց հետո արքունական դռանը քարտուղար էր նշանակվել: Նա սիրեց մենակեցության վարքը, ինչպես ասել է մեկը, թե ալեկոծված նավը շտապում է դեպի նավահանգիստը, իսկ ժուժկալող մարդը անապատ է փնտրում: Այսպես էլ նա, աշխարհային զբաղմունքներից փախչելով, դեն գցելով մարմնական պատիվը, գնում է երկնավորի հետևից: Գնում է Գողթն գավառը և ապրում մենակյացի կյանքով: Այստեղ թաքնված հեթանոսական աղանդը, որ Տրդատի օրերից մինչև այդ ժամանակ ծածուկ էր մնում և Արշակունյաց թագավորության տկարանալու ժամանակը երևան եկավ, նա վերացրեց գավառի իշխանի օգնությամբ, որի անունն էր Շաբիթ: Այստեղ աստվածային հրաշքներ երևացին, ինչպես

թերցող եւ թարգմանիչ. եւ եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր՝ զանխուլ ի ժողովրդոցն լինէր, յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ: Վասն որոյ եդ ի մտի հնարեալ գտանել նշանագիրս Հայոց լեզուիս. եւ արկեալ զանձն ի ջանս՝ պէս պէս փորձիւք տաժանէր:

ԾԲ
ՅԱՂԱԳՍ ԴԱՆԻԵԼԵԱՆ ՆՇԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՆ

Յայնմ ժամանակի հիւանդացեալ Արկադ, եւ շարժմանց ահագնից եւ հրկիզութեանց եղեալ ի Բիւզանդիոն, որ յաղագս մեծին Յովհաննու՝ շփոթեալ լինէր թագաւորութիւնն յունաց. եւ զաւրքն ընդ միմեանս պատերազմէին եւ ընդ Պարսս: Վասն որոյ Վռամ հրամայեաց Վռամշապհոյ մերում թագաւորին իջեանել ի Միջագետս, զի խաղաղացուցեալ կարգեսցէ զնոսա, եւ համար երկաքանչիւրոցն հատցէ գործակալացն: Եւ իջեալ նորա ի կարգել զայս ամենայն՝ ոչ փոքր ինչ կրէր աշխատութիւն յաղագս քարտուղարի. զի մինչ գնաց Մեսրոպ յարքունական դրանէն՝ ոչ զոք ի ճարտարաց գտանէր անդ ի դպրաց, քանզի պարսկականաւն վարէին գրով: Վասն որոյ մատուցեալ առ արքայն քահանայի ուրումն Հաբէլ անուն կոչեցեալ, խոստանայր հայկականացս լեզուաց առնել նշանագիր, յարմարեալ ի Դանիելէ եպիսկոպոսէ, յիւրմէ մերձաւորէ: Զորով անփոյթ արարեալ արքայի, եւ ելեալ ի Հայս՝ գտանէ ժողովեալ առ մեծն Սահակ եւ Մեսրոպ զամենայն եպիսկոպոսունս, հոգալ զգիւտ դպրութեան Հայոց, զոր զգացուցին արքային. եւ նա պատմեաց նոցա զասացեալսն վանականին: Զոր իբր եւ լուան՝ թախանձէին զնա փոյթ զայնպիսեացն առնել պիտոյից:

Վասն որոյ առաքեաց հրեշտակութեամբ զայր մի պատուական յաշխարհիս եւ հաւատարիմ իւր, Խաղունի ազգաւ, Վահրիճ անուն, յոյժ փափագող նորին գործոյ, առ Հաբէլն այն: Զոր առեալ, եւ երթեալ նովաւ հան-

սուրբ Գրիգորի ժամանակ. մարմնավոր կերպարանքով դևերը, հալածված, ընկնում էին Մարաց կողմերը: Սրանից ոչ պակաս բաներ արեց և Սյունիքում նրա Վաղինակ իշխանի օգնությամբ:

Եվ երանելի Մեսրոպն ուսուցանում էր, ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե՛ կարդացողը և թե թարգմանողը, և եթե մի ուրիշն էր կարդում, երբ ինքն այնտեղ չէր լինում, ժողովրդին անհասկանալի էր մնում՝ թարգմանիչ չլինելու պատճառով: Ուստի նա միտքը դրեց մի հնարք գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել, և աշխատանքի անձնատուր լինելով՝ զանազան փորձերով չարչարվում էր:

ԾԲ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Այդ ժամանակ Արկադը հիվանդացավ, Բյուզանդիոնում մեծն Հովհաննեսի պատճառով ահագին շարժում և հրդեհներ ծագեցին և Հունաց թագավորությունը շփոթության մեջ ընկավ. զորքերը պատերազմում էին իրար և պարսիկների դեմ: Ուստի Վռամը մեր Վռամշապուհ թագավորին հրամայեց իջնել Միջագետք, որպեսզի խաղաղեցնելով կարգի բերի նրանց և երկու կողմերի գործակալների (վեճերը) վճռի: Երբ նա գնաց այս ամենը կարգավորելու, քիչ նեղություն չէր կրում քարտուղարի պատճառով, որովհետև այն օրից, որ Մեսրոպն արքունական դռնից հեռացավ, նա ոչ մի ճարտար դպիր գտնել չէր կարողանում, որովհետև պարսկական գիր էին գործածում: Այս առիթով նրան ներկայացավ Հաբել անունով մի քահանա և խոստացավ հայերեն լեզվի տառեր ստեղծել՝ որ հարմարեցրել էր Դանիել եպիսկոպոսը, իր մերձավորը: Թագավորն անփույթ գտնվեց, և Հայաստան գալով տեսավ, որ բոլոր եպիսկոպոսները ժողովվել են Մեծն Սահակի և Մեսրոպի մոտ, հայերեն գրերի գյուտի մասին հոգալու: Երբ թագավորին իմաց տվին այս մասին, նա

դերձ քաջ հմտացեալ ի Դանիելէ, կարգեալ ըստ ձեւոյ աւրինակի յունականին զվաղընջուցն գրեալ շարագիր տառից՝ եկեալ ետուն ցմեծն Սահակ եւ Մեսրոպ: Որոց ուսեալ, եւ թեւածելով ընդ նոսա տղայոց զամս սակաւս, տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրաւք ստոյգ հոլովել զհեգենայ բառից հայկականաց հագներգաբար, մուրացածոյիւն այնուիկ գծագրութեամբ:

ԾԳ
ՅԱՂԱԳՍ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՆՇԱՆԱԳՐԱՅՆ, Ի ՎԵՐՆՈՅՆ ՏՈՒԵԼՈՅ ՇՆՈՐՀԵԱՅ

Զկնի այսորիկ ինքնին Մեսրոպ իջանէ ի Միջագետս հանդերձ աշակերտաւք առ նոյն Դանիէլ, եւ ոչ աւելի գտեալ քան զառաջինն՝ անցանէ եւ յԵդեսիայ, առ Պղատոն ոմն ճարտասան հեթանոս, իշխան դիւանին: Եւ նորա խնդութեամբ ընկալեալ, եւ զոր ինչ միանգամ ի միտ առնոյր բան հայերէն յինքն առեալ, եւ շատ ջանացեալ եւ ոչ աւգտեալ՝ զտգիտութիւն խոստովանեաց հռետորն: Եւ զայլ ոմն ասելով յոյժ հասու, վարդապետ իւր եղեալ յառաջագոյն, եւ ապա առեալ զճարտարացն գրեան ի նոյն դիւանէն Եդեսեայ, եւ գնացեալ քրիստոնէութեան հաւատայ, որոյ անուն Եպիփանոս. զոր խնդրեալ գտցես լցուցանել զփափագդ քո: Յայնժամ Մեսրոպայ օգնականութիւն ի Բաբիլոսէ եպիսկոպոսէ գտեալ, եւ անցեալ ընդ Փիւնիկէ ի Սամոս դիմէ. քանզի Եպիփանու վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռոփանոս, հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեան, որ ի Սամոս էր միայնացեալ: Առ սա երթեալ Մեսրոպայ, եւ յայսմ եւս անշահ մնացեալ՝ յաղաւթս ապաւինի: Եւ տեսանէ ոչ ի քուն երազ եւ ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջք գծին՝ կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երեւութացաւ, այլ եւ հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա

նրանց պատմեց ինչ որ վանականն ասել էր: Երբ լսեցին, սկսեցին նրան թախանձել, որ այդ կարևոր բանին հոգ տանի:

Ուստի նա Վահրիճ անունով մի մարդու, Խաղունի ցեղից, որ պատվված էր Հայաստանում, իրեն հավատարիմ էր և շատ փափագում էր այդ գործին, պատգամավոր ուղարկեց հիշյալ Հաբելի մոտ: Նրան հետն առած՝ միասին գնացին և Դանիելից լավ հմտացան վաղուց գրված տառերի շարքին, որ դասավորված էր հունարենի օրինակով, և բերին մատուցին Մեծն Սահակին և Մեսրոպին, որոնք սովորելով ու երեխաների էլ վարժեցնելով քիչ տարիներ, համոզվեցին, որ այդ նշանագրերը, այդ մուրացված գծագրությունը, ընդունակ չէր վանկ առ վանկ ճիշտ արտահայտել հայերեն բառերի հնչյունները:

ԾԳ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏՐՎԵՑԻՆ ԵՐԿՆԱՅԻՆ ՇՆՈՐՀՈՎ

Սրանից հետո ինքը Մեսրոպը աշակերտներով իջնում է Միջագետք նույն Դանիելի մոտ, և նախկինից ավելի բան չգտնելով՝ անցնում է Եդեսիա, Պղատոն անունով մի հեթանոս ճարտասանի մոտ, որ դիվանի պետն էր: Նա ուրախությամբ ընդունեց, և ինչքան որ հայերեն խոսքեր միտքը բերում էր՝ հավաքելով և շատ ջանք թափելով օգուտ չունեցավ հռետորը, և խոստովանեց իր տգիտությունը: Բայց նա ասաց, թե ինքն առաջ ունեցել է մի ուսուցիչ, շատ հմուտ մարդ, որ հետո ճարտարների գրվածքներն Եդեսիայի դիվանից առնելով գնացել ու քրիստոնեություն է ընդունել, անունը Եպիփանոս. «Նրան ասաց, փնտրիր գտիր, որ քո փափագը լցնե»:

Այն ժամանակ Մեսրոպը Բաբիլոս եպիսկոպոսից օգնություն գտնելով՝ Փյունիկեով անցնում դիմում է Սամոս, որովհետև Եպիփանոսը մեռած է լինում, թողնելով մի աշակերտ Հռոփանոս անունով, որ հունարեն գրության հրաշալի արվեստ ուներ և առանձ

հաւաքեցաւ: Եւ յարուցեալ յաղաւթիցն՝ եստեղծ գնշանագիրս մեր, հանդերձ Հռոփանոսիւ կերպաձեւեալ զգիրն առ ձեռն պատրաստ Մեսրոպայ, փոխատրելով զհայերէն աթութայսն ըստ անսայթաքութեան սիւղաբայից Հելլենացւոց: Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն, բովանդակելով զքսան եւ զերկու յայտնիսն, եւ զնոր Կտակս յեղու ի հայ բան, նա եւ աշակերտք նորա Յոհան Եկեղեցացին եւ Յովսէփ Պաղնացի, միանգամայն եւ զարուեստ գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացն:

ԾԴ
ՅԱՂԱԳՍ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ, ՎՐԱՑ ԵՒ ԱՂՈՒԱՆԻՑ

.... Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ, եւ բերեալ զնշանագիր մերոյ լեզուիս, եւ հրամանաւ Վռամշապհոյ եւ մեծին Սահակայ ժողովեալ մանկունս ընտրեալս, ուշեղս եւ քաջասունս, փափկաձայնս եւ երկարոգիս, եւ դպրոցս կարգեաց յամենայն գաւառս. եւ ուսոյց զբնաւ կողմանս բաժնոյն Պարսից, բայց ի Յունաց մասնէն, որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան, վիճակեալք յաթոռն Կեսարու, վարել Յունական դպրութեամբ եւ ոչ ասորւով:

Իսկ Մեսրոպայ երթեալ յաշխարհն Վրաց՝ առնէ եւ նոցա նշանագիրս տուեցելովն ի վերուստ շնորհաւն, հանդերձ Ջաղայիւ ոմամբ թարգմանաւ հելլէն եւ հայ լեզուի, ձեռնտու լինելով արքայի նոցա Բակրոյ եւ եպիսկոպոսին Մովսիսի: Եւ ընտրեալ մանկունս եւ յերկուս բաժանեալ դասս՝ եւ վարդապետս թողու նոցա յաշակերտաց իւրոց զՏէր Խորձենացի, եւ Մուշէ Տարաւնացի:

Եւ ինքն յԱղուանս իջեալ առ Արսվաղէն թագաւոր նոցա եւ առ եպիսկոպոսապետն Երեմիայ. որոց կամաւ յանձն առեալ զվարդապետութիւն նորա՝ ետուն մանուկս ընտիրս: Եւ կոչեալ զԲենիամին ոմն շնորհաւոր թարգ-

նացել էր Սամոսում: Մեսրոպը գնում է սրա մոտ և սրանից էլ շահ չգտնելով՝ ապավինում է աղոթքի: Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ոչ միայն երևաց, այլև բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավաքվեցին ինչպես մի ամանում: Եվ աղոթքից վեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագրերը, Հռոփանոսի հետ ձևակերպելով իր պատրաստված գրերը, հայերեն տառերը ճիշտ հանդիպեցնելով հունարենի հնչյուններին: Եվ իսկույն ձեռնարկեցին թարգմանության, խորհրդաբար սկսելով (Սողոմոնի) Առակներից, ամբողջ քսաներկու հայտնի գրքերը և նոր կտակարանը փոխադրում է հայերեն լեզվի, նույնպես և նրա աշակերտները, Հոհան Եկեղեցացին և Հովսեփ Պաղնացին, միևնույն ժամանակ իր ավելի փոքր աշակերտներին սովորեցնել տալով գրչության արվեստը:

ԾԴ
ՀԱՅՈՑ, ՎՐԱՑ ԵՎ ԱՂՎԱՆԻՑ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

.... Այս ժամանակներն եկավ Մեսրոպը, բերելով մեր լեզվի նշանագրերը: Նա Վռամշապուհի և Մեծն Սահակի հրամանով ընտրությամբ երեխաներ ժողովեց, ուշիմ, առողջակազմ, լավ ձայնով և երկար շնչառությամբ. բոլոր գավառներում դպրոցներ հիմնեց և պարսից բաժնի բոլոր կողմերը սովորեցրեց, բացի հունական մասից, որոնք ձեռնադրության փոխարեն տուժեցին, որովհետև Կեսարիայի աթոռին ենթարկվելով՝ պետք է հունարեն գիր և լեզու գործածեին և ոչ ասորերեն:

Մեսրոպը Վրաց աշխարհ գնալով՝ նրանց համար էլ, իրեն տրված երկնային շնորհով, ստեղծում է նշանագրեր, մի ոմն Ջաղայի հետ, որ հունարեն և հայ լեզուների թարգ-

ման, զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց տէր, ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ. որովք ստեղծ գնշանագիրս կոկորդախաւս աղխազուր խժական խեցբեկագունին այնորիկ Գարգարացւոց լեզուին: Եւ վերակացու թողեալ զաշակերտ իւր զՅովնաթան, միանգամայն եւ քահանայս կացուցեալ դրանն արքունի՝ ինքն դառնայ ի Հայս. եւ գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յաստուրոյն, յոչ լինելոյ յունի: Քանզի նախ ի Մեհրուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային պարսիկ վերակացուքն յոյն ումեք ուսանել դպրութիւն յիւրեանց մասինն, այլ միայն ասորի:

ԿԷ
ՓՈԽՈՒՄՆ ՅԱՇԽԱՐՀԷ ՄԵԾԻՆ ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՅ ԵՐԱՆԵԼԻՈՅ

.... Յայնժամ հասեալ մեծին Սահակայ հիւանդութիւն մահու. եւ առեալ զնա աշակերտացն՝ տարան ի գիւղն որ կոչի Բլուր. որպէս թէ ի վայր եւ յընտանեգոյն եւ ի զերծ տեղի մատուցեալ ի զաւրացն Պարսից կտտողաց զնոսա: Ուր եւ եհաս վախճան, կեցեալ եպիսկոպոսապետութեամբն ամս յիսուն եւ մի, սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ Խոսրովայ արքայի Հայոց մինչեւ ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի եղելոյ Պարսից թագաւորի, յելս ամսոյն նաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեանն: Որ մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող. պատուեաց զպատկերն, պատկառեաց ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանսն. եւ այսքան կենցաղավարեաց՝ իբր զի ոչ պակասութեան իրիք մասն ի ծերութենէն եղանիլ, եւ ոչ յախտից առընդունել: Զորմէ պարտ էր մեզ հրաշափառագունիւ անցանել բանիւ, ըստ արժանի սրբոյ հաւրն դրուատից:

.... Բայց զպատուական մարմին նորա բարձեալ սարկաւագապետին նորին Երեմանիչ էր, օժանդակություն գտնելով նրանց Բակուր թագավորից և Մովսես եպիսկոպոսից: Ընտրում է երեխաներ, բաժանում է երկու դասի, և նրանց համար ուսուցիչներ է թողնում իր աշակերտներից Տեր Խորձենացուն և Մուշե Տարոնացուն:

Ինքն իջնում է Աղվանք, նրանց Արսվաղեն թագավորի և Երեմիա եպիսկոպոսապետի մոտ, որոնք հոժարությամբ հանձն առան նրա ուսումը և նրան հանձնեցին ընտիր երեխաներ: Նա կանչեց Բենիամին անունով մի շնորհալի թարգմանչի, որին անմիջապես արձակեց Սյունիքի տեր երիտասարդ Վասակը, իր Անանիա եպիսկոպոսի միջոցով, որոնց (օգնությամբ) նա նշանագրեր ստեղծեց գարգարացիների այն կոկորդաձայն, կոշտ, խժական, կոպիտ լեզվի համար: Այնտեղ վերակացու թողնելով իր Հովնաթան աշակերտին, նա արքունական դռանը քահանաներ նշանակելով՝ ինքը վերադառնում է Հայաստան և տեսնում է, որ Մեծն Սահակ զբաղված է (ս. գրքի) թարգմանությամբ ասորերենից, հունարեն չգտնվելու պատճառով: Որովհետև նախ Մեհրուժանն այրել էր հունարեն գրքերը մեր ամբողջ երկրում, իսկ այնուհետև, երբ Հայոց աշխարհը (երկու մասի) բաժանվեց, պարսիկ վերակացուներն իրենց մասում ոչ ոքի թույլ չէին տալիս հունարեն սովորել, այլ միայն ասորերեն:

ԿԷ
ՄԵԾՆ ՍԱՀԱԿԻ ԵՎ ԵՐԱՆԵԼԻ ՄԵՍՐՈՊԻ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՑ ՓՈԽՎԵԼԸ

.... Այս ժամանակ Մեծն Սահակի վրա մահվան հիվանդություն հասավ. Աշակերտները նրան առան փոխադրեցին Բլուր կոչված գյուղը, իբրև մի ավելի սովոր և պարսից զորքերից ազատ տեղ, որոնք նրանց նեղություն էին տալիս: Այստեղ հասավ նրա վախճանը հիսունմեկ տարի եպիսկոպոսապետություն անելուց հետո, սկսելով հայոց վերջին Խոսրով թագավորի երրորդ տարուց մին-

միայի հանդերձ աշակերտակցաւքն եւ տիկնաւն Մամիկոնենից, նորին նուաւ, որում անուն էր Դստրիկ, կին Վարդանայ ստրատելատի՝ տարեալ հանգուցին յիւրեանց գիւղն յԱշտիշատ, որ է ի գաւառին Տարաւն: Եւ ցրուեալ աշակերտաց նորա կրաւնաւորաց սպուդէից ի գաւառս իւրաքանչիւր՝ շինեցին վանորայս, ժողովեալ եղբարս:

Եւ զկնի վեց ամսոց անցելոց կատարման սրբոյն Սահակայ, յերեքտասանն մեհեկանի եւ երանելին Մեսրոպ յաշխարհէ փոխեցաւ ի Վաղարշապատ քաղաքի, գերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք: Քանզի ամբարտաւանութիւն եւ մարդահաճութիւն առ ի նորա վարս տեղի գտանել երբէք ոչ կարացին. այլ հեզ եւ լաւակամ եւ բարեխորհուրդ գոլով, եւ երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր: Վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտաւք ծննդական, բանիւ պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ:

.... Որպէս լուայ ի բազմաց եւ ի հաւատի արանց, եթէ եկաց լոյս շողապէս ընդ աղաւտ նշան խաչի ի վերայ տանն, ուր երանելին գհոգին աւանդեաց. ոչ փոյթ ընդ փոյթ լեալ էանց ծագումն, կամ սակաւուց տեսանելի, այլ ամենայն բազմութեանն. մինչեւ յոլովից մկրտել անհաւատից: Յայնժամ լեալ աղմուկ շփոթի յամբոխութեանն, բաժանեալ յերիս գունդս, վասն հանգուցանելոյ զպարկեշտն զայն մարմին եւ նախ քան զմահն կրթեալ ի մեռելութիւն: Կէսքն ասէին տանել ի բնագաւառն իւր ի Տարաւն, եւ ոմանք ի նախ աշակերտեալն Գողթն, եւ այլքն անդէն ի նմին ի Վաղարշապատ քաղաքի ի սրբոցն դիրս: Բայց յաղթեաց քաջն Վահան Ամատունի, զի էր զաւրաւոր հաւատովք եւ ճոխութեամբ մարմնաւորաւ. վասն զի ի ժամանակին յայն-

չն պարսից Հազկերտ Երկրորդ թագավորի առաջին տարվա սկիզբը, նավասարդ ամսի վերջին, իր ծննդյան օրը: Որ Մահկանացու ծնվելով՝ անմահ թողեց իր հիշատակը, պատվեց պատկերը, պատկառեց կոչումից, կյանքից կյանք փոխադրվեց, և այնպես կենցաղավարեց այնքան տարի, որ ծերությունից ոչ մի տեսակ պակասություն չերևաց նրա վրա և ոչ որևէ ախտի ենթարկվեց: Նրա մասին պետք էր փառավոր ճառ գրել, դրվատել մեր սուրբ հորը, ինչպես նրան արժան է:

.... Բայց նրա պատվական մարմինը վերցրին նրա սարկավագապետ Երեմիան իր աշակերտակիցներով և նրա հարսը՝ Դստրիկ անունով Մամիկոնյան տիկինը, որ Վարդան ստրատելատի կինն էր, տարան թաղեցին իրենց Աշտիշատ գյուղում, որ գտնվում է Տարոն գավառում: Նրա աշակերտները, կրոնավոր սպուդեները իրենց գավառները ցրվելով՝ վանքեր հիմնեցին և եղբայրներ ժողովեցին:

Սուրբ Սահակի վախճանվելուց վեց ամիս հետո, մեհեկան ամսի տասներեքին, երանելի Մեսրոպն էլ այս աշխարհից փոխվեց Վաղարշապատ քաղաքում, գերազանցելով բոլոր առաքինի մարդկանցից, որպիսիք այն ժամանակ կային: Որովհետև ամբարտավանությունը և մարդահաճությունը նրա վարքում երբեք տեղ չգտան, այլ հեզ, բարյացակամ և բարեմիտ լինելով՝ երևում էր բոլորին երկնայինների սովորությամբ զարդարված: Որովհետև նա հրեշտակի տեսք ուներ, բեղմնավոր միտք, պայծառ էր խոսքով, գործերով ժուժկալ, մարմնով փառահեղ, սովորություններով աննման, խորհրդակցությամբ մեծ, հավատով ուղիղ, հույսով համբերող, սիրով անկեղծ, ուսուցանելիս անձանձրույթ:

.... Ինչպես լսեցի բազմաթիվ և արժանահավատ անձերից, խաչի ձևով աղոտ լույս էր շողում այն տան վրա, որտեղ երանելին հոգին ավանդեց. և շուտով չանհետացավ այս շողքը, քչերին տեսանելի չեղավ, այլ ամբողջ բազմությանը, այնպես որ շատ անհավատներ մկրտվեցին: Այս ժամանակ ժողովված

միկ ի նա էր հաւատացեալ Պարսից զհազարապետութիւն աշխարհիս հայոց. որոյ բարձեալ՝ տարաւ զնա արժանի յուղարկմամբ յիւր գիւղն Օշական: Եւ նոյն տեսիլ լուսեղէն խաչին ի վերայ դագաղացն երթայր յանդիման ամենայն ժողովրդեանն, մինչեւ ի հանգիստ զնա փոխեցին Վահան եւ Թաթիկ նորին արբանեակ. եւ ապա նշանն աներեւոյթ լինէր: Իսկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն ետեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելւոյն Մեսրոպայ՝ նորին աշակերտն Յովսէփ քահանայ ի Վայոց ձորոյ, ի Խոդոցիմ գեղջէ:

բազմության մեջ աղմուկ և շփոթություն ծագեց՝ այն պարկեշտ մարմինը թաղելու (տեղի) պատճառով, որ դեռ մահից առաջ մեռելության վարժեցրել էր իրեն: Բաժանվել էին երեք խմբի. մի մասն առաջարկում էր տանել Տարոն, իր ծննդավայրը, մյուսները՝ տանել Գողթը, որտեղ առաջին անգամ ուսուցել էր, մի մասն էլ առաջարկում էր թաղել հենց Վաղարշապատ քաղաքում, սրբերի հանգստարանում: Բայց հաղթեց քաջ Վահան Ամատունին, որ ավելի ջերմեռանդ էր հավատով և հզոր էր մարմնավորապես, որովհետև պարսիկներն այդ ժամանակ նրան էին վստահել մեր Հայոց աշխարհի հազարապետությունը: Նա մարմինը վերցրեց և արժանավայել հուղարկավորությամբ տարավ իր գյուղը՝ Օշական: Եվ նույն լուսեղեն խաչի երևույթը դագաղի վրա գնում էր դեմ հանդիման ժողովրդին, մինչև նրան հողին հանձնեցին Վահանը և նրա սպասավոր Թաթիկը, որից հետո նշանն աներևույթ եղավ: Իսկ եպիսկոպոսապետության աթոռը իբրև տեղակալ նստեց երանելի Մեսրոպի հրամանով նրա աշակերտը, Հովսեփ քահանան, որ Վայոց ձորից Հոդոցի գյուղից էր:

ԵՂԻՇԷ
ՎԱՄՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ
ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Երևանի համալսարանի հարատարակչություն, 1989

ԵՂԻՇԵ
ՎԱՐԴԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՄԱՍԻՆ
(թարգմանությունը և ծանոթագրությունները
Ե. Տեր-Մինասյանի)

Երևանի համալսարանի հարատարակչություն, 1989

ԱՌԱՋԻՆ ՅԵՂԱՆԱԿ. ԺԱՄԱՆԱԿՆ

Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուց. և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին, սկիզբն արարեալ յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ, և կռուէր մինչն յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Վռամշապհոյ: Եւ իբրև զնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի: Վասն որոյ և աստուածպաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբան տէրութեանն Շապհոյ արքայից արքայի մինչն յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եգիտ սատանայ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, և ելից զնա իբրև զպատկանդարան դեղեալ նետիւք: Եւ սկսաւ եղջեւր ածել անօրէնութեամբ, գոռոզանայր, և գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի, և թշնամի և հակառակորդ երևեցուցանէր իւր զհաւատացեալքս ի Քրիստոս, և նեղեալ տագնապէր անխաղաղասէր կենօք:

Քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն և արիւնհեղութիւն, վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, եթէ յո՞ թափեցից զդառնութիւն թիւնաւոր, կամ ո՞ւր բացատրեցից զբազմութիւն նետիցն: Եւ առ յոյժ յիմարութեան իբրև զգազան կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց, եհար մինչ ի քաղաքն Մծբին, և բազում գաւառս Հռոմոց աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զգերի, և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին: Իսկ երանելին Թէոդոս կայսր, քանզի էր խաղաղասէր

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ. ԺԱՄԱՆԱԿԸ

Երբ Արշակունյաց ցեղը վերացավ, Հայոց աշխարհին տիրեց պարսից Սասանի ցեղը, որ իր իշխանությունը վարում էր մոգերի կրոնի համաձայն և շատ անգամ կռիվ էր մղում նրանց հետ, ովքեր չէին ընդունում նույն կրոնը, սկսելով Տիրանի որդի Արշակ թագավորի օրերից կռվում էր մինչև Վռամշապուհի որդի հայոց Արտաշես արքայի վեցերորդ տարին: Եվ երբ սրան էլ զրկեց թագավորությունից, իշխանությունն անցավ հայոց նախարարներին, որովհետև թեպետև հարկը Պարսից արքունիքն էր գնում, սակայն Հայոց հեծելազորն ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ: Այս պատճառով էլ աստվածապաշտությունը բաց ճակատով ու ինքնիշխան փայլում էր Հայոց աշխարհում, արքայից արքա Շապուհի թագավորության սկզբից մինչև Վռամի որդի արքայից արքա Հազկերտի երկրորդ տարին, որին սատանան իրեն գործակից գտավ և հավաքված ամբողջ թույնը դուրս թափեց և լցրեց նրան ինչպես թունավորված նետերով լի կապարճ: Եվ սկսեց հոխորտալ անօրենությամբ, գոռոզանում էր և աղմկելով քամի էր բարձրացնում աշխարհի չորս կողմերը, և մեզ, Քրիստոսի հավատացյալներիս, իրեն թշնամի և հակառակորդ էներկայացնում և նեղվում ու տագնապում էր անխաղաղասեր անխաղաղասեր կյանքով:

Որովհետև նրան շատ սիրելի էր խռովությունն ու արյունահեղությունը, այդ պատճառով էլ ինքն իր մեջ ալեկոծվում էր, թե ո՞ւմ վրա թափեմ դառն թույներս կամ ո՞ւր արձակեմ բազմաթիվ նետերս: Եվ սաստիկ հիմարության պատճառով ինչպես կատաղի գազան հարձակվեց Հունաց երկրի վրա, հարվածեց մինչև Մծբին քաղաքը և ասպատակ սփռելով՝ ավերեց հռոմների շատ գավառներ և հրդեհեց բոլոր եկեղեցիները. ավար ու գերի հավաքեց և ահաբեկեց երկրի ամբողջ

ի Քրիստոս, ոչ կամեցաւ ընդ առաջ նորա ելանել պատերազմաւ. այլ այր մի Անատոլ անուն, որ էր նորա սպարապետ արևելից, առաքեաց առ նա բազում գանձիւք: Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան և էին ի քաղաքի կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա: Եւ զամենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նորա, և արգել զնա ի բազում բարկութենէն, և դարձաւ անդրէն ի քաղաքն իւր Տիզբոն:

Եւ իբրև ետես անօրէն իշխանն, եթէ յաջողեցաւ չարութիւն նորա, սկսաւ այլ ևս խորհուրդ յաւելուլ, որպէս ոք զի ի հուր բորբոքեալ յաւելու բազում նիւթս փայտից: Քանզի ուստի սակաւմի կասկածոտն էր, անտի աներկիւղ հաստատեցաւ. վասն այնորիկ դրդուեցոյց զբազումս ի սուրբ ուխտէն քրիստոնէից էր՝ զոր բանիւք սպառնալեօք, էր՝ զոր կապանօք և տանջանօք, էր՝ զոր չարաչար մահուամբ վախճանէր: Յափշտակութիւն առնէր ընչից և արարոց, և մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան:

.... Նա և արջք օրհասականք ընդ վախճանել շնչոցն հզօրագոյնք կռուին. յորոց և իմաստունքն տեղի տուեալ փախչին ի նոցանէ: Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան տէրութեանն, եթէ հարկանին՝ չզգան, և եթէ հարկանեն՝ չիմանան, և իբրև ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անձինս իւրեանց մարտ եղեալ կռուին:

.... Արդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ չշիջանիս. զի՞ կոչես ի խորհուրդ զայնոսիկ, որոց զոգիսն ձեր ի ձէնջ քաղեալ՝ հանեալ է զանապականդ յապականութիւն, և զապականելի մարմինդ գէշաքարշ արարեալ իբրև զազիր մեռելոտի ի բաց ընկեցեալ: Ապաքէն զայդ կամիս, զի ծածկեսցի խորհուրդ ամբարշտութեանդ. տեսջիր յորժամ յայտնեսցի, ապա գիտասցես զելս կատարածի դորա:

Ասեն մոգքն. «Արքայ քաջ, աստուածքն ետուն քեզ զտէրութիւնդ և զյաղթութիւն. և ոչ ինչ կարօտ են նոքա մարմնաւոր մեծութեան,

զորքը:

Իսկ երանելի Թեոդոս կայսրը, որովհետև խաղաղասեր քրիստոնյա մարդ էր, չկամեցավ նրա դեմ պատերազմի դուրս գալ, այլ Անատոլ անունով մի մարդու, որ Արևելքի նրա սպարապետն էր, շատ գանձերով նրա մոտ ուղարկեց: Եվ բռնեց ու նրա ձեռքը տվեց այն պարսիկ մարդկանց, որոնք քրիստոնյա լինելու պատճառով փախել էին և գտնվում էին կայսեր քաղաքում: Այն ամենը, ինչ որ ասաց [Հազկերտը] ժամանակին, [Թեոդոսը] կատարեց նրա կամքի համաձայն և իջեցրեց նրա մեծ բարկությունը. և այսպիսով նա վերադարձավ իր քաղաքը՝ Տիզբոն:

Երբ անօրեն իշխանը տեսավ, որ իր չարությունը հաջողվեց, սկսեց մի այլ խորհուրդ էլ մտածել, ինչպես մի մարդ, որ բորբոքված կրակի մեջ շատ վառելափայտ է ավելացնում: Որովհետևորտեղից մի քիչ կասկած ուներ, այնտեղից լիովին ապահովվեց, այդ պատճառով էլ քրիստոնյաների ուխտից շատերին խախտեց՝ մեկին սպառնալի խոսքերով, մյուսին շղթաներով ու տանջանքներով, երրորդին չարաչար մահով սպանելով: Հափշտակում էր նրանց ստացվածքն ու կալվածքները և մեծ անարգանքով տանջում էր բոլորին:

.... Օրհասական արջերն էլ շնչները վատնելիս ավելի ուժգին են կռվում, և իմաստունները խույս տալով փախչում են նրանցից: Այսպիսի մի վախճան է եկել-հասել այդ տերությանը. երբ նրանց խփում են՝ չեն զգում, և երբ [իրենք] են խփում՝ չեն հասկանում. իսկ երբ արտաքին թշնամի չի գտնվում, իրենք իրենց հետ են կռիվ սկսում, մարտնչում:

.... Արդ, ի՞նչ ես ծեծկվում, ի՞նչ ես կռիվ տալիս, ի՞նչ ես այրվում, ի՞նչ ես բորբոքվում, ինչո՞ւ ես հանգչում, ի՞նչ ես խորհրդի կանչում նրանց, ովքեր ձեր հոգիները ձեզնից խլել՝ ձեր անապականը ապականություն են դարձրել, իսկ ձեր ապականացու մարմինը զազրելի դիակի նման քարշ են տվել ու դեն գցել: Չէ՞ որ այդ ես կամենում, որ ամբարիշտ

բայց եթէ ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգս և ազինս, որ են ի տէրութեան քում. յայնժամ և աշխարհին Յունաց հնազանդեալ մտցէ ընդ օրինօք քովք: Արդ զմի բան զմեր վաղվաղակի կատարեա դու, արքայ. զօր գումարեա և գունդ կազմեա. խաղա գնա դու յերկիրն Քուշանաց.և զամենայն ազգս հաւաքեա և անցո ըստ Պահ դուռն ի ներքս. և դու անդէն արա քեզ բնակութիւն: Յորժամ արգելուս և փակես զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, կատարին խորհուրդք կամաց քոց. և որպէս երևիս մեզ ի դենիս մերում, տիրես դու և երկրին Քուշանաց, և Յոյնք իսկ ոչ ելանեն ընդ քո իշխանութիւնդ: Բայց միայն զաղանդ քրիստոնէից բարձ ի միջոյ»:

Հաճոյ թուեցաւ խորհուրդն թագաւորին և մեծամեծացն, որ էին ի նմին բանի. հրովարտակս գրէր, պնդադեսպանս արձակէր յամենայն տեղիս տէրութեան իւրոյ: Եւ այս է պատճէն հրովարտակին.

«Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ՝ արեաց և անարեաց, բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ:

«Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացաք գնացաք յերկիրն Յունաց, և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն: Դուք զբարի զմտաւ ածէք, և անսպառ լերուք յուրախութեան. բայց զայս բան կատարեցէք վաղվաղակի, զորասեմ:

«Մեք ի մտի եդաք անվրէպ խորհրդովք խաղալ գնալ յաշխարհն արևելից, աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց. դուք իբրև զհրովարտակս զայս տեսանէք, անխափան վաղվաղակի այրուձի գումարեցէք առաջոյ քան զիս, յանդիման լինիջիք ինձ յԱպար աշխարհին»:

.... Եւ անմեղութեամբ ոչ գիտացեալ զերկդիմի միտս թագաւորին՝ խաղացին գնացին յիւրաքանչիւր աշխարհաց լրջմտութեամբ և տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զի-

խորհուրդդ ծածկվի, կտեսնես՝ երբ կհայտնըվի, հետո կիմանաս դրա վերջը:

Մոգերն ասում են. «Քա՛ջ թագավոր, աստվածները տվին քեզ այս տերությունը և հաղթություն, նրանք ամենևին մարմնավոր հարստության կարոտ չեն, միայն թե մի կրոնի դարձնես քո տերության մեջ գտնված բոլոր ազգերին ու ժողովուրդներին. այն ժամանակ Հույների երկիրն էլ հնազանդվելով՝ կենթարկվի քո իշխանությանը: Արդ, մեր մի խոսքը շուտով կատարի՛ր, արքա՛, զորք հավաքիր և գունդ կազմիր, վեր կաց գնա Քուշանների երկիրը և բոլոր ազգերին ժողովիր և անցկացրու Պահ դռնից ներս, և այնտեղ շինիր քո բնակությունը: Երբ բոլորին արգելես ու պահես հեռավոր օտարության մեջ, քո կամքն ու խորհուրդները կկատարվեն և, ինչպես երևում ես մեր գուշակությունների մեջ, դու կտիրես նաև Քուշանների երկրին, և մինչև անգամ Հույները քո իշխանության դեմ դուրս չեն դա: Միայն թե քրիստոնյաների կրոնը մեջտեղից վերացրու»:

Այս խորհուրդը հաճելի եղավ թագավորին ու իրեն համամիտ մեծամեծներին. հրովարտակներ գրեց, արագագնաց սուրհանդակներ ուղարկեց իր տերության բոլոր կողմերը: Եվ այս է հրովարտակի պատճենը.

«Իմ տերության բոլոր ազգերին, արիներին և անարիներին, թող բազմանա մեր մարդասեր ողջույնը ձեզ. դուք ողջ եղեք, մենք էլ արդեն ողջ ենք աստվածների օգնությամբ:

«Առանց ձեզ որևէ նեղություն տալու ելանք-գնացինք Հույների երկիրը, և առանց պատերազմի սիրով ու մարդասիրությամբ նվաճեցինք ամբողջ երկիրը մեզ ծառայելու:

Դուք բարին մտածեցեք և անսպառ ուրախության մեջ մնացեք. բայց շուտով կատարեցեք այս բանը, որ ասում եմ:

«Մենք մտքներումս դրել ենք անպատճառ վերկենալ-գնալ Արևելքի աշխարհը, աստվածների օգնությամբ մեզ ենթարկել Քուշանների տերությունը. դուք հենց որ այս հրովարտակը տեսնեք, շուտով առանց ուշացնե-

նուրրութեան աներկբայ հաւատովք: Բարձին նս ընդ իւրեանս զաստուածային զսուրբ կտակարանսն բազում պաշտօնէիւք և քահանայիւք: Բայց հրաման տուեալ աշխարհի՝ ոչ իբրև յակնկալութիւն կենաց, այլ իբրև ի վճարումն վախճանի, յանձն առնելով միմեանց զոգիս և զմարմինս: Զի թէպէտ և խորհուրդ թագաւորին չէր յայտնեալ նոցա, սակայն կարծիք ի մտի էին ամենեցուն. մանաւանդ իբրև բեկեալ տեսանէին զզօրութիւնն Յունաց առաջի նորա, յոյժ հարեալ խոցեցան ի խորհուրդս իւրեանց:

Բայց քանզի պատուիրանապահք էին սուրբ կտակարանացն Աստուծոյ, հանապազ յիշէին զպատուիրեալսն ի Պօղոսէ, եթէ «Ծառայք, հպատակ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց. մի՛ սուտակասպասք և առաչս աչառելով. այլ մտօք սրտի ծառայեցէք իբրև Աստուծոյ և մի՛ իբրև մարդկան. քանզի ի Տեառնէ է հատուցումն արդար վաստակոց ձերոց»:

Եւ այսու ամենայնիւ բարեմտութեամբ յուղարկեալք յաշխարհէ և յանձն եղեալք սուրբ Հոգւոյն, յանդիման լինէին՝ փութով կատարեալ զհրամանն, և զամենայն արարեալ ըստ կամաց նորա: Յոյժ ուրախ լինէր թագաւորն, իբր այն եթէ կատարեցան կամք կարծեաց նորա. և ահա առնէր ընդ նոսա զայն ինչ, զոր պաշտօնեայքն ամբարշտութեան նորա խրատեցին:

Ապա իբրև ետես թագաւորն զամենայն կազմութիւն և զբազմութիւն գնդին բարբարոսաց, որք սրտի մտօք եկեալ էին ի վաստակ արքունի, առաւելապէս նս ուրախ լինէր առաջի մեծամեծացն և ամենայն բազմութեան զօրաց իւրոց: Ի վերին երեսս թաքուցանէր զկամս մտաց իւրոց, և ակամայ առատապէս պարգևէր զնոսա: Խաղաց գնաց միանգամայն ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն. և զերկեամ մի կռուեալ՝ ոչ ինչ կարաց ազդել նոցա: Ապա արձակեաց զմարզիկսն յիւրաքանչիւր տեղիս, և զայլս փոխանակ նոցա առ իւր կոչեաց նովին

լու այրուձի ժողովեցեք՝ ինձանից առաջ, ներկայացեք ինձ Ապար աշխարհում»:

.... Եվ անմեղությամբ չիմանալով թագավորի խարդախ միտքը՝ յուրաքանչյուրը իր երկրից զվարթությամբ և տիրասեր խորհրդով ելան -գնացին, աներկբա հավատով կատարելով [իրենց] զինվորական ծառայությունը: Իրենց հետ վերցրին նաև աստվածային սուրբ կտակարանները շատ պաշտոնյաներով ու քահանաներով: Բայց հրաման տվին իրենց աշխարհում, որ կյանքի ակնկալություն չունենան, այլ իրենց վախճանին [սպասեն], հանձնարարելով միմյանց իրենց հոգիներն ու մարմինները: Որովհետև թեպետև թագավորի մտադրությունը նրանց հայտնի չէր, բայց բոլորի սրտում էլ կասկած կար. մանավանդ երբ Հույների զորությունն էլ ընկճված տեսան նրա առաջ, շատ խիստ խոցվեցին իրենց մտքերում:

Բայց որովհետև աստծու սուրբ կտակարանների պատվիրանները պահող մարդիկ էին, շարունակ հիշում էին Պողոսի պատվերները, թե՝ «Ծառանե՛ր, հնազանդ եղեք ձեր մարմնավոր տերերին, ո՛չ թե կեղծավորությամբ և աչառությամբ, այլ սրտանց ծառայեցեք ինչպես Աստծուն և ոչ ինչպես մարդկանց. որովհետև տիրոջից է լինելու ձեր արդար վաստակների հատուցումը»:

Այս ամբողջ բարեմտությամբ ուղևորվելով [իրենց] աշխարհից և իրենց հանձնելով սուրբ հոգուն, հրամանը շուտով կատարելով՝ ներկայացան, ամեն ինչ անելով նրա կամքի համաձայն: Թագավորը շատ ուրախացավ՝ այն մտքով, թե իր կամքը կատարվեց. և ահա նրանց հետ վարվում է այնպես, ինչպես խրատել էին իր ամբարիշտ պաշտոնյաները:

Ապա, երբ թագավորը տեսավ բարբարոսների գնդի ամբողջ պատրաստությունն ու բազմությունը, որոնք հոժարակամ եկել էին արքունի ծառայության, ավելի նս ուրախանում էր իր մեծամեծների և զորքերի ամբողջ բազմության առաջ: Արտաքուստ թաքցնում էր իր մտադրությունները և ակամա առատ-

պատրաստութեամբ: Եւ այսպէս ամ յամէ սովորութիւն կարգեաց, և իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց, սկսեալ ի չորրորդ ամէ տէրութեանն իւրոյ մինչև յամն մետասաներորդ թագաւորութեանն:

Եւ իբրև ետես, եթէ հաստատուն կացին Հռոմք յուխտին իւրեանց, զոր եդին ընդ նմա, և դադարեցին Խայլնդուրք ելանել ընդ պահակն Ճորայ, և յամենայն կողմանց խաղաղութեամբ բնակեաց աշխարհ նորա, և ի նեղ ևս էարկ զթագաւորն Հոնաց, քանզի աւերեաց զբազում գաւառս նորա և յաջողեցաւ տէրութիւն նորա, աւետաւորս առաքեաց ընդ ամենայն ատրուշանս աշխարհին իւրոյ. ցլուք սպիտակօք և գիսաւոր նոխազօք առատացոյց զզոհս կրակի, և խիտ առ խիտ թանձրացոյց անդուլութեամբ զպաշտօն պղծութեան իւրոյ. պսակօք և պատուովք մեծարեաց զբազումս ի մոգաց և զբազմագոյնս ի մոգպետաց: Ետ ևս հրաման յափշտակել զամենայն ինչս քրիստոնէից և զստացուածս, որք էին ի մէջ Պարսկաց աշխարհին:

Եւ այսպէս հպարտացաւ բարձրացաւ ի միտս իւր, ի վեր քան զմարդկային բնութիւն ընդվզեալ ապարթանէր ոչ միայն յիրս մարմնական պատերազմացն, այլ մեծ ոմն զինքն կարծէր քան զբնութիւն հայրենի կարգին. վասն այնորիկ կեղծաւորութեամբ թագուցանէր զինքն ըստ կարծեացն, և որպէս երևէր իմաստնոցն, յանմահից իմն կարգի դնէր զինքն: Եւ յոյժ էր ցաւուցեալ ընդ անունն Քրիստոսի, յորժամ լսէր՝ թէ տանջեցաւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ:

առատ պարգևներ էր տալիս նրանց: Ելավգնաց Հոնաց աշխարհի տերության վրա, որին Քուշանք են անվանում, և երկու տարու չափ կռվելով՝ նրանց ոչ մի վնաս հասցնել չկարողացավ: Հետո զինվորներին ուղարկեց յուրաքանչյուրին իր տեղը և նրանց փոխարեն իր մոտ ուրիշներին կանչեց նույն պատրաստությամբ: Եվ այսպես տարեցտարի սովորություն սահմանեց, և այնտեղ իր համար բնակության քաղաք շինեց, իր թագավորությանչորրորդ տարվանից սկսած մինչև իր իշխանության տասնմեկերորդ տարին:

Եվ երբ տեսավ, որ Հռոմները հաստատ մնացին իրենց դաշինքին, որ դրել էին նրա հետ, և Խայլնդուրները դադարեցին Ճորա պահակն անցնելուց, և իր երկիրն ամեն կողմից խաղաղության մեջ է ապրում, և դեռ Հոների թագավորին էլ նեղն է լծել, որովհետև ավերեց նրա շատ գավառները, և իր թագավորությունը հաջող դրության մեջ է,- ավետավորներ ուղարկեց իր երկրի բոլոր ատրուշանները, սպիտակ ցուլերով և գիսավոր նոխազներով առատացրեց կրակի զոհերը, և միանգամայն անընդհատ դարձրեց իր պիղծ պաշտամունքը. մոգերից շատերին և մոգապետներից է՛լ ավելի շատերին մեծարեց պսակներով ու պատիվներով: Նաև հրաման տվեց հափշտակել Պարսից աշխարհում գտնվող քրիստոնյաների ինչքն ու գույքը:

Եվ այսպես հպարտացավ, գոռոզացավ իր մտքում, սանձարձակորեն հոխորտում էր մարդկային բնությունից էլ վեր, ո՛չ միայն մարմնական պատերազմների գործերի մեջ, այլ ինքն իրեն հայրենի կարգի բնությունից մեծ մի բան էր կարծում. այդ պատճառով նա կեղծավորությամբ ինքն իրեն իր կարծիքով թաքցնում էր, բայց ինչպես նկատում էին իմաստունները, ինքն իրեն կարծես անմահների կարգն էր դասում: Եվ սաստիկ զայրացած էր Քրիստոսի անվան վրա, երբ լսում էր, թե տանջվեց, խաչվեց, մեռավ և թաղվեց:

ԵՐԿՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ.
ԻՐԱՅՆ ՊԱՏԱՀՈՒՄՆ ՅԻՇԽԱՆԷՆ ԱՐԵՒԵԼԻՑ

Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի, և յամենայն բանէ խռովի, և յամենայն իրաց դողայ. երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում, և յանգիւտ կորուստն յուղարկի ի մահուան իւրում: Որպէս և ասաց ոմն ի հնումն, մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ:

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ: Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց: Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք: Որպէս մեծ է ոգի քան զմարմին՝ այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց:

Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ, և մտօքն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազումս. որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և յոր մեծն է քան զամենայն: Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ: Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, ո՛րչափ ևս առաւել առ հոգևորն:

Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ միտք են կառավար. և որպէս առ մի մարդ՝ այսպէս առ բոլոր աշխարհս: Թագաւոր ոչ զիւրն միայն տացէ պարտիս, այլ և որոց եղն պատճառք ի կորուստ:

Բայց մեք թէպէտ և ոչ ունիմք հրաման բամբասել զիշխանս, և ոչ գովողք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուածամարտն լինիցի: Այլ զանցս իրացն պատմեմ, որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցիսն էանց, և ոչ դանդաղիմ. ոչ բամբասասէր մտօք, այլ ճշմարտութեամբ զելս իրացն ասելով ոչ լռեցից: Ոչ ի կարծ

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ.
ԱՐԵՎԵԼՔԻ ԻՇԽԱՆԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ԳՈՐԾԵՐԸ

Ում հոգիները թուլացած են երկնավոր առաքինությունից, սաստիկ երկյուղի մեջ է ընկած [նրանց] մարմնի բնությունը. ամեն հողմից շարժվում է և ամեն խոսքից վրդովվում և ամեն բանից դողում. այսպիսի մարդը երազական բաներով է անցկացնում իր կյանքը, իսկ մահվան ժամանակ էլ անդառնալի կորըստյան է մատնվում: Ինչպես որ հնում մեկն ասել է՝ չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն: Ով որ չգիտե, թե ինչ է մահը, վախենում է մահից. իսկ ով գիտե մահը, նրանից չի վախենում:

Եվ այս բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից: Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից: Լավ է աչքով կույր [լինել], քան մտքով կույր: Ինչպես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմինների տեսողությունից:

Եթե մեկը շատ ճոխացած լինի աշխարհական մեծությամբ, իսկ մտքով ավելի աղքատ լինի, այնպիսին ողորմելի է շատերից. ինչպես որ տեսնում էլ ենք ո՛չ միայն հասարակ մարդկանց մեջ, այլև նրա, որ ամենից մեծն է: Եթե թագավորը իմաստությունն իրեն աթոռակից չանի, չի կարող իր վիճակի մեջ վայելուչ լինել: Իսկ եթե մարմնավոր բաների վերաբերմամբ այսպես է, որքա՜ն ավելի ևս հոգևոր բաների վերաբերմամբ է:

Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է. և ինչպես որ մի մարդու, այնպես էլ ամբողջ աշխարհի վերաբերմամբ: Թագավորը միայն իր համար չէ պատասխանատու, այլ նաև նրանց համար, որոնց կորստյան պատճառ է եղել:

Բայց մենք թեպետև թույլտվություն չունենք բամբասելու իշխաններին, բայց չենք էլ

ընդոստուցեալ, և ոչ ի լուր զարթուցեալ. այլ ես ինքնին անձամբ անդէն ի տեղւոջն պատահեցի և տեսի և լուայ զձայն բարբառոյ յանդգնաբար խօսելով. իբրև զհողմ սաստիկ՝ զի բախիցէ զծով մեծ, այնպէս շարժէր և տատանէր զամենայն բազմութիւն զօրաց իւրոց: Եւ հանդէս առնէր ամենայն ուսմանց, և ընդաձէր զմոգութիւնն և զքաւդէութիւնն և զամենայն ուսմունս աշխարհին իւրոյ: Արկանէր ի ներքս և զքրիստոնէութիւն կեղծաւորութեամբ, և ասէր զայրացեալ մտօք. «Հարցէք, քննեցէք, տեսէք. թող որ լաւն է՝ ընտրեալ կալցուք»: Եւ փութայր որ ինչ ի մտին էր, զի վաղվաղակի կատարեսցէ:

Իսկ ի կողմանց կողմանց քրիստոնեայքն, որ ի զօրուն էին, իմացան զհուրն որ ի ծածուկ վառեալ բորբոքէր, և կամէր հրդեհել զլերինս և զդաշտս առհասարակ: Ջեռան և նոքա անծախական հրովն, և սաստկապէս պատրաստեցան առ ի փորձութիւն գաղտնի մեքենայիցն:

.... Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն, և պատրաստեալ հուրն՝ մինչչև ուրուք ի նա փչեալ՝ վառումն նորա յայտնի իմացաւ երկիւղածացն Աստուծոյ, սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ չարութեանն. և անբժշկական վէրս յոգիս և ի մարմինս տեսանէր:

Մերթ շանթէր գալարէր իբրև զօձ թիւնաւոր, մերթ պարզէր գոչէր իբրև զառիւծ զայրացեալ. գելոյր, գլորէր, տապալէր երկդիմի մտօք և զխորհուրդս կամացն կամէր կատարել:

.... Եւ իբրև ետես եթէ ոչինչ յարգեցաւ ծածուկ հնարագիտութիւնն, այլ ընդդէմքն յոլովագոյն գործէին, և քանզի տեսանէր զքրիստոնէութիւն, որ օր քան զօր յորդեալ տարածանէր ընդ ամենայն կողմանս հեռաւոր ճանապարհին ընդ որ ինքն անցանէր, և սկսաւ հաշել և մաշել և հառաչելով յոգւոց հանել: Յայտնեաց ակամայ զծածուկ խորհուրդսն. ետ հրաման բարձր բարբառով և ասէ . «Ամենայն ազգ և լեզուք՝ որ են ընդ իմով իշխանու-

կարող գովաբանել մի մարդու, որ աստծու դեմ է կռվում: Այլ կպատմեմ անցքերն ու դեպքերը, որ նրա ձեռքով անցան սուրբ եկեղեցիների գլխով, և չեմ դանդաղի. գործերի ընթացքը ո՛չ թե բամբասասեր մտքով, այլ ճշմարտությամբ պատմելուց չեմ դադարի: Ո՛չ կարծիքներով եմ վեր թռել և ո՛չ էլ լուրերից արթնացել, այլ ե՛ս ինքս անձամբ նույն տեղում պատահեցի և տեսա ու լսեցի հանդգնաբար խոսելու ձայնը. ինչպես սաստիկ քամին ալեկոծում է մեծ ծովը, այնպես էր շարժում ու տարուբերում իր զորքերի ամբողջ բազմությունը: Եվ բոլոր ուսմունքների հանդիսավոր քննություն էր կատարում, կշռադատում էր մոգությունն ու քավդեությունը և իր աշխարհի բոլոր ուսմունքները: Կեղծավորությամբ մեջ էր բերում նաև քրիստոնեությունը և ասում էր զայրացած. «Հարցրե՛ք, քննեցե՛ք, տեսե՛ք, որը լավն է՝ թող այն ընտրենք ու պահենք»: Եվ ջանք էր գործ դնում, որ իր մտադրությունը շուտով կատարի:

Իսկ զորքի մեջ եղած զանազան կողմերից եկածները հասկացան այն կրակը, որ ծածուկ վառվում-բորբոքվում էր և ուզում լեռներն ու դաշտերն առհասարակ հրդեհել: Նրանք էլ կրակ կտրեցին անմարելի հրով և սաստկապես պատրաստվեցին գաղտնի որոգայթների փորձության դեմ:

.... Իսկ անօրեն իշխանը, երբ իմացավ, թե հայտնվեց [իր] խորամանկ մտադրությունը, և պատրաստված հուրը՝ դեռ ոչ–ոք նրա վրա չփչած՝ նրա վառվելը հայտնի դարձավ աստծու երկյուղածներին. սկսեց ծածուկ նետերով խոցոտել իր չար միտքը և անբուժելի վերքեր էր պատրաստում հոգիների և մարմինների համար:

Մերթ շանթում՝ գալարվում էր ինչպես մի թունավոր օձ, մերթ ձգվում՝ մռնչում էր ինչպես զայրացած առյուծ, ճմլվում ու թապլտկվում էր խարդախ մտադրությամբ և կամենում էր իր կամքը կատարել:

.... Եվ երբ տեսավ, որ ծածուկ հնարագի-

թեամբ՝ դադարեսցեն յիւրաքանչիւր մոլոր օրինաց, և միայնոյ եկեսցեն յերկրպագութիւն արեգական, զոհս մատուցանելով և աստուած անուանելով, և սպաս ունելով կրակի. և ի վերայ այսր ամենայնի և զմոգութեան օրէնս կատարելով, զի մի՛ ինչ ամենևին պակաս առնիցեն»:

.... Արդ ի սկզբան երկոտասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ գունդ կազմէր անհամար բազմութեամբ, յարձակեալ հասանէր յերկիրն Իտաղական:

.... Անդէն ի ներքոյ Պահ դրանն արգելոյր զբազմութիւն այրուձիոյն Հայոց և զՎրաց և զԱղուանից, և զամենեցուն՝ որ էին հաւատացեալ ի սուրբ աւետարանն Քրիստոսի:

Եւ յայսր ամենայնի վերայ այլ ևս չարութիւն խորամանկեաց: Զմի ոմն ի հաւատարիմ ծառայից իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց՝ որում անուն էր Դենշապուհ. որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի, զողջոյն բերեալ զմեծ թագաւորին, և խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհագիր առնել ամենայն երկրին Հայոց ի թողութիւն հարկաց և ի թեթևութիւն ծանրութեան այրուձիոյն: Թէպէտ և ի վերին երեսս կեղծաւորէր, այլ ի ներքոյ խորհուրդք չարագոյն ցուցանէին:

Առաջին, զազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն:

Երկրորդ, միայնակեաց քրիստոնեայք որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրով էարկ:

Երրորդ, զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց:

Չորրորդ, զնախարարեանն բանսարկութեամբ արկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն:

Եւ զայս ամենայն առնէր՝ թերևս զմիաբանութիւնն քակեսցէ, և զուխտն եկեղեցւոյն ցրուեսցէ, և զմիայնակեացսն փախուսցէ, և զշինականսն վատնեսցէ. և առ յոյժ աղքատութեանն՝ ակամայ դիմեսցեն յօրէնս մոգուց:

Եւ է՛ւս չարագոյն հինգերորդն. քանզի որ

տությունը բանի տեղ չանցավ, այլ դիմացինները ավելի շատ էին գործում,- որովհետև տեսնում էր, որ քրիստոնեությունն օրեցօր աճում–տարածվում էր հեռավոր ճանապարհի այն բոլոր կողմերը, որով ինքն անցնում էր,- սկսեց հալումաշ լինել և հառաչելով հոգոց հանել: Ակամա հայտնեց գաղտնի մտադրությունները, բարձրաձայն հրաման տվեց և ասաց. «Իմ իշխանության ներքո գտնված բոլոր ազգերն ու ժողովուրդները թող բոլորը ձեռք քաշեն [իրենց] մոլար կրոններից և գան երկրպագություն անեն միմիայն արեգակին, զոհեր մատուցելով և աստված անվանելով [նրան] և սպասավորելով կրակին. բացի այս ամենից՝ մոգության օրենքներն էլ կատարեն, առանց որևէ բան պակաս թողնելու»:

.... Արդ, իր թագավորության տասներկուերորդ տարվա սկզբին անթիվ քանակությամբ զորք ժողովեց և հարձակվելով հասավ Իտաղական երկիրը:

.... Այնտեղ՝ Պահ դռան ներսում, արգելեց Հայերի, Վրացիների և Աղվանների և այն բոլորի բազմաթիվ հեծելազորը, ովքեր հավատում էին Քրիստոսի սուրբ ավետարանին: ...

Բացի այս ամենից՝ մի այլ չարություն էլ նյութեց: Իր հավատարիմ ծառաներից մեկին, որի անունը Դենշապուհ էր, գործով ուղարկեց Հայոց երկիրը. սա եկավ տեղ հասավ արքունի հրամանով, բերեց մեծ թագավորի ողջույնը և խաղաղասեր կեղծավորությամբ ամբողջ Հայոց երկիրը աշխարհագիր արեց՝ իբր թե հարկերը ներելու և այրուձիու ծանրությունը թեթևացնելու նպատակով: Թեպետև երեսանց կեղծավորություն էր անում, բայց ներքուստ երևում էին չարագույն դիտավորությունները:

Առաջին՝ եկեղեցու ազատությունը ծառայության տակ դրեց:

Երկրորդ՝ վանքերում բնակված միայնակյացներին նույն աշխարհագրի տակ գցեց:

Երրորդ՝ երկրի հարկն ավելի ծանրացրեց:

Չորրորդ՝ նախարարներին բանսարկությամբ թշնամացրեց միմյանց հետ և ամեն տան

հազարապետն էր աշխարհին, իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից. գրգռեաց յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, և մեւս ևս մոգպետ՝ դատաւոր աշխարհին, զի զեկեղեցւոյն փառսն աղաւաղեսցեն:

Բայց սակայն թէպէտ և ամենայն գործքս այս դժնեայ էին, չն էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին. վասն այնորիկ և ոչ ոք ընդդիմացաւ նմա, թէպէտ և էր ծանրութիւն հարկացն: Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկանաւ չափ, կրկին առնուին. նոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց դնէին, ոչ միայն շինաց, այլ և աւերակաց: Նա և բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից լերանց և դաշտաց և մայրեաց: Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով, մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային, թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ՝ զիա՞րդ շէն կայցէ աշխարհն:

.... Եւ անդէն թագաւորն ի ներքս կոչեցեալ զդպրապետն, հրամայէր գրել հրովարտակ. և ոչ ևս ըստ սովորութեանն, այլ բանս զայրագինս իբր առ ատելիս և անպիտանս, չյիշելով ամենևին զմեծամեծ վաստակս տիրասէր մարդկանն. այլ միայն կոչոյ հրաման տուեալ յականէ յանուանէ զարս, զոր ինքն ճանաչէր...

.... Եւ ի ձեռն սրբոյն Յովսեփու եպիսկոպոսի նովին ուխտիւ հաստատեալ՝ խաղացին գնացին յիւրաքանչիւր տեղեաց ի դուռն արքունի:

.... Եւ զի օրէնք էին յառաջ ժամանակաւ, յորժամ ի Հայոց այրուձի ի դուռն երթայր ի ձեռն պատուաւորի զօրագլխի ուրուք, այր ընդ առաջ յդէր, և հարցանէր զողջոյն և զխաղաղութիւն Հայոց աշխարհին, և երկիցս և երիցս անգամ զնոյն առնէր, և զհանդէս գնդին ինքնին տեսանէր և յառաջ քան ի գործ պատերազմին հասանել զգալն իսկ առ նա՝ մեծ շնորհակալութիւն համարէր, և առաջի աթոռմէջ խոռվություն գցեց:

Եվ այս ամենն անում էր, որպեսզի գուցե քանդի միաբանությունը, և եկեղեցու ուխտը ցրվե, և միայնակյացներին փախցնի, և շինականներին տկարացնի. և չափազանց աղքատության պատճառով ակամա ընդունեն մոգական կրոնը:

Բայց ամենից վատթարը հինգերորդն էր. որովհետև նա, որ երկրի հազարապետն էր, համարվում էր աշխարհականների վերակացու հայրը. սրա դեմ գրգռելով ամբաստանություն հարուցեց, և նրան գործից հանելով՝ նրա փոխարեն մի պարսիկ բերեց [մեր] աշխարհը, և մի մոգպետի էլ աշխարհիկ դատավոր [կարգեց], որպեսզի եկեղեցու փառքը նսեմացնի:

Սակայն թեպետև այս բոլոր գործերը դժնդակ էին, բայց դեռ ոչ ոք հայտնի կերպով ձեռք չէր տվել եկեղեցուն. այդ պատճառով էլ ոչ ոք նրան չընդդիմացավ, թեև հարկերը ծանր էին: Որովհետև որտեղից պետք էր հարյուր դահեկան առնել, կրկնապատիկն էին առնում. այսպես էլ [հարկի տակ] դրին եպիսկոպոսներին և երեցներին, ո՛չ միայն շեն, այլև ավերակ տեղերը: Մանավանդ ո՞վ կարող է պատմել, թե ինչպիսի ծանր տուրքեր ու սակեր, բաժեր ու հասեր էին նշանակված լեռների, դաշտերի և անտառների վրա:

Առնում էին ո՛չ թե ինչպես վայել է պետական արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին, թե մի տեղից, որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպե՞ս է շեն մնում այդ աշխարհը:

.... Եվ թագավորն անմիջապես ներս կանչելով դպրապետին հրամայեց հրովարտակ գրել. բայց այլևս ո՛չ թե սովորության համաձայն, այլ զայրագին խոսքեր ինչպես ատելի և անպիտան անձերի, ամենևին չհիշելով տիրասեր մարդկանց մեծամեծ ծառայությունները, այլ միայն անուն–անուն կանչելու հրաման տալով այն մարդկանց, որոնց ինքը ճանաչում էր...

ռակցացն իւրոց և ամենայն մեծամեծացն՝ գովութիւն մատուցանէր ամենեցուն, և յիշէր զնախնեացն զվաստակս, և զառն առն քաջութիւն պատմէր նոցա:

Իսկ այն օր և ոչ մի ինչ յայսցանէ ամենին ինչ ոչ յիշեաց. այլ իբրն զչարադն մի՝ ոչ դադարէր յուզել և շարժել զբուք ձմերայնոյ: Որպէս և նմանեալ իսկ էր ծովածուփ ալէկոծ խռովութեան, ոչ դուզնաքեայ վեր ի վերոյ, այլ անդստին յանդնդոց բարձրանայր փրփրեալ կուտակեալ, վիշապաձայն որոտալով, զազանաբար գոչելով առհասարակ դողացուցանէր զտիեզերական զիւր իշխանութիւնն, որպէս զի փլեալ տարածանիցի համատարած ամենայն ի վերայ լերանց, խորոց, ձորոց՝ ապականել միանգամայն զլայնութիւն դաշտացն վայելչութեան:

Մռնչելով բարբառ արձակեալ և ասէ. «Երդուեալ իմ յարեգակն, ի մեծն աստուած, որ ճառագայթիւքն իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, և ջերմութեամբն կենդանածնէ զամենայն գոյացեալսն, եթէ ոչ վաղիւ ընդ առաւօտն, ընդ երևումն սքանչելւոյն, ընդ իս իւրաքանչիւր ծունր նմա ոչ կրկնեսջիք՝ խոստովանելով զնա աստուած, ոչ ինչ թողացուցից ձեզ՝ զամենայն նեղութիւնս չարչարանացն ի վերայ ածելով, մինչև ակամայ կատարիցէք զկամս հրամանաց իմոց»:

Իսկ հաւատացեալքն հաստատեալք ի Քրիստոս՝ ոչ ի սառնամանեաց ձմերայնոյն հովանային, և ոչ ի տապոյ խորշակին ջեռնուին, և ոչ յահագին ձայնէն սարսէին, և ոչ ի սպառնալեաց տանջանացն զանգիտէին. այլ ի վեր հայեցեալք՝ զզօրութիւնն Քրիստոսի յօգնութիւն եկեալ տեսանէին, և զուարթագին դիմօք և համեստ բանիւք յառաջ մատուցեալ՝ տային պատասխանի թագաւորին.

«Խնդրեմք ի քէն, արքայ քաջ, ունկն դիր սակաւ բանից մերոց, և քաղցրութեամբ լուր զոր ասելոցս եմք:

«Քանզի յիշեցուցանեմք քեզ զժամանակն Շապհոյ արքայից արքայի, որ էր հայր հաւուն քո Յազկերտի, և ետ նմա Աստուած զեր-

.... Եվ սուրբ եպիսկոպոս Հովսեփի ձեռքով նույն ուխտի մեջ հաստատվելով՝ յուրաքանչյուրն իր տեղից ելան-գնացին արքունի դուռը:

.... Առաջվա ժամանակներում կարգն այն էր, որ երբ Հայաստանից որևէ պատվավոր զորավարի առաջնորդությամբ հեծելազոր էր գնում Դուռը, [թագավորը] մարդ էր ուղարկում ընդառաջ և հարցնում էր Հայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը. և երկու–երեք անգամ նույնն էր անում. զորահանդեսն էլ [թագավորն] ինքն էր անում և պատերազմ սկսելուց առաջ նրանց իր մոտ գալ՝ տեղ հասնելն անգամ մեծ շնորհակալության արժանի էր համարում և իր աթոռակիցների ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամենքին, հիշում էր նրանց նախնիների ծառայությունները և պատմում էր նրանցից յուրաքանչյուրի քաջությունը:

Իսկ այն օրը սրանցից և ոչ մեկն էլ չհիշեց, այլ ինչպես մի չար դև՝ չէր դադարում ձմեռվա բուքը հուզելուց և շարժելուց. ինչպես որ հենց նմանվում էլ էր վրդովված ալեկոծ ծովի, որը ո՛չ թե երեսանց է մի քիչ [հուզվում], այլ նույնիսկ անդունդից էր բարձրանում փրփրած ու իրար վրա դիզված, վիշապաձայն որոտալով, գազանի նման մռնչալով ընդհանրապես սարսափեցնում էր իր տիեզերական իշխանությունը, կարծես թե փուլ գալով պիտի տարածվեր ամեն կողմ լեռների, անդունդների և ձորերի վրա՝ լայնարձակ ու գեղեցիկ դաշտերը միանգամից փչացնելու համար:

Մռնչալով ձայն արձակեց և ասաց. «Երդվել եմ մեծ աստված արեգակով, որ իր ճառագայթներով լուսավորում է ամբողջ տիեզերքը և իր ջերմությամբ կենդանացնում է բոլոր արարածներին, որ եթե վաղն առավոտյան, սքանչելու ծագելուն պես, բոլորդ ինձ հետ միասին ծունր չդնեք նրա առաջ՝ նրան աստված դավանելով, ձեզ ամենին զիջողություն չեմ անի, ամեն տեսակ նեղություն ու չարչարանք կթափեմ ձեզ վրա, մինչև որ ակամա կատարեք իմ կամքն ու հրամանը»:

կիրն Հայոց ի ծառայութիւն սովին օրինօք, որով և մեք իսկ վարիմք այժմ. և հարքն մեր և հաւք հարցն մերոց կացին նմա ի ծառայութեան վաստակս, և սիրով կատարէին զամենայն հրաման բանի նորա, և բազում անգամ ի նմանէ մեծապարգևք լինէին: Եւ յայնց ժամանակաց մինչև ի քո հայրենի աթոռդ՝ և մեք զնոյն ծառայութիւն ծառայեցաք. բայց թերևս քեզ լաւագոյն քան զառաջնոցն»:

Զայս ասելով ցուցանէին զքաջութիւն արութեանցն լաւագոյն քան զառաջնոցն ըստ զինուորութեան կարգի: Իսկ զմտից և զսակից, և որ այլ ևս էին հարկ աշխարհին, բազմագոյն քան առ հարբն նորա երթայր յարքունիս:

«Նա և ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ, և դու ընդ հարկաւ եդիր. և մեք առ սէր քոյոյ տէրութեանդ ոչ ինչ ընդդիմացաք քեզ: Արդ վասն է՞ր յուզեալ իցէ ցասումնս այս ի վերայ մեր. ասա դու մեզ զպատճառս վնասուն. եթէ օրէ՞նքն մեր պատճառք իցեն անվաստակ լինելոյ առաջի քո»:

Իսկ չարադնն լի ամենայն նենգութեամբ՝ զերեսս ի մի կոյս դարձուցեալ և ասէ. «Վնաս համարիմ ընդունել ի գանձ արքունի զհարկս աշխարհին ձերոյ, և անօգուտ զքաջութիւն արութեանձերոյ. քանզի տգիտաբար մոլորեալ էք ի ճշմարիտ օրինացս մերոց, և զաստուածս անարգէք և զկրակ սպանանէք և զջուրս պղծէք, և զմեռեալս ի հող թաղելով զերկիր ապականէք, և քրպիկար չառնելով ոյժ տայք Հարամանոյ. և որ մեծ քան զամենայն, զի հանապազ ի կանայս ոչ մերձենայք. և մեծապէս լինի դիւաց խնդութիւն, չխրատելով ձեր և չպահելով զամենայն կարգս մոգաց: Տեսանեմ զձեզ իբրև զխաշինս ցրուեալս և վայրատեալս յանապատի, և յոյժ զեղջ է մտաց իմոց, թէ գուցէ աստուածքն բարկացեալ վասն ձեր՝ ի մէնջ վրէժս առնուցուն: Այլ դուք եթէ կամիք կեալ և կեցուցանել զանձինս ձեր և մեծարանօք անդրէն յուղարկիլ, զոր ասացի՝ վաղիւ վաղվաղակի կատարեցէք»:

Իսկ հավատացյալները՝ Քրիստոսի մեջ հաստատված՝ ո՛չ ձմեռածին սառնամանիքից էին մրսում և ո՛չ խորշակի տոթից տաքանում, ո՛չ ահագին ձայնից էին սարսափում և ո՛չ էլ տանջանքների սպառնալիքից վախենում, այլ վերև նայելով՝ տեսնում էին Քրիստոսի զորությունն իրենց օգնության եկած և զվարթ դեմքերով ու համեստ խոսքերով առաջ անցնելով՝ թագավորին պատասխան տվին.

«Խնդրում ենք քեզանից, քա՛ջ թագավոր, ականջ դիր մեր մի քանի խոսքին և քաղցրությամբ լսի՛ր, ինչ որ ասելու ենք։

«Քեզ հիշեցնում ենք արքայից արքա Շապուհի ժամանակները, որ քո պապ Հազկերտի հայրն էր, և Աստված նրան Հայոց երկիրը հպատակեցրեց հենց այս կրոնով, որով և մենք ենք կառավարվում այժմ.և մեր հայրերն ու մեր հայրերի պապերը նրա ծառայության մեջ մնացին և սիրով կատարում էին նրա բոլոր հրամանները, և շատ անգամ էլ նրանից մեծամեծ պարգևներ էին ստանում։ Եվ այն ժամանակներից մինչև քո հայրենի աթոռը նստելդ՝ մենք էլ նույն կերպով ծառայեցինք և, թերևս քեզ ավելի լավ, քան [քո] նախորդներին»։

Այս ասելով՝ ցույց էին տալիս, որ զինվորության կարգի մեջ իրենց քաջություններն ավելի էին, քան թե առաջիններինը։ Իսկ տուրքեր, սակեր և աշխարհի ուրիշ ինչ տեսակ հարկեր որ կային, ավելի շատ էին մրտնում արքունի [գանձարանը], քան նրա հոր ժամանակ։

«Նույնիսկ սուրբ եկեղեցին, որ մեր նախնիների կարգի համաձայն սկզբից ևեթ ազատ էր ի Քրիստոս, դու հարկի տակ դրիր, և մենք քո տերությանդ սիրո համար ամենևին չընդդիմացանք։ Արդ, ինչի՞ համար է այս ցասումը հարուցված մեզ վրա, դու մեզ ասա՛ մեր հանցանքն ու մեղքը. մի՞թե մեր կրոնն է պատճառ, որ մենք անվաստակ ենք դուրս եկել քո առաջ»։

Իսկ չար դևը, ամեն նենգությամբ լցված, ե-

Յայնժամ երանելի նախարարքն առ հասարակ զձայնս իւրեանց բարձին և ասեն յանդիման ամենեցուն. «Մի՛ դու, արքայ, և մի՛ զայդ այլ առ մեզ ասեր... Հա՛պա, որով օրինակաւ զինչ կամիս առնել, կատարեա. պատրաստ եմք ամենեքեան առ ամենայն մեքենայս հարուածոցն տանջանաց, զոր սպառնացար. ոչ միայն ի չարչարել, այլ և ի մեռանել: Եւ եթէ դարձեալ ևս զնոյն բանս հարցանես, ի միոջէ միոջէ լուիցես առաւել քան զդոյն պատասխանի»:

Յայնժամ դառնացեալ քան զլեղի թագաւորն՝ փլուզանէր անդէն ի փորին զծով կամաւոր մաղձոյն իւրոյ. և ընդ քիթսն և ընդ բերանն առ հասարակ գոլոշի ջերմախառն ելանէր, իբրև ի սատիկինոցէ ծուխ թանձրացեալ: Եւ առ չհանդուրժել սրտին իւրոյ՝ կոտորէր զզօրութիւն մարմնոյն, և ծակոտէր զբազմամթեր ման խորհրդոցն, ցրուէր և վատնէր զամենայն խորհուրդն նենգութեան: Եւ զոր ոչ երբէք կամէր իւրոց սիրելեացն յայտնել, ակամայ առաջի ծառայիցն Քրիստոսի մերկանայր և դնէր զամենայն կարգաւ:

Երեքկնէր և չորեքկնէր զանսուտ երդումն յարեգակն, և ասէր այսպէս. «Ոչ կարէք աւերել զանխաբ ամուրս իմ. և ոչ որում ցանկացեալդ էք՝ վաղվաղակի տամ գտանել ձեզ. այլ զամենեսեան զձեզ և որ ի գնդիս են՝ չարաչար կապանօք ի Սագաստան տամ անցուցանել ընդ անճանապարհ տեղիս, որ և բազումք ի ձէնջ ի խորշակէ յերթալն սատակիցին, և մնացեալքն անկցին ի բերդս ամուրս և ի բանդս անելս: Եւ ի ձեր աշխարհն առաքեցից զօրս անթիւս հանդերձ փոքք, և զկին և զորդիս ի Խուժաստան տամ խաղացուցանել. և զեկեղեցիս և զոր անուանէք վկայարանս՝ քակեցից, քանդեցից և յապականութիւն դարձուցից. և եթէ ոք ընդդէմ դարձեալ գտցի, կոխան եղեալ գազանաց՝ անողորմ մեռանիցի: Եւ զամենայն ասացեալս արարից և կատարեցից առ մնացորդս աշխարհին»:

Եւ վաղվաղակի հրամայէր զպատուական նախարարսն հանել մեծաւ անարգանօք յե-

ռեսը մի կողմ դարձրեց և ասաց. «Վնաս եմ համարում արքունի գանձարանն ընդունել ձեր աշխարհի հարկը, և ձեր արիությունն ու քաջությունն էլ՝ անօգուտ, որովհետև տգիտությամբ մոլորվել եք մեր ճշմարիտ կրոնից, աստվածներին անարգում եք, կրակն սպանում, ջրերը պղծում և մեռելներին հողի մեջ թաղելով՝ երկիրն ապականում, և մեր կրոնի պատվերները չկատարելով՝ ուժ եք տալիս Հարամանիին. և, որ ամենից մեծն է, ամեն ժամանակ կանանց չեք մերձենում. և դևերը մեծապես ուրախանում են, երբ չեք խրատվում և չեք պահում մոգերի բոլոր կարգերը: Տեսնում եմ ձեզ ինչպես անապատի մեջ ցըրված ու մոլորված խաշներ և ես շատ վախենում եմ՝ չլինի՞ թե աստվածները ձեր պատճառով բարկանան ու վրեժը մեզանից առնեն: Իսկ դուք եթե կամենում եք ապրել և ձեր անձերը փրկել, և մեծարանքներով հետ ուղարկվել, ինչ որ ասացի՝ վաղը շուտ կատարեցեք»:

Այն ժամանակ երանելի նախարարներն առհասարակ բարձրացրին իրենց ձայնը և ասացին բոլորի առաջ. «Մի՛, թագավո՛ր, այլևս մի՛ ասա մեզ այդ բանը... Ինչ ձևով ուզում ես վարվել՝ վարվի՛ր. բոլորս պատրաստ ենք այն ամեն հարվածների ու տանջանքների մեքենաների համար, որ սպառնացիր, ո՛չ միայն չարչարվելու, այլև մեռնելու: Եվ եթե դարձյալ նույն բանը հարցնես, ամեն մեկիցս սրանից էլ ավելի [կտրուկ] պատասխան կլսես»:

Այն ժամանակ թագավորը՝ լեղուց ավելի դառնացած փորի մեջ կուտակված կամավոր մաղձի ծովը փուլ էր ածում, և նրա քթից ու բերանից առհասարակ ջերմախառն գոլորշի էր դուրս գալիս, ինչպես սաստիկ հնոցից թանձր ծուխը: Եվ սիրտը չհամբերելու պատճառով, կոտրում է իր մարմնի զորությունը, ծակոտում մտադրությունների բազմամթեր ամանը և ցրում-տարածում էր [իր] բոլոր նենգավոր մտածմունքները: Եվ ինչ որ ամենևին չէր կամենում հայտնել իր սիրելիներին, ակամա արտահայտում էր Քրիստոսի ծառա-

ռեսաց իւրոց...

.... Մի ոմն ի ներքին խորհրդակցացն արքայի ի ծածուկ ունէր զանքակ սէրն ի Քրիստոս, քանզի մկրտեալ իսկ էր յաւազանն կենդանի, և մեծապէս հոգ տանէր հնարից կենաց վշտացելոցն: Եւ իբրև ստուգեաց ճշմարտիւ, եթէ զոր սպառնացաւ թագաւորն զամենայն չարիսն՝ կամի անցուցանել ընդ աշխարհն Հայոց, թէպէտ և ոչ ամենեցուն՝ այլ սակաւուց ի նոցանէ ուսոյց զխրատ հնարից՝ զի առ անգամ մի ի նեղութենէ անտի զանձինս ապրեցուսցեն:

.... Եւ անձամբք իւրեանց զայս ուխտ եդեալ անքակութեամբ ընդ Աստուծոյ, զի հաստատուն կացցեն ըստ առաջին խորհրդոցն, պատգամ ի ներքս յղէին զնոյն խրատտուն իւրեանց, իբր թէ կատարեսցին կամք անօրէնութեան նորա:

Զայն իբրև լուաւ թագաւորն՝ յոյժ ցնծացեալ բերկրեցաւ, կարծեցեալ զդիսն հասանել նմա յօգնականութիւն, շրջեալ և աւերեալ զհաստատուն խորհուրդս ծառայիցն Աստուծոյ. և ահա մատուցանեն երկրպագութիւն արեգական, պատուեալ զնա զոհիւք և ամենայն օրինօք մոգութեանն:

.... Եւ կուրացեալ ի ճշմարիտ յայտնութենէն՝ ոչ ինչ իմացաւ զպատրանս խաբէութեանն, որով վրիպեացն: Հեղոյր արկանէր առաջի նոցա զպարգևս երկրաւորս, և վերստին ամենեցուն զպատիւս և զգահս նորոգէր, յառաջ մատուցանելով և երևելի առնելով ընդ ամենայն տիեզերական իշխանութիւնն:

.... Եւ զայս արարեալ, բազում այրուձի գումարէր ընդ նոսա, և ի մոգուցն ոչ սակաւս, աւելի քան զեւթն հարիւր վարդապետս յղէր ընդ նոսա, և զմեծ ոմն իշխան մոգպետ կացուցանէր ի վերայ նոցա:

ների առաջ և ամեն ինչ կարգով ասում:

Երեք-չորս անգամ կրկնում էր իր անսուտ երդումը արեգակի անունով և ասում էր այսպես. «Ձեք կարող խախտել իմ հաստատուն որոշումները, և թույլ չեմ տա, որ դուք շուտով հասնեք ձեր ուզածին, այլ ձեզ բոլորիդ և ովքեր այստեղ զորքի մեջ են, չարաչար կապանքներով Սագաստան վտարել կտամ անճանապարհ տեղերով, այնպես որ ձեզանից շատերը գնալու ժամակակ խորշակից կսատկեն, իսկ մնացածները կգցվեն ամուր բերդերը և անելանելի բանտերը: Ձեր աշխարհն էլ անթիվ զորք կուղարկեմ փղերի հետ միասին, և ձեր կանանց ու որդիներին Խուժաստան քշել կտամ, և ձեր եկեղեցիները և ինչ որ վկայարան եք կոչում, կքանդեմ, կավերեմ և կըփչացնեմ, և եթե էլի մեկը ընդդեմ դուրս եկած լինի, գազանների ոտների տակ գցելով՝ անողորմ մահով կմեռնի: Այս ամեն ասածներս կանեմ և կկատարեմ [ձեր] աշխարհում մնացածների վերաբերմամբ»:

Եվ անմիջապես հրամայեց պատվական նախարարներին մեծ անարգանքներով հեռացնել իր աչքի առաջից...

.... Թագավորի ներքին խորհրդականներից մեկը գաղտնի կապված էր Քրիստոսի անքակ սիրով, նույնիսկ մկրտված էր կենդանի ավազանի մեջ, և մեծապես հոգ էր տանում վշտացածների կյանքը փրկելու: Եվ երբ հաստատապես ստուգեց, որ թագավորն իր սպառնացած բազմաթիվ չարիքները բոլորն ուզում է կատարել Հայոց աշխարհի գլխին, թեպետև նրանցից ոչ բոլորին, բայց մի քանիսին խրատ տվեց և սովորեցրեց, թե ինչ հնարք գործ դնեն, որ առժամանակ իրենց փրկեն այն նեղ դրությունից:

.... Եվ ամենքն անքակտելի ուխտ դնելով, որ հաստատ մնան իրենց նախկին մտադրության վրա, իրենց միևնույն խրատատուին պատգամավոր ուղարկեցին ներս, իբր թե կատարվելու է նրա անօրեն կամքը:

Երբ այս լսեց թագավորը՝ չափազանց ցընծաց և ուրախացավ, կարծելով, թե աստված-

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ.
ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ԸՆԴԴԷՄ ԿԱԼ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԱՒ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ

....Սկսաւ սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն և ասէ. «Ի բազում պատերազմունսմտեալ է իմ, և ձեր ընդ իս. է ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թըշնամեացն, և է ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է՝ որ յաղթող գտեալ եմք և ոչ յաղթեալք: Եւ միանգամայն այն ամենայն էին մարմնոյ պարծանք. քանզի հրամանաւ անցաւոր թագաւորին մարտնչէաք: Որ փախչէր, վատանուն յաշխարհի երևէր, և անողորմ մահ ի նմանէ գտանէր. իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր, քաջ անուն ազգի ժառանգէր, և պարգևս մեծամեծս յանցաւոր և ի մահկանացու թագաւորէն ընդունէր: Եւ մեք իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս և սպիս բազումս. և բազում այն քաջութիւն իցէ, վասն որոյ առեալ իցէ և պարգևս մեծամեծս: Անարգ և անօգուտ զքաջութիւնսն համարիմ, և առ ոչինչ զպարգևսն բազումս. վասն զի ամենեքեան խափանելոց են:

«Իսկ արդ եթէ վասն մահականացու հրամանատուին զայն արութիւնս կատարէաք, ո՛րչափ ևս առաւել վասն անմահ թագաւորին մերոյ, որ Տէրն է կենդանեաց և մեռելոց, և դատելոց է զամենայն մարդ ըստ գործոց իւրոց: Ապաքէն եթէ կարի շատյառաջ մատուցեալ ծերացայց, սակայն ելանելոց եմք ի մարմնոյ աստի, զի մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ ևս ելանիցեմք ի նմանէ:

«Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, և գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք և յպժարութեամբ առաջնորդ և զօրագըլուխ ձեզ կացուցէք, հեշտ և բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց և փոքունց: Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, և մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուսցուք. զի եթէ ներն իրեն օգնության են հասել, շրջելով և ոչնչացնելով աստծու ծառաների հաստատուն մտադրությունները, և ահա երկրպագություն են մատուցանում արեգակին, պատվելով նրան զոհերով և մոգության բոլոր օրենքներով:

.... Եվ ճշմարիտ հայտնությունից զրկված՝ նա ամենևին չհասկացավ այն պատրանքն ու խաբեությունը, որով սխալեցրին նրան: Նրանց առաջ երկրավոր պարգևներ էր թափում և նորից բոլորին վերադարձնում էր իրենց պատիվն ու գահը, առաջ քաշելով և երևելի դարձնելով իր ամբողջ տիեզերական իշխանության մեջ:

.... Եվ այս անելուց հետո՝ շատ այրուձի ուղարկեց նրանց հետ, և մոգերից էլ ոչ պակաս, քան յոթ հարյուրից ավելի ուսուցիչներ հղեց նրանց հետ և մի մեծ իշխանի էլ նրանց վրա մոգպետ կարգեց:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.
ՀԱՅԵՐԻ ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՎ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԴԻՄԱԴՐԵԼԸ

.... Սպարապետը նախարարների միաբանությամբ սկսեց խոսել զորքի հետ և ասաց. «Շատ պատերազմներ եմ մղել ես, և դուք էլ ինձ հետ. տեղ կար, որ քաջաբար հաղթեցինք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք հաղթեցին մեզ: Բայց ավելի շատ այն է, որ հաղթող ենք դուրս եկել և ոչ թե հաղթված: Բայց այդ բոլորը մարմնավոր պարծանք էր, որովհետև անցավոր թագավորի հրամանով էինք մարտնչում: Ով փախչում էր, վատանուն էր երևում աշխարհում և նրանից անողորմ մահ էր ստանում, իսկ ով քաջությամբ առաջ էր ընկնում, քաջ անուն էր ժառանգում և մեծամեծ պարգևներ էր ստանում անցավոր ու մահկանացու թագավորից: Եվ մեզնից ամեն մեկս էլ ահավասիկ շատ վերքեր ու սպիներ ունենք մեր մարմինների վրա, և ուրիշ շատ քաջություններ էլ են եղել, որոնց համար և մեծամեծ պարգևներ են ստացվել: Անարգ և անօգուտ եմ համարում այդ քաջությունները

տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրասցի կողմն ճշմարտութեան. և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք:

.... «Իսկ արդ յերկուս և յերիս կռիւս Տէր ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ, որպէս զի զանուն քաջութեան ժառանգեցաք, և զզօրսն արքունի չարաչար հարաք, և զմոգսն անողորմ սատակեցաք, և զպղծութիւն կռապաշտութեանն ի տեղեաց տեղեաց սրբեցաք, զանօրէն հրաման թագաւորին եղծաք ապականեցաք, զխռովութիւն ծովուն ցածուցաք, լեառնացեալ ալիքն դաշտացան, բարձրադէզ փրփուրն սպառեցաւ, գազանացեալ սրտմտութիւնն դադարեաց: Որ ի վերայ ամպոց որոտայր, նկուն եղեալ՝ քան զսովորական բնութիւնն ի վայր գտաւ՝ ընդ մեզ խօսելով: Որ բանիւ հրամանաւ կամէր կատարել զչարութիւնն իւր ի վերայ սուրբ եկեղեցւոյ, արդ աղեղամբ և նիզակաւ և սրով կռուի:

.... «Եւ ահա եկն եհաս ժամանակ, զի զամենայն զկեղտ անուն ի մէնջ ի բաց բարձցուք: .... Երկիւղ՝ թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք ի մէնջ վաղ մերժեցաք, ընդ նմին և երկիւղն փախիցէ ի մտաց և ի խորհրդոց մերոց»:

.... Իսկ արին Վարդան յառաջ մատուցեալ և զաւագանին հարցանէր, և միաբան ամենեցուն խրատու զզօրագլուխսն կարգէր:

Զգունդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրունեաց, և նիզակակից նմա զմեծ իշխանն Մոկաց. և զայլն ամենայն նախարարեան համհարզս երկոցունց, և զամենայն բազմութիւն զնդին թևս աստի և անտի կազմէր նոցա:

Եւ զգունդն երկրորդ տայր ի ձեռն Խորենայ Խորխոռունւոյ, և նիզակակից նմա զԸնծայինն և զՆերսեհ Քաջբերունի:

Եւ զգունդն երրորդ մատուցանէր ի ձեռն Թաթլոյ Վանանդացւոյ, և նիզակակից նմա

և ոչինչ բաներ՝ այդ բազմաթիվ պարգևները, որովհետև բոլորն էլ ոչնչանալու են:

.... «Իսկ արդ՝ եթե մահկանացու հրամանատուի համար քաջ գործեր էինք կատարում, ինչքա՛ն ավելի ևս [պետք է կատարենք] մեր անմահ թագավորի համար, որ տերն է կենդանիների և մեռելների և բոլոր մարդկանց դատելու է իրենց գործերի համեմատ: Չէ՞ որ եթե խիստ շատ ապրելով ծերանամ, միևնույն է՝ այս մարմնից պետք է բաժանվենք, որպեսզի մտնենք կենդանի Աստծու մոտ, որից այլևս չպետք է բաժանվենք:

«Արդ, աղաչում եմ ձեզ, ո՛վ իմ քաջ նիզակակիցներ. մանավանդ որ ձեզանից շատերը քաջությամբ ինձնից ավելի լավ եք և հայրենական գահի պատվով՝ ավելի բարձր. բայց երբ ձեր հոժար կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ և զորագլուխ, թող իմ խոսքերը ախորժալուր և բաղձալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին: Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ո՛չ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք. որպեսզի եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք:

.... «Իսկ արդ՝ երկու և երեք կռիվների մեջ ինքը Տերը մեծ զորությամբ օգնեց մեզ, այնպես որ քաջության անուն ժառանգեցինք և արքունի զորքը չարաչար ջարդեցինք, մոգերին էլ անողորմ կերպով կոտորեցինք և կռապաշտության պղծությունը մի քանի տեղերից սրբեցինք, թագավորի անօրեն հրամանը ջընջեցինք-ոչնչացրինք, ծովի խռովությունն իջեցրինք, լեռնացած ալիքները դաշտացան, բարձրադեզ փրփուրն սպառվեց, գազանացած զայրույթը դադարեց: Նա, որ ամպերի վրայից էր որոտում, ընկճված՝ իր սովորական բնությունից էլ ցած իջավ՝ մեզ հետ խո-

հրամայէր զՏաճատ Գնթունի, և զբազումս ի քաջ արանց աստի և անտի ի թևս նոցա:

Յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ, և նիզակակից իւր զքաջն Արշաւիր և զհարազատ եղբայրն իւր զՀամազասպեան:

Կարգէր և կազմէր զճակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին դէմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ գետոյն:

Եւ իբրև այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին և ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր, և հնչումն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր: Ի բազմութենէ սաղաւարտիցն և ի փայլիւն պատենազէն վառելոցն իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին: Նա և ի բազում շողալ սուսերացն և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային: Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, ո՛րպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին:

Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին և զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն՝ առ ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. քանզի թանձրամիտքն յիմարէին և վատասիրտքն լքանէին. քաջքն խիզախէին և նահատակքն գոչէին: Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ զգետն ի մէջ փակէին, և զանգիտեալ գունդն Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ զտեղեաւն զեռալ սկսան: Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ձի ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ. սաստկապէս բախեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային: Յայնմ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան, և տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն, զի զձախակողմն շարժեցին զՀայոց գնդին. մեծաւ ուժով

սելով: Նա, որ խոսքով ու հրամանով էր ուզում կատարել իր չարությունը սուրբ եկեղեցու վերաբերմամբ, այժմ աղեղով ու նիզակով ու սրով է կռվում:

…. «Եվ ահա եկել–հասել է ժամանակը, որ ամեն մի կեղտ կոչված բան հեռացնենք մեզանից: … Վախը թերահավատության նշան է. թերահավտությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից. նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»:

…. Իսկ քաջ Վարդանը առաջ գալով՝ հարցուփորձ արեց մեծամեծներին և բոլորի տրված խորհրդի համաձայն զորագլուխներ նշանակեց:

Առաջին զորամասը հանձնեց Արծրունյաց իշխանին և նրան նիզակակից կարգեց Մոկաց մեծ իշխանին. և ուրիշ բազմաթիվ նախարարների այս երկուսին նիզակակից նշանակեց և զորամասի ամբողջ բազմությունը այս ու այն կողմից օգնական տվեց նրանց:

Երկրորդ զորամասը հանձնեց Խորեն Խորխոռունուն և նրան նիզակակից կարգեց Ընծայացուն և Ներսեհ Քաջբերունուն:

Երրորդ զորամասը հանձնեց Թաթուլ Վանանդացուն և նրան նիզակակից կարգեց Տաճատ Գնթունուն և շատ քաջ մարդիկ էլ այս ու այն կողմից օգնական տվեց նրանց:

Ինքը վերցրեց չորրորդ զորամասը և իրեն նիզակակից՝ քաջ Արշավրին և իր հարազատ եղբայր Համազասպյանին:

Այսպես կարգավորեց և ճակատ կազմեց՝ զորքը սփռելով դաշտի ամբողջ երեսին, Արյաց զորքի դեմուդեմը, Տղմուտ գետի ափին:
Եվ երբ այս այսպես պատրաստվեց, երկու կողմերն էլ սրտմտությամբ և մեծ բարկությամբ զայրացան և գազանացած զորությամբ միմյանց վրա հարձակվեցին. երկու կողմերի աղմուկն ու աղաղակը ճայթում էր ինչպես իրար խառնված ամպերի միջից, և ձայների դղրդյունը շարժում էր լեռների քարանձավները: Բազմաթիվ սաղավարտներն ու զրահապատված զորականների զենքերը փայլում էին ինչպես արևի ճառագայթների շողեր:

յարձակէր ի տեղին, և զաջ թևն Պարսից գընդին բեկեալ՝ արկանէր զգազանօքն, և շրջան առեալ կոտորէր մինչև ի նոյն տեղի: Եւ այնպէս շտապ տագնապի ի վերայ հասուցանէր, մինչև գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծ ամուր պատրաստութենէն, դեռ ևս քաջ քաջ ի փախուստ դառնային:

Ապա դէտակն ի վեր ամբառնայր Մուշկան Նիսալաւուրտ, քակեալ զոմանս տեսանէր ի գնդէն Հայոց, և զկնի մնացեալ ի հովիտըս լերանցն: Վասն որոյ զաղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զիւրեաւ զզօրս Արեաց, որք զտեղի առեալ կային ընդդէմ գընդին Վարդանայ: Եւ անդէն ի տեղւոջն երկոքին կողմանքն զպարտութիւն խոստովանէին, և առ յոյժ թանձր անկեալ դիականցն իբրև զքարակոյտս դերբկաց երևէին:

Զայն իբրև ետես Մուշկան Նիսալաւուրտ, մնայր զազանացն Արտաշրի, որ ի վերայ նոցա նստէր ի բարձր դիտանոցին իբրև յամուր քաղաքի. և ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդսն ստիպէր, և յառաջամարտիկ զօրօքն զնա ի մէջ փակէր:

Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղւոջն գործեաց, յորում տեղւոջ և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութիւնն:

Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր, և մօտ առ երեկս կարճատէր. բազմաց օրահասք մահու հասանէին, մանաւանդ ի թանձրութենէ անկեալ դիականց մօտ առ մօտ խտացեալ իբրև զփայտահարս մայրաւորաց:

Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց. վասն այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն. և սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոց: Եւ որք մնացեալքն էին՝ վատնեալք և ցրուեալք լինէին ի լեռնադաշտս ամուր ձորոցն. և յորժամ պատահէին միմեանց՝ դարձեալ միւսանգամ զմիմեանս սատակէին: Եւ մինչև ի

Նաև բազմաթիվ սուսերների շողալուց և բազմախուռն նիզակների ճոճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից։ Որովհետև ո՞վ կարող է պատմել ահավոր ձայների մեծ իրարանցումը, ինչպե՛ս վահանավորների թնդյունն աղեղների և թե ու լարերի ճայթյունը առհասարակ խլացնում էին բոլորի ականջները։

Այնտեղ պետք էր տեսնել, թե ինչ մեծ տագնապ և անչափ իրարանցման սրտնեղություն կար երկու կողմերում էլ, երբ հանդուգն հարձակումով իրար էին բախվում. որովհետև թանձրամիտները հիմարանում էին, և վախկոտները վհատվում. քաջերը խիզախում էին, և անվեհեր կտրիճներն աղաղակում։ Եվ ամբողջ բազմությունը իրար գլխի խմբվելով՝ գետն ամեն կողմից փակեցին, և գետի դժվարությունից վախեցած՝ Պարսից զորքն սկսեց իր տեղում վխտալ։ Իսկ Հայոց զորքն անցավ գետը և ձի նստած մեծ զորությամբ հարձակվեց։ Ուժգին թափով իրար զարկվելով՝ երկու կողմից էլ բազմաթիվ վիրավորներ գետին ընկած թպրտում էին։

Այս մեծ տագնապի մեջ դեպի վեր նայեց քաջ Վարդանը և տեսավ, որ Պարսից զորքի ընտիր–ընտիր քաջ զորականները Հայոց զորքի ձախ կողմն ընկճեցին. նա մեծ ուժով հարձակվեց այն տեղը և Պարսից զորքի աջ թևը ջարդելով՝ քշեց գազանների կողմը և շուրջը պտտելով, կոտորեց մինչև նույն տեղը։ Եվ այնպիսի տագնապ ու իրարանցում գցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Մատյան գնդի հաստատուն կազմակերպությունը քայքայվեց-ցրիվ եկավ, և նա դեռևս պարտություն չկրած՝ փախուստ տվեց։

Ապա աչքերը վեր բարձրացրեց Մուշկան Նիսալավուրտը և տեսավ, որ Հայոց զորքից ոմանք բաժանվել և ետ են ընկել լեռների հովիտներում։ Ուստի և աղաղակ բարձրացրեց, քաջալերեց իրշուրջը գտնված Արյաց զորքին, որոնք կանգնած էին Վարդանի գնդի հանդեպ։ Այնտեղ երկու կողմերն էլ իրենց պարտ-

մուտս արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն:

Եւ քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց:

Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղիքն գալարէին՝ լսել զմնչիւն խոցելոցն և զմռնչիւնս բեկելոցն, զթաւալգլոր խաղալ սոդալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթաքուստ լքելոցն, զսրտաթափումն զանարի արանցն, զճչիւն կանացեացն, զողբս սիրելեացն, զաշխարումն մերձաւորացն, զվայ և զաւաղ բարեկամացն: Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, և կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան:

Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց ի մեծ պատերազմին, ոչ ոք գոյր այնուհետև ի մէջ գլխաւոր, յոր յեցեալ ժողովէին գունդք մնացելոցն: Թէպէտ և բազում այն էր որ ապրեցան՝ քան թէ որ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան, և հասեալ անկանէին ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին, և բռնանային ի վերայ բազում գաւառաց և բերդից, զոր և ոչ առնուլ իսկ ոք կարէր:

Եւ այս անուանք են քաջ նահատակացն, որ անդէն ի տեղւոջն կատարեցան.

Յազգէն Մամիկոնէից Քաջն Վարդան հարեւր երեսուն և երեք արամբք:

Յազգէն Խորխոռունեաց Խորէնն Կորովի իններտասն արամբք:

Յազգէն Պալունեաց Արին Արտակ յիսուն և եւթն արամբք:

Յազգէն Գնթունեաց Զարմանալին Տաճատ իններտասն արամբք:

Յազգէն Դիմաքսենից Իմաստունն Հմայեակ քսան և երկու արամբք:

Յազգէն Քաջբերունեաց Հրաշակերտն Ներսեհ եւթն արամբք:

Յազգէն Գնունեաց Մանուկն Վահան երիւք արամբք:

Յազգէն Ընծայնոց Արդարն Արսէն եւթն ա-

ված էին զգում, և ընկած դիակների թիվն այնքան մեծ էր, որ նմանվում էր խորդուբորդ քարակույտերի:

Երբ այս բանը տեսավ Մուշկան Նիսալավուրտը, սպասում էր Արտաշրի գազաններին, որը նրանց վրա նստած էր բարձր դիտանոցում, ինչպես միջնաբերդում և գալարափողերի բարձր ձայնով շտապեցրեց իր գնդերին և առաջամարտիկ զորքերով շրջապատեց նրան:

Իսկ կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր և հենց ինքն էլ արժանի եղավ ստանալու կատարյալ նահատակության պսակը:

Եվ պատերազմի գործը երկարելով՝ օրը տարաժամեց և երեկոյան դեմ դադարեց, շատերն իրենց մահվան օրհասը գտան. Մանավանդ որ ընկածների դիակներն այնպես խիտ էին ու իրար մոտ թափված, ինչպես անտառի կտրատված փայտերը:

Այնտեղ պետք էր տեսնել նիզակների կոտրատումն ու աղեղների խորտակումը. ուստի և չէին կարողանում ստույգ որոշել երանելիների մարմինները. և սաստիկ խուճապ ու իրարանցում էր երկու կողմերի ընկածների համար: Իսկ ովքեր [կենդանի] էին մնացել, ցիրուցան եղան ամուր ձորերի լեռնադաշտերում. և երբ պատահում էին միմյանց, դարձյալ սպանում էին մեկմեկու: Եվ այսպես դաժան գործը շարունակվեց մինչև արևի մայր մտնելը:

Եվ որովհետև ժամանակը գարնանային էր, ծաղկալից դաշտերը լցվեցին հորդահոս արյունով: Մանավանդ, երբ մեկը տեսնում էր ընկած բազմաթիվ դիակների կույտերը՝ սիրտը կտրատվում էր, և աղիքները գալարվում, լսելով խոցվածների մրմռոցը և ջարդվածների մռնչյունը, վիրավորների թավալգլոր սոդալն ու շարժվելը, վախկոտների փախուստը, վիատվածների թաք կենալը, անարի մարդկանց սրտաբեկությունը, թուլասիրտների ճիչերը, սիրելիների ողբը, մերձավորների սուգը, բարեկամների վայնասունը: Ո-

ռամբք:

Յազգէն Սրուանձտայ Յառաջադէմն Գարեգին երկու հարազատօքն և ութուտասն արամբք:

Այս երկերիւր ութսուն և եւթն նահատակք, ընդ ինն մեծամեծ նախարարսն անդէն ի տեղւոջն կատարեցան: Եւ յարքունի տանէն և ի տանէն Արծրունեաց և յիւրաքանչիւր յայլոց նախարարաց տանէն, թող զայս երկերիւր ութսուն և եւթնս, և այլ ևս եւթն հարեւր և քառասուն այր, որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեցին ի նմին աւուր ի մեծ պատերազմին: Եւ միահամուռ լինի ամենայն հազար և երեսուն և վեց:

Իսկ ի կողմանէ ուրացելոցն անկանէր յայնմ աւուր երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորք այր: Ինն այր ի նոցանէ ի մեծ պատուաւորացն էր, վասն որոյ և կարի յոյժ ի խոր խոցեցաւ Մուշկան Նիսալաւուրտ: Մանաւանդ իբրև ետես զանհնարին հարուածսն երեքպատիկ զիւրոյ գնդին քան զՀայոցն, բեկաւ անկաւ զօրութիւն ուժոյն իւրոյ...

որովհետև ոչ թե մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին։

Բայց որովհետև հայոց զորավարն ընկել էր մեծ պատերազմում, այնուհետև էլ ոչ ոք գլխավոր չկար մեջտեղում, որին հենված ժողովեին մնացած զորքերը: Թեպետև ողջ մնացածներն ավելի շատ էին, քան մեռնողները, սակայն նրանք ցանուցիր եղան և քաշվեցին երկրի զանազան ամուր տեղերը և ուժով տիրեցին շատ գավառների ու բերդերի, որոնք ոչ ոք մինչև իսկ առնել չէր կարողանում:

Եվ սրանք են այն քաջ նահատակների անունները, որոնք այդ նույն տեղում վախճանվեցին. Մամիկոնյանց ցեղից Քաջ Վարդանը հարյուր երեսուն և երեք մարդով,

Խորխոռունյաց ցեղից Կորովի Խորենը տասնինը մարդով,

Պալունյաց ցեղից Արի Արտակը հիսուն և յոթը մարդով,

Գնթունյաց ցեղից Զարմանալի Տաճատը տասնինը մարդով,

Դիմաքսյանց ցեղից Իմաստուն Հմայակը քսաներկու մարդով,

Քաջբերունյաց ցեղից Հրաշակերտ Ներսեհը յոթը մարդով,

Գնունյաց ցեղից Մանուկ Վահանը երեք մարդով,

Ընծայնոց ցեղից Արդար Արսենը յոթը մարդով,

Սրվանձտյան ցեղից Հառաջադեմ Գարեգինը երկու հարազատներով և տասնութը մարդով։

Այս երկու հարյուր ութսունյոթը նահատակները՝ ինը մեծամեծ նախարարների հետ՝ հենց այնտեղ վախճանվեցին։ Եվ թագավորական տնից և Արծրյունյաց տնից և մյուս նախարարների տնից, բացի այս երկու հարյուր ութսունյոթ հոգուց, [դարձյալ ընկան] էլի յոթ հարյուր քառասուն հոգի։ Եվ այս բոլորը միասին լինում է հազար երեսուննվեց մարդ։

ԵՒԹՆԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ.
ԴԱՐՁԵԱԼ ՎԱՍՆ ՆՈՐԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՒ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ

.... Իսկ կանայք երանելի առաքինեացն և կապելոցն և անկելոցն ի պատերազմին՝ ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են՝ զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ: Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ միայն որ աւագագոյնքն էին, այլ զբազումս ի կրսերագունաց անտի:

Ամենեքեան միահամուռ զերկրաւոր նախանձ բերելով՝ ոչ ինչ ընդհատ երևեցան յայնցանէ, որ ոչ ճաշակեցին զաշխարհ: Քանզի եթէ աւագագոյնք էին և եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն հաւատոյ զգեցան: Ոչ ինչ յիշեցին ամենևին զանուն փափկութեան մայրենի ազատութեանն, այլ իբրև մարդք, որ վշտամբերք լեալ իցեն անդստին ի շինական սովորութեանցն, տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք ևս քան զնոսա յանձն առին զհամբերութիւն վշտաց:

.... Ոչ գոյր նոցա խախամոքք անուշարար առանձինն, և ոչ հացարարք որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի, այլ հասարակաց էր: Շաբաթամուտն ըստ կարգի միայնակեցաց, որ յանապատս բնակեալ են: Ոչ ոք ումեք ջուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտսերք աւագաց դաստառակս մատուցանէին. չանկաւ օշնան ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ եւդ ի զուարթութիւն խրախութեան: Չեղան առաջի սուրբ սկտեղք, և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, և ոչ կոչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա. չյիշեցան նոցա, թէ գուցէ ոք ամենևին ի բնակասնունդ դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց:

Փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրսկապանք նորեկ հարսանց, և սարդի ոստայնք ձգեցան ի սենեակս առագաստաց նոցա. կործանեցան բարձրագահք տաճարաց

Իսկ ուրացողների կողմից այն օրը ընկան երեք հազար հինգ հարյուր քառասունչորս մարդ: Նրանցից ինը հոգի խիստ պատվավորներից էին, ուստի և շատ խոր վշտացավ Մուշկան Նիսալավուրտը: Մանավանդ երբ տեսավ, որ իր զորքի ստացած սաստիկ հարվածները երեք անգամ ավելի մեծ էին, քան հայերինը, նրա ուժն ու զորությունը կոտրվեց, ընկավ…

ՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ.
ԴԱՐՁՅԱԼ ՆՈՒՅՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

.... Իսկ երանելի առաքինիների և կապվածների ու պատերազմում ընկածների կանանց ամբողջ Հայոց աշխարհում սովորությունների օրինակով և տանջվելով են անցկացրել իրենց ես հաշվել չեմ կարող, որովհետև չիմացածներս ավելի շատ են, քան՝ իմացածներս: Հինգ հարյուրի չափ անուն–անուն ճանաչում եմ, ոչ միայն նրանցից, ովքեր ավագագույններից էին, այլև շատերին կրտսերագույններից:

Բոլորը միահամուռ երկնավոր նախանձով լցված ամենևին պակաս չմնացին նրանցից, ովքեր աշխարհ չէին մտել: Որովհետև թե՛ ավագագույնները և թե՛ մանկագույնները հավատի միևնույն առաքինությամբ զգեստավորվեցին: Ամենևին չհիշեցին մայրենի ազատության փափկության անունը, այլ իբրև այնպիսի մարդիկ, որոնք հենց սկզբից նեղությունների են համբերել շինական կյանքը, նրանցից էլ ավելի մեծ վշտերի համբերել հանձն առան:

.... Չկային նրանց համար առանձին անուշահամ կերակուրներ պատրաստող խոհարարներ և ոչ էլ ջոկ հացարարներ՝ ազատների սովորության համաձայն նրանց սպասավորելու համար, այլ [այդ ամենը] ընդհանուր էր: Շաբաթամուտն [անց էին կացնում] անապատում բնակվող միայնակյացների կարգով: Ո՛չ ոք մյուսի ձեռին ջուր չէր լցնում, և ո՛չ էլ

նոցա, և խանգարեցան սպասք երախանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք ապաստանի նոցա: Չորացան ազազեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, և տաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա:

Աչօք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իւրեանց և ականջօք իւրեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց իւրեանց. առան զանձք իւրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենևին զարդք երեսաց իւրեանց:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և զգուեալք էին յիւրաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք, զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն: Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք էրէոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենևին զսովորական փափկութիւնն: Մնացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա, վասն զի ցերեկ արևակէզք էին և զամենայն գիշերսն գետնաբեկք:

.... Մոռացան զկանացի տկարութիւն, և եղեն արուք առաքինիք ի հոգևոր պատերազմին. մարտ եղեալ կռուեցան ընդ մեղսն կարևորս, հատին կտրեցին և ընկեցին զմահաբեր արմատս նորա: Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեան, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ագահութեան, և չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա: Խոնարհութեամբ կռփեցին զամբարտաւանութիւն և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն: Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից, և սուրբ խնդրուածովք իջուցին զհրեշտակս ի փրկութիւն. լուան աւետիս ի հեռաստանէ, և փառաւորեցին զԱստուած ի բարձունս:

.... Բազում ձմերաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն և եկին նորեկ ծիծառունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և

կրտսերները ավագներին սրբիչ էին մատուցանում, փափկասուն կանանց ձեռքը օճառ չընկավ, և յուղ չառաջարկվեց ուրախության հանդեսների համար: Նրանց առջև մաքուր սկուտեղներ չդրվեցին և ո՛չ էլ բաժակալներ տրվեցին ուրախության համար. Նրանցից ոչ մեկի դռների մոտ նվիրակ չկանգնեց, և պատվական մարդիկ չկանչվեցին նրանց խնջույքի սեղանին. նրանց մտքերից չանցավ, թե գուցե սնուցանող որևէ դաստիարակ կամ մի սիրելի հարազատ ունեն:

Փոշոտվեցին ու ծխոտվեցին նորահարսների սրահակներն ու առագաստները, և սարդի ոստայններ ձգվեցին նրանց հարսնարաններում. կործանվեցին նրանց դահլիճների բարձր գահերը, և խանգարվեցին նրանց սեղանների պարագաները, ընկան-կործանվեցին նրանց ապարանքները, և տապալվեցին ու ավերվեցին նրանց ապաստան ծառայող ամրոցները: Չորացան–ճռզեցին նրանց ծաղկանոցների բուրաստանները, և արմատախիլ եղան նրանց գինեբեր այգիների տունկերը:

Իրենց աչքերով տեսան իրենց կայքերի հափշտակությունը և իրենց ականջներով լսեցին իրենց սիրելիների վշտերն ու չարչարանքները. նրանց գանձերն առան, թագավորական արին, և ամենևին զարդեր չմնացին նրանց երեսների վրա:

Հայոց աշխարհի փափկասուն տիկինները, որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ, շարունակ բոբիկ ու ոտքով էին գնում աղոթատները, առանցձանձրանալու ուխտելով և խնդրելով, որ կարողանան դիմանալ այն մեծ նեղությանը: Ովքեր իրենց մանկությունից հորթերի ուղեղներով և էրեների փափուկ մսով էին սնվել, մեծ ուրախությամբ խոտեղեն կերակուր էին ընդունում վայրենիների նման և ամենևին չէին հիշում իրենց սովորական փափուկ կյանքը: Նրանց մարմինների մորթը սև գույն ստացավ, որովհետև ցերեկն արևակեզ էին լինում և ամբողջ գիշեր-

նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց: Ծաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա:

Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց: Բնագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա:

Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն: Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով:

Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ ե՛րբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իղձք աղօթից նոցա առ Աստուած, եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ ի նմին կատարեսցին լի երկնաւոր սիրովն:

Եւ մեք և նոքա հասարակ ժառանգեսցուք զքաղաքամայրն բարեաց, և հասցուք խոստացելոց սիրելեացն Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

ներն էլ գետնի վրա էին քնում:

…. Մոռացան իրենց կանացի տկարությունը և առաքինի տղամարդիկ դարձան հոգևոր պատերազմի մեջ. կռիվ բաց արին ու մարտնչեցին ծայրագույն մեղքերի դեմ, կրտրեցին և դեն գցեցին նրա մահաբեր արմատները: Միամտությամբ հաղթեցին խորամանկությանը և սուրբ սիրով լվացին նախանձի կապտագույն ներկվածքը. կտրեցին ագահության արմատները և չորացան նրանց ոստերի մահաբեր պտուղները: Խոնարհությամբ հաղթահարեցին ամբարտավանությունը և միևնույն խոնարհությամբ հասան երկնավոր բարձրությանը: Աղոթքով բաց արին երկնքի փակված դռները և սուրբ խնդրվածքներով հրեշտակներին ցած բերին փրկության համար. ավետիս լսեցին հեռաստանից և փառավորեցին Աստծուն բարձունքում:

…. Շատ ձմեռների սառույցներ հալվեցին, գարուն հասավ, և նոր ծիծեռներ եկան, կենցաղասեր մարդիկ տեսան նուրախացան, բայց նրանք երբեք չկարողացան տեսնել իրենց անձկալիներին: Գարնանային ծաղիկները նրանց միտն էին բերում իրենց հավատարիմ ամուսիններին, բայց նրանց աչքերը կարոտ մնացին նրանց երեսների ցանկալի գեղեցկությունը տեսնելու:

Որսի բարակները վերջացան, և բոլորովին դադարեցին որսորդների արշավանքները: Նրանք հիշվեցին միայն գրված հիշատակարաններով, և ոչ մի տարեկան տոն նրանց հեռու օտարությունից տուն չբերեց. նրանց ճաշատեղերին նայեցին ու արտասվեցին և բոլոր ատյաններում հիշեցին նրանց անունները: Շատ արձաններ էին կանգնեցրած նրանց անվանը, և ամեն մեկի անունը նշանակված էր նրանց վրա:

Եվ մինչդեռ այսպես ամեն կողմից ալեկոծվում էին նրանց մտքերը, նրանք ամենևին չթուլացան երկնավոր առաքինությունից: Դրսից նայողներին երևում էին որպես սգավոր և չարչարված այրիներ, իսկ իրենց սրտե-

ռում զարդարված ու մխիթարված էին երկնավոր սիրով։

Այլևս սովորություն չարին հեռու երկրից եկած մեկին հարցնելու, թե ե՞րբ կլինի, որ տեսնենք մեր սիրելիներին. այլ այն էր նրանց իղձն ու աղոթքն առ Աստված, որ ինչպես սկսել են, այնպես էլ քաջությամբ ու երկնավոր սիրով լի նույնը գլուխ հանեն-վերջացնեն։

Ե՛վ մենք, և՛ նրանք առհասարակ ժառանգենք երկնքի արքայությունը և հասնենք այն ամենին, ինչ որ խոստացված է Աստծու սիրելիներին հանուն մեր տեր Հիսուս Քրիստոսի։

ԿՈՐՅՈՒՆ
ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ

(Գրաբարից աշխարհաբարի վերածեց
Մանուկ Աբեղյանը)

Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ւ Ն
ՎԱՐՈՒՑ ԵՎ ՄԱՀՈՒԱՆ ԱՌՆ ԵՐԱՆԵԼԻՈՅ ՍՐԲՈՅՆ ՄԱՇԹՈՑԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵՐՈՅ ԹԱՐՄԱՆՉԻ
Ի ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ
ՅԱՇԱԿԵՐՏԷ ՆՈՐԻՆ

[Ա]

Զազքանազեան Ազգին և զՀայաստան աշխարհին զաստուածապարգեւ գրոյն, եթէ ե՛րբ և յորում ժամանակի մատակարարեցաւ և որպիսի՛ արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երեւեցաւ և վասն նորին լուսաւոր վարդապետութեան և հրեշտակաբար կրօնիցն առաքինութեան զմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան ծագկեցուցանել:

[Գ]

ԱՌՆ, զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշթոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորի Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն: Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուծեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ և թեւամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութեանսն:

ԵՐԱՆԵԼԻ ՄԱՐԴՈՒ, ՄԵՐ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՍՈՒՐԲ ՄԱՇԹՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՐՔԻ ԵՎ ՄԱՀՈՒԱՆ
Պ Ա Տ Մ ՈՒ Թ ՅՈ Ի Ն Ը
ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏ
ԿՈՐՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՑ

[Ա]

Ասքանազյան ազգի և Հայաստան աշխարհի աստվածապարգև գրի մասին, թե ե՛րբ ու ո՛ր ժամանակ բաշխվեց և ի՛նչպիսի մարդու ձեռքով եղավ այդ աստվածային մեծ շնորհքը, այլև մարդու լուսավոր ուսման և հրեշտականման առաքինի կրոնավորության մասին մտածում էի մի առանձին մատյանի մեջ գրված հիշատակարաններ ծաղկեցնել:

[Գ]

Մաշթոց էր անունն այն մարդու, որ հիշեցինք մեր խոսքի սկզբում, որի համար և մենք հոգ ենք տարել պատմելու: Նա Տարոն գավառից էր, Հացեկաց գյուղից, Վարդան անունով երանելի մարդու որդին: Մանկական հասակում նա կրթվել էր հելլենական դպրությամբ, [ապա] եկել հասել էր Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը, կացել էր արքունի դիվանատանը՝ դառնալով արքայի տված հրամանի ծառայողը՝ ոմն Առավանի՝ մեր Հայոց աշխարհի հազարապետության ժամանակ: Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին: Եվ այնտեղ հենց ջանալով ուշադրությամբ հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց, խորամուխ եղավ աստվածային հրամանների հանգամանքների մեջ, և ամենայն պատրաստակամությամբ զարդարելով իրեն՝ իշխանների ծառայությունն էր կատարում:

[Ե]

Առեալ այնուհետեւ երանելւոյն զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան: ….երանելւոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին….

Եւ այնպէս տրտմական հոգովք պաշարեալ և թակարդապատեալ և անկեալ ի ծուփըս խորհրդոց, եթէ որպիսի՛ արդեօք ելս իրացն գտանիցէ:

[Ե]

Երանելին այնուհետև իր հավատացյալներին առավ, գնաց, իջավ Գողթնի անկարգ և անխնամ [թողած] տեղերը: …. երանելին իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով՝ իշխանի հավատարիմ օգնությամբ սկսեց [քարոզել] գավառում….

Եվ այնպես տրտմական հոգսերով պաշարված ու թակարդապատված և մտածմունքների ծփանքի մեջ էր ընկած, թե արդյոք ինչպիսի՛ ելք գտնի այն բանի համար:

[Զ]

Եւ իբրեւ աւուրս բազումս անդէն ի նմին դեգերէր, յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբ կաթուղիկոսն Հայոց Մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ: Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծաւք առ Աստուած կանխէին ….

Ապա ելանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել:

Բազում հարցափորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ:

Յանժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիել անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի: Եւ երբ պատմեցաւ նոցա արքայէ վասն գտանելոյն ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ փոյթ առեալ վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հաբէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի:

Իսկ Հաբէլն զայն լուեալ ….նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն, և ապա

[Զ]

Եվ շատ օրեր հենց այնտեղ նույն [խնդրով] զբաղվելուց հետո՝ վեր կացավ այնուհետև [եկավ], հասավ Մեծ Հայաստանի սուրբ կաթուղիկոսի մոտ, որի անունը Սահակ էր, որին և պատրաստ ու հավան գտավ նույն հոգսի վերաբերմամբ: Եվ նրանք միասին սիրով մեկտեղ գալով՝ առավոտը կանուխ մեծ աղոթքներով Աստծուն էին դիմում ….

Ապա ամենաբարի Աստծուց պարգևվեց նրանց՝ երանելի միաբանյալների աշխարհահոգ խորհուրդը ժողովել և հայ ազգի համար նշանագրեր գտնել:

Շատ հարցուփորձով ու որոնումով պարապեցին և շատ նեղություններ կրեցին. հետո և իրենց առաջուց ուզած բանի մասին իմաց տվին Հայոց թագավորին, որի անունը Վռամշապուհ էր կոչվում:

Այն ժամանակ արքան պատմեց նրանց մի մարդու, Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գտել է հայերեն լեզվի ալփաբետներ-նշանագրեր: Եվ երբ արքան պատմեց նրանց Դանիելի գտածի մասին, արքային հոժարեցին, որ հոգ տանի այն պիտույքի մասին: Նա էլ Վահրիճ անունով մեկին հրովարտակներով ուղարկեց Հաբել անունով մի երեց մարդու մոտ, որ ասորի եպիսկոպոս Դանիելի մերձավորն էր:

Իսկ Հաբելն այդ որ լսեց ….նախ ինքը Դանիելից տեղեկացավ նշանագրերին և հետո

առեալ ի նմանէ առաքէր առ արքայն Հայոց: …. Իսկ արքային հանդերձ միաբան սրբովք Սահակաւ և Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն…. ուրախ լինէին:

Ապա առեալ երանելի հոգաբարձուացքն զյանկարծագիւտ խնդրելին, հայցէին եւս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթասցեն:….

Իսկ երբ ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզւոյն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ:

[Է]

Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի և միաբանութեամբ սրբոյն Սահակայ …. երթեալ հասանէր …. ի քաղաքս Ասորոց. որոց առաջինն Եդեսիա կոչի, և երկրորդին Ամիդ անուն: ….

Իսկ աշակերտասէր զարդապետին վտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ. զոմանս յասորի դպրութիւնն կարգէր [ի քաղաքին Եդեսացւոց], և զոմանս ի յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր:

[Ը]

….

Եւ այսպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օգան գտանելոյ: Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինէր սիղոբայիք կապօք: ….

նրանից առավ, ուղարկեց արքային Հայոց երկիրը: ….Իսկ արքան՝ սուրբ Սահակի և Մաշթոցի հետ միասին՝ նշանագրերն ստանալով …. ուրախացան:

Ապա երանելի հոգաբարձուներն [իրենց] հանկարծագյուտ ուզածն առնելով՝ էլի՛ խնդրեցին արքայից մատաղահաս մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշանագրերը գործադրել: ….

Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղոբաները-կապերն ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից թաղված և հարություն առած հանդիպեցին, - ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան:

[Է]

Դրա համար երանելի Մաշթոցը՝ արքայի հրամանով և սուրբ Սահակի համաձայնությամբ …. գնաց հասավ….ասորոց երկու քաղաքները, որոնց առաջինը Եդեսիա է կոչվում, և երկրորդի անունն է Ամիդ: ….

Իսկ աշակերտասեր ուսուցիչն իր հետ տարածներին երկու [խմբի] բաժանելով՝ ոմանց ասորական դպրության կարգեց [Եդեսիա քաղաքում], և ոմանց հունական դպրության [կարգելով]՝ այնտեղից ուղարկեց Սամուսատական քաղաքը:

[Ը]

….

Եվ այսպես շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևվեց նրան [այդ] բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ-հայերեն լեզվի նշանագրեր: Եվ այնտեղ շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիղոբաներով-կապերով: ….

Եւ եդեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակաց Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

[Ժ]

Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժադուժ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւաղութեան, այլ և վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝դժուարամատոյցք էին:

Առ ի յարդարել և զնոսա հարուստ ամացն ծնունդս առեալ՝ պարզախօսս, հռետորաբանս, կրթեալս, աստուածատուր իմաստութեանն ծանօթս կացուցանէին:

[ԺԱ]

Եւ ի ձեռն առեալ այնուհետև աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել և յուսուցանել….

Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր, յորում յանկարծ ուրեմն օրէնուսոյց Մովսէս՝մարգարէական դասուն, և յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայրէնախօսք գտան:

Անդ էր այնուհետև սրտալից ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայելոյն: Քանզի երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան, առժամայն վաղվաղակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր. ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն, այլ և յառաջագոյն յաւիտենիցն, և ապա եկելոցն, սկզբանն և կատարածի, և ամենայն աստուածատուր աւանդութեանցն:

Եվ սկսեց թարգմանել [սուրբ] գիրքը՝ նախ Սողոմոնի Առակներից, որ սկզբում հենց հանձնարարում է ծանոթ լինել իմաստության, ասելով, թե՝«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

[Ժ]

Այն ժամանակ թագավորից շուտով հրաման առավ՝ սկսելու [սովորեցնել] Մարաց խուժադուժ կողմերը, որոնք դժվար մատչելի էին ոչ միայն իրենց դիվական, սատանայակիր, ճիվաղական բարքի, այլ և խեցբեկագույն և կոշտ ու կոպիտ լեզվի պատճառով: Ձեռք զարնելով և նրանց շատ տարիների ծնունդներին կոկելու՝ դարձրին [նրանց] պարզախոս, հռետորաբան, կրթված, աստվածատուր իմաստությանը ծանոթ:

[ԺԱ]

Եվ այնուհետև աստվածային գործի մշակությունն անելով՝ սկսեցին ավետարանական արվեստ-թարգմանել, գրել և սովորեցնել….

Այն ժամանակ անպայման սքանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հավասարակիցների ձեռքով հանկարծ, մի անգամից եկան հասան, հայաբարբառ հայրենախոս դարձան օրենուսույց Մովսեսը՝ մարգարեական դասի հետ, և առաջադեմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցույց ավետարանի հետ միասին:

Ի՜նչ սրտալիր ուրախություն էր այնտեղ այնուհետև, և ի՜նչ հաճելի տեսարան աչքի համար: Որովհետև մի երկիր, որ անունն անգամ չէր լսել այն կողմերի, ուր բոլոր աստվածային սքանչելի գործերը կատարվեցին, շատ շուտով, իսկույն իմացավ բոլոր եղած բաները, ոչ միայն ժամանակով կատարվածները, այլև առաջագույն հավիտենականությունը, և հետո եկածները, սկիզբը և վերջը, և բոլոր աստվածային ավանդությունները:

[ԺԲ]

Իսկ իբրև զչափ զիրացն հաստատութեան, և առաւելագոյն զաշակերտութիւնն նորագիւտ վարդապետութեանն խմբէին ուսուցանել և թեքել, և պատրաստական քարոզութեանն անգէտ մարդկան յօրինել: Որոց և ինքեան իսկ ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհին յորդեալք և դրդեալք յասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ: Քանզի յԱյրարատեան գաւառին՝ ի կայս թագաւորացն և քահանայապետացն, բղխէցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ: ….

Որ և սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ միջամուխ ձեռամբ զգործ աւետարանչացն Քրիստոսի գործել, գումարել ի կողմանս. ի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, դասս դասս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցանելոցս ի կատարումն գիտութեան, բաւականս և առ ի զայլին զեկուցանելոյ:

[ԺԵ]

Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ հոգ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի և վասն բարբարոսական կողմանն: Եւ առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյն նմա ի Տեառնէ: Գրէր, կարգէր և օրինօք յարդարէր. և առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյն յաշակերտաց իւրոց, յարուցեալ գնայր իջանէր ի կողմանս Վրաց:

[ԺԷ]

Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից: Եւ երթեալ իջանէր յաշխարհն….

…. Ապա հարցեալ ի նոցանէ, առաջի եդեալ վասն որոյ եկեալ էր: Եւ նոցա երկոցունց…. յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ. տային նս հրաման՝ ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեանն ածել և

[ԺԲ]

Իսկ երբ իրերի հաստատությունը փորձեցին, ապա ավելի համարձակ և ավելի շատ էին ժողովում նորագյուտ ուսման համար աշակերտներ՝ սովորեցնելու, կրթելու և անգետ մարդկանց քարոզելու համար պատրաստելու: Նրանք իրենք էլ հենց Հայաստան աշխարհի զանազան կողմերից ու գավառներից բազմությամբ վեր կենում, գալիս հասնում էին աստվածային գիտության բացված աղբյուրը: Որովհետև Այրարատյան գավառում բխեց հայերի համար Աստծու պատվիրանների շնորհքը:

Եվ իսկապես՝ եկեղեցու սյուներն սկսեցին համարձակ ձեռքով Քրիստոսի ավետարանիչների գործը կատարել, Հայաստան ազգի զանազան կողմերը, գավառներն ու տեղերը խումբ խումբ ուղարկել ճշմարտության աշակերտներին, գիտության մեջ կատարելության հասցվածներիս [խմբերը]՝ կարող [համարելով] ուրիշներին էլ սովորեցնելու:

[ԺԵ]

Դարձյալ՝ մեջտեղում մի ժամանակ անցնելուց հետո՝ Քրիստոսի սիրելին մտածեց հոգ տանել նաև բարբարոսական կողմի համար: Գրեց, դասավորեց ու օրինավոր կերպով հարդարեց և իր աշակերտներից մի քանի լավագույններին հետն առավ, վեր կացավ, գնաց, իջավ Վրաց կողմերը:

[ԺԷ]

Եվ ապա դրանից հետո մնաք բարով ասաց՝ Աղվանքի կողմերը գնալու համար: Եվ գնաց, իջավ նրանց աշխարհը….

…. Ապա երբ հարցրին, նա բացատրեց իր գալու պատճառը: Եվ նրանք …. հանձն առան ընդունել դպրությունը և հրամայեցին իրենց իշխանության գավառներից և տեղերից դրպրության արվեստի համար բազմաթիվ մանուկներ բերել, ժողովել, արժանավոր ու հարմարավետ տեղերում դասատներ-դրպրոցներ [կազմել]….

գումարել՝ ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց....

[ԺԹ]

Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել և դիւրացնել:

.... Իսկ երանելւոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, և բազում ևս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն: Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնակաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք: Եւ շատ ևս մեկնութիւն գրոց թարգմանէին:

[Ի]

Ապա յետ այնորիկ դարձեալ՝ այնպիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել, լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոց ճշմարտութեան:

[ԺԹ]

Դրանից հետո երկու երանելիներն էլ ուշադրություն դարձրին, որ իրենց ազգի դրպրությունն ավելի զարգացնեն և հեշտացնեն:

.... Իսկ երանելի Սահակն առաջ հունարեն լեզվից հայերեն էր դարձրել եկեղեցական գրքերի ամբողջությունը և շատ սուրբ հայրապետների իմաստություն: Դրանից հետո դարձյալ նա Եզնակի հետ միասին սկսեց [և] առաջվա հանկարծագյուտ շտապովի թարգմանությունները հաստատեց բերված ստույգ օրինակներով: Եվ Գրքի շատ էլ մեկնություն թարգմանեցին:

[Ի]

Ապա դրանից հետո դարձյալ՝ երանելի Մաթոցն իր այնպիսի շատ ու բարձրագույն ուսումով սկսեց կարգել և հորինել հաճախագույն, դյուրապատում, շնորհագիր, բազմադիմի ճառեր մարգարեական գրքերի լուսավորությունից ու հյութից, ավետարանական ճշմարիտ հավատքի ամեն ճաշակով լիքը:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՄԵԲԷՈՍԻ

Քննական բնագիրը՝ Գ.Վ. Աբգարյանի

Երեւան, ՌՆԾԴ

ՄԵԲԵՈՍ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն թարգմանությունը և ծանոթագրությունները՝
Գ.Կ. Խաչատրյանի և Վ.Ա. Եղիազարյանի

Երևան, 2005

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Մեբէոսի
Գլուխ Դ

Ծննդաբանութիւն ազգին Մամիկոնէից:

……ադրէ զՄամիկոնէիցն սակս ազգաց զնեղութիւնն: Քանզի ոչ են սոքա որդիք ազգածին Արամենակայ, այլ են եկեալ ի Ճենաստանէ յամս Արտաւանայ արքայի Պարթևաց և Մեծին Խոսրովու արքայի Հայոց. որպէս լուայ յառնէն մեծէ, որ եկեալ էր հրեշտակութեամբ ի Ճենաց թագաւորէն առ արքայն Խոսրով. յոր իմ հարցեալ ի դրանն արքունի, եթէ «Ազգ մի մեծ ի Հայաստան երկրի կայ, զորմէ ասեն եթէ ի ձերմէ աշխարհէն գնացեալ են»: Եւ նա ասաց ինձ. «Ասեն, ասէ, գուսանք և ի մերում աշխարհին //յերգս իւրեանց զՄամիկն և զԿոնակն, արս երկուս լեալ քաջս և գլխաւոր եղբարս հարազատս, որդիք Կառնամայ նախարարին, որ էր երկրորդ ի թագաւորութեանն Ճենաստանի»: Որոյ յետ մահուանն առնս այսորիկ, առ զկին սորին թագաւորն նոցին ի կնութիւն: Եւ եղև ի նմանէ որդի, որ զկնի մահուան հաւր իւրոյ յաջորդեալ նստաւ յաթոռ հայրենի թագաւորութեանն: Եւ նոքա, երկու եղբարք նորա ի մաւրէ և ոչ ի հաւրէ, ապստամբեալ ի բաց կացին ի նմանէ. և միաբանեալ ընդ ինքեանս զմասն մի ի նախարարացն և ի զաւրացն՝ առնեն ուխտ միաբանութեան: Որոց խորհեալ խորհուրդ չարութեան՝ սպանանել զեղբայրն իւրեանց, զթագաւորն աշխարհին Ճենբակուր, և առնուլ զթագաւորութիւն նորա: Եւ զաւրաժողով լինէին Մամիկն և Կոնակն ի վերայ նորա ի միում տեղւոջ աշխարհին իւրեանց. և բաժանի զաւր աշխարհին յերկուս: Ազդ լինի Ճենբակուրի. գումարէ և նա զզաւրս իւրոյ կողմանն, և գնայ ի վերայ նոցա պատերազմ: Եւ յարձակին ի վերայ միմեանց. հարկանեն սրով սուսերի, և սպառեն զզաւրն ապստամբական: Փախստական լեալ Մամիկն և Կոնակն գնան առ արքայն Արշակու-

Մեբեոս
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Գլուխ Դ

Մամիկոնյան տոհմի ծննդաբանությունը:

……ադրում է Մամիկոնյանների չարչարանքը տոհմերի պատճառով: Քանի որ սրանք նահապետ Արամենակի որդիները չեն, այլ եկել են Ճենաստանից պարթևների Արտավան արքայի և հայոց արքա Խոսրով Մեծի տարիներին, ինչպես լսեցի այն մեծ մարդուց, որ բանագնացությամբ Ճենաց թագավորի կողմից եկել էր Խոսրով արքայի մոտ, ես նրան արքունիքում հարցրի. «Հայաստան երկրում մի մեծ ազգ կա, որի մասին ասում են, թե ձեր աշխարհից են եկել»: Եվ նա ինձ ասաց. «Նաև մեր աշխարհում են, ասում է, գուսաններն իրենց երգերի մեջ հիշատակում Մամիկին ու Կոնակին, որոնք երկու քաջ ու նշանավոր հարազատ եղբայրներ են եղել՝ որդիները Կառնամ նախարարի, որը Ճենաստանի թագավորության երկրորդն էր: Այս մարդու մահից հետո նրանց թագավորը կնության առավ սրա կնոջը: Եվ նրանից որդի ծնվեց, որը իր հոր մահից հետո նստեց հայրենի թագավորության աթոռին: Իսկ նրանք՝ նրա երկու եղբայրները՝ <նույն> մորից և ոչ հորից, ապստամբելով հեռացան նրանից, և իրենց հետ միաբանելով նախարարների և զորքերի մի մասը՝ միաբանության ուխտ արին: Նրանք խորհեցին չար խորհուրդ՝ սպանել իրենց եղբորը՝ երկրի թագավոր Ճենբակուրին, և վերցնել նրա թագավորությունը: Եվ Մամիկն ու Կոնակը իրենց երկրում մի տեղ զորաժողով արին նրա դեմ, և երկրի զորքը բաժանվեց երկու մասի: Լուր տրվեց Ճենբակուրին. նա ևս հավաքեց իր կողմի զորքերը և գնաց նրանց դեմ պատերազմի: Եվ հարձակվեցին միմյանց վրա, կոտորեցին սրով սուսերի և իսպառ կոտորեցին ապըստամբ զորքին: Փախուստի դիմելով՝ Մամիկն ու Կոնակը գնացին Արշակունի արքայի մոտ,

նի, որ նստէր ի Բահլ Շահաստանի, յերկիրն Քուշանաց:

Եւ էր խաղաղութիւն ի մէջ երկոցունց թագաւորութեանցն այնոցիկ:

Յայնժամ մեծաւ աղերսիւ խնդրեալ զնոսա Ճենբակուրի յարքայէն Պարթևաց, զի բարձցէ ի միջոյ, «ապա թէ ոչ՝ լուծցի ուխտ խաղաղութեան՝ որ ի միջի մերում»: Իսկ նորա խնայեալ յարսն՝ ոչ ետ զնոսա ի ձեռս նորա, այլ գրէ առ նա սիրով. «Անդրէն ուխտ խաղաղութեան մերոյ, ասէ, հաստատո՛ւն կացցէ ի միջի մերում, զի երդուեալ եմ առ նոսա, զի նոքա մի՛ մեռցին. այլ ետու տանել զնոսա ի մուտս արևու և յեզր երկրի, ի տեղին յայն, ուր արեգակն ի մայր մտանէ»:

Յայնժամ հրամայէ արքայն Պարթևաց զաւրաց իւրոց տանել զնոսա զգուշութեամբ մեծաւ, կնաւ և որդւովքն իւրեանց և ամենայն աղխիւն իւրեանց յերկիրն Հայոց առ ազգական իւր արքայն Արշակունի, որ էր թագաւոր Հայաստան երկրին, ուր և սերեալ բազմացան յոյժ, և եղեն յազգ մեծ ի Մամիկայ և ի Կոնակայ»: Յասմանէ այն է սպարապետ:

Գլուխ ԺԵ

Նենգաւոր խորհուրդ Մաւրկայ՝ թափուր յիշխանաց Հայոց կացուցանել զՀայս: ....

Յայնմ ժամանակի թագաւոր Յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ թագաւորն Պարսից գիր ամբաստանութեան վասն իշխանացն ամենայն Հայաստանեայց և զաւրոց իւրեանց: «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց է՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի»:

Միաբանեցան երկոքին:

որը նստում էր քուշանների երկրում՝ Բահլ Շահաստանում: Այդ երկու թագավորությունների միջև խաղաղություն էր տիրում:

Այնժամ Ճենբակուրը մեծ աղերսանքով խնդրեց պարթևների արքայից, որ վերացնի նրանց մեջտեղից, «ապա թե ոչ՝ կվերանա այն խաղաղության ուխտը, որ կա մեր միջև»: Բայց նա խնայեց այն այրերին և նրանց չհանձնեց նրա ձեռքը, այլ գրեց նրան սիրով. «Թող մեր խաղաղության ուխտը դարձյալ հաստատուն մնա մեր միջև, ասում է, քանի որ երդվել եմ նրանց, որ նրանք չեն սպանվի. այլ տանել տվեցի նրանց արևմուտք՝ աշխարհի ծայրը՝ այնտեղ, ուր արեգակը մայր է մըտնում»:

Այնժամ պարթևների արքան հրամայեց իր զորքերին նրանց իրենց կին ու որդիներով և իրենց ամբողջ տոհմով մեծ զգուշությամբ տանել Հայոց երկիր՝ իր ազգական Արշակունի արքայի մոտ, որը Հայաստան երկրի թագավորն էր, որտեղ և հույժ բազմացան ու եղան մեծ ազգ Մամիկից և Կոնակից»: Այն սպարապետը այս <տոհմից> էր:

Գլուխ ԺԵ

Մորիկի նենգ մտադրությունը՝ թափուր դարձնել Հայաստանը հայ իշխաններից: ....

Այն ժամանակ Հունաց Մորիկ թագավորը հրամայեց գրել ամբաստանագիր պարսից թագավորին ողջ Հայասանի իշխանների և նրանց զորքերի մասին: «Մի խոտոր և անհնազանդ ազգ են, ասում է, գտնվում են մեր միջև և պղտորում են: Բայց է՛կ, ասում է, ես իմոնց հավաքեմ և ուղարկեմ Թրակիա, և դու քոնոնց հավաքի՛ր և հրամայի՛ր տանել արևվելք: Որ եթե մեռնեն, թշնամիները մեռնեն, և եթե սպանեն, թշնամիների սպանեն, և մենք խաղաղ ապրենք: Որովհետև եթե դրանք իրենց երկրում լինեն, մեզ հանգիստ չի լինի»:

Երկուսով միաբանվեցին:

Գլուխ Ի

…. Սմբատայ Բագրատունւոյ …. խորհուրդն ապստամբութեան: Սմբատ ըմբռնի եւ ածի ի Կոստանդնուպոլիս. հատանի վճիռ ի վերայ նորա՝ արկանել ի կիւնիկն: Նահատակութիւնք Սմբատայ անդ եւ գտանել ողորմութիւն ….

Ապա դարձեալ սկսան միաբանել մնացեալ նախարարքն Հայոց, և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել իւրեանց թագաւոր, զի մի՛ և նոցա հասցէ մեռանիլ ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանիլ ի վերայ աշխարհին իւրեանց: Եւ բանք խորհրդոց նոցա ոչ ունէր զմիաբանութիւն իրին յինքեանս հաստատեալ, այլ ոմանք ի նոցանէ շոգմոգութեամբ հասուցին զբանս խորհրդեանն յունկն թագաւորին, և ինքեանք այսր և անդր սորսորեալ խուսափէին:

Յայնմ ժամանակի հասանէին դեսպանք արքունականք հրովարտակաւք, և կալեալ զՍմբատ հանդերձ այլովք ոմամբք եւթն արամբք և տարան յանդիման թագաւորին: Եւ քննեալ զնոսա ի մէջ բազմամբոխ հրապարակին՝ հատաւ վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանել և ընկենուլ ի կիւնիկն:

Եւ էր սա այր անհեղեղ անձամբ և գեղեցիկ տեսլեամբ, և բարձր և լայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով: Անձամբ հզաւր և պատերազմող, որ ի բազում պատերազմունս ցուցեալ էր զիւր քաջութիւն և զբռնութիւն: Այս է զաւրութիւն նորա. քանզի անցեալ սա ի ներքոյ անտառախիտ մայրեաց և զաւրաւոր ծառոց, ի վերայ յաղթանդամ և հզաւր երիվարին, և յարձակեալ զոստով ծառոյն՝ բուռն հարկանէր, և կծկեալ ուժգին երանաւքն և ոտիւք զմէջ երիվարին՝ վերացուցանէր երանաւքն ի գետնոյն. մինչ զի ամենայն զաւրացն տեսեալ ահաբեկ լինէին ի զարմացմանէ:

Եւ արդ՝ մերկացուցեալ զնա և ագուցեալ անդրավարտիս և ընկեցեալ ի կիւնիկն, // զի

Գլուխ Ի

….Սմբատ Բագրատունու …. Ապստամբության մտադրությունը: Սմբատը ձերբակալվում է և տարվում Կոստանդնուպոլիս. նրա մասին վճիռ է կայացվում գցել գազանամարտի: Սմբատի քաջագործություններն այնտեղ և ներում ստանալը ….

Ապա հայոց նախարարները դարձյալ սկսեցին միաբանվել և ուզում էին դուրս գալ հունաց թագավորի ծառայությունից ու իրենց թագավոր նստեցնել, որպեսզի իրենց ևս չվիճակվի մեռնել Թրակիայի կողմերում, այլ ապրել և մեռնել հանուն իրենց աշխարհի: Բայց նրանք իրենց ներսում հաստատուն չպահեցին միաբանությունը, այլ նրանցից ոմանք բանսարկությամբ այդ մտադրությունը հասցրին թագավորի ականջին և իրենք, այստեղ-այնտեղ թաքնվելով, խույս տվեցին:

Այդ ժամանակ հրովարտակներով հասան արքունական դեսպանները, և Սմբատին ուրիշ յոթ մարդկանց հետ միասին բռնեցին, տարան թագավորի մոտ: Եվ նրանց բազմամբոխ հրապարակում քննելուց հետո նրանց մասին վճիռ կայացվեց մերկացնել և գցել գազանամարտի:

Սա հաղթանդամ այր էր՝ գեղեցիկ տեսքով, բարձրահասակ ու լայնալանջ, ուժեղ ու ջղուտ մարմնով: Անձնյա էր ու պատերազմող և շատ պատերազմներում էր ցույց տվել իր քաջությունն ու զորությունը: Ահա նրա զորությունը. երբ սա ամեհի ու հզոր երիվարի վրա անցնում էր խիտ անտառով և զորավոր ծառերի տակով, ձգվելով բռնում էր ծառի ճյուղից և ազդրերով ու ոտքերով ամուր գըրկելով երիվարի մեջքը՝ ազդրերով բարձրացնում էր գետնից, մինչև որ ամբողջ զորքը տեսնելով զարմանքից ահաբեկվում էր:

Եվ արդ՝ մերկացնելով նրան և վարտիք հագցնելով՝ գցեցին գազանամարտի, որ կեր դառնա գազաններին:

Եվ նրա վրա արձակեցին մի արջ: Եվ եղավ՝ երբ արջը հարձակվեց նրա վրա, նա

կուր լիցի գազանաց:

Եւ արձակեալ ի վերայ նորա արջ: Եւ եղն՝ իբրև դիմեաց ի վերայ նորա արջն՝ նա աղաղակեաց մեծաձայն և ընթացաւ ի վերայ արջոյն, և զարկեալ բռամբ իւրով զճակատն, և անդէն սատակէր զնա ի տեղւոջն:

Երկրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա ցուլ: Իսկ նորա բուռն հարեալ զեղջերացն ցլուն .... և զաղաղակ հզաւրին .... և յաւգնեալ ցուլն ի մարտին՝ գելոյր զպարանոցն և խորտակէր զերկոսին եղջիւրսն ի վերայ գլխոյն. թուլանայր ցուլն և յետս-յետս գնալով ի փախուստ դառնայր: Իսկ նորա զհետ ընթացեալ՝ բուռն հարկանէր յագին և ի կճղակն ազդեր միոյ ոտին նորա, և թափեալ զկճղակսն՝ մնայր ի ձեռին նորա: Եւ ցուլն գնայր ի նմանէ փախստական, միով ոտամբն բոկ:

Դարձեալ երրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա առիւծ: Եւ եղն՝ ի վերայ նորա յարձակել առիւծուն՝ այնպէս իմն յաջողեալ նմա ի Տեառնէ, բուռն հարեալ յականջ առիւծուն հեծաւ՝ ի վերայ նորա: Եւ անդէն բուռն հարեալ զխռչափողիցն՝ խեղդէր զառեւծն և սպանանէր: Անդ աղաղակ բազում ամբոխին զերկիրն լնուին, և խնդրէին ի վերայ նորա ողորմութիւն ի թագաւորէն:

Եւ նա վաստակեալ ի մարտին՝ նստէր ի վերայ առիւծուն մեռելոյ, զի փոքր մի հանգիցէ: Անդ և կին թագաւորին անկեալ առ ոտս նորա՝ խնդրէր ի վերայ նորա առնել ողորմութիւն. վասն զի սիրելի էր յառաջն այրն այն թագաւորին և կնոջ նորա, և անուանեալ էր զնա իւր յորդեգիրս: Եւ նա զարմացեալ ընդ զաւրութիւն և ընդ պնդութիւն առնն և լուեալ պաղատանաց կնոջն և ամենայն պաղատոյն՝ հրամայեաց առնել ի վերայ նորա ողորմութիւն:

բարձրագոչ աղաղակեց և ընթացավ արջի վրա ու իր բռունցքով խփեց ճակատին և տեղնուտեղը սպանեց նրան:

Երկրորդ անգամ նրա վրա արձակեցին ցուլ: Իսկ նա բռնեց ցլի եղջյուրներից .... և հզորի աղաղակը ...., երբ ցուլը մարտում հոգնեց, <Սմբատը> վիզը ոլորեց և ջարդեց գլխի երկու եղջյուրները. ցուլը թուլացավ և հետ-հետ գնալով՝ փախավ: Իսկ նա հետապնդելով՝ բռնեց նրա պոչն ու մի ոտքի կճղակը և պոկեց կճղակը, <որը> մնաց իր ձեռքին: Եվ ցուլը նրանից փախավ գնաց՝ մի ոտքն անկճղակ:

Երրորդ անգամ նրա վրա առյուծ արձակեցին: Եվ եղավ՝ երբ առյուծը հարձակվեց նրա վրա, Տիրոջ կողմից նրան այնպես հաջողվեց, որ բռնելով առյուծի ականջից՝ հեծավ նրան: Եվ իսկույն բռնելով շնչափողից՝ խեղդեց առյուծին ու սպանեց: Աշխարհը լցվեց բազմամարդ ամբոխի աղաղակով. նրա համար ներում էին խնդրում թագավորից:

Մարտում հոգնած՝ նա նստեց սպանված առյուծի վրա, որ մի փոքր հանգստանա: Այն ժամանակ նաև թագավորի կինը ընկավ նրա ոտքերը, խնդրեց ներում շնորհել նրան, և <թագավորը> նրան <Սմբատին> իրեն որդեգիր էր համարել: Նա, զարմացած այդ մարդու հզորության ու տոկունության վրա և լսելով կնոջ ու ողջ պալատականների պաղատանքները, հրամայեց ներում շնորհել նրան:

Գլուխ ԽԵ

….Շինութիւն եկեղեցւոյն յանուն Զուարթնոց….

Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթուղիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին՝ յորում, ասեն, ընդ առաջ եղև թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի: Շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երևեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն: Եւ շինեաց զեկեղեցին բարձր շիուածովք և չքնաղ զարմանալեաւք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն: Ածէ ջուր և եբեր զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց այգիս և ծառատունկս, և շուրջանակի պատուարեաց զբնակութեամբն գեղեցկադիր յաւրինուածով բարձր պարսպաւ ի փառս Աստուծոյ:

Գլուխ ԽԵ

….Զվարթնոց անունով եկեղեցու կառուցումը….

Այն ժամանակ հայոց Ներսես կաթողիկոսը որոշեց իր համար նստավայր շինել այն սուրբ եկեղեցիների մոտ, որ Վաղարշապատ քաղաքում <էին>՝ այն ճանապարհի վրա, որտեղ, ասում են, Տրդատ թագավորն ընդառաջ ելավ սուրբ Գրիգորին: Շինեց այնտեղ և մի եկեղեցի հանուն երկնային Զվարթունների երկնային զորքերի բազմության, որոնք երազում երևացին սուրբ Գրիգորին: Կառուցեց այդ եկեղեցին՝ բարձրաշեն, զարմանալիորեն չքնաղ, արժանի պատվին Աստծու, ում որ նվիրեց: Աղբյուր բերեց, ջուր անցկացրեց նաև գետից և ողջ քարքարոտ վայրերը մշակեց. տնկեց այգիներ ու ծառաստաններ և նստավայրը շուրջանակի պատվարեց գեղեցկաշար բարձր պարսպով՝ ի փառս Աստծու:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներածութիւն……. 5
1. Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց.... 10
2. Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց…. 25
3. Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան……. 42
4. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց …… 62
5. Եղիշէի Վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին……... 96
6. Կորիւնի Վարդապետի Պատմութիւն Վարուց Երանելւոյ Սուրբ Վարդապետին Մեսրովբայ ……. 120
7. Պատմութիւն Սեբէոսի..……. 127

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……... 5
1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն……. 10
2. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն …… 25
3. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն։ Թուղթ Վահան Մամիկոնյանին 42
4. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն …… 62
5. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին ……. 96
6. Կորյուն, Վարք Մաշտոցի…….. 120
7. Սեբեոս, Պատմություն …..…… 127

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ
(V-VII ԴԱՐԵՐ)

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ